

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԻՆՉՔԺԾԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻԵՑԱԿՆԵՐՈՒՄ**

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2007

ՀՏԴ 614:611-018 (07)
ԳՄԴ 51.1(2)2+28.86 գ7
Մ 283

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ քաղաքաշտպանության
և բուժպատրաստականության ամբիոնը

Մ 283 Հեղինակների կոլեկտիվ

Մինչքժկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում: Ուսումնական ծեռնարկ: - Եր.: Երևանի համալս. հրատ., 2007., 224 էջ:

Սույն ծեռնարկում քննարկվում են մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի հիմունքները, առուակարգ իրավիճակներում ախտահարվածների և տուժածների խնամքի առանձնահատկությունները, տուր հիվանդությունների, բունավորումների և ճառագայթային ախտահարումների, վնասվածքների ժամանակ մինչքժկական և առաջին բուժօգնության սկզբունքները:

Նախատեսված է Երևանի պետական համալսարանի ուսանողների համար:

Մ $\frac{1909000000}{704(02)07}$ 2007

ԳՄԴ 51.1(2)2+28.86 գ7

© Երևանի համալս. հրատ., 2007 թ.

ISBN 5-8084-0801-6

© Հեղ. կոլեկտիվ, 2007 թ.

ԳՐԻՒ ԱՊԱՅԻՆ

Մ.Խ. Աղամյան,քժկ. գիտ. թեկն.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴՈՒ
ՕՐԳԱՆԻԶՄԻ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԻ ԵՎ ՆԵՐՁԻՆ
ՕՐԳԱՆՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՍԱՍԻՆ

ԱՎԱՏՈՄԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՊԱԿԱՄ

Մարդու անատոմիան գիտություն է մարդու մարմնի և նրա օրգանների կառուցվածքի մասին: Ֆիզիոլոգիան գիտություն է ամբողջ օրգանիզմի և նրա օրգանների ֆունկցիաների մասին: Տարբեր օրգանների և ամբողջ օրգանիզմի կառուցվածքն ու կենսագործունեությունը, այսինքն՝ ձևն ու ֆունկցիան, անբաժան են իրարից՝ փոխադարձաբար պայմանավորելով միմյանց: Առողջ մարդու օրգանիզմի կառուցվածքի և կենսագործունեության հնացությունն օգնում է տարբեր ախտահարումների ու հիվանդությունների ժամանակ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները հասկանալուն:

Բջիջն օրգանիզմի ամենափոքր միավորն է, որը տեսանելի է միայն մանրադիտակով և որի մեծությունը չափվում է միկրոններով: Յուրաքանչյուր բջիջ կազմված է կորիզից, ցիտոպլազմայից և բջջային մեմբրանից (թաղանթից): Բջջանյութն իր ֆիզիկաքիմիական հատկություններով իրենից ներկայացնում է կոլորիդ համակարգ, որը բաղկացած է բարդ օրգանական միացություններից՝ սպիտակուցներից, ճարպերից և ածխաջրերից, ինչպես նաև ջրից ու անօրգանական աղերից: Բջիջ սպիտակուցները կազմում են նրա տարբեր կառուցվածքային տարրերի հիմքը. նրանցից են կախված բջիջ հիմնական կենսական հատկությունները: Ճարպերը սպիտակուցների հետ միասին մտնում են բջիջ որոշ կառուծվացքային տարրերի, օրինակ՝ բջջարդանքի ու միտոքոնդրիումների կազմի մեջ և համարվում են ներզետիկ նյութ: Ածխաջրերը ծառայում են որպես էներգիայի զգալի մասի աղբյուր, որն անհրաժեշտ է բջիջ կենսական արողեսների իրականացման համար: Զուրո՞ւ և անօրգանական աղերը պայմանավորում են բջջանյութի՝ որպես կոլորիդ, ֆիզիկաքիմիական հատկությունները: Աղերը բջջանյութի մեջ լինում են որոշակի կրնցենտրացիաներով և բջիջ ներսում պահպանում են կայուն օսմոտիկ ճնշում: Բջիջ հիմնական բաղադրամասերից մեկը ֆերմենտներն են՝ սպիտա-

◦ Հարադրանքի հիմքում Վ.Գ. Տատարինովի նյութն է (տե՛ս վերջում):

կուցային բնույթի այն նյութերը, որոնց ազդեցության տակ քիչօներում տեղի են ունենում նյութափոխանակության բոլոր պրոցեսները:

Կորիգօ սովորաբար գտնվում է բջջի կենտրոնում: Կորիգի կարևորագույն բաղադրամասերից են քրոմոսոմները, որոնք, կրելով ժառանգական հնֆորմացիան գեների տեսքով, նկատվում են կիսվող քիչօներում: Քրոմոսոմները բաղկացած են ՂՆԹ-ից և սպիտակուցային հիմքից: Յուրաքանչյուր տեսակի օրգանիզմում քրոմոսոմների թիվը խիստ հաստատուն է (մարդու ունի 23 զույգ քրոմոսոմ):

Ցիտոպլազման կազմում է բջջանյութի մեծ մասը, որում առկա է տարրեր նույր կառուցվածքային տարրերից բաղկացած բարդ համակարգ: Այդ տարրերի մի մասը կայուն է և կոչվում է օրգանիզմներ (օիբոսումներ, միտոքրոնորիումներ, բջջային կենտրոն և այլն), իսկ մյուս տարրերը երևան են գալիս բջջի որոշ ֆիզիոլոգիական վիճակներում և կոչվում են անկայուն պարփակումներ (օրինակ՝ մաշկի քիչօների պիզմենտի հատիկներն արևայրուկի դեպքում):

Բջջի թաղանթը բջջի պարունակությունն առանձնացնում է շրջապատող միջավայրից և կարգավորում նյութափոխանակությունը բջջի ու տվյալ միջավայրի միջև:

Բջջները միջբջջային նյութի հետ կազմում են միասնական համակարգ՝ հյուսվածք, որն ունի իր որոշակի կազմությունը և ֆունկցիաները: Տարբերում են էպիթելիային, շարակցական, մկանային, նյարդային հյուսվածքներ:

Էպիթելիային հյուսվածքները կազմում են մաշկի մակերեսային շերտը, պատում են բոլոր լորձաբաղանքները և շճաբաղանքները՝ կատարելով պաշտպանական ֆունկցիա, արտաթրորում, ներծծում և այլն:

Շարակցական հյուսվածքը բազմազան է, այն կազմում է շատ օրգանների հենքը, մտնում է ենթամաշկային շերտի կազմության մեջ: Նրանից են կազմված ջլերը, կապանները, փակեղները, աճաները, ուսկրերը, ինչպես նաև արյունն ու ավիշը: Ուսկրերը պարունակում են մեծ քանակությամբ անօրգանական աղեր, որոնք նրանց տալիս են ամրություն, իսկ առածգականությունը՝ օրգանական նյութերը: Շարակցական հյուսվածքը կատարում է հենարանային, սնուցող ու պաշտպանական ֆունկցիաներ (այս հյուսվածքի որոշ քիչներն ընդունակ են աներթած տեղաշարժերի և ֆագոցիտողի, այսինքն՝ ակտիվ կերպով որսելու բակտերիաներ ու այլ մասնիկներ և մարսելու դրանք):

Մկանային հյուսվածքները տարբերում են երկու հիմնական տեսակի մկանային հյուսվածքներ՝ հարթ և միջածիգ-զոլավոր: Մկանային հյուսվածքի հիմնական հատկությունը կծկվելու ընդունակությունն է:

Հարթ մկանային հյուսվածքը գտնվում է ներքին օրգանների և արյունատար անոթների պատերի մեջ, կծկվում է ոչ կամային ձևով:

Միջածիզ-գոլավոր մկանային հյուսվածքը գտնվում է կմախքային մկաններում և որոշ ներքին օրգաններում (լեզու, կոկորդ և այլն), կծկվում է կամային ձևով:

Միջածիզ-գոլավոր մկանային հյուսվածքի հատուկ տարատեսակ է սրտի մկանային հյուսվածքը: Այն իր մանրադիտակային կազմությամբ որոշ չափով տարբերվում է կմախքային մկանների հյուսվածքից և կծկվում է ինքնաբերական ձևով:

Նյարդային հյուսվածքը. Նյարդային հյուսվածքը կազմում է նյարդային համակարգի հիմքը: Նյարդային բջիջը կամ նեյրոնը կազմված է բջջի մարմնից և նրա ելուստներից: Նեյրոնն ունի մեկ երկար ելուստ՝ նեյրիտ (արսոն) և մեկ (կամ ավելի) կարճ ճյուղավորվող ելուստ՝ դենորիտ: Տարբերում են զգացող, միջադիր և շարժիչ նյարդային բջիջներ: Զգացող բջիջները այն նեյրոններն են, որոնց ելուստներն օրգաններում (օրինակ՝ մաշկի մեջ) ունեն զգացող նյարդային վերջույթներ՝ ռեցեպտորներ, շարժիչ նյարդային բջիջները այնպիսի նեյրոններ են, որոնց ելուստներն օրգաններում վերջանում են շարժիչ վերջույթներով: Միջադիր նեյրոնները իրար են կապում այլ նեյրոնները, օրինակ, զգացողը կապում են շարժիչի հետ: Երկու նեյրոնների հպման տեղը կոչվում է փինապս: Նյարդային հյուսվածքի հիմնական հատկությունը դրդելիությունն է և հաղորդելիությունը, այսինքն՝ գրգիռների ընկալման, նյարդային ազդակների մշակման ու հաղորդման ընդունակությունը: Կենդանի օրգանիզմում նյարդային ազդակները հաղորդվում են դենորիտ (նեյրոնի մարմին) նեյրիտ ուղղությամբ: Նյարդային հյուսվածքի կազմության մեջ մտնում է նաև նեյրոգլիան, որն կազմված է տարբեր ծփ ելուստավոր բջիջներից և կատարում է հենարանային, մուցող, պաշտպանական ֆունկցիաներ:

Յուրաքանչյուր օրգան ունի բարդ կառուցվածք, բաղկացած է մի քանի հյուսվածքներից և կատարում է որոշակի ֆունկցիաներ: Ֆունկցիաներով նման տարբեր օրգանները միավորվում են օրգան-համակարգերի մեջ, այսինքն՝ համակարգն օրգանների ֆունկցիոնալ միավորումն է: Այդպիսի համակարգեր են՝ ոսկրային (կմախքը կազմող), մկանային, մարսողության, սիրտ-անոթային, շնչառության, միզամեռական համակարգերը, մաշկը, ներզատիչ օրգանները, նյարդային համակարգը և զգայարանները:

Օրգանիզմի բոլոր համակարգերը սերտորեն կապված են միմյանց հետ: Անբողջ օրգանիզմը մեկ միասնական անբողջության մեջ միավորող համակարգերը սիրտ-անոթային և նյարդային համակարգերն են: Բոլոր օրգաններում կան արյունատար անոթներ, որոնցով անընդհատ շրջանառություն է կատարում արյունը: Արյան հիմնա-


կան ֆունկցիաներից մեկը օրգաններին թթվածին ու սննդանյութեր հասցնելն է և նրանցից նյութափոխանակության արգաշիքները տանելը: Նյարդերը զնում են բոլոր օրգաններն ու նրանցում ճյուղավորվում: Նյարդային համակարգը կարգավորում է օրգանների աշխատանքը, իրականացնում է կապը օրգանների տարբեր համակարգերի, ինչպես նաև օրգանիզմի ու արտաքին միջավայրի միջև:

Բջիջների, հյուսվածքների, օրգանների և ամբողջ օրգանիզմի կենսագործունեության հիմքում ընկած է նյութափոխանակությունը, որի մեջ մտնում են փոխադարձաբար իրար հետ կապված երկու պրոցեսներ. ասիմիլյացիան՝ դրսից մտնող նյութերի յուրացումը բջիջներում, և դիսիմիլյացիան՝ բջիջների կենդանի նյութի քայլայումը: Ասիմիլյացիայի և դիսիմիլյացիայի հետևանքով տեղի է ունենում կենդանի նյութի մշտական վերականգնում: Ըստ որում դիսիմիլյացիան ուղեկցվում է էներգիայի անջատումով, որի հաշվին կատարվում են օրգաններում ու հյուսվածքներում ընթացող բոլոր պրոցեսները:

ԾՐԺՈՂԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ

Ուկրեր և ուկրերի միացումներ. Ուկրերը և նրանց միացումները կազմում են մեր մարմնի կմախքը (Ակ. Դ): Կմախքը կատարում է հենարանի, շարժման, պաշտպանական և կենսաբանական ֆունկցիաներ: Հենարանային ֆունկցիայի հությունն այն է, որ կմախքը պահում է մնացած բոլոր օրգանները և մարմնին տալիս է որոշակի ծև ու դիրք: Շարժման ֆունկցիան որոշվում է նրանով, որ ուկրերը մկանների կծկման ժամանակ կատարում են լժակի դեր: Պաշտպանական ֆունկցիան կայանում է նրանում, որ կմախքի առանձին մասերը պաշտպանում են նյութ օրգանները (օրինակ՝ գանգի ուկրերը պաշտպանում են գլխուղեղը): Կմախքը կարևորագույն կենսաբանական ֆունկցիան նյութափոխանակությանը (գերազանցապես կացիկումի և ֆուֆորի փոխանակությունը) և արյունաստեղծմանը մասնակցելն է:

Ուկրը կազմված է ամուր (հոծ) և սպունգանման ուկրային նյութից, պարունակում է ուկրածուծ, ծածկված է վերնոսկրով և ունի նյարդեր, արյունատար ու ավշային անոթներ: Հոծ նյութը կազմում է ուկրի արտաքին շերտը, շատ կարծիք է, որի տակ գտնվում է սպունգանման նյութը: Ըստ ծևի ու կազմության ուկրերը լինում են խողովակավոր (ազատ վերջուղթների ուկրերը), սպունգային (կրծոսկրը, կողերը, ողերի մարմինները), տափակ (թիակները, գանգաթաղի ուկրերը) և խառը (գանգի հիմի ուկրերը): Յուրաքանչյուր խողովակավոր ուկր ունի միջին մաս՝ դիաֆիզ և երկու ծայրեր՝ էպիֆիզներ: Դիաֆիզը կազմված է հոծ նյութից, ներսում ունի խողովակ, որը լցված է ուկրածուծով, իսկ էպիֆիզները կազմված են գերազանցապես սպունգանման նյութից և դրսից ծածկված են հոծ նյութի բարակ շերտով:



Ա. 1. Մարդու կմախքը կրողքից և առջևից. 1 - զանգ, 2 - ողնասայում (րաժիններ). ա - պարանոցային, բ - կրծքային, գ - գոտկային, η - սրբուկրային, ե - պոչուկային), 3 - անրակ, 4 - կրծովուկ, 5 - կողեր, 6 - բազկուսկ, 7 - ճամանչուկ, 8 - ծղիկուսկ, 9 - դաստուկի ուկրեր, 10 - նախադաստուկի ուկրեր, 11 - ձեռքի նախաների ուկրեր, 12 - զալոսուկ, 13 - նախուսուկ, 14 - ցալուսուկ, 15 - սրբուսուկ, 16 - ազդրուսուկ, 17 - ծնկուսուկ, 18 - մեջ ուղը, 19 - փոքր ուղը, 20 - նախազարշապարի ուկրեր, 21 - կրունկուսուկ:

Վերնոսկը ամուր սերտաճած է ուսկրի հետ, պարունակում է ուսկրի սնուցումն ապահովող անոթներ ու նյարդաթեթեր: Վերնոսկրի հաշվին ուսկրը աճում է լայնությամբ: Իսկ երկարությամբ ուսկրերն աճում են խողովակավոր ուսկրերի դիմաֆիզի և էպիֆիզի արանքում գտնվող այսպես կոչված մետապիֆիզային աճառների հաշվին, որոնց ուսկրացումն ավարտվում է 21-24 տարեկանում:

Տարբերում են կարմիր և դեղին ուսկրածութեր: Կարմիր ուսկրածութերը գտնվում է սպունգանման նյութի ուսկրային թիթեղների արանքում և պատկանում է արյունաստեղծ օրգաններին: Դեղին ուսկրածութերը կազմված է գերազանցապես ճարպային բջիջներից:

Ուսկրերի մեծ մասը իրար են միանում հողերի միջոցով: Յուրաքանչյուր հող ունի աճառով ծածկված հոդային մակերես, վերջինիս եզրերին կազող հոդապարկ և ոչ մեծ քանակությամբ կաչուն մածուցիկ հեղուկ (նվազեցնում է շփումը հոդերում) պարունակող հոդի խոռոչ: Բացի այդ, կան անընդհատ միացումներ աճառների օգնությամբ և շարակցական հյուսվածքի միջոցով: Ի տարբերություն հոդերի այս միացումները գորեք (ցայլային համաձոն) կամ լրիվ (գանգի ուսկրերի կարերը) անշարժ են:

Կմախչի կառուցվածքը. մարդու կմախչն ունի հետևյալ բաժններ՝ իրանի կմախչ, վերին վերջույթների կմախչ, ստորին վերջույթների կմախչ և գլխի կմախչ (գանգ):

Իրանի կմախչի մեջ են մտնում ողնաշարը (ողնասյունը), կրծոսկը և 12 զոյգ կողերը: Ողնաշարը բաղկացած է իրար միացած 33-34 ողերից: Նրա մեջ տարբերում են. պարանոցային բաժին՝ 7 ող, կրծքային՝ 12, զոտկային՝ 5, սրբոսկրային՝ 5 (առաջացնում են սրբոսկը) և պոչուկային՝ 4-5 ողեր: Յուրաքանչյուր ողն բաղկացած է մարմնից և ողնաշարի խողովակը սահմանափակող աղեղից: Աղեղից դուրս են զայխ ելուստներ՝ 1 փշային, 2 լայնածիգ և 2-ական վերին ու ստորին հոդային: Բոլոր ողերի ողնային անցքերը միասին կազմում են ողնաշարային խողովակը, որտեղ գտնվում է ողնուղեղը՝ իր թաղամբներով:

Նորածնի ողնաշարը համարյա ուղիղ է: Երեխայի զարգացման հետ առաջանում են ողնաշարի ծռումները. երկու ծռում դեպի առաջ՝ վզի ու գոտուկային լորդոզները, և երկու ծռում դեպի ետ՝ կրծքային ու սրբոսկրային կիֆոզները: Որոշ մարդկանց մոտ նկատվում է ողնաշարի կողքի ծռում՝ սկոլիզ:

Կրծոսկը տափակ սպունգանման ուսկր է, կազմված է կոթունից, մարմնից և թրածելունից: Կողերը սպունգանման, քիչ կորացած երկար ուսկրեր են: Բոլոր կողերը ետին ծայրերով հոդերի օգ-

նությամբ միանում են կրծքային ողերին: Վերին 7 կողերի առաջային ծայրերը աճառներով միանում են կրծոսկրին և պայմանականորեն կոչվում են իսկական: 8-10 զույգ կողերի աճառներն առաջացնում են կողային աղեղ, իսկ 10-12 զույգ կողերի առաջային ծայրերը ազատ կերպով վերջանում են մկաններում և կոչվում են ծփան կողեր: Կրծոսկրը, կողերը, կրծքային ողերը և նրանց միացումներն առաջացնում են կրծքի վանդակի կմախքը:

Ուսագոտու կմախքը կազմված է երկու զույգ ոսկրերից՝ անրակից ու թիակից:

Ազատ վերին վերջույթների կմախքի մեջ են մտնում բազկոսկը, նախաբազկի ու դաստակի ոսկրերը և դրանց միացումները: Բազկոսկի վերին էափիզի վրա գտնվում են զիխիկը, անատոմիական ու վիրաբուժական վզիկները: Նախաբազկի ոսկրերը երկուսն են՝ ծղիկոսկրը (ճկույթի կողմում է) և ճաճանչոսկրը: Զերքի ոսկրերը ստորաբաժանվում են դաստակի ոսկրերի (8 ոչ մեծ ոսկրեր, որոնք դասավորված են երկու շարբով), նախադաստակի ոսկրերի (5 ոսկրեր) և նատների ֆալանգների (մեծ մատն ունի երկու, իսկ մնացած մատները՝ երեքական ոսկրեր):

Ուսահողջ կազմված է թիակի տանձածն փոսից և բազկոսկի զիխիկից: Արմնկային հողը կազմված է բազկոսկրից, ծղիկոսկրից և ճաճանչոսկրից: Ճաճանչ-դաստակային հողը ճաճանչոսկրը միացնում է դաստակի առաջին շարքի ոսկրերի հետ:

Կոնքային գոտու կմախքը կազմված է երկու կոնքոսկրերից, որոնք միանալով իրար, սրբոսկրի ու պղուկի հետ, գոյացնում են կոնքը: Կոնքոսկրը սերտածում է (մինչև 16 տարեկանը) երեք ոսկրերից՝ զստային, ցայլային և նստային: Նրանց աճակցումների տեղում գտնվում է քացախափոսը, որի մեջ է մտնում ազդոսկրի զիխիկը:


Ընդունված է մեծ կոնքը տարբերել փոքր կոնքից. նրանց միջև անցնում է սահմանային գիծ: Մեծ կոնքը կազմված է գերազանցապես զստոսկրերի թերերով, իսկ փոքր կոնքը՝ նստոսկրերով և ցայլոսկրերով՝ սրբոսկրի ու պղուկի հետ միասին: Փոքր կոնքի խորոշում տեղավորված են միզապարկը, ուղիղ աղիքը և սեռական օրգանների մի մասը: Կանանց կոնքը տղամարդկանց կոնքից լայն է, կանանց զստոսկրերի թերեր ավելի են տարածված:

Ստորին ազատ վերջույթի կմախքի մեջ են մտնում ազդոսկրը, սրունքի և ոտքի ոսկրերը և նրանց միացումները: Ազդոսկրը կմախքի ամենաերկար խողովակավոր ոսկրն է: Ծնկոսկրը եռանկյունաձև, ոչ մեծ ոսկր է, տեղավորված է ազդոի քառագուլիս մկանի ջի հաստության մեջ: Սրունքի ոսկրերը երկուսն են՝ մեծ ոլոքը (տեղավոր-

ված է մեծ մատի կողմում) և փոքր ոլոքը: Ուժիք թարի ոսկրերն են գարշապարի ոսկրերը (7 ոսկրեր, ամենամեծը կրունկոսկրն ու վեցոսկրն են), նախագարշապարի ոսկրերը (5 ոսկրեր) և մատոսկրերը: Կոնքագդրային հողը կազմված է կոնքոսկրի քացախակոսից և աղդրոսկրի գլխիկից: Ծնկահողը կազմված է 3 ոսկրերից՝ աղդրոսկրից, մեծ ոլոքից և ծնկոսկրից: Մրունք-թաթային հողը կազմված է սրունքի երկու ոսկրերի ստորին ծայրերից և վեցոսկրից:

Գյշի կմախչը՝ գանգը կազմված է մեծ թվով իրար միացած զույգ և կենտ ոսկրերից (նկ. 2): Չուզ ոսկրերն են՝ գագաթոսկրը, բունքոսկրը, արցունքոսկրը, քթոսկրը, ստորին քթային խեցին, այտոսկրը, քմոնսկրը և վերին ծնոտոսկրը: Կենտ ոսկրերն են ճակատոսկրը, ծոծրոսկրը, սեպոսկրը և մաղոսկրը: Գանգը բաժանվում է երկու մասի՝ ուղեղային և ընդերային: Ուղեղային գանգի ոսկրերը գետեղարան են ուղեղի (գանգի խոռոչը), տեսողության օրգանի (ակնակապիճը), լսողության ու հավասարակշռության օրգանների համար: Ԙնդերային գանգի ոսկրերը կազմում են բերանի և քիչ խոռոչների կմախչը: Գանգի կազմության մեջ են մտնում նաև գանգաթաղն ու հիմը:

Գանգի որոշ ոսկրերի կառուցվածքային առանձնահատկությունը նրանց ներսում օղով լցված խոռոչների առկայությունն է: Այդպիսի խոռոչներ ունեն վերծնոտային ոսկրերը, ճակատոսկրը և այլն:



Նկ. 2. Սարդու գանգը առջևից և կողքից. 1 - ճակատոսկր,
2 - գագաթոսկր, 3 - սեպոսկր, 4 - բունքոսկր, 5 - բունքոսկրի պատկածն
երուն, 6 - այտոսկր, 7 - արցունքոսկր, 8 - քթոսկր, 9 - ստորին քթային
խեցի, 10 - խոլոսկր, 11 - վերին ծնոտոսկր, 12 - ստորին ծնոտոսկր,
13 - ծոծրակոսկր:

Գանգի բոլոր ուսկրերը, բացառությամբ ստորին ծնոտոսկրի, միանում են շարակցական հյուսվածքի բարակ միջնաշերտերով՝ կարերով։ Ստորին ծնոտը քունքոսկրերին է միանում զույգ քունք-ծնոտային հոդերով։


Մկաններ. ըստ ֆունկցիոնալ հատկանիշի մկանները ստորաբաժանվում են երկու խմբի՝ կամային և ոչ կամային։ Ոչ կամային մկանները բաղկացած են հարթ մկանային հյուսվածքից, որոնց կօկումից է կախված օրգանների ծավալը, նրանց լուսանցքի մեծությունը, ինչպես նաև ներքին օրգանների պարունակության տեղաշարժը (օրինակ՝ սննդի տեղաշարժը մարսողության ուղիղությունը)։ Կամային մկանները բաղկացած են միջածիգ-գոլավոր մկանային հյուսվածքից։ Այս խմբի մեջ մտնում են գլխի, հրանի և վերջույթների մկանները, այսինքն՝ կմախքային մկանները և որոշ ներքին օրգանների մկանները (լեզվի, կոկորդի և այլն)։

Կմախքային մկանների կազմի մեջ մտնում են տարբեր երկարության մկանաթերթը. դրանք ստվորաբար դասավորվում են իրար զուգահեռ և միավորվում են առաջին խրձերի մեջ։ Ցուրաքանչյուր մկան բաղկացած է բազմաթիվ այդպիսի խրձերից։ Առանձին մկանախրձերը և ամբողջ մկանն ունեն բարակ շարակցահյուսվածքային թաղանթներ։ Բացի այդ, մկանների խումբը և առանձին մկանները ծածկված են ավելի պինդ շարակցահյուսվածքային թաղանթներով, որոնք կոչվում են փակեղներ։

Կմախքային մկանների ծայրերին կան ջլեր, որոնց օգնությամբ նրանք կաշում են ոսկրերին, իսկ այն ջլերը որոնք լայնաշերտ են կոչվում են ջլոններ։

Կախված մեծությունից և ծներից՝ տարբերում են երկար, լայն և կարծ մկաններ։ Երկար մկանները տեղավորված են գերազանցապես վերջույթների վրա, լայն մկանները՝ հրանի վրա, իսկ կարճերը՝ կողերի և ողերի միջև։ Համարյա բոլոր մկաններն անցնում են 1, 2 կամ ավելի հոդերի վրայով և կծկվելիս նրանց մեջ առաջացնում են շարժումներ։ Ըստ որում հոդի առաջային մասի մկանները հոդը ծալում, հետևի մասինը՝ տարածում, ներսայինները՝ առթերում, իսկ դրայինները զատում են։ Որոշ մկաններ ունեն մկանաթելերի շրջանձև դասավորություն և տեղավորված են բացվածքների շուրջը (օրինակ՝ բերանի ճեղքի շուրջը)։ Կծկվելիս դրանք փակում են բացվածքները և դրա համար էլ կոչվում են սեղմիչներ։ Բացվածքը լայնացնող մկանները կոչվում են լայնիչներ։

Օրգանիզմի բազմաթիվ մկաններից (400-ից ավելի) նշենք մի քանիսը (Ակ. Յ.):



Նկ. 3. Մարդու մկանները առօսից և ետևից.

- 1 - կրծովով-անրակ-պտկածն մկան, 2 - բազկի երկգլուխ մկան,
- 3 - սեղանարդ մկան, 4 - եռագլուխ մկան, 5 - որովայնի արտաքին թեք մկան, 6 - աճուկային կապան, 7 - ազդրի քառագլուխ մկան,
- 8 - մեծ հետույքային մկան, 9 - սրունքի եռագլուխ մկան (Երկվորյակ մկան և ծկնամկան), 10 - կրնկի (աքիլեսյան) ջիլ,
- 11 - սերմնապար:

Գլխի մկանների մեծ մասը տեղավորված է դեմքի շրջանում: Դեմքի բոլոր մկաններն ընդունված է բաժանել երկու խմբի՝ դիմախաղի և ծամիչ մկանների: Դիմախաղի մկանները սկսվում են գանգի ոսկերից և միահյուսվում են մաշկին, որոնց կծկման ժամանակ փոխվում է դեմքի արտահայտությունը: Ծամիչ մկանների երկու ծայրերը կպչում են գանգի ոսկերին, ըստ որում մի ծայրը անպայման կպչում է ատորին ծնոտին:

Պարանոցի շուրջը կան մեծ քանակությամբ մկաններ: Դրանցից ամենամեծը կրծոսկր-անրակ-պտղածն մկանն է:

Կրծքի միջկողային տարածություններում տեղավորված են արտաքին միջկողային մկանները, որոնք բարձրացնում են կողերն ու մասնակցում են ներշնչման պրոցեսին և ներքին միջկողային մկանները, որոնք մասնակցում են արտաշնչման պրոցեսին: Ստոծանին կենտ մկան է, կրծքի խոռոչը բաժանում է որովայնի խոռոչից, այդ պատճառով էլ կոչվում է կրծքառորդվայնային միջնապատ և ունի զմբերի ձև: Ստոծանու վրա կան 3 մեծ անցքեր՝ առոտայի, կերակրափողի և ստորին սիներակի համար: Ստոծանին գլխավոր շնչառական մկանն է: Կծկվելիս այն իջնում է (տեղի է ունենում ներշնչում), թուլանալիս բարձրանում, ընդունում է նախկին դիրք (կատարվում է արտաշնչում):

Որովայնի մկանները գտնվում են կրծքավանդակի ու կոնքի միջև, մասնակցում են որովայնի խոռոչի պատերի առաջացմանը և կազմում են որովայնի մամուլը: Կծկվելիս նրանք բարձրացնում են որովայնի խոռոչի ներսի ճնշումը և նպաստում են առիթների դատարկման գործողությանը, միզելուն, մասնակցում են շնչառության գործողությանը, իսկ կանանց մոտ, բացի այդ, նաև ծննդաբերությանը: Որովայնի արտաքին թեք մկանի ջրոնի ստորին եզրը վաքածն ծալված է ներս և կոչվում է աճուկային կապան: Վերջինիս զուգաեթու և նրանից բարձր գտնվում է 5 ամ երկարությամբ նեղ, ճեղքանման տարածություն՝ աճուկային խողովակը, որով անցնում են սերմնալարը (տղամարդկանց մոտ) և արգանդի կլոր կապանը (կանանց մոտ): Որովայնի սպիտակ գծի (ամուր ֆիբրոզային ժապավեն, որը ձգվում է կրծոսկրի թրածն ելունից մինչև ցայլային համաձոնը) մոտավորապես մեջտեղում տեղավորված է պորտը: Պորտը մի սպի է, որն առաջանում է երեխայի ծնվելուց հետո՝ պորտային օդի սպիացումից: Պոտղի պորտային օդի միջով անցնում է պորտալարը:

Բազկի վրա կան երկու խմբի մկաններ՝ առաջային (երկալիսանի) և հետին (եռագլուխ մկանը): Վերին վերջույթի վրա ուսումնասիրում են անութային (թևատակային) փոսը և արմնկափոսը: Անութային փո-

սը լցված է փիսրուն բջջանքով, որի միջով անցնում են նյարդեր, անոթներ, կան նաև մեծ թվով ավշահանգույցներ: Արմնկափոսի մաշկի տակով անցնում են մակերեսային երակները:

Կոնքի նստային մկաններն երեքն են՝ մեծ, միջին և փոքր, նրանց մեջ (հետույցի վերին-դրսային մասում) կատարում են միջմկանային ներարկումներ:

Ազդրի առաջային խմբի քառագլուխ մկանի չորս գլխիկները ներքնում դարձնում են մի ընդհանուր ջիլ, որն ընդգրկում է ծնկոսկրը և կպչում մեծ ոլորդին:

Սրունքի հետին խմբի ամենամեծ մկանը եռագլուխ մկանն է, որը վերջանում է օրգանիզմի ամենաուժեղ ջրով (կրնկի կամ աքիլեյան) և կպչում է կրունկոսկրին:


Ստորին վերջույցի վրա տեղավորված է ծնկափոսը: Նրա մեջ կան խոշոր արյունատար ամորթեր (ծնկափոսային զարկերակը և երակը) և նյարդեր, որոնք շրջապատված են բջջանքով:

ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՍՎԱՐՁ ԵՎ ՄԱՐՍՈՂՈԹՅՈՒՆ

Մարդու օրգանիզմը կանոնավոր կերպով սնունդ ընդունելու կարիք է զգում, որը անհրաժեշտ է որպես էներգիայի աղբյուր, ինչպես նաև մարմնի հյուսվածքների կենդանի նյութի կառուցման համար: Սննդի բաղադրության մեջ են մտնում շատ բարդ սննդարար նյութեր, որոնք այդ ձևով չեն յուրացվում, ուստի սնունդը ենթարկվում է մարսման: Մարսողության պրոցեսի հուրժունն այն է, որ մարտողական խողովակում տեղի է ունենում բարդ նյութերի մեխանիկական և քիմիական մշակում, որի հետևանքով դրանք ճեղքվում են ավելի պարզ և լուծելի միացությունների: Դա հնարավոր է դարձնում նրանց ներծծումը և յուրացումը: Սննդի մեխանիկական մշակումը նրա մանրացումն ու տրորումն է: Քիմիական մշակումը տեղի է ունենում մարսողական հյութերի (թուք, ստամոքսահյութ, լեղի, ենթասուամոքսային և աղիքային հյութ) ներգործության տակ, որոնց բաղադրության մեջ կան մարսողական ֆերմենտներ: Յուրաքանչյուր ֆերմենտ ազդում է որոշակի նյութերի վրա և միջավայրի որոշակի պայմաններում:

Մարսողության օրգանների համակարգը բաղկացած է մարսողական խողովակից և մարսողական գեղձերից (Ան.4):

Մարսողական խողովակն ունի մոտ 8-10մ երկարություն և ստորաբաժանվում է հետևյալ բաժինների՝ բերանի խոռոչ, ընապան, կերակրափոս, ստամոքս, բարակ և հաստ աղիքներ: Մարսողական խողովակի մեջ մասի պատերը կազմված են երեք շերտից. ներքին



Նկ. 4. Սարդու մարստորթյան համակարգի օրգանները (սխեմա).

- 1 - Ենթաճնոտային թքագեղձ,
- 2 - Ենթալեզվային թքագեղձ,
- 3 - Բերանի խոռոչ,
- 4 - լեզու,
- 5 - հարականջային թքագեղձ,
- 6 - ընկան,
- 7 - կերակրավիոր,
- 8 - ստամոքս,
- 9 - Ենթաստամոքսային գեղձ,
- 10 - տասներկումատնյա աղիք,
- 11 - աղիք,
- 12 - Ենթազստային աղիք,
- 13 - որդանման եղուն,
- 14 - կույր աղիք,
- 15 - Վերընթաց խթաղիք,
- 16 - լայնական խթաղիք,
- 17 - վայրընթաց խթաղիք,
- 18 - S-ածև աղիք,
- 19 - ուղիղ աղիք,
- 20 - լեղապարկ,
- 21 - լյարդ,
- 22 - ընդհանուր լեղաժորան:

Լորձաթանք Ենթալորձային շերտի հետ միասին, միջին՝ մկանային շերտը և արտաքին՝ շճաթաղանք: Լորձաթաղանքի հաստության մեջ (և Ենթալորձային շերտի մեջ) գտնվող բազմաթիվ մանր գեղձերը լորձաթաղանքի մակերեսին արտադրում են մածուցիկ նյութ՝ լորձ, որը հեշտացնում է աննդի առաջշարժումը և պահպանում է լորձաթաղանքը սննդի կոչտ մասնիկների ու գանազան քիմիական նյութերի վնասակար ներգործությունից: Մկանային շերտը կազմված է երկայնաձիգ և շրջանաձև մկանաթելերից:

Խողովակի վերին բաժիններում մկանային շերտը կազմված է միջածիգ-գոլավոր մկանային հյուսվածքից: Իսկ կերակրափողը ստորին մասից սկսած՝ հարթ մկանային հյուսվածքից: Մկանային շերտի կծկումների շնորհիվ սնունդը խառնվում և առաջ է շարժվում մարտողական խողովակով: Շճաթաղանքը ծածկում է որովային խոռոչում գտնվող մարտողական օրգանները և կոչվում է որովայնամբից:

Մարտողական գեղձերը ստորաբաժանվում են մանր գեղձերի, որոնք գտնվում են մարտողական խողովակի պատի լորձաթաղանքի և Ենթալորձային շերտի հաստության մեջ, և խոշոր գեղձերի (թքային, սարդ, Ենթաստամոքսային գեղձ): Վերջինները գտնվում են մարտողական խողովակից դուրս, բայց նրա հետ հաղորդակցվում են ծորաններով:

Բերանի խոռոչը մարտողական խողովակի սկզբնական բաժինն է: Խոռոչի բոլոր պատերը պատված են լորձաթաղանթով, որը ծնութի ատամնաբնային ելուստների վրա ամուր սերտաճած է շրջուսկրի հետ և կոչվում է լինդ: Բուկը իրենից ներկայացնում է մի անցք, որը վերևում սահմանափակված է փափուկ քիմքով, ներքեւից՝ լեզվի արմատով, կողքերից՝ լորձաթաղանքի գույզ ծալքերով՝ քնային աղեղիկներով: Ալերիկների միջև գտնվող փոխերում տեղափոխված են երկու քնային նշիկները: Բերանի խոռոչում են գտնվում ատամները և լեզուն: Նրա մեջ են բացվում թքագեղձերի ծորանները:

Յուրաքանչյուր ատամ ունի ատամնապսակ, վզիկ և արմատ: Տարբերում են կտրիչներ, ժանիքներ, փոքր և մեծ սեղանատամներ: Ատամները լինում են կաթնային և մշտական: Կաթնատամները (20 ատամ) դուրս են գալիս 6 ամսականից մինչև 2 տարեկանը, իսկ մշտականները (32 ատամ)` 7-14 տարեկանում: Իմաստության ատամները դուրս են գալիս ավելի ուշ:

Լեզու կազմված է մկաններից, որոնք պատված են լորձաթաղանթով: Այն ունի ծայր, մարմին և արմատ: Լեզվի վերին երեսին լորձաթաղանքը առաջացնում է պտկիկներ, որոնց մի մասի վրա կան համային կոճղեզներ:

Կան երեք գույց խոշոր թքագեղձեր՝ հարականջային, ենթածնոտային և ենթալեզվային: Դրանցից առաջինի ծորանը բացվում է այսի լորձաթաղանթի վրա, իսկ մնացած երկուսի ծորանները՝ լեզվի տակ:

Նշիկները բաղկացած են ավշատայիթեային հյուսվածքից, որը խաղում է արգելապատի դեր: Դրանք են 6 նշիկ՝ 2 քմային, մեկ լեզվային (տեղափորված է լեզվի արմատում), մեկ ըմպանային և 2 փողային (գտնվում են քթազմպանում): Բոլոր նշիկները միասին կազմում են, այսպես կոչված, լիմֆոիդ օղակը: Բերանի խոռոչը բկանցքի միջոցով հաղորդակցվում է ըմպանի հետ:

Ընպանն ունի խողովակի ծև և ընկած է քրի խոռոչի, բերանի խոռոչի ու կոկորդի ետևում, ուստի այն համապատասխանաբար ունի երեք մաս՝ քթային կամ քթազմպան, բերանային և կոկորդային: Ընպանի միջով սնունդը բերանի խոռոչից անցնում է կերակրափողի մեջ, իսկ ողը՝ քրի խոռոչից կոկորդի մեջ:

Կերակրափողը իրենից ներկայացնում է մոտ 25-30սմ երկարության մի փող: Նրա սկզբնական բաժինը գտնվում է պարանոցի շրջանում, մեծ մասն ընկած է կրծքի խոռոչում՝ ողնաշարի առջևում, կրծքային առրտայի կողքին, իսկ փոքր մասը՝ որովային խոռոչում, սոռնանու տակ: Կերակրափողի երկայնքով կան նեղացումներ. այդ տեղերում կարող են ընկնել և մնալ պատահականորեն կուլ տված օտար մարմիններ:

Բժշկական պրակտիկայում առօկի ատամներից մինչև կերակրափողի՝ ստամոքսի մեջ մտնելու տեղի ընկած տարածությունը հաշվում են մոտ 40սմ (ստամոքսային գրնոր ներս տանելու դեպքում):

Ստամոքսը մարսողական խողովակի լայնացած բաժինն է, ունի մոտ 3/ տարողություն: Այն տեղափորված է որովայնի խոռոչի վերին բաժնում՝ ստոծանու տակ, ընդ որում նրա մեծ մասն ընկած է միջին գծից դեպի ծախ: Ստամոքսի լործաթաղանթն առաջացնում է բազմաթիվ ծալքեր և ունի մեծ քանակությամբ գեղձեր, որոնց արտազատուկն արտադրվում է ստամոքսի խոռոչի մեջ և կոչվում է ստամոքսայութ: Մկանային շերտը ստամոքսի և տասներկումատնյա աղիքի սահմանի վրա առաջացնում է հաստացում՝ ստամոքսաելքի սեղմիչը: Ստամոքսի մկանային շերտի կծկումները ուղեկցվում են նրա պատի մուտքից դեպի ելքն ուղղված պարբերաբար կրկնվող գալարածն շարժումներով՝ ստամոքսի պերիստալտիկայով:

Բարակ աղիքը մոտ 5սմ երկարությամբ մի խողովակ է: Ունի երեք մաս՝ տասներկումատնյա աղիք, աղիք աղիք և զստաղիք:

Տասներկումատնյա աղիքը ունի 25սմ երկարություն, պայտածն է և գրկում է ենթաստամոքսային գեղձի գլխիկը: Տասներկումատնյա

աղիքն ունի Վերին հորիզոնական, վայրէց և ստորին հորիզոնական մասեր: Վայրէց մասի մեծ պտկիկի մեջ են բացվում ընդհանուր լեռածորանը և ենթաստամոքսային գեղձի գլխավոր ծորանը:

Սլիմ աղին և զստաղին զբաղեցնում են որովայնի խոռոչի միջին և ստորին բաժինները, առաջացնում են բազմաթիվ գալարներ, որոնք միջըներքի օգնությամբ կախված են որովայնի հետին պատից: Բարակ աղիքի լորձաթաղանթում կան բազմաթիվ մանր գեղձեր, որոնց արտազատուկը աղիքայութն է: Բարակ աղիքի լորձաթաղանթի առանձնահատկությունն այն է, որ ունի շրջանաձև ծալքեր և մեծ քանակությամբ թափկներ: Յուրաքանչյուր թափկի հրենից ներկայացնում է լորձաթաղանթի մոտ 1մ/ բարձրությամբ դուրս ցցվածք, որով անցնում են արյունատար ու ավշային անօրներ և նյարդեր: Թափկների միջոցով սննդանյութերը աղիքից ներծծվում են արյան մեջ: Բարակ աղիքի պատի մեջ կան մեծ քանակությամբ ավշահանգույցներ, որոնք խաղում են պաշտպանական դեր: Բարակ աղիքը կատարում է պերիստալիտիկ շարժումներ՝ ստամոքսից հաստ աղիքի ուղղությամբ: Բացի այդ, տեղի են ունենում ճոճանակած շարժումներ:

Աջ զստափուսում զստաղին բացվում է հաստ աղու մեջ, որն ունի մոտ 1,5մ երկարություն: Այն ստորաբաժանվում է կույր աղիք՝ որդանման ելունով, խթաղիքի և ուղիղ աղիքի: Խթաղիքը երեք կողմից (աջից, վերևից ու ծախսից) պատում է բարակ աղիքի գալարները: Այն իր հերթին ստորաբաժանվում է Վերջնթաց, լայնական, վայրընթաց և սիզմայած աղիքների:

Ուղիղ աղիքը հաստ աղիքի ծայրային բաժինն է, ընկած է փոքր կոնքի խոռոչում, սրբուկրից և պոչուկից առաջ և Վերջանում է հետանքով: Այս անցքի շուրջը կան երկու սեղմիչներ՝ արտաքին (նիշածիգ-գոլավոր մկանից) և ներքին (հարթ մկանային հյուսվածքից):

Ենթաստամոքսային գեղձը տեղավորված է ստամոքսի ետևում, որովայնի ետին պատի վրա: Համարվում է խաղը գեղձ, որովհետև ունի և՛ ներգատիչ, և՛ արտազատիչ մասեր: Այն բաղկացած է բլթակ-ներից, որոնց գեղձային քիչներոն արտադրում են ենթաստամոքսային հյութ: Վերջինս ծորաններով լցվում է տասներկումատնյա աղիքի մեջ: Բացի այդ, գեղձի նյութի մեջ կան գեղձային հյուսվածքի հատուկ մասեր, որոնք կոչվում են լանգերհանսի կողյակներ. Վերջիններս չունեն արտատար ծորաններ և արյան մեջ են արտադրում հորմոններ՝ ինսուլին և գլյուկազոն, որոնք կարգավորում են ածխածների փոխանակությունը:

Լարողը մոտ 1,5 կգ զանգվածով խոշոր օրգան է: Այն տեղավորված է որովայնի խոռոչի Վերին բաժնում, ստորանու տակ, աջ և

մասնակի չափով ծախս ենթակողային մասում: Կարդի ստորին երեսին կա լայնական մի ակոս՝ սարդի դրունքը, որի միջով անցնում են սարդային զարկերակը, դրոներակը, ավշանորները, նյարդերը և սարդի ընդհանուր ժորանք, որով արտահոսում է լեղին: Ի տարբերություն մյուս օրգանների, սարդի մեջ է հոսում ոչ միայն զարկերակային, այլև երակային արյուն (դրոներակով), որը կապված է օրգանի ֆունկցիաների հետ: Լարդից արյունը սարդային երակներով արտահոսում է ստորին սիներակի մեջ:

Լարդի ֆունկցիաները բազմաթիվ են: Այն արտադրում է լեղի, խաղում է պաշտպանական (բարյերային) դեր, մասնակցում է տարբեր նյութերի փոխանակությանը և այլն: Լեղին դեղնագորշավուն հեղուկ է, որի բաղադրության մեջ մտնում են ջուր, լեղաթթուներ, լեղային պիզմներներ և այլ նյութեր: Լեղին սարդում անցնդիատ արտադրվում է և կուտակվում լեղապարկում, որը տեղափորված է սարդի ստորին երեսի վրա և ամբար է լեղու համար: Լեղապարկի ծորանը միանում է սարդի ընդհանուր ծորանին, առաջացնելով տասներկումատնյա աղիքի մեջ բացվող ընդհանուր լեղածորանը: Լեղին ֆերնենտներ չի պարունակում, բայց նաև նաև կացում է ճարպերի մարսմանը, նպաստում է աղիքների պերիստալտիկայի արագացմանը:

Լարդի պաշտպանական ֆունկցիան այն է, որ նրա մեջ վնասագերձվում են ինչպես օրգանիզմում առաջացած (օրինակ հաստ աղիքում), այնպես էլ դրսից օրգանիզմ մտած զանազան վնասակար նյութերը: Լարդում գյուկոզայի ավելցուկը, որը ներծծման ժամանակ բարակ աղիքից նրա մեջ է մտնում դրոներակով, փոխարկվում է գլիկոգենի և պահեստավորվում է: Լարդում սինթեզվում են արյան պլազմայի սպիտակուցները, սպիտակուցային փոխանակության վերջնական արգասիքը՝ ամիակը, փոխարկվում է միզանյութի:

Որովայնամիզզը մի շճարադանք է, որը ծածկութ է որովայնի խոռոչի օրգաններն (ընդերային) ու պատերը (առպատային): Առաստային և ընդերային որովայնամիզքերի միջև գտնվող ճեղքանման տարածությունը կոչվում է որովայնամզի խոռոչ:

Հատ տեղերում որովայնամիզզը պատերից անցնում է օրգանների վրա՝ առաջացնելով ծալքեր: Աղափակ ծալքերի թվին են պատկանում ճարպոնը և միջընդերը: Որովայնամզի բորբոքումը՝ պերիտոնիտը, շատ ծանր հիվանդություն է:

Բերանի խոռոչում սնունդը ծամելիս մանրանում, տրորվում և միաժամանակ խառնվում է ու թրջվում թքով: Թուքը պարունակում է մածուցիկ լորձանութ մուցին և օվան ճեղքող ֆերմենտներ:

Բերանի խոռոչում մարսելուց հետո սնունդը կուլ են տալիս, ընդորում փափուկ քիմքը բարձրանում և թքարմանը բաժանում է ըն-

պանի բերանային բաժնից, մակվոկորդը փակում է կոկորդի մուտքը, սննդի գնդիկը բերանի խոռոչից բկի միջով հրվում է ըմպանի մեջ, իսկ այնտեղից կերակրափողով մտնում է ստամոքս:

Սնունդը ստամոքսում մնում է մի քանի ժամ, խառնվում է ստամոքսահյութի հետև և ստամոքսամուտքից տեղաշարժվում է դեպի ելքը: Ստամոքսահյութը թթու ռեակցիայով թափանցիկ հեղուկ է: Նրա բաղադրության մեջ մտնում են ֆերմենտներ, աղաթքու և լորձ: Աղաթքուն ստամոքսահյութի կարևոր բաղադրամասն է, այն ակտիվացնում է պեպսինը և օծոված է բակտերիցիդ ազդեցությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ ստամոքսի լորձաթաղանթի միջով ներ է ծծվում ջուրը, կարող են ներծծվել դեղանյութերը և որոշ վնասակար նյութեր (ալկոհոլ և այլն):

Բարակ աղիքում ենթաստամոքսային, աղիքային հյութերի և լեղու ազդեցության տակ ավարտվում է սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի մարսումը: Մարսման առավել ինտենսիվ պրոցեսը տեղի է ունենում բարակ աղիքի սկզբնական մասում՝ տասներկումատնյա աղիքում, որը մտնում են ենթաստամոքսային գեղձի հյութը և լեղին:

Ենթաստամոքսային գեղձի հյութի բաղադրության մեջ կան ֆերմենտներ, որոնք ազդում են սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի վրա:

Սլիքային հյութը պարունակում է ֆերմենտներ, որոնք նույնպես ազդում են սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի վրա:

Բարակ աղիքում մարսվելու հետևանքով սննդի բազմապիսի սպիտակուցները փոխարկվում են ամինաթրուների, ածխաջրերը՝ զյուկոզայի, իսկ ճարպերը՝ ճարպաթրուների և գլցերինի, այսինքն՝ այնպիսի նյութերի, որոնք կարող են ներծծվել և յուրացվել օրգանիզմի հյուսվածքներում: Ներծծումը բարդ ֆիզիոլոգիական պրոցես է: Այն տեղի է ունենում գերազանցապես բարակ աղիքում՝ թափիկների միջոցով:

Սննդի չմարսված մնացորդները (բջջանքը և այլն) բարակ աղիքից անցնում են հաստ աղիք: Այստեղ տեղի ունեցող հիմնական պրոցեսը կղանքի ծևավորումն է և ջրի ներծծումը: Բացի այդ, նկատվում է սննդի մնացորդների խմորում և նեխում, որը հարուցում են այդտեղ գտնվող մեծ քանակությամբ բակտերիաները: Ընդ որում առաջանում են զագեր և որոշ քանակությամբ թունավոր նյութեր, որոնց մի մասը ներծծվում է արյան մեջ և մտնում է յարդ, որտեղ և վնասազերծվում է: Հաստ աղիքի միկրոբային ֆլորայի մասնակցությամբ սինթեզվում են ոչ մեծ քանակությամբ որոշ վիտամիններ (Կ, Ի, Բ խմբի): Հաստ աղիքի լորձաթաղանթի միջով ներծծվում են ոչ մեծ քանակությամբ լավ լուծված սննդարար և այլ նյութեր (զյուկոզա, ո-

որշ դեղանյութեր և այլն): Դրա վրա է հիմնված սննդողական հոգ-նայի կիրառումը և դեղանյութերի ներուտիղադիքային ներմուծումը:

Աղիքների դատարկումը կոչվում է դեֆեկացիա (կղում): Չա-փահասները կղում են օրական 1-2 անգամ, իսկ ծձկեր երեխաները և մանուկները՝ ավելի հաճախ:

ԱՄՅՈՒՆ, ԱՄՅՈՒՆԱՏԱՐ ԵՎ ԱԿՏԱՅԻՆ ՀԱՍՏԱԿՄՈՁԵՐ

Արյունն ու ավիշը կազմում են օրգանիզմի ներքին միջավայրը:

Արյան ֆունկցիաները: Արյունն ունի հիմնականում փոխադրա-կան, պաշտպանական և ջերմակարգավորիչ ֆունկցիաներ: Փո-խադրական ֆունկցիայի էությունն այն է, որ արյունը բոլոր օրգաննե-րի հյուսվածքներն է հասցնում սննդանյութեր ու թթվածին և նրանցից տանում է նյութափոխանակության արգասիքները, այդ թվում՝ ած-խաթթու զազը: Այն միաժամանակ աճբողջ օրգանիզմով մեկ տարա-ծում է հորմոններ ու կենսաբանական առումով այ ակտիվ նյութեր և դրանով իսկ մասնակցում է օրգանների ֆունկցիաների հումորալ կարգավորմանը: Արյան պաշտպանական ֆունկցիան կապված է նրա մեջ գտնվող այնպիսի բջիջների առկայության հետ, որոնք օժտ-ված են ֆագոցիտային հատկությամբ, ինչպես նաև այնպիսի հա-տուկ նյութերի՝ հակամարմինների առկայության հետ, որոնք ունեն պաշտպանական հատկություն: Զերմակարգավորիչ ֆունկցիայի էութ-յունն այն է, որ արյունը մասնակցում է օրգանիզմի ներսի քերմության բաշխմանը և մարմնի կայուն ցերնաստիճանի պահպանմանը:

Արյան բաղադրությունը. արյունը կարմիր գույնի, հիմնային ռեակցիայով, թիչ աղի համով հեղուկ է: Չափահաս մարդու արյան ընդհանուր քանակը միջին հաշվով 5 լ (մարմնի զանգվածի 1/13-ը, կամ քաշի 7-8%): Արյունը բաղկացած է բջջային կամ ծնավոր տար-րերից (40-45%) և հեղուկ մասից՝ պլազմայից (55-60%):

Արյան պլազման թիչ դեղնավուն գույնի մածուցիկ սպիտակու-ցային հեղուկ է: Նրա մեջ գտնվում են արյան բջջային տարրերը: Պլազմայի բաղադրության 90-92%-ը ջուր է, իսկ 8-10%-ը օրգանա-կան և անօրգանական նյութեր: Օրգանական նյութերի մեծ մասը կազմում են արյան սպիտակուցները՝ ալբումինները, գլոբուլինները և ֆիբրինոգենները, սննդարար նյութերը (գլուկոզա, ամինաթթուներ և այլն), նյութափոխանակության արգասիքները (միզանյութ, միզա-թթու և այլն), ինչպես նաև ֆերմենտները և հորմոնները: Անօրգանա-կան նյութերից են կալցիումի, կալիումի աղերը և այլն:

Արյան ծնավոր տարրերն են էրիթրոցիտները, լեյկոցիտները և արյան թիթեղիկները: Արյան 1 մկմ-ի մեջ պարունակվում են $3,9 \times 10^6$ –

-5×10^6 էրիթրոցիտներ, 5×10^3 – 9×10^3 լեյկոցիտներ և $1,7 \times 10^5$ – $3,2 \times 10^5$ արյան թիթեղիկներ: Էրիթրոցիտները կամ արյան կարմիր մարմնիկները թթվածին փոխադրողներն են: Էրիթրոցիտների ցիտոպլազման պարունակում է գունավոր սպիտակուցային նյութ՝ հեմոգլոբին, որով պայմանավորում է արյան կարմիր գույնը: Հեմոգլոբինի քաղաքորության մեջ կա երկար: Երբ արյունը հոսում է թոքերի միջով, էրիթրոցիտների հեմոգլոբինը հագենում է թթվածնով (դառնում է օքսիհեմոգլոբին), այնուհետև արյունը տարածվում է ամբողջ օրգանիզմում և, անցնելով օրգանների մազանորմներով, թթվածինը տալիս է հյուսվածքներին: Հեմոգլոբինը մասնակցում է նաև ածխաթթու գազի փոխադրմանը հյուսվածքներից թոքերը. ածխաթթու գազի մեջ մասը փոխադրում է արյան պլազման:

Սակավարյունության ժամանակ հեմոգլոբինի քանակը պակասում է էրիթրոցիտների քանակի և նրանց մեջ գտնվող հեմոգլոբինի նվազման պատճառով: Որոշ նյութերով (օրինակ՝ շնորհագույն) օրգանիզմի բունավորման դեպքում հեմոգլոբինը դադարում է թոքերում թթվածինն իրեն միացնելով՝ առաջացնելով թթվածնային քաղց: Իսկ որոշ օճերի թույների, զանազան քիմիական նյութերի (թենզով, եթեր) ազդեցության տակ էրիթրոցիտները քայլայվում են և հեմոգլոբինը մտնում է արյան պլազմայի մեջ: Հեմոգլոբինի լուծումը պլազմայում կոչվում է հեմոլիզ: Աղյահի վիճակները վտանգավոր են կյանքի համար:

Լեյկոցիտները կամ արյան սպիտակ մարմնիկները օրգանիզմում խաղում են պաշտպանական դեր՝ օժտված են ֆագոցիտային հատկությամբ: Նրանք կարող են անցնել մազանորմների պատերի միջով և տեղաշարժվել հյուսվածքում: Որոշ լեյկոցիտների ցիտոպլազման պարունակում է հատիկներ՝ հատիկավոր լեյկոցիտներ (նեյտրոֆիլներ և այլն), մյուսների մեջ դրանք չկան՝ ոչ հատիկավոր լեյկոցիտներ (լիմֆոցիտներ և մոնոցիտներ): Տարբեր տեսակի հատիկավոր և ոչ հատիկավոր լեյկոցիտների հարաբերությունը առողջ մարդու արյան մեջ համեմատաբար հաստատուն է: Աղյ հարաբերությունը կոչվում է լեյկոցիտային բանաձև և արտահայտվում է տոկոսներով:

Որոշ վիճակների ժամանակ փոփոխվում է ինչպես լեյկոցիտների ընդիհանուր քանակը, այնպես էլ նրանց տարբեր տեսակների տոկոսային հարաբերակցությունը: Օր՝ բորբոքային պրոցեսները սովորաբար ուղեկցվում են արյան սպիտակ մարմնիկների քարծրացած քանակով: Աղյ երևույթը կոչվում է լեյկոցիտոզ: Լեյկոցիտոզը երթմն նկատվում է նաև առողջ մարդկանց օրգանիզմում (սնունդ ընդունելուց հետո, ֆիզիկական աշխատանքի ժամանակ և այլն): Որոշ ախտաբանական վիճակներում, ընդհակառակը, նկատվում է լեյկոցիտների թվի նվազում՝ լեյկոպենիա (օր՝ իոնացնող ճառագայթման մեջ դրզաներից):

Արյան թիթեղիկները կամ թրոմբոցիտները շատ փոքր գոյացություններ են: Նրանք պարունակում են արյան մակարդմանը մասնակցող հատուկ նյութեր, որոնք արտազատվում են թրոմբոցիտներից՝ քայլայման ժամանակ:

Բժշկական պրակտիկայում հաճախ դիմում են էրիթրոցիտների նստեցման արագության որոշմանը (ԷՆԱ), որը առողջ մարդու մոտ կազմում է 2-15մ/ժամ: Որոշ հիվանդությունների ժամանակ այն բարձրանում է:

Արյունն օժտված է մակարդելու, այսինքն՝ մակարդուկ առաջացնելու ընդունակութամբ: Նորմալ պայմաններում, երբ արյունը շարժվում է արյունատար անորթներով, չի մակարդվում: Արյան որոշ հիվանդությունների ժամանակ անորթների ներսում առաջանում են արյան խցանող մակարդուկներ, որոնք կոչվում են թրոմբներ: Սովորաբար արյան մակարդում տեղի է ունենում արյունահոսության ժամանակ՝ անորթները վնասվելուց: Դա օրգանիզմը պահպանում է արյան մեջ կորուստներից: Արյան մակարդման պրոցեսին մասնակցում են պլազմայում գտնվող շատ նյութեր՝ ֆիբրինոգեն սպիտակուցք, պորոբրոմբին հատուկ ֆերմենտը, կալցիտի աղերի և այլն, ինչպես նաև թրոմբոցիտներում գտնվող նյութեր: Բոլոր այդ նյութերը կոչվում են արյան մակարդման գործոններ: Արյան մակարդման պրոցեսում առաջանում է արյան մակարդուկ՝ թրոմբ, կազմված ֆիբրինի և արյան ծևավոր տարրերի միահյուսված բելերից: Արյան մեջ կան նաև մակարդումը խոչընդոտող նյութեր (օր.՝ հեպարինը):

Բժշկական պրակտիկայում հաճախ կատարում են արյան փոխներարկում (օրինակ՝ արյան կորսուի դեպքում): Փոխներարկման համար արյուն տպով մարդիկ կոչվում են դոնորներ, իսկ արյուն ընդունողներ՝ ռեցիպիենտներ: Արյան փոխներարկման ժամանակ էրիթրոցիտները որոշակի պայմաններում կազմում են իրար և կիրկ են կազմում: Նրանց այդ հատկությունը կոչվում է ազյուտինացիա, որը հանգեցնում է ծանր խանգարումների և կարող է մահվան պատճառ դառնալ: Մարդկանց արյունները իրարից տարբերվում են նրանց մեջ գտնվող ժառանգաբար փոխանցվող հատուկ նյութերով՝ հակածիններով (անտիգեններով): Գոյություն ունեն երեսունից ավելի արյան խնբերի համակարգումներ, որոնցից հիմնականը ABO համակարգն է, համաձայն որի արյան էրիթրոցիտները պարունակում են երկու տեսակի հակածիններ՝ A և B ազյուտինոգեններ, իսկ պլազման պարունակում է երկու տեսակի հակամարմիններ՝ և ազյուտինիններ (կացնող, սոսնձող նյութեր): Ազյուտինոգենների և ազյուտինինների բաղադրությունից կախված տարբերում են արյան 4 խնբեր. առաջին խմբի արյունը՝ O(I) ոչ մի ազյուտինոգեն չի պարունակում, բայց պարունակում է և ազյուտինիններ, երկրորդ խմբի

արյունը՝ A(II) պարունակում է A և , երրորդը՝ B(III) պարունակում է B և , չորրորդի խմբի արյունը՝ AB(IV) պարունակում է A և B ազյուտինոգենները, բայց չի պարունակում ոչ մի ազյուտինին: Երիթրոցիտների ազյուտինացիան սկսվում է այն դեպքում, երբ արյունները խառնվելու ժամանակ իրար են հանդիպում դոնորի արյան A ազյուտինոգենը և ռեցիպիտների արյան ազյուտինինը, կամ՝ դոնորի արյան B ազյուտինոգենը և ռեցիպիտների արյան ազյուտինինը: Արյան այն խմբերը, որոնք խառնվելիս առաջացնում են ազյուտինացիա, կոչվում են անհամատեղելի և, հակառակը, ազյուտինացիա չառաջացնողները կոչվում են համատեղելի:


Արյան մեջ առկա են նաև այլ ազյուտինոգեններ՝ մարդկանց մեծ մասի էրիթրոցիտներում կա ռեզուս գործոն կոչվող ազյուտինոգենը՝ ռեզուս դրական արյուն Rh(+), իսկ վիզոքամասնության արյան մեջ այն չկա՝ ռեզուս բացասական արյուն Rh(-):

Անբողջ կյանքի ընթացքում օրգանիզմում տեղի են ունենում արյան ծերացած քիչների մահացում և քայլայում (էրիթրոցիտներն ապրում են 120-130 օր, իսկ լեյկոցիտները՝ 4-7 օր): Միաժամանակ առաջանում է արյուն կամ, ինչպես ընդունված է անվանել, տեղի է ունենում արյունաստեղծում: Արյան քիչների առաջացման օրգաններն են՝

- կարմիր ուսկրածութը՝ գլխավոր արյունաստեղծ օրգանը, որում զարգանում են էրիթրոցիտները, լեյկոցիտները և թրոմբոցիտները,
- ավշային հանգույցները (միայն լեյկոցիտները),
- փայծաղը:

Փայծաղը տեղավորված է ծախս ենթակողի շրջանում՝ ստոծանու տակ, նրա մեջ զարգանում են լիմֆոցիտները: Վերջիններս բազմանում են լիմֆոկիդ հյուսվածք պարունակող այլ օրգաններում (ուրցագեղձ, մարսողական ուղղու ավշային հանգույցիկներ): Փայծաղում քայլայվում են ծերացած էրիթրոցիտները: Փայծաղում, ինչպես նաև սարդում և արյունատար անոթների ենթամաշկային ցանցում, կարող է լինել մեծ քանակությամբ արյուն: Աղղիսի օրգանները կոչվում են արյան դեպոներ:

Օրգանիզմում արյունը գտնվում է մշտական շարժման մեջ, որը կոչվում է արյան շրջանառություն: Արյունը շարժվում է արյունատար անոթներով, որոնք ներկայացնում են տարբեր տրամագծով առաձգական խողովակներ: Արյան շրջանառության գլխավոր օրգանը փրտոն է, որը սնամեջ մկանային օրգան է և կատարում է ռիթմիկ կծկումներ: Արտի կծկումների շնորհիվ էլ տեղի է ունենում արյան շարժումը օրգանիզմում (Ըկ.5):



Նկ.5. Սիրտ. 1 - առոտա. ω - աղեղ, ρ - վերել, 2 - աջ թոքային զարկերակ, 3 - ձախ թոքային զարկերակ, 4 - թոքային ցողուն, 5 - ձախ թոքային երակներ, 6 - աջ ու ձախ նախասրտեր, 7 - վերին սինէրակ, 8 - աջ ու ձախ փորոքներ, 9 - բազկազիսային ցողուն, 10 - ձախ ընդհանուր ընային զարկերակ, 11 - ձախ ենթաանրակային զարկերակ, 12 - սրտի ներքին շերտ, 13 - սրտի մկանային շերտ, 14 - սրտի արտաքին շերտ, 15 - գազաթ:

Սիրտը ունի կոնի ծև: Գտնվում է կրծքի խոռոչի առաջային միջնորմում կրծուկի հետևում: Սրտի մի մասն ընկած է միջային հարթությունից ծախ: Տարբերում են սրտի լայն մաս՝ հիմք, և նեղ մաս՝ գագաթը. գագաթն ուղղված է ներքև, առաջ ու ծախ և տեղափորված է ծախ հինգերորդ միջնողային շրջանում, ծախ միջինանրակային գծից 1-2 սմ դեպի ներս: Սրտի պատը բաղկացած է երեք շերտերից: Առջին է նորկարողից, միջին՝ միուկարողից և արտաքին՝ էպիկարողից: Ամբողջ սիրտն ամփոփված է սրտապարկի՝ պերիկարոդի մեջ: Մարդու սիրտը բառախորշ է: Երկայնակի միջնորմով այն բաժանվում է հրար հետ չհաղորդակցվող երկու կեսերի՝ աջ ու ծախ: Աջ կեսի մեջ հոսում է երակային արյունը, ծախ կեսի մեջ՝ զարկերակայինը: Ցուռաքանչյուր կես բաղկացած է նախասրտից և փորոքից, որոնց միջև կա նախասիրտ-փորոքային անցք: Աջ նախասրտի մեջ են բացվում վերին ու ստորին սիներակները, ինչպես նաև սրտի պսակածոցը կամ պսակածն երակածոցը: Աջ փորոքից դուրս է զայխս թռքային ցողունը: Զայխս նախասրտի մեջ են բացվում 4 թռքային երակներ, իսկ ծախս փորոքից դուրս է զայխս ամենախոշոր զարկերակային անորդ՝ առոտան: Սիրտն ունի փականներ, որոնք իրենցից ներկայացնում են էնորկարոդի ծալքեր. աջ նախասիրտ-փորոքային անցքի վրա տեղավորված է եռափեղկ փականը, ծախի վրա՝ երկփեղկ կամ միտրալ փականը. առոտայի անցքի և թռքային ցողունի անցքի շուրջը կան երեքական կիսալուսնածն փականներ: Փականները թույլ չեն տալիս, որ արյունը փորոքներից հետ հոսի նախասրտերի մեջ (փեղկավոր փականները) և առոտայից ու թռքային ցողունից՝ փորոքների մեջ (կիսալուսնածն փականներ):

Սրտին արյուն են մատակարարում հաստուկ անորմներ՝ աջ ու ծախս պսակային (կորոնար) զարկերակները, որոնք դուրս են զայխս առոտայի սկզբնական մասից: Սրտի բոլոր երակները բացվում են պսակածոցի, իսկ պսակածոցը՝ աջ նախասրտի մեջ: Լինում են շատ սրտային հիվանդություններ՝ կապված նրա անորմների ախտահարման հետ: Դրանցից ամենածանրը սրտամկանի ինֆարկտն է՝ արյան շրջանառության խանգարման հետևանքով սրտամկանի որևէ հատվածի մեռուկացումը:

Սրտի աշխատանքը բաղկացած է ռիթմիկ կերպով կրկնվող նախասրտերի ու փորոքների կծկումներից և թուլացումից, որոնք կատարվում են խիստ որոշակի հաջորդականությամբ: Ընդունված է տարբերել սրտի գործունեության երեք փուլեր: Ակզեռված միաժամանակ կծկվում են երկու նախասրտերը (1 փուլ), որի ժամանակ արյունը նախասրտերից անցնում է փորոքների մեջ. Վերջիններս թուլա-

Նույն են: Այսուհետև միաժամանակ կծկվում են երկու փորոքները (II փուլ), որի ժամանակ նախարտերն են թուլանում: Փորոքների կծկման ժամանակ արյունը ուժգնորեն դուրս է մղվում սրտից և կծկվում է հետո սկսվում է դրանց թուլացումը (III փուլ), որի ժամանակ նախարտերը նույնպես գտնվում են թուլացած վիճակում: Սրտի գործունեության այս փուլը կոչվում է ընդհանուր դադար: Ընդհանուր դադարի ժամանակ երակմերից արյունը մտնում է նախարդրութերի մեջ: Բոլոր երեք փուլերը միասին կազմում են սրտի աշխատանքի մեկ ցիկլը. որը տևում է մոտ 0,8 վրկ և համապատասխանում է սրտի 75 կծկումներին մեկ րոպեում: Հանգիստ վիճակում չափահանների սրտի կծկումների թիվը տատանվում է 1 րոպեում 60-80-ի սահմաններում: Կծկումների հաճախացումը կոչվում է հաճախազարկություն (տախիկարդիա), իսկ դանդաղումը՝ սակավազարկություն (բրադիկարդիա):

Նորածինների սրտի կծկումների հաճախությունը մեկ րոպեում 140-150 է, երկու տարեկաններին՝ 110-120, իսկ 5 տարեկաններին՝ 95-100:

Սրտի աշխատանքի ժամանակ առաջանում են ծայներ՝ սրտի տոներ:

Արյունատար անոթներ: Կան երեք տեսակի արյունատար անոթներ՝ զարկերակներ, մազանոթներ և երակներ:

Զարկերակները այն անոթներն են, որոնցով արյունը սրտից հոսում է դեպի օրգաններ: Նրանք ունեն համեմատաբար հաստ պատ: Զարկերակներն օրգաններում բաժանվում են ավելի փոքր ճյուղերի, իսկ այնուհետև՝ նաև արտերիոլների: Վերջիններս փոխարկվում են մազանոթների ցանցերի:

Մազանոթները մանրազույն արյունատար անոթներ են և նկատելի են միայն մանրապիտակով: Նրանց պատր կազմված է բջիջների մեկ շերտից: Նյութափոխանակությունը արյան և հյուսվածքների միջև տեղի է ունենում միայն մազանոթներում, որոնց թիվը շատ մեծ է. ցանկացած օրգանի յուրաքանչյուր քառակուսի միլիմետր հյուսվածքում կա մի քանի հարյուր մազանոթ: Եթե օրգանը գտնվում է հանգիստ վիճակում, մազանոթների մեջ մասը չի գործում, և արյան հոսքը նրա մեջ դադարում է: Օրգանի գործուն վիճակում գործող մազանոթների թիվը աճում է: Արյունատար մազանոթներից արյունը հոսում է երակների մեջ:


Երակները արյունը օրգաններից տանում են դեպի սիրտը: Երակների պատերը, ի տարրերություն զարկերակների, ավելի քիչ առածզական են, վնասվածքի դեպքում հեշտությամբ թուլանում են, ունեն փականներ:

Մարդու մարմնի բոլոր արյունատար անոթները կազմում են արյան շրջանառության երկու շրջան՝ մեծ և փոքր:

Արյան շրջանառության մեծ շրջանը սկսվում է առոտայով, որը դուրս է զալիս սրտի ծախս փորոքից և զարկերակային արյուն է տանում բոլոր օրգաններին: Իր ճանապարհին առոտան տալիս է բազմաթիվ ճյուղեր՝ զարկերակներ: Մտնելով օրգանների մեջ, նրանք բաժանվում են ավելի մանր ճյուղերի, որոնք առաջացնում են արյունատար մազանոթների ցանցեր: Մազանոթներից արյունը (արդեն երակային) անցնում է մանր երակների մեջ: Մանր երակները միանալով կազմում են ավելի խոշոր երակներ: Արյան շրջանառության մեծ շրջանի բոլոր երակներից արյունը հավաքվում է վերին ու ստորին սիներակների մեջ, որոնք բացվում են աջ նախասրտի մեջ: Տևում է 20-25 վայրկյան:

Արյան շրջանառության փոքր շրջանը սկսվում է աջ փորոքից՝ թոքային ցողունով, որը երակային արյունը տանում է դեպի թոքերը: Թոքային ցողունը բաժանվում է աջ ու ձախ թոքային զարկերակների, որոնցից յուրաքանչյուրը մտնում է համապատասխան թոքի մեջ: Թոքի ներսում նրանք բաժանվում են ավելի մանր ճյուղերի, այնուհետև՝ մազանոթների ցանցի, որը կիա կպած է թոքաբշտիկներին: Այստեղ տեղի է ընենում զազափոխանակություն ածխաթթու զազը արյան միջից անցնում է թոքաբշտիկների մեջ, իսկ թոքաբշտիկներից արյան մեջ է անցնում թթվածինը: Դրա հետևանքով արյունը երակայինից դառնում է զարկերակային: Զարկերակային արյունը թթվերից 4 թոքային երակներով (ամեն մի թոքից երկուական) հետ է հոսում ձախ նախասրտի մեջ: Տևում է 7-11 վայրկյան:

Արյան շրջանառության մեծ շրջանի զարկերակները (նկ.6): Առոտան ձախ փորոքից դուրս գալով, բարձրանում է վեր (վերել առոտա), այնուհետև թեքվում (առոտայի աղեղ) և իջնում է ներքև (վայրէջ առոտա): Վայրէջ առոտան ստորաբաժանվում է կրծքայինի (կրծքի խոռոչում) և որովայնայինի (որովայնի խոռոչում): Առոտայի աղեղից դուրս են զալիս երեք խոշոր անոթներ՝ բազկազիսային ցողունը (մոտ 2սմ երկարությամբ, բաժանվում է աջ ընդհանուր քնային զարկերակի և աջ ենթանրակային զարկերակի), ձախ ընդհանուր քնային զարկերակը և ձախ ենթանրակային զարկերակը: Յուրաքանչյուր կողմից ընդհանուր քնային զարկերակը պարանոցով բարձրանում է մինչև վահանաձև աճարի վերին եզրի մակարդակը, որտեղ բաժանվում է արտաքին ու ներքին քնային զարկերակների: Արյունահոսությունը դադարեցնելու նպատակով ընդհանուր քնային զարկերակը սեղմում են 6-րդ պարանոցային ողի լայնական ելունին:



Նկ.6. Արյունատար համակարգ. 1 – ընդհանուր քնային գարկերակ,
2 - ենթաանրակային գարկերակ, 3 – մակերեսային քունքային
գարկերակ, 4 - ղիմային գարկերակ, 5 - առոտայի աղեղ, 6 - թոքային
գարկերակներ, 7 - թոքային ցողուն, 8 - բազկային գարկերակ,
9 - ճաճանչային գարկերակ, 10 - ժղիկային գարկերակ,
11 - որովայնային առոտա, 12 - ազդրային գարկերակ,
13 - ծնկափոսային գարկերակ, 14 - վերին սիներակ, 15 - ստորին
սիներակ, 16 - բազկային երակ, 17-միջին ժղիկայի երակ,
18 - ազդրային երակ, 19 - ծնկափոսային երակ, 20 - դրսերակ,
21 - լժային երակ:

Ներքին քնային զարկերակը բափանցում է գանգի խռոչը: Արտաքին քնային զարկերակը բարձրանում է դեպի Վեր՝ հարականջային գեղծի հաստության մեջ, և տալիս է բազմաթիվ ճյուղեր: <Եշտությամբ են շոշափվում արտաքին քնային զարկերակի երկու ճյուղերը՝ դիմային և մակերեսային քունքային զարկերակները, առաջինը՝ ստորին ծնոտի հիմի վրա, երկրորդ՝ արտաքին լսանցքից առաջ (անհրաժեշտության դեպքում դրանք կարելի է սեղմել այդ տեղերում): Յուրաքանչյուր կողմի ենթանրակային զարկերակը փոխարկվում է բազկի վրա բազկային զարկերակի: Բազկային զարկերակն ընկած է երկզելիսանի մկանից ներս: Արմնկային փոխում բազկային զարկերակը բաժանվում է ճաճանչչային և ծովիկային զարկերակների: Ճաճանչչային զարկերակի նախարազկի ստորին երրորդում մկաններով ծածկված չէ և հեշտությամբ շոշափվում է: Սովորաբար նրա վրա է որոշվում անոթազարկը:

Որովայնային առորտայի խոշոր ճյուղերից մեկը աճուկային կապանի տակ անցնում է ազդոյի վրա՝ փոխարկվելով ազդրային զարկերակի: Այլունահոսությունը կանգնեցնելու համար ազդրային զարկերակը սեղմում են կոնքոսկրին՝ աճուկային կապանից անմիջապես ներքեւ: Ազդրային զարկերակը փոխարկվում է ծնկափոսային զարկերակի, որը տեղափորված է համանուն փոխում: Մարդու մարմնի զարկերակները մեծ մասամբ գտնվում են միջմկանային տարածությունների խորքում: Միայն որոշ տեղերում նրանք տեղափորված են մակերեսորեն և հարում են ուսկրերին: Այդ տեղերում կարելի է որոշել անոթազարկը, ինչպես նաև արյունահոսության ժամանակ սեղմել զարկերակները:

Այսան շրջանառության մեծ շրջանի երակները: Երակները ստորաբաժանվում են խորանիստ և մակերեսային երակների: Խորանիստ երակները, որպես կանոն, տեղափորված են զարկերակների կողքին և կրում են նրանց անունները: Շատ զարկերակներ ուղեկցվում են ոչ թե մեկ, այլ երկու միանանան երակներով: Մակերեսային երակները գտնվում են մաշկի տակ: Դրանցից մի քանիսի մեջ բուժման ժամանակ դեղանյութեր են ներարկում: Այսան շրջանառության մեծ շրջանի բոլոր երակներն ընդունված է միացնել երկու համակարգերի մեջ՝ վերին սիներակի համակարգ և ստորին սիներակի համակարգ: Ստորին սիներակի համակարգից առանձնացնում են դորներակային համակարգը: Կերին սիներակով արյունը դեպի սիրտն է գնում մարմնի վերին կեսից՝ գլխից, պարանոցից, վերին վերջույթներից, կրծքի վանդակի պատերից ու օրգաններից (բացառությամբ սրտի): Ստորին սիներակով արյունը ետ է հոսում դեպի

սիրտը մարմնի ստորին կեսից՝ ստորին վերջույթներից, փոքր կոնքի և որովայնի խոռոչի պատերից ու օրգաններից:

Դժներակը տեղավորված է որովայնի խոռոչում և երակային արյուն է հավաքում ստամոքսից, բարակ ու հաստ աղիքներից, փայծաղից, ենթաստամոքսային գեղձից, լեղապարկից և յարդ է մտնում նրա դրունքի միջով:

Կծկվելիս սիրտը ճնշման տակ արյունը մղում է զարկերակների մեջ: Արյան ամենամեծ ճնշումը լինում է արյան շրջանառության սկզբնական մասում, իսկ ամենափոքրը՝ նրա վերջում: Տարրերում են առավելագույն (սիստոլիկ) և նվազագույն (դիաստոլիկ) զարկերակային ճնշումներ: Միջին տարիքի արողջ մարդու առավելագույն ճնշումը հանգիստ վիճակում սնդիկի սյան 115-120 մմ է, իսկ նվազագույն ճնշումը՝ սնդ.սյան 60-80 մմ: Զարկերակային արյան ճնշման բարձրացումը կոչվում է հիպերտոնիա (հիպերտենզիա), իսկ իջեցումը՝ հիպոտոնիա (հիպոտենզիա):

Արյան շարժման վրա երակների միջով, բացի սրտի աշխատանքից, ազդրում են նաև այլ գործններ՝ կրծքի խոռոչի բացասական ճնշումը, երակներին հարող մկանների ազդեցությունը (մկանների կծկումներից երակները սեղմում են, որը արագացնում է արյան շարժումը դեպի սիրտը, իսկ արյան հետ հոսելուն խոչընդոտում են երակային փականները):

Զարկերակային անորթազարկ են կոչվում զարկերակների պատերի ռիբմիկ տատանումները, որոնք առաջանում են այդ անորթություն ճնշման բարձրացումից, երբ փորոքների սիստոլայի ժամանակ նրանցից դուրս է նղույթ արյունը: Ըստ որում առորտան ծգվում լայնանում է և նրա պատերի տատանումը որոշակի արագությամբ տարիածվում է զարկերակների պատերի վրա (անորթազարկային ալիք): Անորթազարկը որոշում են այն տեղերում, որտեղ այդ անորթները ծածկված չեն մկաններով և կից են ոսկրերին: Հանգիստ վիճակում չափահաս մարդու անորթազարկի թիվը մեկ րոպեում տատանվում է 60-80-ի սահմաններում: Երեխանների անորթազարկը ավելի հաճախակի է, նորածինի մոտ րոպեում 140-150 զարկ է, իսկ 5 տարեկան երեխանների մոտ՝ 100 զարկ և այլն:

Ավշային համակարգ: Կազմված է ավիշից, ավշային անորթներից և հանգույցներից: Ավիշն անգույն հեղուկ է, առաջանում է հյուսվածքածարային հեղուկից, բաղադրությամբ նման լինելով արյան պլազմային՝ հիմնականում պարունակում է լիմֆոցիտներ, սակայն ավելի քիչ սպիտակակուցներ: Ավշային անորթների համակարգը սկսվում է ավշային մազանորթներից, որոնք մեծ քանակությամբ կան համարյա բոլոր օրգաններում և վերացվում են ավելի մեծ տրամագծով անոր-

ների: Ի տարբերություն արյան՝ ավիշը հոսում է միայն մեկ ուղղությամբ՝ օրգաններից, և անցնում է ավելի խոշոր ավշանոթների մեջ, որոնք ընդհանուր են մի քանի օրգանների համար, հավաքվում է երկու անենախոչոր անորոների՝ կրծքային և աջ ավշային ծորանների մեջ, որոնք համապատասխանաբար բացվում են ձախ ու աջ բազկաղիսային երակների մեջ (Վերին սիներակի հանակարգ): Ավշային անորոների ճանապարհին տեղակայված են ավշահանգույցները, որոնց թիվը հասում է 500-ից 1000-ի:

Ավշային հանգույցները կլոր, ոչ մեծ մարմիններ են, մասնակցում են արյունաստեղծման պրոցեսին (լիմֆոցիտների բազմացում) և կատարում են պաշտպանական (արգելապատի) դեր (օրգանիզմ ընկած բակտերիաների վնասազերծում, հականարմնների նշակում): Այդպիսի դեպքերում ավշային հանգույցների ծավալը սովորաբար մեծանում է, նրանք դառնում են ավելի կարծր, շոշափվում են և ցավոտ են: Որպես կանոն, ավշային հանգույցները տեղավորված են խմբերով: Յուրաքանչյուր օրգանից կամ մարմնի մասից ավիշը հոսում է որոշակի՝ ռեզիոնար (որոշակի շրջանի համար) ավշահանգույցների մեջ: Ձերքի ավշային համակարգի համար այդպիսի հանգույցներ են արմնկային և անութային (թևատակային) հանգույցները, իսկ ոտքի անորոների համար՝ ծնկափոսային և աճուկային հանգույցները: Պարանոցի վրա՝ ենթածնոտային հանգույցները, որոնք ընկած են ներքին լծային երակի երկայնքով: Զգալի քանակությամբ հանգույցներ կան թոքի դրունքի մոտ, որովայնի խոռոչում:

Ավշային հանգույցները պատկանում են իմունային համակարգին, այսինքն՝ պատասխանատու են իմունիտետի առկայության համար: Իմունային համակարգի կենտրոնական օրգաններն են՝ ուրցագեղջը, ուսկրածութը, ծայրամասային օրգաններն են՝ ավշահանգույցները, կայծաղը, նշկվերը, մարսողական, շնչառական, միզասեռական համակարգերի լիմֆոիդ հյուսվածքները:

ԸՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԻՐ ԵՎ ԸՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ


Ընչառության պրոցեսում տեղի է ունենում մշտական գազափոխանակություն օրգանիզմի և շրջապատող միջավայրի միջև: Գազափոխանակությունը արտաքին միջավայրի և թոքերի միջև կոչվում է արտաքին շնչառություն: Թոքերում տեղի է ունենում գազերի ոլիֆուզիա: Թոքային բշտիկներից թթվածինը մտնում է արյան մեջ, իսկ արյան միջից թթվաբշտիկներ է անցնում ածխաթթու գազը: Այդ ոլիֆուզիան հնարավոր է թթվաբշտիկների և դեալ թթվերը հոսող երակային արյան O_2 -ի և CO_2 -ի պարոցիալ – ճնշումների տարբերության հետևանքով:

Օրգանների հյուսվածքներում թթվածնի մասնակցությամբ են ընթանում նյութափոխանակության պրոցեսները, որի հետևանքով սննդանյութերից առաջանում է օրգանիզմի համար անհրաժեշտ էներգիան: Հյուսվածքներում տեղի ունեցող օքսիդացման պրոցեսները կոչվում են հյուսվածքային շնչառություն:

Շնչառության օրգանների համակարգի մեջ են մտնում քթի խոռոշը, կոկորդը, շնչափողը, բրոնխները և թոքերը (Ակ.Դ: Շնչառության օրգանները՝ կախված նրանց կատարած ֆունկցիայից, կարելի է ստորաբաժանել օդատար ուղիների և շնչական մասի՝ թթաբշտորի. Վերջիններիս մեջ է տեղի ունենում գազափոխանակությունը օդի և արյան միջև: Օդատար ուղիների կազմության առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք ունեն ամուր ռուկրային կամ աճառային կմախք և դրա համար էլ չեն սեղմվում. նրանցում միշտ օդ կա: Բոլոր օդատար ուղիները ներսից պատված են լորձաթաղանթով, որն ունի թարթիչավոր էպիթել և ծածկված է լործով: Այդ ուղիների մեջ օդի հետ միասին ընկնող փոշին և միկրոբները կաջում են լործին:

Քթի խոռոչը: Օդը անցնում է երկու անցքերի՝ քթանցքերի միջով: Քթի խոռոչը պատող լորձաթաղանթը համեմատաբար հաստ է և ուժում է տարբեր գորգիների (քիմիական նյութերի, հինֆեկցիայի և այլն) ազդեցությունից: Այդ թաղանթում կան մեծ քանակությամբ արյունատար անոթներ, որոնք առաջանում են ցանցեր: Քթի խոռոչի վերին բաժնի լորձաթաղանթում գտնվում է հոտառության օրգանը, որտեղ կան հատուկ զգացող հոտառական բջիջներ: Քթի խոռոչը հաղորդակցվում է հավելյալ օդատար ծոցերի հետ (վերին ծնուտային, ճակատային և այլն), որոնց պատերը պատված են լորձաթաղանթով: Քթի խոռոչում օդը փոշուց մաքրվում, տաքանում և խոնավանում է: Երկու անցքերի խոանների միջոցով, քթի խոռոչը հաղորդակցվում է քթաղմանի հետ: Քթաղմանի կողքային պատի վրա յուրաքանչյուր կողմից կա մի անցք, որը տանում է դեպի լսողական փողը (Եվստախյան)՝ ըմպանը հաղորդակցելով թմբկախտորի հետ: Քթաղմանից օդն անցնում է ըմպանի բերանային մասը, իսկ այնուհետև՝ կոկորդը:

Կոկորդը տեղավորված է պարանոցի մասում, պարանոցային 4-րդ, 6-րդ ողերի մակարդակում: Կոկորդի կմախքը կազմված է աճառներից: Նրանցից ամենամեծը՝ վահանածնը, լավ շոշափվում է: Կոկորդը ծառայում է օդի անցման համար և հանդիսանում է ծայնառաջացման օրգան: Զայնի առաջացմանը մասնակցում են ծայնալարերը (աջ ու ձախ), որոնք սահմանակակում են ձայնային ճեղքը: Զայնալարերի լարվելու դեպքում արտաշնչվող օդը նրանց տատանում է, որի հետևանքով առաջանում է ծայն:



Նկ. 7. Ընչառական համակարգ (սիստեմա).

1 - թրի խոռոչ, 2 - կարծր քիմք, 3 - բերանի խոռոչ,
4 - քրաղըմպան, 5 - զնպանի բերանային մաս, 6 - մակրոլիորո,
7 - կոկորդ, 8 - կերակրափող, 9 - շնչափող, 10 - թռի գազաթ,
11 - ծախ թռ, 12 - ծախ բրոնխ, 13 - թռային բշտիկներ
(մեծացված), 14 - թռային բրոնխների ճյուղավորություններ,
15 - լեզու:

Ընչափողը ունի մոտ 12 սմ երկարություն: Այն կրծքի խոռոչում բաժանվում է երկու գլխավոր բրոնխների՝ աջ ու ձախ: Այդ բաժանումը կոչվում է շնչափողի երկատում: Ընչափողի և բրոնխների պատերում կան աճարային կիսաօղակներ, որոնց ծայրերն իրար են միացած կապաններով:

Թոքերը գտնվում են կրծքի խոռոչում: Նրանք երկուսն են՝ աջ ու ձախ: Երկու թոքերն էլ կրնածն են: Թոքի վերին՝ նեղացած մասը կոչվում է զագաթ և դուրս է զալիս պարանոցի շրջան: Թոքի դեպի միջնորմը դարձած երեսի վրա կա մի փոքր թոքերի դրունքը, որի միջով անցնում են գլխավոր բրոնխը, նյարդերը, թոքային զարկերակը, երկու թոքային երակները և ավշանորմները. այդ բոլորը միասին կազմում են մի ընդհանուր խուրձ, որը կոչվում է թոքարմատ: Գլխավոր բրոնխը, մտնելով թոքի մեջ, նրա ներսում ծառի նման ճյուղավորվում է փոքր տրամաչափի բրոնխների: Բրոնխների ամենամասնը ճյուղավորությունները կոչվում են բրոնխիոլներ: Ի տարբերություն բրոնխների՝ բրոնխիոլների պատերում չկան աճարներ և գեղձեր, սակայն ինչպես բրոնխները, այնպես էլ բրոնխիոլներն ունեն հարթ մկանաթելեր: Բրոնխիոլները փոխարկվում են լայնացումների՝ ալվեոլային անցքերի, որոնց պատերի վրա կան բշտիկածն դուրս ցցված տեղեր ($0,2\text{--}0,3\text{ mm}$ տրամագծով): Թոքաբշտիկները: Թոքաբշտիկներին հարում է արյունատար մազանորմների ցանցը: Թոքաբշտիկների և արյունատար մազանորմների պատերի միջոցով էլ կատարվում է զագափոխանակությունը: Բրոնխիոլը իրեն պատկանող ալվեոլային անցքերով ու թոքաբշտիկներով նման են ողկույզի և կոչվում է ացինուս (acinus - ողկույզ), որը թոքի կառուցվածքաֆունկցիոնալ միավորներն է:

Աջ թոքը բաղկացած է երեք, իսկ ձախը՝ երկու բլթերից: Թոքի յուրաքանչյուր բիլը բաղկացած է բաժիններից՝ սեզմենտներից, որոնք հերթին բաղկացած են բազմաթիվ թոքային բլթակներից: Յուրաքանչյուր բլթը բաղկացած է $12\text{--}18$ ացինուսներից:

Յուրաքանչյուր թոք ծածկված է շճարադանթով՝ թոքամզով: Թոքամիզը կազմված է երկու թերթիկներից՝ մեկը սերտածած է թոքի հյուսվածքին (ընդերային), մյուսը՝ կրծքի վանդակի պատերին (առպատային): Թոքամզի երկու թերթիկների միջև կա ճեղքանման մի տարածություն՝ թոքամզի խոռոչը: Նրա մեջ կա ոչ մեծ քանակությամբ շճային հեղուկ, որը խոնավացնում է թոքամզի թերթիկները: Թոքամզի խոռոչում ճնշումը բացասական է: Կրծքի վանդակի վնասվելու դեպքում, երբ վնասվում է թոքամզի առպատային թերթիկը, թոքամզային խոռոչի մեջ օդ է մտնում: Ըստ որում թոքամզի խոռոչի ճնշումը հավասարվում է մթնոլորտային ճնշմանը: Համապատաս-

իսան թոքը իր առածգականության հետևանքով իջնում է և չի մասնակցում շնչելու գործողությանը: Օդի առկայությունը թոքամզի խոռոշում կոչվում է պնևմոթորաք: Կրծքավանդակի վիրավորվելու դեպքում թոքամզի խոռոշի մեջ կարող է լցվել նաև արյուն: Արյան հավաքվելը թոքամզի խոռոշում կոչվում է հեմոթորաք:



Շնչառության գործողությունը բաղկացած է օիմբիկ կերպով կրկնվող ներշնչումից և արտաշնչումից: Ներշնչման ժամանակ նյարդային ազդակների ազդեցության տակ կծկվում են ստոծանին, արտաքին միջկողային և այլ մկանները, որով մեծանում է կրծքի վանդակի ծավալը: Միաժամանակ լայնանում են թոքերը, որը հանգեցնում է նրանց ներսում ճնշման հցեցմանը, և մթնոլորտային օդը շնչառական ուղիներով գնում է թոքերի մեջ: Այսուհետև ներշնչման գործողությանը մասնակցող մկանները թուլանում են, կողերը ներքին միջկողային և մյուս մկանների կծկման, ինչպես նաև իրենց ծանրության հետևանքով իջնում են, կրծքի վանդակի ծավալը փոքրանում է, այդ ժամանակ թոքերը սեղմվում են, ճնշումը նրանցում բարձրանում է, և օդը օդատար ուղիներով գնում է դեպի դուրս (տեղի է ունենում արտաշնչում): Չափահաս մարդու հանգիստ վիճակում մեկ րոպեում կատարում է 16-20 շնչառական շարժում, իսկ երեխաները ավելի շատ:

Շնչառությունը կարգավորվում է նյարդային համակարգով: Երկարավուն ուղեղում կա մի կենտրոն, որը բաղկացած է երկու բաժիններից՝ ներշնչման և արտաշնչման կենտրոններից: Ներշնչման կենտրոնի յուրատեսակ գրգռիչ է ածխաբթու զազը: Հայտնի է, որ մարդու կարող է կամային ծևով փոխել իր շնչառության սիրմն ու խորությունը: Տարբերում են կրծքային կամ կողային և որովայնային կամ ստոծանիական տիպերի շնչառություն: Կարող է լինել նաև խառը՝ կրծքորովայնային տիպի շնչառություն:

ՄԻԶԱՍՍՈՒԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐՈ

Միզային համակարգի օրգանների մեջ մտնում են երիկամները, միզածորանները, միզապարկը և միզատար խողովակը:

Երիկամները արտազատման գլխավոր օրգաններն են, որտեղ կատարվում է միզագոյացման պրոցեսը (Ակ. Թ): Երիկամները գույց են, տեղավորված են գոտկային շրջանում, որովայնի խոռոչի հետին պատի վրա: Երիկամն ունի լոբու ծև, նրա ներսային եզրին կադրունք, որով անցնում են միզածորանը, նյարդերը, երիկամային զարկերակներն ու երակները, ավշանորները: Երիկամի կտրվածքի



9 - Անժրոն

Նկ. 8. Երիկամ. 1 - Կեղևային շերտ, 2 - Միջուկային շերտ, 3 - մեծ բաժակներ, 4 - Վորք բաժակներ, 5 - ավազան, 6 - միզածորան, 7 - դրունք, 8 - պատյան, 9 - Անժրոն (սխեմա). α - պատիճ, ρ - անոթային կծիկ, զ - բերող արյունատար անոթ, η - արտատար անոթ, ε - միզային խողովակիկ:

Վրա տարբերում են 2 նյութ՝ կեղևային, որը կազմում է արտաքին շերտը, և միջուկային՝ ներքին շերտը: Նրանք կազմված են մեծ թվով շատ բարակ խողովակներից՝ միզային խողովակներից, որոնք տեսանելի են միայն մանրադիտակով, և նյարդերից ու անորներից: Երիկամի կառուցվածքային միավորները, որտեղ գոյանում է մեզը, նեֆրոններն են: Յուրաքանչյուր նեֆրոնի մեջ մտնում են երիկամային մարմնիկը, որը բարկացած է Շումյանսկու պատիճից ու անորային կծիկից, և տարբեր ծեփ միզային խողովակիկները (երիկամի մեջ մոտ մեկ միլիլոն նեֆրոն կա): Երիկամային մարմնիկին է մոտենում բերող արյունատար անորը: Այն բաժանվում է անորների մի կծիկ կազմող մազանորների, որոնցից արյունը դուրս է հոսում արտատար անորով: Արտատար անորներն իրենց հերթին բաժանվում են մազանորների, որոնց մեջ արյունը զարկերակայինից փոխարկվում է երակայինի: Նշանակում է երիկամը, ի տարբերություն մյուս օրգանների, ունի մազանորների ոչ թե մեկ, այլ երկու համակարգ: Երիկամային մարմնիկներում անորային կծիկներով հոսող արյունից փոխանակության արգասիքները, ջրի և արյան պլազմայի որոշ այլ նյութեր կծիկի մազանորների և Շումյանսկու պատիճի պատերի միջով ֆիլտրվում են միզային խողովակիկների մեջ: Այդ հեղուկը կոչվում է առաջնային մեզ: Նեֆրոնների միզային խողովակիկներով անցնելիս ջրի և մյուս նյութերի մի մասը նրանց պատերի միջով առաջնային մեզից հետ են ներծծվում արյան մեջ: Միզային խողովակիկներում մնացած հեղուկը կոչվում է երկրորդային մեզ, որը նեֆրոններից անցնում է հավաքող խողովակիկների մեջ, որոնք գտնվում են երիկամի միջուկային նյութում և չեն մասնակցում միզագոյացման պրոցեսին, այլ միայն դուրս են տանում այն: Հավաքող խողովակիկներից մեզը անցնում է փոքր բաժակների մեջ (մեկ երիկամն ունի 8-12 այդպիսի բաժակներ): Փոքր բաժակները միանում և կազմում են 2-3 մեծ բաժակներ, որոնք էլ միանալով կազմում են երիկամի ավագանը. Երիկամի ավագանից մեզը միզածորանով անցնում է միզապարկ:

Միզածորանը զույգ օրգան է, ծառայում է մեզը երիկամից միզապարկ տանելու համար, իրենից ներկայացնում է մոտ 30ամ երկարության մի խողովակ, որը դուրս գալով երիկամի դրությունը, պառկում է որովայնի հետին պատի վրա և իջնում է փոքր կոնքի խոռոչ, որտեղ բացվում է միզապարկի մեջ:

Միզապարկը մեզի մի ամբար է: Այն գտնվում է փոքր կոնքի խոռոչում՝ ցալլային համաձոնի ետևում: Միզապարկի տարողությունը 350-500մլ է: Միզապարկի հատակի շրջանում բացվում են երկու միզածորանները և դուրս է գալիս միզուկը:

Միզուկը ծառայում է միզապարկից մեզը դուրս տանելու համար: Տղանարդկանց համար այն միաժամանակ նաև սերմնահեղուկի արտատար ուղին է: Կանանց միզուկն ունի 3-3,5 ամ երկարություն, այն ավելի լայն է, քան տղամարդունը, իեշտությամբ է լայնանուն, բացվում է իեշտոցի նախադրան մեջ: Տղանարդու միզուկն ունի 16-18 ամ երկարություն, ծոված է, ունի կորություններ և անցնում է շագանակագեղձի, միզասեռական ստոծանու (թաղանթի) և առնանդամի սպունգաննան մարմնի միջոցով: Ծագանակագեղձային հատվածում նրա մեջ են բացվում շագանակագեղձի ծորանները և սերմնացայտ ծորանները: Թաղանթային հատվածը ամենանեղն ու ամենակարճն է:


Միզապարկի դատարկումը (միզարձակումը) ռեֆլեկտոր գործողություն է և կարգավորվում է նյարդային համակարգի միջոցով: Միզարձակման ռեֆլեքտի կենտրոնը գտնվում է ողնութեղի սրբանային հատվածում, սակայն միզարձակման գործողությունը ենթակառ կում է նաև գլխուղեղի կեղևին:

Մեզը հարդադեղնավուն գույնի, թույլ թթվային ռեակցիայով հեղուկ է: Օրական միջին հաշվով արտազատվում է մոտ 1,5 լ մեզ: Նրա հարաբերական խտությունը ջրից քիչ քարձր է և կազմում է 1,015-1,020: Առողջ մարդու մեզը պարունակում է մոտ 95% ջուր և 5% այլ նյութեր: Մեզի հետ արտազատվող օրգանական նյութերը առավելապես սպիտակուցների ճեղքման ազդու պարունակող արգասիքներն են: Դրանց են պատկանում միզանյութը, միզաթթուն և այլն: Մեզի բաղադրության մեջ անօրգանական նյութերից մտնում են նատրիումի քրողիդը, ֆոսֆորաթթվի աղերու և այլ նյութեր: Մեզի մեջ կարող են լինել գազեր (ածխաթթու գազ), միայնակ լեկոցիտներ և միզային ուղիների լայիթելի թաղանթագործկ քջիներ, ինչպես նաև դրսից օրգանիզմի մեջ ներմուծված նյութեր (հեղանյութեր և այլն): Մեզի քանակը, բաղադրությունը և հատկությունները ենթակա են զգայի տատանումների՝ կախված տարբեր պայմաններից՝ շրջապատի օդի ջերմաստիճանից ու խոնավությունից, աշխատանքից, սննդի քանակից ու բաղադրությունից և այլն:


Տարբեր հիվանդությունների, այդ քվում միզային օրգանների ախտահարման դեպքում նկատվում է մեզի բաղադրության փոփոխություն: Այսպես, հիվանդների մեզը կարող է պարունակել շաքար՝ սովորաբար, համարվում է դիաբետի ախտանիշ, սպիտակուց և արյուն:

Բացի երիկամներից, արտազատնան ֆունկցիա են կատարում նաև մաշկն ու թոքերը:

Մեռական օրգաններ: Տղանարդու և կնոջ սեռական օրգանները ստորաբաժանվում են ներքին ու արտաքին օրգանների (նկ. 9,10):



Նկ.9. Արական սեռական օրգաններ. 1 - ամորդիներ,
2 - մակամորդիներ, 3 - սերմնատուար ծորան, 4 - սերմնալար,
5 - սերմնացայտ ծորան, 6 - սերմնաբուշ, 7 - շականակագեղձ,
8 - կոճղեզամիզուկային գեղձեր, 9 - միզապարկ,
10 - միզածորաններ, 11 - միզուկ, 12 - առնանդամ
(սպունգանման մարմին), 13 - առնանդամ (զլիսիկ):



Ակ. 10. Խավական սեռական օրգաններ. 1 - արգանո, 2 - արգանոի հատուակ, 3 - արգանոի մարմին, 4 - արգանոի վզիկ, 5 - արգանոի վզիկի խողովակ, 6 - արգանոի լորձային թաղանթ, 7 - արգանոի մկանային շերտ, 8 - արգանոի վզիկի բացվածք, 9 - ծվարան, 10 - արգանոափող, 11 - արգանդափողի ծոպ, 12 - հեշտոց, 13 - ծիլիկ, 14 - սեռական մեծ շրթեր, 15 - սեռական փոքր շրթեր, 16 - ցայլիքի համածոն, 17 - պոչուկ, 18 - ուղիղ աղիք, 19 - միզապարկ, 20 - միզուկ:

Տղամարդկանց ներքին սեռական օգաններն են՝ ամործիներն իրենց մականործիներով, սերմնատար և սերմնացայտ ծորանները, սերմնաբշտերը, շազանակագեղձը և կոճղեզամիզուկային (կուպերյան) գեղձը:

Ամործիները գոյց օրգաններ են, տեղավորված են փոշտի (ամործապարկի) մեջ: Ամործիներում է տեղի ունենում տղամարդու սեռական բջիջների՝ սպերմատոզոդիների բազմացումն ու զարգացումը, ինչպես նաև արտադրվում են հրոմոններ: Ետևի կողմից ամործուն է հավում մի ոչ մեծ մարմին՝ ամործու հավելուկը (մակամործին): Սերմնածորանը մականործու բարձրանում է աճուկային խողովակի մեջ, այնտեղից անցնում է փոքր կոնքի խոռոչ՝ դեպի միզապարկի հատակը: Աճուկային խողովակում սերմնածորանը ամործու և իր անոթների ու նյարդների հետ միասին կազմում է սերմնալարը: Միզապարկի հատակի մոտ սերմնածորանը սերմնաբշտի ծորանի հետ միասին առաջացնում է սերմնացայտ ծորանը, որը բացվում է միզատար խողովակի մեջ:

Հազանակագեղձը գտնվում է միզապարկի հատակի տակ, նրա մասն ծորանները բացվում են միզատար խողովակի մեջ. գեղձի արտազատուկը մտնում է սերմնահեղուկի (սպերմայի) բաղադրության մեջ: Սերմնաբշտերը երկարավուն գոյց օրգաններ են, տեղավորված են միզապարկի հատակի մոտ, արտադրում են հեղուկ, որը, մտնելով սպերմայի բաղադրության մեջ, հեշտացնում է սպերմատոզոդիների շարժումը: Տղամարդու արտաքին սեռական օրգաններն են փոշտը և առնանդամը:

Կնոջ ներքին սեռական օրգաններն են՝ ծվարանները, արգամին իր փողերով և հեշտոցը:

Զվարանները գոյց օրգաններ են, տեղավորված են փոքր կոնքի շրջանում՝ արգամինի կողքերին: Զվարանը սեռական գեղձ է, որտեղ հասունանում են կնոջ սեռական բջիջները և արտադրվում են սեռական հրոմոններ: Զվարանում կան մեծ քանակությամբ ֆոլիկուլներ, որոնցից յուրաքանչյուրի մեջ տեղավորված է մեկ սեռական բջիջ: Միջինում 28 օրը (լուսնային ամիս) մեկ անգամ հերթական հասունացած ֆոլիկուլի պատը պատռվում է, և ծվարժիք հեղուկի հոսանքով նրանից դուրս է գալիս ու ընկնում է արգանդապիոդի մեջ: Պայթած ֆոլիկուլի տեղում ծվարանում առաջանում է դեղին մարմինը (հղիացած կնոջ օրգանիզմում այն կատարում է ներզատիչ գեղձի դեր, իսկ չհղիացածի օրգանիզմում անհետանում է):

Արգանդափողերը գոյց են և ծառայում են ծվաբջիջը ծվարանից արգանդ փոխադրելու համար: Արգանդափողում է տեղի ունենում բերմնավորում՝ ծվաբջիջ միացումը սպերմատոզոդինի հետ:

Արգանդը ծառայում է պտղի զարգացման ու այն իր մեջ կրելու համար: Արգանդը մկանային օրգան է, ունի հատակ, մարմին և

Վզիկ: Մարմնի ներսում կա ճեղքանման խոռոչ, որը փոխարկվում է վզիկի խողովակի և բացվում է հեշտոցի մեջ: Արգանդի պատը կազմված է երեք շերտից՝ լորձային, մկանային և շճային թաղանթներից: Չիդիացած կնոջ օրգանիզմում դիտվում են ամենամյա արյունահոսություններ արգանդից՝ դաշտաններ (3-6 օր), որոնց ժամանակ արգանդի լորձաթաղանթի մի մասը պոկվում է, ըստ որում արյունատար անոթները պատռվում են: Յուրաքանչյուր դաշտանից հետո արգանդի լորձաթաղանթը վերականգնվում է:


ՀԵՇՈՒՈՐԾ ՆԵՐՍԻՑ ԼՈՐՁԱԹԱՂԱՆԹՈՎ ՊԱՏՎԱՅ ԽՈՂՈՎԱԿԻ Է (ՑՈՒՑ 8-10 ԱՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱԲԲ): ՎԵՐԱԿՈՒՄ ՀԵՇՈՒՈՐԾ ՆԵՐՏԱՋԱԾ Է ԱՐԳԱՆԴԻ ՎԶԻԿԻ ՀԵՏ, ԻԿԱ ՆԵՐՔԸՆՈՒՄ ԱՆՑՐՈՎ ԲԱՑՎՈՒՄ Է ՀԵՇՈՒՈՐԾ ՆԱԽԱԴՐԱՅ ՄԵՋ:

Կանանց արտաքին սեռական օրգաններն են նաշկի երկու գույզ ծալքերը՝ սեռական մեջ շրթերը (սահմանափակում են ամոթույքի ճեղքը) և սեռական փոքր շրթերը (նրանց միջև գոյություն ունեցող ճեղքը կոչվում է հեշտոցի նախադրություն), ինչպես նաև ծլիկը և բարթոլինյան գեղձերը:

ՆԵՐՁԱՏԻՇ ԳԵՂՁԵՐԸ

Ներգատիչ գեղձերը կամ էնդոկրին օրգանները արտատար ծորաններ չունեն: Նրանք արտադրում են այնպիսի հասուկ նյութեր՝ հորմոններ, որոնք մտնում են անմիջականորեն արյան մեջ, տարածվում ամբողջ օրգանիզմում և կարգավորիչ ազդեցություն են ունենալու մարտեր օրգանների գործունեության վրա (հումորալ կարգավորում): Ներգատիչ գեղձերի ֆունկցիայի խանգարումը ուղեկցվում է օրգանների կենսագործունեության, նրանց նյութափոխանակության փոփոխություններով: Այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել հորմոնների չափից ավելի արտազատումով (գեղձի գերֆունկցիա) կամ հակառակը՝ հորմոնների անբավարար արտազատումով (թերֆունկցիա):

Ներգատիչ գեղձերին են պատկանում նակուղեղը, նրա հետ սերտորեն կապված գլխուղեղի ենթաթամբային շրջանը (հիպոֆալամուսը), էպիֆիզը, վահանագեղձը, հարվահանային գեղձերը և ուրացագեղձը, ենթաստամոքսային գեղձի կղզակային մասը, մակերիկամները և սեռական գեղձերի ներգատիչ մասը (նկ.11): Բոլոր ներգատիչ օրգանները ֆունկցիոնալ առումով կապված են իրար հետ և կազմում են մեկ միասնական համակարգ: Այդ համակարգում առաջատար դերը պատկանում է նակուղեղին: Այն արտադրում է այնպիսի հորմոններ, որոնք ազդում են մյուս ներգատիչ գեղձերի վրա: Ներգատիչ գեղձերի գործունեությունը կարգավորվում է նյարդային համակարգով: Իրենց հերթին հորմոններն ազդում են նյարդային համակարգի տարբեր բաժինների ֆունկցիաների վրա:



Նկ. 11. Ներզատիչ գեղձեր. 1 - գլխուղեղի ենթաօմբային շրջան, 2 - մակուղեղ, 3 - վահանազեղծ, 4 - ուրցազեղծ, 5 - ենթաստամոքսային գեղձի կողակային մասը, 6 - ծվարան, 7 - ամործիներ, 8 - մակերիկամներ, 9 - հարվահանային գեղձեր, 10 - էպիֆիզ:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՍՏԱԿՄԱԳ

Նյարդային համակարգի մեջ են մտնում գլխուղեղը՝ 12 զույգ գլխուղեղային նյարդերով, և ողնուղեղը՝ 31 զույգ ողնուղեղային նյարդերով։ Գլխուղեղը և ողնուղեղը կազմում են կենտրոնական նյարդային համակարգը, իսկ բոլոր նյարդերն ու նրանց ճյուղավորաբերությունները՝ ծայրամասային նյարդային համակարգը։

Նյարդային համակարգը ստորաբաժնվում է նաև կենդանական կամ սոմատիկ (մարմնական) և վեգետատիվ կամ ավտոնոմ նյարդային համակարգերի։ Կենդանական կամ սոմատիկ նյարդային համակարգի մեջ են մտնում գլխուղեղի և ողնուղեղի այն բաժինները և այն նյարդերը, որոնք նյարդավորում են միջածիգ-գոլավոր մկանները (բացառությամբ սրտամկանի) և զգայարանները, ներառյալ մաշկի զգացող նյարդերը։ Վեգետատիվ կամ ավտոնոմ համակարգին են պատկանում կենտրոնական և ծայրամասային համակարգերի այն բաժինները, որոնք նյարդավորում են առավելապես ներքին օրգանները, սիրտը, անոթները և ներզատիչ գեղձերը, այսինքն՝ այն օրգանների համակարգերը, որոնք ապահովում են օրգանիզմի նյութափոխանակությունը։

Գլխուղեղում և ողնուղեղում տարբերում են գորշ և սպիտակ նյութեր։ Գորշ նյութը բարկացած է նյարդային բջջների մարմինների կուտակումից, իսկ սպիտակ նյութը՝ նյարդաթելերից։ Գլխուղեղի մեծ կիսազնների գորշ նյութի մակերեսային համատարած շերտը կոչվում է կեղև։ այն նյարդային համակարգի բարձրագույն բաժինն է։ Գլխուղեղի տարբեր մասերում կան նյարդային բջջների (գորշ նյութի) առանձին կուտակումներ, որոնք կոչվում են կորիզներ։ Սպիտակ նյութի նյարդաթելերի միջոցով նյարդային համակարգի մի բաժինը կապվում է մյուսի հետ։ Նյարդերն իրենցից ներկայացնում են նյարդաթելերի այնպիսի խրծեր, որոնք ծածկված են շարակցահյուսվածքային պատյանով։ Տարբերում են զգացող, շարժիչ և խառը նյարդեր։ Նյարդերի միջոցով կենտրոնական նյարդային համակարգը կապված է բոլոր օրգանների հետ։


ՈԵՖԻԵՔՍ և ՈԵՖԻԵԿՄՈՐ աղեղ։ Նյարդային համակարգի գործունեությունն ունի ոԵՖԻԵԿՄՈՐ բնույթ։ ՈԵՖԻԵՔՍներ են կոչվում օրգանիզմի այն պատասխան ռեակցիաներն ընկալիչների գրգռմանը, որոնք իրականացվում են կենտրոնական նյարդային համակարգի կողմից։ Տարբեր գրգիռների օրգանիզմը պատասխանում է որոշակի գործունեությամբ։ Այսինքն, սննդի ներգործությունից լեզվի համային պտկիկների գրգռմանը օրգանիզմը պատասխանում է թքարտադրությամբ։ Ընկալիչների գրգռման ժամանակ նրանցում ծագած

դրդումը զգացող նյարդերով հաղորդվում է կենտրոնական նյարդային համակարգին, իսկ նրանց շարժիչ նյարդերով հաղորդվում է տարբեր օրգանների: Օրգանները դրան պատասխանում են իրենց գործունեությամբ (մկանների կծկում, գեղձերի արտազատիչ գործունեություն և այլն):

Այս ուղին, որով հաղորդվում է նյարդային դրդումը ռեֆլեքսի ժամանակ, կրծքում է ռեֆլեկտոր աղեղ: Ռեֆլեկտոր աղեղի մեջ են մտնում ընկալիչները, զգացող նյարդաթերոք (զգացող նյարդ), տվյալ ռեֆլեքսի կենտրոնը, որն իրենից ներկայացնում է նյարդային բջիջների կուտակում՝ գիտութեղում կամ ողնութեղում, շարժիչ նյարդաթերոք (շարժիչ նյարդ), աշխատող օրգանը: Ռեֆլեքսի անհրաժեշտ պայմանը ռեֆլեկտոր աղեղի բոլոր բաժինների ամբողջականությունն է:

Ողնուղեղ: Ողնուղեղը գտնվում է ողնաշարի խողովակում, որը անցնում է մեծ ծոծրակային անցքով և վեր է ածվում երկարավուն ուղեղի, իսկ ներքեւում վերջանում է և գոտկային ողի վերին եզրի մակարդակում: Ողնուղեղի գորշ նյութը ընկած է կենտրոնում, իսկ սպիտակը՝ ծայրամասում:

Գլխուղեղ: Գլխուղեղը գտնվում է զանգի խոռոչում (նկ.12): Գլխուղեղում տարբերում են հինգ հիմնական բաժիններ՝ երկարավուն ուղեղ, հետին ուղեղ (բաղկացած է կամրջից և ուղեղիկից), միջին ուղեղ, միջանկյալ ուղեղ և ծայրային ուղեղ կամ մեծ կիսազնդեղ: Ուղեղի տարբեր մասերը միասնակ չեն զարգացած: Մեծ կիսազնդեղը գերիշխում են մնացած բոլոր բաժինների վրա (գլխուղեղի քաշի մինչև 40%-ը):



Նկ.12. Գլխուղեղ. գլխուղեղի երկայնական կտրվածքը միջին գծով:
1 - ծակատային բիլթ, 2 - քունքային բիլթ, 3 - երկարավուն ուղեղ,
4 - ուղեղիկ, 5 - ծոծրակային բիլթ, 6 - զազարային բիլթ,
7 - տեսաթումք, 8 - մակուղեղ, 9 - ուղեղի կամուրջ, 10 - էպիֆիզ:

Երկարավուն ուղեղում տեղավորված են կենսականորեն կարևոր կենտրոնները՝ շնչառության, սրտի գործունեության, անթաշարժիչ, հնչացես նաև մարսողական (թքարտադրության, ստամոքսահյութի և ենթաստամոքսային հյութի արտազատման, կլման և այլն) և պաշտպանական (հազ, փոշտոց, փսխում և այլն) բազմաթիվ ռեֆլեքսների կենտրոնները:

Մեծ կիսագնդերը երկուսն են՝ աջ և ձախ: Գորշ նյութը կազմում է կիսագնդերի արտաքին շերտը՝ գլխուղեղի կեղևը կամ մեծ կիսագնդերի կեղևը: Յուրաքանչյուր կիսագնդում տարրերում են չորս բլթեր՝ ճակատային, զագաթային, քունքային, ծոծրակային և կղոյակը: Մեծ կիսագնդերի մակերեսին կան մեծ թվով գալարներ և ակոսներ: Կիսագնդերի սպիտակ նյութը բաղկացած է այնպիսի նյարդային բջիջներից, որոնք կենտրոնական նյարդային համակարգի տարբեր բաժինները միացնում են իրար:

Գլխուղեղի կեղևն ունի բարդ միկրոսկոպիկ կառուցվածք: Այն բաղկացած է նյարդային բջիջների և նյարդաթելերի մի քանի շերտերից: Բջիջները իրարից տարրերով են ծևով, մեծությամբ և գրաված դիրքով. նրանց ընդհանուր թիվը մոտ 15մլրդ է: Կեղևը նյարդային համակարգի բարձրագույն բաժինն է, ազդեցություն է գործում օրգանիզմի ֆունկցիաների վրա և իրականացնում է օրգանիզմի կապը արտաքին միջավայրի հետ: Մեծ կիսագնդերի կեղևի բոլոր բաժինները կապված են իրար հետ, սակայն միայնանցից տարրերով են նույր կառուցվածքով, հնչացես նաև ֆունկցիայով: Ի.Պ.Պավլովն ընդունում էր կեղևում «ընկալիչ գոտիների», այսինքն՝ տարբեր ընկալիչների (գգայության օրգանների) համար հատուկ շրջանների առկայությունը: Այդպիսի շրջանները նա անվանեց Վերլութիչներ (անալիզատորներ) կամ Վերլութիչների ուղեղային ծայրեր (օր՝ տեսնդական վերլութիչ, լսողական, շարժողական և այլն):

Գլխուղեղի կեղևն անմիջականորեն պատասխանատու է մարդու հոգեկանի համար՝ ազդելով նրա ընկալման, հիշողության, նյտածողության, մտավոր ունակությունների և ինտելեկտի վրա, ինչպես նաև նախածեռնում է մարդու գիտակցված գործողությունները: Այսպիսով, գլխուղեղի կեղևն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է մարդու մարմնի բոլոր մասերի հետ:

Գլխուղեղը ծածկված է երեք թաղանթներով՝ կարծրենիով, ոստայնենիով և անոթենիով, որոնք փոխարկվում են ողնուղեղի համանուն թաղանթների:

Ինչպես պարզել է Ի.Պ.Պավլովը, բարձրագույն նյարդային գործունեության հիմքը (գլխուղեղի կեղևի գործունեության) պայմանական ռեֆ-

լեքսներն են: Նյարդային համակարգի մյուս բաժինների աշխատանքը կոչվում է ցածրագույն նյարդային գործունեություն և ընթանում է ոչ թե պայմանական, այլ ոչ պայմանական ռեֆլեքսների սկզբունքով:

Ոչ պայմանական ռեֆլեքսները բնածին, ժառանգաբար փոխանցվող ռեֆլեքսներ են: Բարդ բնածին ռեֆլեքսները կոչվում են նաև բնագոններ: Ոչ պայմանական ռեֆլեքսների թվին են պատկանում բիբային, ծծելու, կլման, ջլային և այլ ռեֆլեքսները: Յուրաքանչյուր ոչ պայմանական ռեֆլեքս ծագում է ի պատճախան որոշակի գործիքի: Այսպես, թքազատման ոչ պայմանական ռեֆլեքսը դրսնորվում է միայն համային պտկիկների վրա սննդի ներգործության դեպքում: Տարբեր ոչ պայմանական ռեֆլեքսների կենտրոնները տեղակորված են ողնուղեղի և գիշուղեղի տարբեր բաժիններում: Ոչ պայմանական ռեֆլեքսների ռեֆլեկտոր աղեղները հաստատուն են, այսինքն՝ գործարկում են որոշակի ընկալիչներ, նյարդեր և կենտրոններ:

Պայմանական ռեֆլեքսները ծեռքբերովի ռեֆլեքսներ են և մշակվում են կենդանու կամ մարդու կյանքի ընթացքում. նրանց օգնությամբ օրգանիզմը հարմարվում է միջավայրի նոր, միշտ փոփոխվող պայմաններին: Ի տարբերություն ոչ պայմանական ռեֆլեքսների, պայմանական ռեֆլեքսներն առաջանում են ցանկացած գործիքի նկատմամբ: Պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսները օրգանիզմում ֆունկցիոնալ առումով կապված են իրար հետ:

Գիշուղեղի կեղևի, ինչպես նաև կենտրոնական նյարդային համակարգի մյուս բաժինների, գործունեությունը հրականացվում է երկու փոխկապակցված պրոցեսների՝ դրդման և արգելակման օգնությամբ:

Ուսումնասիրելով մարդու բարձրագույն նյարդային գործունեությունը, ի. Պավուկը մտցրել է երկու՝ առաջին և երկրորդ ազդանշանային համակարգերի հասկացողությունը: Իրականության առաջին ազդանշանային համակարգը կազմում են արտաքին աշխարհի առարկաների և երևույթների անմիջական, կոնկրետ ազդանշանները, որոնք ընկալում է գիշուղեղը: Այս համակարգն ընդհանուր է թե՛ մարդկանց և թե՛ կենդանիների համար: Ի տարբերություն կենդանիների, մարդու օժտված է նաև իրականության երկրորդ ազդանշանային համակարգով, որը կապված է խոսքի ֆունկցիայի հետ:

Կեցետատիկ նյարդային համակարգը ստորաբաժանվում է սիմպաթիկ և պարասիմպաթիկ բաժինների: Սիմպաթիկ բաժնի դրդում է նկատվում օրգանիզմի այնպիսի վիճակների ժամանակ, որոնք բնութագրվում են էներգիայի ուժգին ծախսումով՝ լարված մկանային աշխատանքի ժամանակ, ցրտի, ցավի և այլնի ներգործության դեպքում: Պարասիմպաթիկ բաժնի ազդեցությունը, ընդհակառակը,

նպաստում է էներգիայի պաշարների վերականգնմանը, որը կատարվում է հանգստի և քնած ժամանակ: Առանձին օրգանների ֆունկցիաների վրա վեգետատիվ նյարդային համակարգի երկու բաժինները ստվորաբար ունենում են հակադիր ազդեցություն: Այսպես, սինպաթիկ բաժնի ազդեցության տակ տեղի են ունենում բիբերի լայնացում, թքագեղձերի և արցունքագեղձերի արտազատման նվազում, սրտի բարախման հաճախացում, արյան ճնշման բարձրացում, աղիքների պերիստալտիկայի դանդաղում, բրոնխների մկանների թուլացում և այլն: Իսկ պարասինվաթիկ բաժնի գրգռման ժամանակ նկատվում են հակադիր երկույթներ՝ բիբերի նեղացում, ուժգին թքարտադրություն, սրտի բարախումների դանդաղում, աղիքների պերիստալտիկայի ուժեղացում, բրոնխների մկանների կծկում և այլն:

ԶԳԱՅԱՐՄԱՆՑՐ

Բոլոր օրգաններն օժտված են զգացող նյարդային վերջավորություններով՝ ընկալիչներով: Ընկալիչները ստորաբաժանվում են երկու մեծ խմբի՝ ներքին կամ ինտերոռեցեպտորներ և արտաքին կամ էքստերոռեցեպտորներ:

Ինտերոռեցեպտորները գտնվում են ներքին օրգաններում, անորներում, մկաններում ու հոդերում և ընկալում են այն գրգռիչները, որոնք ահազանգում են այդ օրգանների վիճակի և ներքին միջավայրի փոփոխությունների մասին:

Էքստերոռեցեպտորներն ընկալում են օրգանիզմի վրա արտաքին միջավայրի կատարված ներգրությունները: Մարդը, ինչպես նաև տարբեր կենդանիներ ունեն զգայության հատուկ օրգաններ՝ զգայարաններ:


Զգայության օրգաններն են՝ տեսողության, լսողության ու հավասարակշռության, մաշկային զգայության, համի, հոտառության:

Տեսողության օրգանը՝ աչքը, ծառայում է լուսային գրգռիչների ընկալման համար: Այն բազկացած է ակնազնողից և օժանդակ ապարատներից (Ակ. 13):


Ակնազունից կազմված է երեք թաղամթներից (արտաքին ֆիբրոզային, միջին, անոթային, ներքին ցանցաթաղանթից) և ներսում գտնվող հեղուկից, ոսպնյակից ու ապակենման մարմնից:

Աչքի օժանդակ ապարատներն են՝ պաշտպանական (հոնքերը, թարթիչները և կոպերը), արցունքային և շարժիչ ապարատները, ակնազնողին ամրացած 6 մկանները:

Ականջը ծառայում է լսողական գրգռիչների և այն գրգռիչների ընկալման համար, որոնք հարուցվում են տարածության մեջ մարմնի դիրքի փոփոխությամբ: Այն ունի երեք բաժին՝ արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ (Ակ. 14):



Նկ.13. Աչքի կտրվածքը (սխեմա). 1 – եղջերենի, 2 - բիբ, 3 – ծիածանաթաղանթ, 4 – թարթիային մարմին, 5 – կարուրենի, 6 - աչքի ուղիղ մկան, 7 - ապակեմաման մարմին, 8 - դեղին բիթ, 9 – տեսողական նյարդի պտկիլ, 10 – տեսողական նյարդ, 11 - աչքի անոթային թաղանթ, 12 – ցանցաթաղանթ, 13 – ոսպնյակ:



Նկ.14. Ականջի կտրվածքը (սխեմա). 1 – ականջի խեցի, 2 - արտաքին լսողական անցուղի, 3 – թմբկաթաղանթ, 4 – միջին ականջի խոռոչ, 5 – լսողական փող, 6 – մուլցիլ, 7 – սալ, 8 - ասպանդակ, 9 – կիսաբրուր խողովակ, 10 – խխունջ, 11 – ներքին ականջ, 12 – թմբկախոռոչ:

Արտաքին ականջը կազմում են ականջախեցին և արտաքին լսողական անցքը:

Միջին ականջը տեղավորված է քունքուսկրում. այն իրենից ներկայացնում է մոտ 1 սմ՝ ծավալ ունեցող մի խոռոչ, որի մեջ տեղավորված են իրար հետ միացած երեք լսողական մանր ոսկրեր՝ մուրճիկը, սալը և ասպանդակը:

Նեղոքին ականջը գտնվում է քունքուսկրում, ունի բարդ ձև, որա համար էլ կոչվում է նաև լաբիրինթոս: Տարբերում են ոսկրային և բաղանթային լաբիրինթոսներ:

Մաշկի մեջ կան մեծ քանակությամբ ընկալիչներ: Տարբերում են ցավի, ջերմության (սառության) և շոշափողական մաշկային ընկալիչներ:

Համի օրգանը կազմված է համային կոճղեզներից, որոնք գտնվում են լեզվի պտկելիկներում:

Հոտառության օրգանի մեջ են մտնում այն հատուկ զգացող բջիջները, որոնք գտնվում են քթի խոռոչի վերին բաժնի լորձաթաղանթում:

Ա.Ա. Հարությունյան

«ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԴԻՊՈՂ ԱՊԵՏՏԵՐԻ ԲԺՇԿԱՏԱԿԻԿԱԿԱՍ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ»

1991 թվի սեպտեմբերի 21-ին աշխարհի քարտեզի վրա իր տեղը գրավեց անկախ մի պետություն և՝ Հայաստանի Հանրապետությունը: Նրա տարածքը 29800կմ² է և կազմված է 11 մարզերից: Զայած տարածքի փոքրությանը, հանրապետությունում հանդիպում են 100-ից ավելի տարբեր բնույթի աղետներ, որոնց հետևանքով առաջանում են արտակարգ իրավիճակներ:

Արտակարգ իրավիճակ. դա որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի վտանգավոր բնական երևոյթի, տարբերային կամ էկոլոգիական աղետի, համաձարակի, անասնահամաձարակի, բռվստի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ իհվանդությունների (էպիդեմիա), կենսաբանական գենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զրիերի, մարդկանց առողջության և շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և նարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

Արտակարգ իրավիճակներ առաջանում են հետևյալ դեպքերում.

- երբ տվյալ օջախում (վնասնան օջախում) տուժածների թիվը կազմում է 10-15 մարդ,

- կամ զոհվածների թիվը՝ 2-4 մարդ,
- վտանգավոր ինֆեկցիոն հիվանդություն է հայտնաբերվել 50 մարդու մոտ,
- ինֆեկցիոն հիվանդություն անհայտ էթիոլոգիայով – 20 մարդու մոտ,
- ջերմող հիվանդներ անհայտ պատճառներից – 15 մարդ,
- երբ տվյալ տարածքի հիվանդության կամ մահացության ցուցանիշները գերազանցում են միջին վիճակագրական տվյալները երեք և ավելի անգամ:

Կատաստրոֆա (աղետ) - բնական այն աղետները կամ արտադրական խոշոր վթարները, որոնք ուղեկցվում են մարդկային գոհերով և մեծ չափերի հասնող նյութական կորուստներով:

Բժշկական տեսակետից կատաստրոֆա կոչվում են այն բնական աղետները կամ արտադրական խոշոր վթարները, որոնք առաջ են բերում մարդկանց նաևսայական ախտահարումներ (վնասվածքներ) և բուժ.հիմնարկները շարժից դուրս են գալիս, այս ամենի հետևանքները վերացնելու համար պահանջվում են օգնություն դրսից, այսինքն՝ տեղական ուժերը և միջոցները խիստ անբավարար են բոլոր տուժածներին բուժօգնություն ցույց տալու համար:

Առողջապահության միջազգային կազմակերպությունը առաջարկում է աղետների հետևյալ դասակարգումը՝ ըստ նրանց ծագման:

1. Օդերևույթաբանական - փոթորիկ, մրրիկ, կարկուտ, ուժեղ սարնամանիք, ուժեղ շոգ և հրդեհ, ուժեղ ծյունատեղում և այլն:
2. Երկրաբանական – սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրհեղեղ և այլն:
3. Երկրաֆիզիկական - երկրաշարժ և հրաբուխներ:
4. Վթարներ – տեխնիկական շինությունների շարժից դուրս գալը, շենքերի հանկարծակի փլուզում, հրդեհներ և պայթյուններ, տրանսպորտային վթարներ և այլն:

Հայաստանի տարածքում ամենից հաճախ պատահող բնական տարերային աղետը երկրաշարժն է, որի հասցրած վնասը կազմում է 94%, սելավները՝ 3.15%, փլուզումները և սողանքները՝ 1.2%, ջրհեղեղները՝ 0.15%, տրանսպորտային վթարները՝ 1.5%:

Հայաստանի տարածքը իր մակերևույթի վիթխարի լեռնակազմություններով նվազ կայուն է երկրաշարժի հանդեպ:

Ըստ պատմական աղբյուրների 139թ. տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Պատմիչ Եփրեմ Էղեսացին նշում է 321թ. ուժեղ երկրաշարժի մասին, որը ժողովրդին պատճառել է ծանր զրկանքներ:

Ըստ Կիրակոս Գանձակեցու 735թ. տեղի է ունեցել Վայքի Երկրաշարժը, որը տևել է 40 օր, Երկրի Երեսից ջնջվել է հայկական Սոգ քաղաքը իր 10 հազար բնակիչներով: Այդ պատճառով մարզը կոչվել է Վայոց ծոր: Հայկական Դվին քաղաքը Երեք անգամ Ենթարկվել է Երկրաշարժի ավերիչ աղետին և այլև չի վերականգնվել:

1319թ. ուժեղ Երկրաշարժը ավերեց Հայաստանի մայրաքաղաք Անիս:

1679թ. Երևանում տեղի է ունեցել ուժեղ Երկրաշարժ, որի հետևանքով զոհվել է 8 հազար մարդ:

1769 թ. Գառնիի Երկրաշարժը ամենաուժեղն էր:

Մեր դարասկզբին 1900թ. տեղի ունեցավ Ախալքալաքի Երկրաշարժը, 1902թ. Շեմախու Երկրաշարժը, 1920թ. Գորիսի, 1926թ. Լենինականի, որի ժամանակ զոհվեց 400 մարդ, նույնքան ստացան տարրեր աստիճանի վնասվածքներ:

Ամենաուժեղ Երկրաշարժը տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի 7-ին ժամը 11⁴¹ րոպեին, որը պատմության մեջ մտավ որպես Սայսակի Երկրաշարժ:

Երկրաշարժի ժամանակ առաջացած վնասվածքները կախված են ոչ միայն նրա ուժգությունից, այլև տվյալ բնակավայրի, քաղաքի շենքերի կառուցվածքից, խոտությունից, սեյսմակայունությունից: Կարևոր նշանակություն ունի նաև՝ Երկրաշարժը տեղի է ունեցել զիցերային ժամին թե ցերեկային:

Եթե տվյալ բնակավայրը կառուցված է քարե շենքերից, ապա առաջանում են գլխի, ողնաշարի, վերջույթների վնասվածքներ, կրծքի վանդակի սեղմում, վնասվածքային տոկսիկոզ, ներքին օրգանների պատրվածքներ:

Սիհարկանի շինությունների համար (փայտյա, քարե) բնորոշ է թերև վնասվածքները, փայտյա շինություններում հաճախ առաջանում են հրդեհներ՝ էլեկտրական լարերի կառօմ միացման հետևանքով:

Սպիտակի Երկրաշարժի ժամանակ տուժվածների մոտ վնասվածքները բնութագրվում էին հետևյալ կերպ.

- մեխանիկական վնասվածքներ՝ 80%, որից
- երկարատև ճնշման սինդրոմ՝ 16.6%,
- գլխուղեղի և ողնուղեղի վնասվածքներ՝ 13.1%,
- այրվածքներ՝ 0.7% և այլն:

Երկրաշարժի ժամանակ մարդիկ կորցնում են ինքնատիրապետումը, առաջանում են սուր ստրեսային վիճակներ՝ ընդհուպ մինչև սուր պսիխոզներ, որը կազմում է 1-2 %:

Հայաստանի տարածքում տեղադրված են 24-ից ավելի քիմիական վտանգավոր օբյեկտներ: Բերենք մի քանի օրինակ.

- «Նախիտ» - ունի 200 լթ ջլր, 260 լթ ամոնիակ,
- «Պոլիվինիլացետատ» - ունի 90 լթ ամոնիակ,
- Գյումրիի քաղաքային սառցարան - 30 լթ ամոնիակ,
- Վանաձորի կոմբինատ - 30 լթ ամոնիակ:

Խոշոր վթարի ժամանակ կարող են առաջանալ ախտահարման օջախներ՝ ուժեղ ներգործող բունավոր նյութերով:

Հայաստանի տարածքի 10%-ը ծածկված է անտառներով, և վերջին տարիների չորային եղանակների պատճառով առաջանում են հրդեհներ:

Հրդեհների պատճառներից մեկը զազատար խողովակների անսարք վիճակն է, որոնց ընդհանուր երկարությունը 10 հազար կմ է: Զերմուկի առողջարանի նանկական նասնաշենքի վթարի պատճառը նկուղում հավաքված զազի պայթյունն է: Տուժածների 15%-ը ստացել են տարրեր աստիճանի ծանրության այրվածքներ:

Սելավները և սողանքները (սողքեր) լուրջ վտանգ են ներկայացնում բնակչությանը: Հայաստանի տարածքի 40%-ը սողքերի և փլուզումների վտանգավոր գոտի է համարվում:

Սկսվող սողքերի նախանշաններն են համարվում շենքերում, տներում ճեղքերի, ճաքերի հայտնվելը, ճանապարհների, փողոցների ճեղքածքները, հողի ուրչելը, ծառերի ներքելի մասի տեղաշարժը վերինի համեմատ:

Սելավներ առաջանում են հորդառատ անձրևներից և ուժեղ ծնհալից: Սելավի մոտեցումը կարելի է իմանալ գլորվող և միմյանց հարվածող գլաքարերի և քարաբեկորների բնորոշ ծայնից, որը մեծ արագությամբ մոտեցող գնացքի դրոյցուն է հիշեցնում:

Սողքերի ժամանակ տուժածների մոտ հայտնաբերվում է մեխանիկական վնասվածքներ, սելավների ժամանակ՝ մեխանիկական վնասվածքներ և ջրահեղծում:

Սյուս աղետներից հաճախ է հանդիպում ուժեղ կարկուտը, որը հիմնականում վնասում է գյուղատնտեսությանը:

Մ.Խ. Աղամյակ բժշկ. գիտ.թեկն.

**ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺԾՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԻՆՉՔՃԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ**

ԲԺԾԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դժբախտ պատահարը կարող է տեղի ունենալ ամենուրե տաճք, փողոցում, ճանապարհին, վրարների և աղետների ժամանակ՝ Հատ հաճախ տուժածը մահանում է ոչ թե վնասվածքի ծանր լինելու պատճառով, այլ կողքին եղած մարդկանց մոտ առաջին բուժօգնություն ցուցաբերելու տարրական գիտելիքների բացակայության հետևանքով: Այդ գիտելիքների բացակայության կամ դրանց անբավարար լինելու պատճառը ոչ միայն անտարբերությունն ու անհոգությունն են, այլ նաև այն մոլորությունը, որ փորձանքը շրջանցելու է իրենց:

Արտակարգ իրավիճակներում ստացած ախտահարումները բնորոշվում են զգալի քանակությամբ բազմաթիվ և համակցված վնասվածքներով, կոմբինացված ախտահարումներով, որոնք ուղեկցվում են վնասվածքային և այրվածքային շոկով, սուր արյունահոսությամբ, շնչահեղծությամբ, երկարատև ճնշման սինդրոմով: Այս ամենը երբեմն հանգեցնում է փոխադարձ ծանրացման համախտանիշի առաջացմանը և հաճախ ուղեկցվում է հոգեբանական ռեակցիաներով, որոնք դժվարացնում են բուժօգնության ցուցաբերումը:

Բժշկական օգնության տեսակներն են՝ առաջին բուժօգնությունը, մինչքիչկական օգնությունը, առաջին բժշկական, որակալ բժշկական, մասնագիտացված բժշկական օգնությունը:

Առաջին բուժօգնությունը ցուցաբերվում է աղետի վայրում փրկարարների և «պարամետրիկների» կողմից: Ախտորոշում չի կատարվում, այլ օգնությունը ցուցաբերվում է վնասվածքի բացահայտ նշանների առկայության հիման վրա՝ վերջի առկայություն, արտաքին արյունահոսություն, շնչահեղծություն:

Օգնությունը ենթադրում է՝

- մեխանիկական ասֆիքսիայի վերացում,
- արտաքին արյունահոսության ժամանակավոր դադարեցում,
- ցավազրկում,

- Վերքային և այրվածքային մակերեսի վիրակապում ասեպ-տիկ կապով,
- Կրծքավանդակի վիրակապում հերմետիկ վիրակապով,
- Վնասված վերջույթի անշարժացում,
- հակաթույնի և հակաբիոտիկների ընդունում:

Մինչքծշկական օգնությունը ցուցաբերվում է միջին բուժանձնակազմի կողմից (բուժքուր, բուժակ), որոնք գինված են համապատասխան թշշկական միջոցներով՝ լարաններ, փոխադրական բեկակալներ, դեղամիջոցներ, լուծույթների փոխներարկման միջոցներ և այլն: Նախկինի նման ախտորոշում չի կատարվում, սակայն առանձնացվում են այն համախտանիշները, որոնք իրենցից վտանգ են ներկայացնում կյանքի համար: Օգնությունը ցուցաբերվում է ըստ համախտանիշների և ուղղված է տուժածի կյանքի պահպաննանը ու կյանքի համար վտանգավոր բարությունների կանխարգելմանը: Բուժաշխատողը պետք է կարողանա տարբերակել այնպիսի վիճակները, ինչպիսիք են՝ կոման, շնչառության և սիրտ-անոթային տուր անբավարարությունը, շոկը: Զծշտելով այդ վիճակների պատճառներ՝ նա բացի առաջին բուժօգնության մեջ մտնող միջոցառումների հոգականացումից պետք է կարողանա կատարել՝

- սրտային և անորաթեղմիչ միջոցների ներարկում արյան գարկերակային ճնշման խիստ անկյան (կրիտիկական) դեպքում,
- շնչառության ընկճման դեպքում շնչառական խթանիչների ներարկում,
- սիրտ-թոքային վերակենդանացման պարզագույն միջոցառումներ,
- շոկի ժամանակ լուծույթների, դեղորայքի ներարկում:

Ներկայում «պարամեդիկներն» ունեն պատրաստվածության բավականին բարձր մակարդակ, որպեսզի առաջին օգնություն ցույց տալուց բացի իրականացնեն նաև մինչքծշկական օգնություն, այդ պատճառով էլ հիմնականում այդ երկու օգնության տեսակները համակցվում են:

ԱՊԱԳԻՆ ԲՈՒԺԾԱՆՈՒԹՅԱՆ ԺՄՆԱԿԱՆ ՍԿՁՐՈՒՏՆԵՐԸ

Առաջին բուժօգնությունը պարզագույն բուժական միջոցառումների համալիր է, որն իրականացվում է վնասվածքը ստանալու վայրում՝ ինքնօգնության և փոխօգնության ձևով, ինչպես նաև փրկարարների ու «պարամեդիկների» կողմից՝ օգտագործելով հատուկ և ծեռքի տակ եղած միջոցները:

Առաջին բուժօգնության հիմնական նպատակն է՝ տուժածի կյանքի փրկումը, վնասվածքի ծանր հետևանքների կանխարգելումը, ախտահարող գործոնի շարունակող ազդեցության վերացումը կամ նվազեցումը և տուժածի արագ տեղափոխումն ախտահարման վայրից մոտակա թժշկական հաստատություն:

Արտակարգ իրավիճակներում կարևորվում է ոչ միայն պրոֆեսիոնալիզմը, այլ նաև ժամանակին օգնություն ցույց տալը: Տասնյակ տարիներ՝ ինչ հայտնի է «ոսկե ժամ» հասկացությունը: Դա այն ժամանակն է, երբ ծայրահետ վիճակում գտնվողի առողջությունը տատանվում է կյանքի ու մահվան միջև, և երբ տուժածին կարելի է ցուցաբերել առավել իրական օգնությունը:

Մարդու օրգանիզմին հատուկ է այն, որ հանկարծակի և լուրջ վնասվածքների դեպքում մաքսիմալ կոնպենսատոր ֆունկցիաները էֆեկտիվորեն պահպանում են օրգանիզմի կայուն վիճակը նույն մեկ ժամկա ընթացքում: Այնուհետև սկսվում է նրանց պաշարների աստիճանական հյուծնան շրջանը, որի հետևանքով օրգանիզմը «անջատում» է մարմնի համեմատաբար քիչ ախտանի հատկանիները՝ ձգուելով կենսունակությամբ ապահովել ամենակարևոր օրգանը՝ ուղեղը:

Բուժօգնության ցուցաբերումն առավել արդյունավետ է դժբախտ պատահարից հետո մեկ ժամկա ընթացքում և թույլ է տալիս մինիմումի հասցել Վտանգավոր բարդությունների զարգացումը: Մեկ ժամ անց վիճակի կայունացմանն ուղղված ջանքերը շատ ավելի մեծ են լինում: Եթե տուժածը հիվանդանոց է հասցում առաջին ժամկա ընթացքում, ապա ապահովվում է ապրելունակության ամենաբարձր մակարդակը և բարդությունների վտանգի զգալի նվազեցումը: Հենց այդ ժամանակն է համարվում «ոսկե ժամ», որը սկսվում է վնասվածքը ստանալու պահից, այլ ոչ թե օգնությունը ցուցաբերելու պահից:

Անհրաժեշտ է հնարավորինս կրծատել վնասվածքի, թունավորման և այլ դժբախտ պատահարների առաջացման և առաջին բուժօգնության ցուցաբերման միջև ընկած ժամանակահատվածը: Առաջին բուժօգնության ցուցաբերման օպտիմալ ժամանակը 30 րոպե է վնասվածքը ստանալու պահից, թունավորման դեպքում՝ 10 րոպեն, շնչառության դադարեցման դեպքում՝ 5-7 րոպե:

Ժամանակի գործոնի կարևորությունն ընդգծվում է նրանով, որ առաջին 30 րոպեների ընթացքում օգնություն ստացած մարդկանց նույն բարդություններն առաջանաւ են երկու անգամ պակաս, քան օգնություն ավելի ուշ ստացածների նույն:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով խաղաղ պայմաններում աղետների հետևանքով վնաս-

Վաճք ստացածների մինչև 1/3-ը օգնության կարիք ունի կյանքի ցուցումներով: 100-ից 20-ը, այսինքն՝ յուրաքանչյուր հինգերորդը մահացածների թվից, կարող էր փրկվել ժամանակին և տեղում ճշտ օգնություն ստանալու դեպքում: Օգնության բացակայությունը վնասվաճք ստանալուց հետո 1 ժամվա ընթացքում նպաստում է ծանր վնասվաճքներ ստացածների մահվան թվի մեծացմանը 30%-ով, մինչև 3 ժամվա ընթացքում՝ 60%-ով, մինչև 6 ժամվա ընթացքում՝ 90%-ով, այսինքն՝ մահացածների թիվը գրեթե կրկնապատկվում է:

Առաջին բուժօգնությունը ցուցաբերվում է փրկարարական աշխատանքներին զուգահեռ: Առաջին բուժօգնություն ցույց տալուց առաջ անհրաժեշտ է ցուցաբերել զգնություն Վտանգի հնարավոր աղբյուրը ժամանակին նկատելու համար, այն է՝ փլուզման, հրդեհի, պայթյունի, զազաջրամատակարարման, հեղեղման և այլնի Վտանգը: Առաջին հերթին պետք է դադարեցնել վնասակար գործուների ազդեցությունը՝ հանել փլատակների տակից, ջրից, հանգսնել այրվող հագուստը, դուրս բերել թունավոր օջախից, մեքենայից, գնացքից և այլն: Կարող է տուժածի վիճակի ճիշտ և արագ գնահատումը: Զննման ժամանակ պետք է պարզել տուժածը կենդանի է, թե՝ ոչ, ապա որոշել վնասվաճքի ծանրության աստիճանը, արյունահոսության առկայությունը և առանց որևէ րոպե կորցնելու տուժածին ցույց տալ համապատասխան օգնություն:

Անհրաժեշտ է իմանալ ոչ միայն տարբեր վնասվաճքների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման կանոնները, այլ նաև այն, թե ինչ չի կարելի անել տուժածի վիճակը չվատթարացնելու համար, այն է՝ «մի վնասիր» բժշկական պատգամը: Այդպիսի գործողությունների շարքին դասվում են.

- Չտեղափոխել տուժածին այլ վայր, եթե նրան չեն սպառնում կրակը, փլուզումը և այլն, ու անհրաժեշտության դեպքում ցույց տալ առաջին բուժօգնություն:
- Չի կարելի թողնել մեջքի վրա պառկած՝ անգիտակից վիճակում գտնվող տուժածին, առավել ևս փսխման դեպքում, նրան թեքել կողքի՝ տալով անվտանգ դիրք, ծայրահեռ դեպքում նրա գլուխը թեքել կողքի:
- Անգիտակից վիճակում գտնվող տուժածին չտալ խմելու դեղեր կամ ջուր:
- Կիրակապ, բեկակալ դնելիս չպատճառել լրացուցիչ ցավ՝ վատացնելով տուժածի ինքնազգացողությունը. չպետք է հանել ծանր վիճակում գտնվողի հագուստը և կոշիկները, այլ դրանք պետք է կտրել կամ պատառութել:

- Զկաշել վերքին ծեռքով կամ այլ առարկաներով, թույլ չտալ տուժածին նայել իր վերքին:
- Չուղղել կրծքավանդակից և որովայնի խոռոչից արտանկված օրգանները:
- Դուրս չբերել օտար մարմինները կրծքավանդակից, որովայնի և զանգի խոռոչներից, թողնել դրանք հրենց տեղերում, նույնիսկ եթե դրանք մեծ չափերի են և հեշտությամբ կարող են հանվել: Դրանք հանելու դեպքում հնարավոր են ավելի մեծ բարդություններ, արյունահոսություն և այլն: Մինչև շտապօգնության զալը ծածկել վիրակապով և զգույշ կապել:
- Մի՛ վատացրեք տուժածի վիճակը Ձեր անհանգիստ և մտահոգ տեսքով, ցույց տվեք օգնությունը հանգիստ և վստահ՝ համբաւացնելով և քաջալերելով նրան:
- Չի կարելի տուժածին դուրս բերել փլատակներից, կրակից, ջրից, առանց նախապես անձնական անվտանգությունն ապահովելու:

Աշխատեք վտանգազերծել Ձեզ և տուժածին: Հնարավորության սահմաններում աշխատեք տաքացնել տուժածին՝ օգտագործելով դրա համար բոլոր միջոցները, վերմակի կամ ջեռակի բացակայության դեպքում կիրառեք տաք ջրով լցված շշեր, խարույկի վրա տաքացրած քարեր կամ այլուներ:

Եթե տուժածի որովայնի խոռոչի օրգանները վնասված չեն և նա գիտակցության մեջ է, ապա հնարավորության դեպքում տվեք նրան որքան հնարավոր է շատ հեղուկ՝ տեղին է ջուրն աղով և սողայով (համապատասխանաբար մեկ և կես թեյի գդալներ մեկ լիուր ջրին):

Որովայնի խոռոչի օրգանների վնասաման դեպքում խմելու ջրի փոխարեն տուժածի շրմներին համեմ թաց թաշկինակ, թանգիվ, անձեռոցիկ:

ՏՈՒԺԱԾԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱԿԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ (ԱՍԱՁՆԱՅԻՆ ԵԿ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԶՆՆՈՒՄ)

Ապահովելով սեփական անվտանգությունը՝ ուշադիր զննել պատահարի վայրը և տուժածին, կայունացնել նրա վիճակը, բացահայտել այն ուժերի բնույթը, որոնց ազդեցությանն է ենթարկվել տուժածը, հայտնաբերել արդեն գոյություն ունեցող հիվանդությունների նշանների առկայությունը, որոնք կարող էին առաջ բերել տվյալ դժբախտ պատահարը:

Կարևոր է արագ և ճիշտ գնահատել տուժածի վիճակը: Զննելիս նախ պարզել կենդանի է նա, թե՝ ոչ, այնուիեւն որոշել ախտահարման և վիճակի ժանրության աստիճանը:

Կյանքի նշաններն են՝

- անորագարկի առկայությունը քնային զարկերակի վրա,
- ինքնուրույն շնչառության առկայությունը (որոշվում է կրծքավանդակի շնչառական շարժումներով և այն ձայննով, որ առաջանում են շնչառության ժամանակ),
- բերի ռեակցիան լուսի նկատմամբ (եթե տուժածի բաց աչքը փակենք ափով և որոշ ժամանակ անց ափն արագ հեռացնենք, ապա բիբը նկատելի հօրեն նեղանում է),
- ցավի նկատմամբ ոչ կամային ռեակցիայի պահպանումը,
- եղջերաթաղանթի ռեֆլեքսի պահպանումը (նատք եղջերաթաղանթին մոտեցնելիս աչքը ակամա թարթում է):

Կենսաբանական մահվան նշաններն են՝

- մաշկի գորշ գույնը,
 - մաշկի սառնությունը,
 - եղջերաթաղանթի ռեակցիայի բացակայությունը,
 - եղջերաթաղանթի չորացումը և պղտորումը,
 - դիակային փայտացման և դիակային բժերի առկայությունը:
- Տուժածի առաջնային գննումն իրականացվում է զննման պահին կյանքի համար անմիջական վտանգ ներկայացնող պատճառները բացահայտելու նպատակով: Դրանք են՝
- շնչուղիների անցանելիության խանգարումը,
 - արտաքին արյունահոսությունը,
 - կիսնիկական մահվան նշանները:

Երկրորդային գննում. 2-3 րոպեների ընթացքում գնահատել տուժածի վիճակը (գիտակցության առկայությունը կամ բացակայությունը, անորագարկը, շնչառության հաճախականությունը) մինչև օգնություն ցուցաբերելը և հիվանդանոց տեղափոխելը:

ԱՊԱՑՆԱՅԻՆ ԶՆՆՈՒՄ

Նպատակառության և արագ (2 րոպեից ոչ ավելի) առաջնային գննումը կատարելիս անհրաժեշտ է բացահայտել և սկսել կյանքին սպառնացող բոլոր վիճակների բուժումը: Առաջին հերթին գնահատել շնչուղիների, շնչառության, արյան շրջանառության վիճակը. շնչուղիների տուժածը, շնչառությունն աղեկվա՞տ է, թե՝ ոչ, անցանելի՞ են արյոյոք տուժածը, շնչառությունն աղեկվա՞տ է, թե՝ ոչ, անցանելի՞ արյոյոք շնչառական ուղիները, կպահպանվի՞ արյոյոք վերջիններիս անցանելիությունը:

Ամբողջ աշխարհում անհետաձգելի օգնություն ցուցաբերելիս օգտագործվում է ABC-ալգորիթմը.

Airway – շնչուղիների անցանելիություն (A),

Breathing – շնչառություն (B),

Circulation - արյան շրջանառություն (C):

ABC -ն ստուգվում է «տեսնում եմ, լսում եմ, գգում եմ» եղանակով:

Կանգնել տուժածի ազ կրոմում, մոտեցնել գլուխն այնպես, որ պեսզի օգնողի ձախ ականջը լինի տուժածի քերանի մոտ, իսկ հայցք ուղղված լինի կրծքավանդակին: Մատները դնել քնային զարկերակի վրա, մինչև մեկ տարեկան երեխաների մոտ բազկային զարկերակին: Գնահատել տուժածի վիճակը.

տեսնում եմ՝ ստուգել կրծքավանդակի և որովայնի շնչառական շարժումների առկայությունը,

լսում եմ՝ ականջով լսել շնչառությունը տուժածի քերանի մոտ, գգում եմ՝ շնչառությունը ստուգել այտի մաշկի միջոցով, շշափել անորազարկը քնային զարկերակի վրա 4-5 վայրկանների ընթացքում, մինչև մեկ տարեկան երեխաների մոտ բազկային զարկերակի վրա:

Կլինիկական մահը հաստատելու համար բավական է երեք նշանների առկայությունը, դրանք են՝

- գիտակցության կորուստը,
- շնչառության բացակայությունը,
- անորազարկի բացակայությունը քնային զարկերակի վրա:

Բբերի լայնացումը համարվում է կլինիկական մահվան լրացուցիչ նշան և ոչ միշտ է լինում լավ արտահայտված:

Գործողությունների կարծ ալգորիթմը.

Հայտնաբերել և վերացնել շնչառական ուղիների առկա և հնարինացները՝ զգուշություն ցուցաբերելով ողնաշարի պառանցային հատվածի նկատմամբ: Եթե տուժածը պառկած է փորի վրա, ապա մեջքին շուրջ տալիս անշարժացնել պարանոցը:

Ա. Եթե շնչուղիներն անանցանելի են, ապա վերականգնել նրանց անցանելիությունը՝ մատի շարժումներով, ստորին ծննդուղ առաջ բերելով, փորձնական երկու ներշնչումով, Հեյմլիկի մեթոդով:

Բ. Եթե շնչառություն չկա, սկսել արհեստական շնչառություն, եթե անորազարկ չկա, սկսել սիրտ-թոքային վերակենդանացում (2 ներշնչում – 15 սեղմում):

Ը. Եթե կա արյունահոսություն, միջոցառումներ ծեռնարկել արյունահոսությունը կանգնեցնելու համար:

Ամեն 5 ցիկլից հետո ստուգել ABC-ն:

Կյանքի ֆունկցիաները վերականգնելուց հետո տուժածին տալ անվտանգ դիրք:

Սրտի կանգի պահից մինչ սիրտ-թոքային վերակենդանացում սկսելը չպետք է անցնի 2 րոպեից ավելի:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԶՆՈՒՄ

Մինչ բուժօգնություն ցույց տալը և հիվանդանոց տեղափոխելը գնահատել տուժածի վիճակը: Պետք է հայտնաբերել կյանքի համար վտանգ չսպառնացող բոլոր վնասվածքները: Անհրաժեշտ է զննել, դիտել, շոշափել տուժածի ամբողջ մարմինը: Որոշել հիմնական վնասվածքները, գնահատել տուժածի գիտակցության մակարդակը և բիբերի ռեակցիան լուսի նկատմամբ:

Գիտակցության մակարդակի գնահատումը. մոտենալ տուժածին, ձեռքով ֆիքսել գլուխը, ցնցել ուսը և հարցնել՝ «ի՞նչ է պատահել»: Գնահատել գիտակցության մակարդակը հետևյալ սանդղակին համապատասխան.

- գիտակցությունը պարզ է՝ տուժածը ի վիճակի և ասել իր անունը, գտնվելու վայրը, շաբաթվա օրը,
- ռեակցիան խոսքի նկատմամբ՝ հասկանում է հարցերը, սակայն ի վիճակի չէ պատասխանել վերոհիշյալ երեք հարցերին,
- ցավային ռեակցիա՝ ռեակցիա է տալիս միայն ցավի նկատմամբ, որը ստուգվում է հետևյալ եղանակով՝ սեղմելով կոճոսկրին, սեղմելով ականջի բլանկը, սեղմելով սեղանարդ մկանը (բռնելով մեծ մատով և ցուցանատով):
- Ուսակցիայի բացակայությունը նշանակում է, որ տուժածը չի արձագանքում ոչ խոսքին, ոչ ցավին:

Ստուգել բբային ռեակցիան լուսի նկատմամբ (նորմայում բբերը նեղանում են): Արագ ստուգել տուժածի ծայրանդամների շարժունակությունը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Կ.Ա. Մանասյան, կենս. գիտ. թեկն.

ԱՆՏԱՀԱՐՎԱԾՍԵՐԻ ՈՒ ՀԱՎԱՍՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԱՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ

Բժշկական տեսակավորումը կազմակերպական առավել կարևոր մեթոդներից է, որն ուղղված է արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության առավել արդյունավետ բուժօգնություն ցուցաբերելուն: Մասսայական ախտահարման օջախների առաջացնան ժամանակ, որպես կանոն, անհամատեղելիություն է առաջնում բժշկական օգնության խիստ անհրաժեշտության և բժշկական ծառայությունների հնարավորությունների միջև: Այդ խսկ պատճառով սահմանվում է բժշկական օգնության իրականացնան և էվակուացիայի հերթականություն, որպեսզի օգնություն ցուցաբերվի ապրելու հնարավորություն ունեցող առավել մեծ թվով մարդկանց:

Տեսակավորման ինաստր տուժածներին՝ կախված ախտահարման բնույթից և ծանրությունից, միատեսակ բուժարողիչականիկ և էվակուացիոն միջոցառումների պահանջ ունեցող խնբերի մեջ խմբավորելն է և ամեն մի խմբին ցուցաբերվող բժշկական օգնության հերթականությունն ու տեղը որոշելը: Ախտահարվածների մասսայական ընդունման դեպքում ճիշտ կազմակերպված տեսակավորումը նպաստում է բժշկական ծառայության ուժերի և միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը և տուժածներին բոլոր տիպի բժշկական օգնության առավել ամբողջական ցուցաբերմանը, ինչպես նաև նրանց էվակուացիային և հետագա բուժմանը:

Բուժօգնության կարիք ունեցող վիրավորների և ախտահարվածների վիճակի արագ գնահատման և որակավորման մեթոդը բժշկական պրակտիկա է ներդրել՝ նապոլեոնյան բանակի ֆրանսիացի վիրաբույժ Շոմինիկ Լերրին: Ուսասատանում վիրավորների տեսակավորման սկզբունքն առաջինը տեսականորեն հիմնավորել և ռազմադաշտային վիրաբուժություն է ներդրել ռուս մեծ վիրաբույժ Ն.Ի.Պիրոգովը: 1854 թ., ժամանելով պաշարված Սևաստոպոլ, նա

իր գործունեությունը սկսեց վիրակապման կետերում կարգ ու կանոն հաստատելուց, կոչ անելով՝ “այդ կետերը տեղափոխած վիրավորներին անմիջապես չվիրահատել, այլ անհետաձգելիորեն զբաղվել նրանց տեսակավորմանը”: Զինվորական բժշկության կողմից մշակված տեսակավորման սկզբունքը պահպանում է իր իմաստը ոչ միայն հատուկ պատերազմային շրջանում, այլև կիրառվում է խաղաղ ժամանակ:

Խաղաղ ժամանակ ըստ բազմազանության աչքի են ընկնում այն ախտահարումները, որոնք առաջանում են տարբեր ախտահարիչ գործուների միաժամանակյա կամ հաջորդական ներազդեցության հետևանքով. ծանրության տարբեր աստիճանների գուգակցված և բազմակի վնասվածքներ, այրվածքներ, ինֆեկցիոն հիվանդություններ (մինչդեռ լայնածավալ մարտական գործողությունների և տեղային պատերազմական բախումների ժամանակ սովորաբար նկատվում են ախտահարնան հաստատուն տեսակներ):

Արտակարգ իրավիճակում հայտնված բնակչության մոտ հաճախ նկատվում են հոգենյարդային խանգարումներ, սրբեսներ, շոկ, ընդարձացում: Ախտահարվածների 10-15%-ը կարիք է զգում հոսպիտալ բուժման հոգենյարդաբանական ստացիոնարներում, իսկ 50% -ից ոչ պակաս՝ անբոլուսոր պայմաններում: Զգալիորեն ածում է սուր սրտային անբավարարության նոպաների, սրտանկանի ինֆարկտի, հիպերտոնիկ կրիզների, ինչպես նաև ուղեղային արյան շրջանառության, էնոլոկրին համակարգի ֆունկցիաների խանգարման, վաղաժամ ծննդաբերությունների թիվը: Այդ ամենը խստ ազդեցություն ունի ԱԻ-ի հետևանքները վերացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների ծերի և ներթողների վրա:

Հաշվի առնելով աղետի ժամանակ խուճապի, համընդհանուր իրարանցման առկայությունը՝ տեսակավորման ողջ համակարգը առավելագույն հաջորդության հասնելու համար պետք է լինի պարզ և հաջորդական բժշկական էվակուացիայի բոլոր էտապներում:

Տեսակավորումը պետք է դառնա այն գենքը, որի միջոցով անկառավարելի և անհաղթահարելի թվացող իրավիճակը կարելի կլինի վերահսկել բուժօգնության համակարգի բոլոր մակարդակներում:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Բժշկական տեսակավորման գործընթացը ժամանակին անկացնելու համար անհրաժեշտ է ամենավաղ ժամկետում որոշել տե-

սակավորման կենտրոնական գոտին: Այն պետք է հնարավորինս մոտ լինի աղետի օջախին, բայց ազատ լինի նրա ախտահարիչ գործոնների վտանգավոր ազդեցությունից: Տուժածների հավաքակետը նպատակահարմար է հիմնել ախտահարման օջախի սահմանին: Հաշվի առնելով բուժանձնակազմի պաշտպանության անհրաժեշտությունը՝ հավաքակետը պետք է ունենա հարմար ելքատեղ: Մեծածավալ արեսների դեպքում կարիք կզգացվի տուժածների միքանի հավաքակետերի ստեղծման: Այդ ժամանակ շատ կարևոր է կողորդինատորի գրագետ գործելակերպը:

Անցյալի Ար-ի փորձը ցույց է տալիս, որ տեսակավորումը հաջող անցկացնելու համար բժշկական էվակուացիայի փուլերում անհրաժեշտ է ստեղծել պատշաճ պայմաններ՝ հիմնելով ինքնուրույն ֆունկցիոնալ ստորաբաժանումներ, բավարար տարրողությամբ տարածքներ՝ տուժածներին պատզարակներով կամ Պավլովսկու հաստոցներով ըստ շարքերի տեղաՎորելու համար: Ընդ որում, անհրաժեշտ է նախատեսել անցատեղեր շարքերի միջև և հարմար մատույց պատզարակներին, ընդունող – տեսակավորող կամ տեսակավորող – տեղահանող բաժիններն ապահովել ախտորոշիչ վիրակապարաններով և բժշկական բաշխիչ կետերով անհրաժեշտ քանակի բուժանձնակազմով, տեսակավորման բրիգադներով, գունավոր տեսակավորման դրոշմանիշներով և առաջնային բժշկական քարտերով:

Առաջնային տեսակավորումը պետք է կատարվի արագ և ընդհատվի միայն անհետաձգելի միջոցառումներ պահանջող դեպքում (շնչուղիների ազատում, արյունահոսության դադարեցում): Նախընտրելի են վերակենդանացման պարզագույն մեթոդները: Այս փուլում տեսակավորումն իրականացնող մասնագետը չպետք է ծգուի հատուկ ուշադրությամբ առանձնացնել ախտահարվածներից որևէ մեկին: Առաջնային տեսակավորումից հետո տուժածներին ուղարկում են կենտրոնական իրապարակ՝ տեսակավորումը շարունակելու և վիճակի ծանրության աստիճանը պարբերաբար վերազնիատելու: Այնտեղ էլ անհրաժեշտության դեպքում կատարվում է տուժածների վերաբաշխում ըստ կարգերի: Տեսակավորում կատարող բժիշկը պետք է արագ գնահատի ախտահարվածների վիճակը, թաքնված զնասվածքների առկայության հնարավորությունը, որից հետո կինհիկական գնահատման և ախտորոշման հիման վրա ծիծտ եզրակացություն կազմի, որոշի անհրաժեշտ բժշկական օգնության հաջորդականությունը: Կարծ ժամկետում մեծ քանակի տուժածներ

ընդունելու պարագայում տեսակավորող բժիշկը ստիպված է լինում տեսակավորում կատարել առանց մանրանասն անամնեզի, հաճախ տուժածի արտաքին զննման հիման վրա: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ բժշկական տեսակավորումը պետք է հանձնարարվի ախտորոշման և կանխատեսման հարցերում առավել որակյալ և փորձառու մասնագետի:

Տեսակավորման արդյունքներն ամրագրում են գումավոր դրոշմանիշներով (պիտակում), որոնք փակցվում են տուժածի հագուստին կամ պատգարակների բոնակներին, ինչը օգնում է կրտսեր բուժանձնակազմին առանց լրացուցիչ ցուցումների, առաջնորդվելով միայն տեսակավորող դրոշմանիշներով, ուղղել ախտահարվածներին այս կամ այն ստորաբաժանումը կամ իրականացնել նրանց փոխադրումը՝ համապատասխան տեսակավորող բժշկի դրոշման:

ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐ

Տեսակավորող բրիգադները առաջին հերթին ստեղծվում են ընդունող-տեսակավորող բաժանմունքի անձնակազմի հաշվին՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով այլ բաժանմունքների առավել որակյալ մասնագետներին: Տեսակավորման բրիգադների կազմում ընդգրկվում են.

- բժիշկ – 1, բուժքույրեր – 2, մատենավարներ – 2 (պատգարակավորների տեսակավորում),
- բժիշկ – 1, բուժքույր – 1, մատենավար – 1 (քայլող հիվանդների տեսակավորում):

Բրիգադները պետք է ապահոված լինեն համապատասխան սարքավորումներով, տեսակավորման արդյունքները ամրագրող միջոցներով: Հաշվի առնելով ժամանակի գործոնի սահմանափակ լինելը, էվակուացիայի առաջին փուլում մեկ ախտահարվածին տրամադրվող հանձնարարելի աշխատանքային ժամանակը կազմում է 15-ից 40 վայրկյան: Դրա նպատակն է՝ առավելագույնս կրծատել հավաքակետերում ախտահարվածների գտնվելու ժամանակը: Երկրորդ փուլում՝ հիվանդանոցի ընդունող – տեսակավորող բաժանմունքում, ժամանակային նորմատիվներն աճում են մինչև 2-5 որոշելու: Մեկ տեսակավորող բրիգադի հնարավորությունն է ժամում 20-25 ախտահարված:

Ախտահարվածների զանգվածային հոսքի դեպքում նպատակահարմար է տեսակավորման համար ժամանակավորապես ընդունարան ուղարկել պահուստային տեսակավորող բրիգադներ՝ կազմված վիրաբուժա-վիրակապային և հոսպիտալ բաժանմունքների թիջկներից, քանի որ այդ անձնակազմը առավել հմտացած է ախտորոշման և կանխատեսման հարցերում:

Բրիգադը միաժամանակ զննում է երկու պատգարակավոր հիվանդների. մեկի մոտ գտնվում է թիջկը, բուժքույրը և նատենավառը, իսկ երկրորդի մոտ՝ բուժքույրը (բուժակը) և մատենավարը: Ըստունելով տեսակավորման որոշում առաջին ախտահարվածի վերաբերյալ՝ թիջկն անցնում է երկրորդին և նրա մասին տեղեկություն է ստանում ֆելշերից: Որոշում ընդունելով, անցնում է երրորդ ախտահարվածին՝ ստանալով տեղեկություն բուժքույրից, բուժակն այդ ժամանակ զննում է չորրորդ ախտահարվածին և այլն: Ծոնակների օլակն իրագործում է թիջկի որոշումը՝ համապատասխան տեսակավորող դրոշմանիշի:

Աշխատանքի այդպիսի կոնվեյերային մեթոդի կիրառման դեպում տեսակավորող բրիգադը կարող է մեկ ժամում տեսակավորել 30-40 վնասվածքաբանական պրոֆիլի պատգարակային ախտավորվածների կամ ուժեղ ազդեցության թունավոր նյութերով ախտահարվածների: Տեսակավորումը կատարվում է առանց վիրակազր հանելու և առանց հետազոտման բարդ մեթոդներ կիրառելու արտաքին զննման տվյալների, ախտահարվածների հարցման և թիջկական փաստաթղթերին ծանոթանալու հիման վրա:

Հաշվի առնելով ախտահարվածի ընդունարան տեղափոխելու ալիքային բնույթը (շտապօգնության մեքենաներով): Տեսակավորող բրիգադների կարգավորված աշխատանքը թույլ է տալիս արագ և արդյունավետ ծնով ազատել “պիրոզովյան շարքերը” նոր եկողների համար:

ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂԻ ԽՄՔԵՐԸ

Թանկացած մասնագիտական մակարդակի թիջկական անձնակազմ սկզբում պետք է իրականացնի ընտրովի տեսակավորում, այսինքն՝ առաջին հերթին ընդունակություն ունեցող առանձնացնի և ժամանակավորապես մեկուսացնի այն ախտահարվածներին, որոնք վտանգ են ներկայացնում շրջապատի համար՝ ինֆեկցիոն (կամ ինֆեկցիա-

յի կասկածով) հիվանդներ, հատուկ կամ սանիտարական մշակման ենթակա ռադիոակտիվ կամ թունավոր նյութերով ախտահարվածներ, հոգեշարժիչ գրգռումով տուժածներ:

Այնուհետև ախտահարվածների թռուցիկ զննման միջոցով պետք է բացահայտել առաջնահերթ բժշկական օգնության կարիք ունեցողներին: Ծուապ բժշկական օգնությունը ինչպես ախտահարման օջախներում, այնպես էլ բժշկական էվակուացիայի փուլերում առաջին հերթին ցույց է տրվում երեխաներին և հեջ կանանց: Ընտրովի տեսակավորումն ավարտելուց հետո մնացած հոսքը բաժանում են ըստ քայլողների և պատգարակայինների, որոնց ուղարկում են ընդունող – տեսակավորող բաժանմունքի համապատասխան գետեղարաններ: Այդ գործողությունները նպատակահարմար են և բացառում են աշխատանքի խափանումը զանգվածային հոսքի ժամանակ: Ընտրովի տեսակավորումից հետո տեսակավորող բրիգադն անցնում է ախտահարվածների հաջորդական (կոնվեյրային) զննմանը, ըստ որի բժիշկը զննում է յուրաքանչյուր ընդունվածի (սխեմա 1):

Բոլոր ախտահարվածներին, ելելով նրանց ընդհանուր վիճակի գնահատականից, բաժանում են 4 խմբի: Նման բաժանումը դեռևս առաջարկել էր Ն.Ի. Պիրոգովը:

I. ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԽՈՒՄՔ (ՀՈԳԵՎԱՐՁՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐ)

Ծայրահեղ ծանր, կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներով և թունավորումներով, նաև սահմանային վիճակում (հոգեվարքում) գտնվող ախտահարվածներ:

Ծայրահեղ ծանր աստիճանի ախտահարվածները գործնականապես կենսակյաման շանս չունեն, ենթակա չեն տեղահաննան: Այս խմբին են պատկանում նաև մահացածները: Կախված ախտահարված օջախից՝ տուժածների քանակը կարող է հասնել մինչև 20%-ի: Պիտակման գույնը սև է:

II. ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԽՈՒՄՔ (ՄԱՀՏԱՋԳԵԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ)

Ծանր վնասվածքներով և թունավորումներով, կյանքին վտանգ սպառնացող, օրգանիզմի հիմնական կենսական կարևոր ֆունկցիաների խանգարումներով ախտահարվածներ: Այս խմբի տուժածները ժամանակավորապես անփոխադրելի են և կենսական ցուցումներով աղետի վայրում անհետաձգելի բժշկական օգնություն իրականաց-

Նելու դեպքում կանխատեսումը կարող է լինել բարենպաստ: Էվակու-
ացիան կատարվում է առաջին հերթին, անհրաժեշտ, անհապաղ
բուօգնություն ցուցաբերելուց հետո: Փոխադրամիջոցը՝ բժշկական,
տուժածների քանակը՝ մինչև 20%: Պիտակման գույնը կարմիր է:

III. ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԽՈՒՄԲ (ԾԱՄՈԳՆՈՒԹՅՈՒՆ)


Միջին ծանրության, այսինքն՝ կյանքի համար անմիջական
վտանգ չներկայացնող ախտահարումներով և բունավորումներով
ախտահարվածներ, որոնց մոտ, սակայն, կարող են զարգանալ
կյանքի համար վտանգավոր բարդություններ, օգնություն ցույց է
տրվում երկրորդ հերթին վիճակի կայունացման և հետագա էվակու-
ացիայի նախապատրաստելու համար, կամ օգնությունը կարող է
սահմանափակ ժամկետով հետաձգվել մինչև բժշկական էվակուա-
ցիայի հաջորդ փուլ անցնելը: Էվակուացիան՝ երկրորդ հերթի, փո-
խադրամիջոցը՝ բժշկական: Պիտակման գույնը՝ դեղին է:

IV. ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԽՈՒՄԲ (ՈՉ ԾԱՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ)

Ամբողջատոր բուժման կարիք ունեցող թերև վնասվածքներով
ախտահարվածներ: Կանխատեսումը բարենպաստ է կյանքի և աշ-
խատունակության համար: Տեղահանվում են ինքնուրույն կամ ընդ-
հանուր փոխադրամիջոցներով: Կազմում է բոլոր ախտահարվածնե-
րի մոտ 40%: Պիտակման գույնը կանաչ է:

Այսպիսով՝ ախտորոշման և կանխատեսման վոա հիմնված
բժշկական տեսակավորման ընթացքում լուծվում են տուժածին
տվյալ փուլում օգնություն ցուցաբերելու հարցերը, որոշվում է այդ
օգնության հերթականությունը, սահմանվում են էվակուացիայի ցու-
ցումները և հակացուցումները:

Մեծ քանակի տեսակավորող խմբերի օգտագործումը կարող է
բարձրացնել ախտահարվածների բժշկական օգնություն ցուցաբե-
րելու և նրանց տեղահանման հերթականությունը որոշելու
ճշգրտությունը: Սակայն առայժմ չի մշակված միասնական մեխա-
նիզմ, որի օգնությամբ հնարավոր լինի ախտահարվածներին ան-
սիսալ և ճշգրիտ ձևով բաշխել ըստ խմբերի: Տեսակավորող յուրա-
քանչյուր համակարգ կոնկրետ իրավիճակում կարող է համարվել
այլ համակարգերից վերցրած գործելաձևերով:



Սխեմա 1. Ախտահարվածների բժշկական տեսակավորումը

ՏԵՍԱԿԱՎՈՐԱՆ ԲԱՐՅԵԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բժշկական տեսակավորումից ծագում են մի շարք խնդիրներ, որոնցից մեկը բարոյագիտական է: Զանգվածային ախտահարումների ժամանակ արտակարգ իրավիճակի պայմաններում բժիշկները կարող են ընդունել որոշում, որի համաձայն բժշկական պաշարների սահմանափակության պատճառով օգնություն չի հատկացվի կենսակայնան շանսեր չունեցող ծայրահեղ ժամր վնասվածքներով ախտահարվածներին՝ ի օգուտ նրանց, ովքեր ապրելու ավելի մեծ շանսեր ունեն: Մահվան դատապարտված որոշ ախտահարվածներ ստանում են միայն կիսամիջոցային (պայիտադիմ) օգնություն: Այդպիսի մոտեցումը հակասում է բժշկական օգնության ամենօրյա այն պրակտիկային, ըստ որի երկարատև բուժօգնություն է ցուցաբերվում ծանր, երբեմն էլ անհույս հիվանդներին՝ կիրառելով ժամանակակից բժշկության բոլոր հնարավոր մեթոդները և օգտագործելով բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կյանքը փրկելու համար: Տեսակավորումը դեկավարող բժշկի բարոյական պատասխանատվությունը հսկայական է, այդ պատճառով էլ առաջին տեսակավորող խումբ տեղափոխելու որոշումը պետք է ընդունի միայն առավել փորձառու բժիշկների բրիգադը:

Բժշկական օգնության հատկացման հերթականության անհրաժշտությունը իրավիճակ է, որի ժամանակ կարող են կիրառվել հատուկ սկզբունքներ: Հարյուրամյակներ արած նշակված գինվորական տեսակավորման կանոնները բժիշկներին հանձնարարում են առաջնահերթ օգնություն ցույց տալ նրանց, ովքեր ենթակա են արագ և բարեհաջող ապարհինման՝ կովի դաշտ անհապաղ վերադարձի միտունով, կամ զորավարներին՝ դեկավարությունն ապահովելու նպատակով: Տեսակավորման այդ ծեր խաղաղ պայմանների արտակարգ իրավիճակներում կիրառվում է հրշեցների կամ փրկարարների հանդեպ՝ նրանց իրենց պարտականություններին վերադարձնելու համար: Այդպիսի “օգտապաշտական սկզբունքը”, հավանաբար, բացատրվում է ճգնաժամային իրավիճակներում ընդհանուր հասարակական բարեկեցությունն ապահովելու անհրաժշտությամբ:

ԻՆՖԵԿՑԻՈՆ ԺԿԱՆԴԱՐԻ ԲԺԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Անկախ բնույթից՝ արտակարգ իրավիճակները, որպես կանոն, ուղեկցվում են տարածություններում սանհիտարա-էպիդեմիկ վիճակի վատթարացմամբ:

Սոցիալ-կենցաղային պայմանների վատքարացումը՝ կապված կոմունալ և արդյունաբերական օբյեկտների քայլայման հետ, մարդկային և կենդանական դիակոների առկայությունը, կրծողների զանգվածային աճը, սանհիտարա-էպիդեմիոգիական և բուժպրոֆիլակտիկ կազմակերպությունների ցանցի աշխատանքի խախտումը և այլ գործուններ հանգեցնում են տուժած բնակչության շրջանում ինժեկցիոն հիվանդությունների համաձարակային բռնկումների:

Ինֆեկցիոն հիվանդությունների զանգվածային բռնկումներից անմիջապես հետո բուժվակուացիոն և հակահամաճարակային միջոցառումների իրականացումը անպայմանորեն պետք է համատեղվի բացահայտված ինֆեկցիոն հիվանդների բժշկական տեսակավորման հետ, ինչը հնարավորություն է տալիս ժամանակին բժշկական օգնություն հատկացնել և կանխել ինֆեկցիայի տարածումը:

Հաճախ համաձարակային բռնկումները կամ համաձարակները առաջանում են որևէ մեկ ինֆեկցիայից (մոնոինֆեկցիա), և հիվանդությունների ախտորոշումը դժվարություն չի ներկայացնում պրակտիկ բժիշկների համար, հատկապես համաձարակի թեժ ժամանակաշրջանում, եթե նկատվում է բնորոշ կլինիկական ախտորոշումներով հիվանդների հոսք: Առավել ևս, եթե մեծ մասամբ համաձարակային բնույթ են կրում բժիշկներին լավ հայտնի հիվանդություններ՝ սուր աղիքային ինֆեկցիաներ (շիգեյոզ, որովայնային տիֆ, վիրուսային հեպատիտ, խոլերա և այլն), սուր շնչառական հիվանդություններ (գրիպ, պարագրիպ աղենավիրուսային և այլ ինֆեկցիաներ): Այդպիսի դեպքերում կարևոր է կատարել բժշկական տեսակավորում ըստ վիճակի ծանրության և էվակուացիոն ցուցման: Հիվանդների վիճակի ծանրության աստիճանը որոշվում է հիվանդի մոտ հայտնաբերված կլինիկական-պարողենիկ նշաններով՝ ծայրահեղ ծանր, ծանր, միջին ծանրության և բավարար: Ըստ հիվանդի վիճակի ծանրության աստիճանի պետք է ցույց տրվի բժշկական օգնություն և որոշվի ինֆեկցիոն ստացիոնար էվակուացման հերթականությունը:

Սակայն հաճախ կարող են բռնկվել բժիշկներին քիչ հայտնի հիվանդությունների համաձարակներ, ինչպիսին են՝ խոլերան, կեղծ տուբերկուլոզը, լեպտոսպիրոզ, երիկամային համախտանիշով հեմորագիկ տենդը, տղային էնցեֆալիտը, տղային բորելիոզը, մալարիան, բժավոր տիֆը և այլն:


Բացի այդ, խոշոր քաղաքներում կոյուղիների և ջրատար համակարգերի վթարների դեպքում, տաք կիմայական գոտիներում և զյուլերում բացառված չեն մի քանի ինֆեկցիաներից (պոլիինֆեկցիա) բռնկված համաճարակները, մասնավորապես՝ համակցված աղիքային ինֆեկցիաների, որոնց դեպքում հիվանդության կիխնիկական պատկերը հստակ չէ: Նման պոլիինֆեկցիոն համաճարակների բռնկման դեպքում մինչ հոսպիտալացումը նպատակահարմար է առանձնացնել հիվանդների համասեռ խմբեր՝ ըստ հիվանդության ցայտուն, գլխավոր նշանների:

Ախտանշանային նախնական առանձնացման հիման վրա հնարավոր է ցույց տալ անհետաճգելի օգնություն, իսկ մի շարք դեպքերում նաև անցկացնել ախտածին (պարզգեն) և պատճառաբանական (էթոպարոպ) թերապիա: Դա հաստկապես կարևոր է շտապ օգնություն ցույց տալիս, եթե հիվանդությունը կայծակնային ընթացք ունի (մենինգուլուկային ինֆեկցիա, դիֆթերիա, սալմոնելյոզ, խոլերա, հեմորագիկ, տենդ և այլն): Բացի այդ, գլխավոր ախտանշանի առանձնացնելը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ որոշել լաբորատոր և հատուկ հետազոտությունների ուղղությունը և կիխնիկական ախտորոշման ուղիները: Մինչհոսպիտալայային փուլը ինֆեկցիոն հիվանդների թժշկական տեսակավորումը նախատեսում է առանձնացնել համասեռ հիվանդների խումբ ըստ նախնական ախտորոշման և համաճարակային վտանգի, նաև ըստ էվակուացիոն ցուցման ծանրության աստիճանի (սխեմա 2):

Ինֆեկցիոն հիվանդությունների համաճարակի ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդների բացահայտմանը և ըստ կենսական ցուցումների՝ անհետաճգելի թժշկական օգնության կարիք ունեցող հիվանդներին:

Ըստ մեկուսացման, սանհիտարական կամ հատուկ մշակման կարիքի, շրջապատի համար վտանգ ներկայացնող ինֆեկցիոն հիվանդները բաժանվում են հետևյալ խմբերի.

- Ժամանակավոր մեկուսացման ենթակա,
- հատուկ (սանհիտարային) մշակման կարիք ունեցողներ (մասնակի կամ լիարժեք),
- հատուկ սանհիտարային մշակման կարիք չունեցողներ:



Միենա 2. ՀԱՅԵԿԱԳԻՆ հիվանդների բժշկական տեսակավորումը

Շրջապատի համար վտանգավոր և անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող հիվանդներին հայտնաբերելուց հետո ըստ սկզբնական կիխնիկական նշանների ինֆեկցիոն հիվանդները բաժանվում են 5 հիմնական խմբի:

- Վերին շնչուղիների և բռքերի ախտահարությամբ,
 - Ստամոքս - աղիքային տրակտի ախտահարումներով,
 - Այարդային համակարգի օջախային ախտահարման նշաններով,
 - Մաշկի և լորձաթաղանթների ախտահարումով,
 - Ընդհանուր թունավորմամբ արտահայտված համախտանշաններով՝ առանց լոկալ օրգանների վնասվածքի:
- Ըստ համաձարակային վտանգի աստիճանի առանձնացնում են 2 խումբ.
- Օդա-կաթիլային ինֆեկցիոն հիվանդներ,
 - Մնացած այլ ինֆեկցիոն հիվանդներ:

Ծնչառական օրգանների ախտավորման ախտանշաններով հիվանդները հատկապես վտանգավոր են շրջապատի համար, այդ պատճառով էլ նրանց հետ կապված՝ անհրաժեշտ է անցկացնել հակահամաձարակային խիստ միջոցներ: Համաձարակի տեսակետից ավելի պակաս վտանգ են ներկայացնում մարտողական օրգանների ախտահարումով հիվանդները: Էվակուացիոն նշանը որոշում է էվակուացիայի անհրաժեշտությունը և հերթականությունը, փոխադրամիջոցի ծեզը և ախտահարվածի դիրքը էվակուացիայի պահին: Այդ ցուցումից ելնելով, հիվանդներին բաժանում են հետևյալ խմբերի:

- այլ բուժիմնարկներ տեղափոխելու ենթականեր՝ հաշվի առնելով էվակուացիոն նշանակումը, հերթականությունը, էվակուացիայի ծեզ (պառկած, նստած), փոխադրամիջոցի տեսակը,
- տվյալ բուժիմնարկում մնալու ենթականեր (ըստ վիճակի ծանրության) ժամանակավոր կամ մինչև վերջնաելքը:

Ինֆեկցիոն ստացիոնար առաջին հերթի էվակուացիայի ենթակա են ծանր հիվանդները, բարձր կոնտազիոն ինֆեկցիաներով հիվանդները և շնչառական օրգանների ախտահարման նշաններ ունեցողները: Միջին ծանրության և կոնտազիոն ինֆեկցիաներով մարտողական օրգանների ախտահարման նշաններով հիվանդները էվակուացվում են երկրորդ հերթին:

Առաջին խմբի հիվանդներին ուղարկում են ինֆեկցիոն հիվանդանոցներ, որտեղ ստեղծվում են մեկուսարաններով (բռքսերով)

բաժանմունքներ: Երկրորդ խմբի հիվանդներին ուղղում են հիվանդանոցների հնֆեկցիոն բաժանմունքներ: Պառկելատեղերի պակասի դեպքում նրանց հնարավոր է տեղափորել թերապևտիկ բաժանմունքներում, որոնք կգործեն ինֆեկցիոն բաժանմունքների աշխատանքային ռեժիմի սկզբունքով:

Հիվանդների մի մասը կարող է փոխադրելի չլինել, և նրանց քանակը կարող է աճել էվակուացիայի ուշացման դեպքում: Հարկ է հաշվի առնել, որ ինֆեկցիոն հիվանդների փոխադրելիությունը կը որոշվի ոչ միայն ըստ Վիճակի ծանրության, այլ նաև փոխադրամիջոցային պայմաններից ելնելով (ճանապարհը, տևողությունը, փոխադրամիջոցի ձևը, ճանապարհի բնույթը և այլն):

Ա.Ա. Հարությունյան,
Գ.Ա. Մամյան բժշկ. գիտ. թեկն.

ՍՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիվանդությունը օրգանիզմի կենսունակության խանգարումն է, որն առաջանում է ներքին և արտաքին արտավազր գրգիռների ազդեցության հետևանքով, որպես պատասխան ռեակցիա:

Որպեսզի ճիշտ տարրի բուժումն ու կանխարգելումը պետք է հմանալ հիվանդության պատճառը և առաջացնան պայմանները:

Եթեղուգիան գիտություն է հիվանդության պատճառի և առաջացնան պայմանների մասին: Հիվանդության պատճառ կարող են լինել արտաքին միջավայրի տարրեր ազդակներ՝

1. քիմիական – տարրեր թույներ, թթուներ, հիմքեր,
2. ֆիզիկական – սառեցում, գերտաքացում, էլեկտրատրավմա, ռադիացիա,
3. մեխանիկական – վնասվածքներ, վրարներ, աղետներ,
4. կենսաբանական – վիրուսներ, միկրոօրգանիզմներ (նրանց թույները), որդեր և այլն,
5. պատճառների մեջ մտնում են նաև պրոֆեսիոնալ վնասակար պայմանները՝ փոշի, աղմուկ, ջերմաստիճանի խիստ տատանումները, ինչպես նաև վնասակար սովորույթներ (ծխելը, ակոհոլը և այլն):

Հիվանդությունների առաջացնան համար մեծ դեր ունի սոցիալական գործոնը, աշխատանքի և ապրելակերպի վատ պայմանները, որոնք իշեցնում են օրգանիզմի դիմադրողականությունը:

Օրգանիզմի վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ լսած կամ կարդացած խոսքը:

Հիվանդության առաջացումը կախված է հիմնականում ԿՆՀ-ի վիճակից, օրգանիզմի ռեակտիվությունից՝ այսինքն օրգանիզմի ռեակցիա տալու հատկություններից արտաքին գործոններին:

Արտաքին միջավայրը շատ մեծ ազդեցություն է թողնում օրգա-
նիզմի ռեակտիվության վրա: Օր.՝ Հայրենական մեծ պատերազմի
ժամանակ նկատվեց օրգանիզմի ռեակտիվության զգալի թուլացում,
որի հետևանքով հիվանդություններն ընթացել են ծանր ընթացքով:

Օրգանիզմի ռեակտիվականության վրա ազդում է նաև օրգա-
նիզմի ֆունկցիոնալ վիճակը, օրինակ, օրգանիզմի գերզգայունութ-
յունը օտար նյութերի նկատմամբ (հատկապես սպիտակուցների) -
ալերգիա - այն կարող է լինել նաև միկրոբների, նրանց տոկսինների,
շիճուկների, դեղանյութերի և այլ նյութերի նկատմամբ:

Բացի էթիոլոգիայից պետք է իմանալ հիվանդության զարգա-
ման մեխանիզմների մասին, որը կոչվում է պաթոգենեզ: Վերջինս
հնարավորություն է տալիս նաև կանխորոշելու որոշ հիվանդություն-
ների բարոյությունները: Օրինակ՝ սրտի ծեռքբերովի արատների
զարգացումը ռևմատիզմից հետո:

Հիվանդությունը զարգանում է մի քանի շրջաններով՝

1. Գաղտնի - թաքնված շրջան, երբ չկան հիվանդության
նշանները, թեպետ հիվանդագին ագենտը գտնվում է օր-
գանիզմում: Այդ շրջանը կարող է տևել մի քանի վայրկյա-
նից մինչև մի քամի տարի (այրվածք, բորոտություն, ՁԻԱՀ):
2. Նախանշանային կամ պրոդրոմալ շրջան, երբ ի հայտ են
գալիս առաջին, անորոշ ընդիհանուր նշաններ՝ թուլություն,
զիխացակ, զերմաստիճանի բարձրացում և այլն:
3. Հիվանդության զարգացման շրջան, երբ ի հայտ են գալիս
հիվանդությանը հատուկ ախտանիշներ:
4. Առողջացման - ռեկոնվալեսցենցիայի շրջան, երբ հիվան-
դության երկույթները աստիճանաբար վերանում են:

Հիվանդության ընթացքում կարող է լինել բարդություն, որը
հետևանք է առաջնային հիվանդությանը: Երբեմն կարող է հիվան-
դությունը կրկնվել: Այն կոչվում է ռեցիդիվ:

Ըստ ծանրության տարբերում են հիվանդության թերեւ, ծանր և
ծանրագույն ձևեր:

Ըստ ընթացքի լինում են սուր և քրոնիկական հիվանդություն-
ներ: Սուր հիվանդությունները ունեն սուր սկիզբ և ընթացք, կար-
ձատու են և վերջանում են ապաքինմամբ:

Խրոնիկական հիվանդությունները ցիկլիկ ընթացք ունեն, այ-
սինքն սրացման փուլ, բուժվելուց հետո ռեմիսիայի - այս փուլում հի-
վանդի վիճակը լինում է բավարար: Խսկ եթե ընկնում են անբարեն-
պատ պայմանների մեջ՝ սառեցում, սննդի ռեժիմի խախտում, հի-
վանդությունը կրկին սրանում է: Խրոնիկական հիվանդությունը եր-
կարատու է:

ԳՐԿԱՆԴԻ ՀՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Ավստրոհաման և բուժման միջոցների նշանակման համար անհրաժեշտ է հիվանդի հետազոտում, որը կատարվում է երեք եղանակով՝ հարցում, օբյեկտիվ քննություն և հատուկ մեթոդներով հետազոտություն:

Հիվանդի հարցումը իր մեջ ընդգրկում է՝

ա) Ընդհանուր տեղեկություններ հիվանդի մասին (տարիքը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հաշմանդամության մասին և այլն):

բ) Սուրբեկտիվ քննություն. գանգատների գրանցումը, երբաւնից է հիվանդ և այլն:

գ) Հշշողություն հիվանդության մասին. անամնեզ՝ ե՞րբ է սկսվել, ենթադրյալ պատճառը, սկիզբը, զարգացումը, ընթացքը, ի՞նչ բուժում է ստացել և ինչպես է այն ազդել հիվանդության ընթացքի վրա:

դ) Կյանքի անամնեզ. ժառանգական ի՞նչ հիվանդություններ են հանդիպում հարազատների մոտ: Մինչ այս հիվանդությունը ի՞նչ հիվանդություններով է հիվանդացել, ընտանեկան դրությունը, վնասակար սովորությունները, կենցաղի և աշխատանքի պայմանները:

ՕԲՅԵԿՏԻՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Այն կազմված է՝

ա) արտաքին զննումից,

բ) շոշափումից – պալպացիա,

գ) բախումից – պերկուսիա,

դ) ականջալսումից - առևսկոլիտացիա:

Արտաքին զննումը կատարում են բնական լուսի տակ: Ուշադրություն անուր է դարձնել հիվանդի դիրքի վրա, որը կարող է լինել՝

- ակտիվ, երբ հիվանդը անձանք կարողանում է նստել, շոջվել, պառկել,
- հարկադիր՝ երբ հիվանդը ընդունում է այնպիսի դիրք, որը թերևացնում է իր վիճակը՝ նստած, կիսանստած,
- պասիվ՝ երբ հիվանդը անշարժ պառկած է և ի վիճակի չէ հնքնություն դիրքը փոխել,
- մաշկը - զննելիս անուր է ուշադրություն դարձնել նրա գույնին, խոնավությանը, լարվածությանը, այտուցներին, ցանին, վերցերին, սպիներին,

- մաշկի գունատությունը հաճախ լինում է սակավարյունության դեպքում, չարորակ ուռուցքների և քրոնիկական թունավորումների ժամանակ,
- մաշկի կարմրություն, երբ նորմայից շատ է հեմոգլոբինը, տեսնի ժամանակ, պալարախտի ժամանակ (դեմքը),
- մաշկի կապտություն – ցիանոզ լինում է թոքերի հիվանդությունների դեպքում, երբ արյունը թոքերում լրիվ չի հագենում թթվածնով, սրտի արատների դեպքում,
- մաշկի դեղնություն լինում է լեղապիզմենտների կուտակման շնորհիվ, որը բնորոշ է դեղնախտին, լեղածորանների փակվելուն (քարից, ուռուցքից),
- մաշկի վրա ցանը լինում է մի շարք ինֆեկցիաների դեպքում, ալերգիկ ռեակցիաների ժամանակ,
- սպիների առկայությունը վկայում է կատարված վիրահատությունների, տրավմաների, այրվածքների մասին: Եթե կանաց մոտ մազակայունը շատ է դեմքի և մարմնի այլ մասերում, ապա դա վկայում է ծվարանի թեր ֆունկցիայի մասին:

Ղենքը զննելիս այն կարող է ունենալ տանջալից արտահայտություն, որը վկայում է հիվանդության ծանր ընթացքի մասին, հատկապես հոգեվարօքային շրջանում:

«Սուր որովայնի» դեպքում (աղիների անանցանելիություն, սուր պերիտոնիտ) վկայում են Հիպոկրատի դեմքի մասին. դեմքը գունատ է, կապտագույն երանգով, աչքերը փոս ընկած, խամրած, քիթը սրված, մաշկը պատված սառը քրտինքով:

Ծայրանդամների զնումը հնարավորություն է տալիս հայտնաբերել կաթվածներ, մկանային ատրոֆիա, ծայրանդամների դող և այլն:

Թմբկափայտի տեսքի մատները լինում են թոքերի թարախային հիվանդությունների ժամանակ, երբ լինում է ծեռքերի և ոտքերի ծայրային ֆալանգների հաստացում, եղունգները տափակում են:

Զննելիս ուշադրություն են դարձնում հոդերի վրա, նրա այտուցներին, դժբորմացիային:

Ծոշափում. սրա դեպքում որոշում են տվյալ մարմնամասի քերմաստիճանը, խոնավությունը, ցավոտությունը, էլաստիկությունը, այտուցվածությունը, լարվածությունը, շարժունությունը, համապատասխան օրգանի մեծությունը և այլն:

Ծոշափում են անոթազարկը, տարբեր մարմնամասերը, ներքին օրգանները:

- Բախում – պերկուսիա, այն կատարվում է մարմնի մակերևույթին ծախ ծեռքի վրա բախելով աջ ծեռքի երրորդ մատով: Օդակիր օրգանների բախումը տալիս է հնչեղ ձայն, իսկ ոչ օդակիրներինը՝ բութ ձայն:

- Ականջել - առևսկուլտացիա, սա կարող է լինել անմիջական կամ միջնորդավորված՝ հատուկ գործիքների օգնությամբ՝ ստետասկոպով կամ ֆոնենդասկոպով։ Ականջում են պտղի սիրտը, մարդկանց սրտի տոները, թոքերի աշխատանքը և այլն։

**Հ.Վ. Հարությունյան,
Կ.Ռ. Նիկոյան
Ա.Ս. Շահինյան**

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈԴՆԵՐ

Լաբորատոր հետազոտությունների մեջ մտնում են արյան, մեզի, կղանքի, փսխման զանգվածի, տարբեր քսուքների և այլնի հետազոտությունները։

Կատարում են նաև բիոքիմիական և բակտերիոլոգիական տարբեր հետազոտություններ։

Ունտղեն հետազոտությունը կատարվում է ռենտգենոգրաֆիայի, ռենտգենոսկոպիայի և ֆյուրոգրաֆիայի (շերտագրության) միջոցով։

Կատարում են նաև տարբեր օրգանների հատուկ ֆունկցիոնալ քննություններ. սրտի համար՝ էլեկտրասրտագիր, երիկամների համար՝ ուրոգրաֆիա և այլն։

Վերջին ժամանակներում խստ տարածում է ստացել տարբեր օրգանների խոռոչային քննություններ (էնդոսկոպիա)։

ԶԵՐՄԱԿԱՓՈՒՄ

ԶԵՐՄԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՄԱՐՍԽԻ ԶԵՐՄԱՍՏԻճԱՆԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ

Մարդու մարմնի զերմությունը հաստատում է և կախված չէ արտաքին միջավայրի զերմաստիճանից։ Դրա պատճառը օրգանիզմում մշտապես կատարվող զերմակարգավորման պրոցեսն է։ Զերմակարգավորումը զերմագոյացման և զերմատվության միջև որոշակի հավասարակշռության պահպանումն է։ Այն բարդ ֆիզիոլոգիական արոցես է, որը դեկավարվում է կենտրոնական նյարդային համակարգի և գեղձերի կողմից։ Զերմագոյացումը քիմիական պրոցես է։ Հյուսվածքներում մշտապես գոյություն ունեցող օքսիդացման-վերա-

կանգնման և այլ կենսաբանական պրոցեսների հետևանքով առաջանում է մեծ քանակով ջերմություն, որը մասսամբ ծախսվում է օրգանիզմում զանազան կենսաբանական պրոցեսների ժամանակ, մասսամբ էլ տրվում է օրգանիզմից շրջապատին տարրեր ծներով: Ջերմատվությունը ֆիզիկական պրոցես է: Այն կատարվում է ճառագայթման (80%), գոլորշիացման (18%) միջոցով: Ջերմության չնչին մասը՝ 1.5% օրգանիզմից դուրս է զալիս մեզի, կունքի, արտաշնչման միջոցով: Ճառագայթմանը ջերմատվությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ շրջապատի ջերմությունը ցածր է մարմնի ջերմաստիճանից: Իսկ երբ շրջապատի ջերմությունը բարձր է մարմնի ջերմությունից, ապա ջերմատվությունը տեղի է ունենում հիմնականում ի հաշիվ գոլորշիացման՝ քրտնարուադրության: Ջերմագոյացման ուժեղացումը ուղեկցվում է ջերմատվության ուժեղացմանք և հակառակը:

Կա ուղիղ կապ ջերմագոյացման և նյութափոխանակության պրոցեսների միջև: Նյութափոխանակության պրոցեսի արագացումը ուղեկցվում է ջերմագոյացման ուժեղացմանք:

Մարդու մարմնի ջերմաստիճանը ֆիզիոլոգիական պայմաններում կարող է տալ 1°C -ից ոչ ավելի տատանումներ: Երեխաների նորմալ ջերմաստիճանը որոշ չափով բարձր է տարեցների ջերմաստիճանից, իսկ ծերունիներինը՝ ցածր: Կանանց մոտ դաշտանի շրջանում ջերմաստիճանը մի քանի տասներորդական աստիճանով բարձրանում է: Առողջ մարդու ջերմաստիճանը առավոտյան ժամերին ավելի ցածր է, քան երեկոյան, ֆիզիկական աշխատանքից հետո ավելի բարձր է, քան հանգիստ ժամանակ:

ԶԵՐՄԱՉՍՓԻ ԿԱՊՈՒՑՎԱԾՔԸ, ՊԱՐՊԱՆՈՒՅԾ: ԶԵՐՄԱՉՍՓՄԱՆ ՏԾԽՆԻԿԱԿԱՆ

Մարդու մարմնի ջերմությունը չափում են բժշկական մաքսիմալ ջերմաչափով: Այն բաղկացած է ապակյա պատյանից, որի ծայրին գտնվում է ապակե սնդիկամանը: Կերցինս զոդված է շատ նեղ, մազաթելային խողովակ (կապիյար), որն ամրացած է մետաղե թիթելին՝ սանդղակին: Սանդղակն աստիճանավորված է ըստ Ցելիուսի 34-42 $^{\circ}$:

Ջերմությունը չափում են անութում, հազվադեպ՝ աճուկի ծալքում: Հյուծված հիվանդների և կրծքի երեխաների ջերմությունը կարելի է չափել ուղիղ աղիքում կամ բերանի խոռոչում: Ջերմաչափի տվյալները կարող են սխալ լինել, եթե ջերմաչափան տեղում կան բորբոքային օջախներ, մաշկը մազոտ է կամ քրտնած:

Ախտահանված չոր ջերմաչափը թափ են տալիս, որ սնդիկի պունքն իջնի սանդղակից ցածր և ստորին ծայրով դնում են անութում

այնպես, որ սնդիկամանը ամեն կողմից շփվի մաշկին: Հիվանդը ջերմաչափը սեղմում է՝ թաք մոտեցնելով կրծքին:

Ուղիղ աղիքում ջերմությունը չափելիս երեխային պառկեցնում են կողքի, ջերմաչափը խնամքով լվանում են և ախտահանում:

Բերանի խոռոչում ջերմությունը չափելու համար ջերմաչափի սնդիկամանը տեղափորում են լեզվի ներքին մակերեսի և բերանի խոռոչի հատակի միջև՝ բերանը փակելով շորտերով:

Ջերմաչափումը տևում է 10 րոպե, իսկ խոռոչներում՝ 5 րոպե:

Տենդը օրգանիզմի պաշտպանողական ռեակցիան է, որն առաջանում է ի պատասխան օրգանիզմի վրա ազդող ուժեղագույն գրգռիչների: Ըստ պատճառների տենդերը լինում են ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն:

Տենդերը տարբերվում են ջերմաստիճանի տատանման բարձրությամբ և բնույթով, տևողությամբ: Ըստ բարձրության ջերմությունը լինում է ենթանորմալ՝ 35° - 36° , նորմալ՝ 36° - 37° , ենթատենդային՝ 37 - 38° ; 38° -ից բարձր ջերմությունը համարվում է տենդ, 39° - 42° բարձր տենդ, 42° -ից բարձր՝ գերտենդ:

Ըստ տևողության տենդերը լինում են թուցիկ՝ մի քանի ժամից մինչև 1-2 օր, սուր՝ մինչև 45 օր, ենթասուր՝ մինչև 15 օր, քրոնիկական՝ 45 օրից ավելի:

ՏԵՆԴՈՎ ՏՈՒԺԱԾԻ ԽՆԱՄՔԸ

Տենդի ընթացքը բաժանվում է երեք շրջանի՝ ջերմության աճի շրջան, նրա բարձրակետային շրջան, ջերմության նվազման շրջան: Այդ շրջաններից յուրաքանչյուրն ունի իր կիրանիկական պատկերը, ուստի պահանջվում է առանձնահատուկ խնամք:

Ջերմության աճի շրջանում ջերմարտադրությունը գերիշխում է ջերմատվության նկատմամբ: Այս շրջանը կարող է տևել մի քանի օր: Հիվանդը գգում է դող, սարսուռ, մկանային ցավեր: Հիվանդին պետք է տաքացնել՝ ծածկել վերմակով, դնել ջեռակ, ազնվամորու մուրայով թեյ տալ:

Ջերմության առավելագույն բարձրացման շրջանում ջերմատվությունն ու ջերմարտադրությունը հավասարակշռված վիճակում չեն: Այս շրջանը տևում է մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ: Խախտվում են ջերմակարգավորման պրոցեսը և բոլոր օրգան-համակարգերի գործունեությունը, նյութափոխանակությունը: Մի կողմից ուժեղանում է այրումը, նյուտ կողմից՝ մարտողական և ներծծնան ֆունկցիաների նվազման ախտոժակի անկան հետևանքով նվազում է սննդամթերքի մուտքը օրգանիզմ, որի հետևանքով այրվում

Են օրգանիզմի ածխաջրատները, ճարպերը, սպիտակուցները: Հիվանդը հյուծվում է: Այս շրջանում հիվանդին պետք է տալ ջրալի, լիարժեք սնունդ՝ օրը 6-7 անգամ: Կիսայրված նյութերի և ախտածին մանրների արգասիքների արտաքսումը օրգանիզմից արագացնելու համար անհրաժեշտ է տալ շատ հեղուկ՝ 20-30 րոպեն մեկ, քիչ-քիչ: Այս դեպքում վնասակար նյութերը դուրս են օպակու ոչ միայն երիկամներից, որոնց ֆունկցիան նույնատես ընկած է, այլև մաշկից ու լորձաբանթից: Տեսի ժամանակ օրգանիզմում ավելանում է A և C վիտամինների պահանջը, ուստի պետք է տալ բանջարեղեն, միզր, պտուղներ, հանքային ջրեր: Անհրաժեշտ է սահմանափակել աղը:

ԱՆՈՐԱԳԱՐԿԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ, ՌԻԹՄԻ, ԼԵՑՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Անորագարկը արյունատար անորների պատերի ռիթմիկ տատանումն է, որն առաջ է բերում ծախս փորոքի սիստոլայի ժամանակ առաջացած արյան հոսքը: Տարբերում ենք զարկերակային և երակային անորագարկը: Գործնական նշանակություն ունի զարկերակային անորագարկը: Այն որոշվում է այստեղ, որտեղ զարկերակներն ունեն նակերեսային դասավորություն և ոսկրային հենք: Սովորաբար այն որոշում են ճաճանչային զարկերակի վրա, բութ նատի հիմքի մոտ: Անորագարկը կարելի է որոշել նաև քունքային, քնային, ազդրային, արմնկային և այլ զարկերակների վրա:

Ճաճանչային զարկերակի վրա անորագարկը որոշելիս մատները պետք է նետի այնպես, որ հետազոտվողի մեջ մատի հիմքի վրա գտնվի հետազոտողի երկրորդ մատը (անորագարկը որոշում են եռեք մատներով՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ): Զարկերակը թույլ սեղմում են ճաճանչուսկոյի արտաքին մակերեսին: Հետազոտվողը ծեռքը պետք է գտնվի հարմար, կիսածայված վիճակում, որպեսզի մկանները չլարվեն: Քնային զարկերակի վրա անորագարկը շոշափվում է պարանոցի կրծուսկ-անորակ-պտկածն մկանի առաջնայի եզրին, մկանի միջին մասում: Ազդրային զարկերակի վրա անորագարկը շոշափվում է աճուկային ծալքից փոքր-ինչ ներքև, մոտավորապես նրա միջին մասում:

Քունքային զարկերակի վրա անորագարկը շոշափվում է հոնքերի ուղղությամբ ակնակապիծից դեպի ականջի խեցի:

Անորագարկը հաշվում են մեկ րոպեի ընթացքում: Կարելի է հաշվել 30 վայրկյանում և արդյունքը բազմապատկել 2-ով: Անորագարկը հետազոտելիս պետք է որոշել նրա հաճախականությունը, ռիթմը, լարվածությունը, լեցունությունը: Անորագարկի հաճախականությունը մեկ րոպեում եղած անորագարկային ալիքների թիվն է:

Մեծահասակ, առողջ մարդու անոթազարկը 60-80 գարկ է մեկ րոպեում: Կանանց մոտ այն փոքր-ինչ հաճախ է, իսկ երեխաների մոտ՝ ավելի հաճախ (մինչև 3 տարեկան հասակը այն սովորաբար 100-ից բարձր է): Անոթազարկի հաճախականությունը կախված է նաև ֆիզիոգիական պայմաններից: Այն հաճախանում է ֆիզիկական, հոգեկան լարումների ժամանակ, ծխելիս, մուգ թեյ, սուրճ խմելուց հետո, տաք լոգանք ընդունելիս:

Կանգնած դիրքում այն ավելի հաճախ է, քան պառկած դիրքում, արթուն վիճակում ավելի հաճախ է, քան քնած վիճակում: Մարզիկների մոտ անոթազարկն ավելի հազվական է (մեկ րոպեում 60 գարկից պակաս): Սա կոչվում է սակավազարկություն (բրախկարդիա), իսկ 90-ից բարձր՝ հաճախազարկություն (տախիկարդիա): Անոթազարկի հաճախականությունը փոխվում է հիվանդագին վիճակներում: Օրգանիզմի ջերմության բարձրացումը, որպես կանոն, ուղեկցվում է անոթազարկի հաճախականությամբ: Այն ընթանում է որոշակի օրինաչափությամբ՝ մեկ աստիճանով ջերմության բարձրացման դեպքում՝ անոթազարկի թիվը 8-10 գարկով ավելանում է: Բացառություն են կազմում որոշ ինֆեկցիոն հիվանդություններ, որոնց ժամանակ նույնիսկ կարող է առաջանալ սակավազարկություն՝ բարձր ջերմության առկայության դեպքում (որովայնային տիֆ, գրիպ, ուղեղի թաղանթների բորբոքում): Հաճախազարկությունն առաջանում է սրտային և անոթային անբավարարությունների, վահանածն գեղձի գերֆունկցիայի ժամանակ: Անոթազարկի մյուս կարևոր հատկանիշը ութմն է: Անոթազարկը համարվում է ծիշտ, ութմիկ, երբ անոթազարկային ալիքներն ունեն միանման մեծություն և զարկերի պարբերությունները հավասար են: Հակառակ դեպքում անոթազարկը համարվում է առիթմիկ:

Անոթազարկի լարվածությունը կախված է զարկերակային ճնշման մակարդակից: Արյան բարձր ճնշման դեպքում անոթազարկը լարված է, իսկ ցածր ճնշման դեպքում՝ ունի թույլ լարվածություն:

Լարված և լեցուն անոթազարկը կոչվում է մեծ անոթազարկ, իսկ թույլ լարվածության և լեցունության անոթազարկը՝ թելանման անոթազարկ:

Երակային անոթազարկը նորմալ պայմաններում չի շոշափվում: Սրտի որոշ հիվանդությունների ժամանակ, երբ աջ փորոքը անբավարար է աշխատում, պարանոցային երակներն ավելի լեցուն են լինում, որի հետևանքով դառնում են տեսանելի և շոշափելիս որոշվում է նրանց պատերի տատանումները (անոթազարկը):

ԶԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՃՆՇՈՒՄՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Զարկերակային արյան ճնշումը որոշվում է այն ուժով, որով արյունն ազդում է արյունատար զարկերակների վրա: Այն կախված է սրտի կծկումների ուժից և անոթների տոնուսից:

Արյան ճնշումը կարգավորվում է նյարդային և հումորալ գործններով: Տարբերում են սիստոլիկ կամ առավելագույն և դիաստոլիկ կամ նվազագույն արյան ճնշումներ: Սիստոլիկ արյան ճնշումը սրտի սիստոլայի ժամանակ զարկերակներում առաջացող ամենաբարձր ճնշումն է, իսկ դիաստոլիկը ամենացածր ճնշումն է, որն առաջանում է սրտի դիաստոլայի ժամանակ: Առավելագույն և նվազագույն ճնշումների միջև եղած տարբերությունը կոչվում է անոթազարկային ճնշում:

Զարկերակային արյան ճնշումը չափում են բազկային զարկերակի վրա Ոիվա-Ռոշի տոնոմետրով, Կորուսկովի ծայնային մեթոդով:

Տոնոմետրը բաղկացած է հետևյալ մասերից:

1. 12-14 մմ լայնության ռետինե սնամեջ բազկակապից, որը տեղադրված է գործվածք պաստառի մեջ,
2. մինչև 300 մմ սանդղակ ունեցող ապակե խողովակից, որի ստորին մասում գտնվում է սնդիկամանը,
3. օդամուղ ռետինե բալոնից, որի վրա կա օդաթող ծորան,
4. ռետինե խողովակներից, որոնք իրար են միացնում բալոնը, բազկակապը և սնդիկի խողովակը:

Զարկերակային ճնշումը կարելի է չափել իիվանդի նստած կամ պառկած դիրքերում:

Հիվանդի ծեռքը պետք է դնել սեղանի կամ մահճակալի եզրին, բացված վիճակում, ափով դեպի վեր: Ապարատը պետք է տեղավորել ծեռքի մակարդակի վրա: Բազկակապը ոչ այնքան ծիգ փաթաթում են մերկ բազկին այնպես, որ նրա ստորին եզրը արմնկային փոսից 1-2 մմ բարձր լինի, նրա տակ մտնի մեկ մատ, խողովակները լինեն կողքից: Արմնկային փոտում շշափում են զարկերակը և լսափողը դնում վրան, ողք բալոնով աստիճանաբար մղում են բազկակապի մեջ և ունկափողով լսում մինչև տոներն անհետանան և ապա շարունակում են բարձրացնել սնդիկի սյունը ևս 30-40 մմով: Այդ ժամանակ զարկերակը լրիվ սեղմվում է: Ուստինք բալոնի պտուտակը թթեևակի բացում են և աստիճանաբար ողք դուրս է գալիս, որի հետևանքով սնդիկի մակարդակն իջնում է, բազկակապի ճնշումը՝ նույնպես: Եղբ բազկակապում ճնշումը դառնում է ավելի փոքր, քան ներգարկերակային ճնշումն է, զարկերակի լուսանցքը բացվում է, արյունը հոսում է նրա միջով, և լսվում են առաջին տոները:

Սանդղակի այն մակարդակը, որի վրա լսվում են առաջին տոները, նշվում է իբրև սիստոլիկ ճնշում: Շարունակում են բաց թողնել օդը: Երբ օդի ճնշումը բազկակապում այնքան է իջնում, որ վերջինս այլևս չի սեղմում զարկերակը, տոներն անհետանում են: Սանդղակի այն մակարդակը, որի վրա տոները անհետանում են, նշվում է իբրև դիաստոլիկ ճնշում:

Չափումը պետք է կրկնել ևս երկու անգամ, 2-3 րոպե ընդմիջումներով և վերցնել 3 չափումներից ամենացածր նիշերը:

Չափումների միջև ընկած ընդմիջումների ժամանակ բազկակապը չեն հանում, բայց նրա մեջի օդը լրիվ բաց են թողնում:

Զարկերակային ճնշումը գրանցում են կոտորակի տեսքով, համարիչում՝ սիստոլիկ, հայտարարում՝ դիաստոլիկ ճնշումները, արտահայտելով սնդիկի այունի մմով:

Զարկերակային ճնշումը չափելիս առաջացած սիսալները կարող են պայմանավորված լինել ապարատի անսարքությամբ և չափատեխնիկայի սխալներով: Ըստ նորմերի սիստոլիկ զարկերակային ճնշումը միջին տարիքի մարդկանց մոտ 100-130 մմ սնդիկի սյուն է, իսկ դիաստոլիկը՝ 60-80 մմ սնդ.սյուն: Զարկերակային ճնշման բարձրացումը կոչվում է հիպերտոնիա, իջեցումը՝ հիպոտոնիա:

Հիպերտոնիան դիտվում է հիպերտոնիկ հիվանդության, նեֆրիտի, ներզատիչ գեղձերի որոշ հիվանդությունների ժամանակ: Այդ դեպքերում սիստոլիկ ճնշումը կարող է բարձրանալ մինչև 200-300 մմ սնդ.սյան, իսկ դիաստոլիկը՝ 120-160 մմ սնդիկայան: Արտայի կափույրների անբավարարության դեպքում դիաստոլիկ ճնշումը կարող է հավասարվել 0-ի: Հիպոտոնիան դիտվում է շոկի, կոլլապսի, սուր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում:

**ՀՀ. Մանուշան,
ՀԿ. Հարությունյան**

ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՊՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՍԱՎԱ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՑՈՒՄՆԵՐՆ

Մաշկը, շնորհիվ հարուստ արյունատար և ավշատար անոթների, նյարդային վերջույթների (ռեցեպտորների), սերտորեն կապված է ինչպես ներքին օրգանների, այնպես էլ կենտրոնական և վեգետատիվ նյարդային համակարգերի հետ: Այդ իսկ պատճառով, ազդելով մաշկի վրա, մենք կարող ենք ազդել խորանիստ ներքին օրգանների վրա՝ արագացնելով կամ դանդաղեցնելով նրանց արյան շրջանա-

ռությունը: Մաշկի ռեցեպտորների գրգռումը ռեֆլեկտոր կերպով լայ-նացնում կամ նեղացնում է արյունատար անորները:

Տաք պրոցեդուրաների (բանկաներ, մանանեխի ծեփուկներ, տաք և տաքացնող կոմպրեսներ, ջեռակներ, տեղային և ընդհանուր տաք լոգանքներ) ազդեցության տակ լայնանում են արյան անորները, վերանում է նրանց սպազմը (հակասապազմատիկ ազդեցություն), արագանում է արյան շրջանառությունը այդ անորներում, արագանում է բորբոքային հեղուկի ներծծումը (հակաբռնքօքային ազդեցություն), պակասում է այտուցային հեղուկի մեխանիկական ճնշումը ռեցեպտորների վրա, մեղմանում կամ լրիվ վերանում է ցավը (ցավանքի ազդեցություն): Ուստի տաք պրոցեդուրաները կիրառվում են մի շարք օրգանների, մկանների, նյարդերի բորբոքումների, հիպերտոնիկ հիվանդության, կանգային երևույթների և այլ դեպքերում:

Սառը պրոցեդուրաները (սառցեպարկեր, թթոցներ, սառը տեղային լոգանքներ) առաջ են բերում արյունատար անորների սեղնում, նրանց լուսանցքի նեղացում, նրանցում արյան շրջանառության դամդաղում, բորբոքային պրոցեսի սահմանափակում, արյունահոսության դադարում: Սառը պրոցեդուրաները կիրառվում են արյունահոսությունների, սուր բորբոքային պրոցեսների ժամանակ, վնասվածքներից անմիջապես հետո:

ՄԱՐԱՍԻՆԻ ԾԵՓՈՒԿՆԵՐ (ՄՊԾՂԱՌԻՆԵՐ)

Ծեփուկները հաճախ են օգտագործվում հիպերտոնիկ հիվանդության ժամանակ (փակցնում են ծոծրակի և օձիքի շրջանում), սրտի ցավերի ժամանակ (սրտի շրջանում), վերին շնչառական ուղիների բորբոքումների, բրոնխիտների, թքաբորբերի ժամանակ (կրծքավանդակի համապատասխան մասերում):

Պատրաստի մանանեխի ծեփուկը վաճառվում է դեղատներում: Այն 12x8մ չափերով ուղանկյուն հաստ ստվարաթուղթ է, որի մի եռեսը ծածկված է մանանեխի չոր շերտով: Գործածելուց առաջ անհրաժեշտ է ստուգել սպեղանու պիտանելիությունը: Պիտանի սպեղանու վրայից մանանեխի չոր փոշին չի թափվում, թթված կամ նեխած հոտ չի գալիս, թթուելուց հետո անմիջապես զգացվում է մանանեխի յուղի սուր հոտը:

Մանանեխի ծեփուկների վրա նշված է պիտանելիության ժամկետը: Ծեփուկները պետք է պահել չոր տեղում, խոնավությունից և երկար պահելուց այն կորցնում է իր բուժիչ հատկությունը: Օգտագործելուց առաջ պատրաստի ծեփուկը թթում են գոլ ջրով (եռման կամ տաք ջրով չի կարելի թրցել, քանի որ դրանից քայլայվում է մա-

նանեխի ֆերմենտը և խանգարվում ազդող միջոցը՝ եթերայուղի անցատումը) և մանանեխով ծածկված երեսով կիա դնում մարմնի համապատասխան մասին:

Մանանեխի ծեփուկներ կարելի է պատրաստել նաև տնային պայմաններում: Դրա համար չոր մանանեխի փոշին բացում են տաք ջրով մինչև շիլայի խտության և բարակ շերտով քսում են բամբակյա գործվածքի մի կետին, իսկ մյուս կետով ծածկում այդ շերտը: Այդ ծեփուկը կարելի է դնել մարմնին ցանկացած երեսով:

Երեխաների համար ծեփուկ պատրաստելիս մանանեխի փոշուն հավասար չափով խառնում են ցորենի կամ կարտոֆիլի այուր:

Մանանեխի ծեփուկը կարելի է պահել մաշկին 10-12 րոպե (երեխաների մոտ՝ 2-10 րոպե): Ավելի երկար պահելու դեպքում կարող է առաջանալ մաշկի այրվածք:

Մանանեխի ծեփուկները հանելուց հետո մաշկը մաքրում են բամբակի խոնավ խծունքով:

Եթե մաշկը շատ նուրբ է (հատկապես երեխաների մոտ), ապա մանանեխի ծեփուկի և մաշկի միջև դնում են շատ բարակ թուղթ (ժխախտուի):

Ծեփուկները փակցնելուց մի քանի րոպե հետո հիվանդը զգում է դուրեկան ցերմություն և ծակծկոց: Ծեփուկի տակ մաշկը կարմրում է: Ծակծկոցի ուժեղացման կամ ցավի առաջացման դեպքում ծեփուկը պետք է հանել ժամանակից շուտ:

Մանանեխի ծեփուկները պետք է պահել չոր տեղում: Երկար պահելու դեպքում ան կորցնում է իր բուժիչ հատկությունը:

Բացի ծեփուկներից, մանանեխն օգտագործվում է նաև չոր փոշու, փաթաթումների, լոգանքների ձևով:

Հարբույի դեպքում մանանեխի փոշին լցնում են գոլպաների մեջ և հազցնում հիվանդին:

Ընդհանուր մանանեխային լոգանքը ցուցված է վերին շնչառական ուղիների կատարի, բրոնխիտների, թոքաբորբերի, երիկամի ավազանի բորբոքման և այլ հիվանդությունների դեպքում: Այն հիմնականում կիրառվում է մանկաբուժության պրատիկայում:

Ընդհանուր մանանեխային լոգանքը պատրաստում են հետևյալ կերպ.

50 գրամ չոր մանանեխը նախապես լուծում են 1 դույլ ջրում և թանգիֆով քամում, հետո լցնում ջրով լցված լոգանքի մեջ:

Լոգարանի ջրի ցերմաստիճանը 37°C է, պրոցեդուրայի տևողությունը՝ 5-8 րոպե:

Լոգանքից հետո հիվանդին պետք է լողացնել մաքուր ջրով, հազցնել սպիտակեղեն և պառկեցնել անկողնում:

Տեղային մանանեխային լոգանքները օգտագործվում են հիմնականում մեծահասակների համար: Զրի ջերմաստիճանը $40\text{-}45^{\circ}\text{C}$ է, տևողությունը՝ 20-30 րոպե, խտությունը՝ 1 դովլ ջրին – 100 գրամ մանանեխի փոշի:

Մանանեխային փաթաթումների ցուցումները նույնն են, ինչ մանանեխային լոգանքներինը:

Փաթաթումները կատարում են այսպես. պատրաստում են մանանեխի տաք լուծույթ (երեխաների համար 30 գրամ, մեծահասակների համար 100 գրամ մանանեխի փոշի 1լ ջրում), սրբիչը թրջում են այդ լուծույթով, քամում և փաթաթում մարմնի համապատասխան մասին և ծածկում սավանով ու վերմակով: 5-15 րոպե հետո փաթաթածը հանում են և մաշկը լվանում գոլ ջրով ու չորացնում սրբիչով:

Մանանեխի ազդեցության մեխանիզմը հետևյալն է. մանանեխի փոշին տաք ջրում ($40\text{-}50^{\circ}\text{C}$) առաջանում է ռեսակցիա, որի հետևանքով անջատվում է սուր հոտով մանանեխի եթերայուղ: Կերպինս մաշկի վրա թողնում է գրգիչ ազդեցություն: Այդ գրգիռը ռեժիսուրով կերպով լայնացնում է ներքին օրգանների անորոշությունը, որի հետևանքով արագանում է դրանց արյան շրջանառությունը, բորբքային հեղուկի ներծծումը, մեղմանում է ցավը:

ՄԱՍԱՍԵԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱԿԱՑՈՒՑՎԱԾ Է ՄԱՇԿԱՅԻՆ ԶԱՍՍՁԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ԹՐՁՈՑ ՂՆԵԼՈՒ ՏԾԽՆԻԿԱՆ

Տեղային կոմպրեները լինում են տաքացնող, տաք և սարք: Տաքացնող կոմպրեսը կիրառվում է իբրև ներծծող, ցավամոքիչ, շեղող միջոց: Կոմպրեսը բաղկացած է 3 շերտից: Առաջին շերտը մի քանի տակ ծալված թանգիֆ է կամ կտոր, որը թրջում են սենյակի ջերմաստիճանի ջրով, թույլ ցամում և դնում մաշկին: Երկրորդ շերտը մոլորա է կամ կոմպրեսի թուղթ, որի եզրերը 2-3 սմ-ով մեծ են նախորդ շերտի եզրերից (հերմետիկությունն ապահովելու համար): Երրորդ շերտը 2-3 սմ հաստությամբ բամբակ է (կարելի է օգտագործել բրոյա գործվածք): Այս բրոյորն ամրացնում են բինտով ոչ շատ ամուր, այնպես, որ կոմպրեսը չընկնի, իսկ անորոշերն էլ չսեղմվեն: Տաքացնող կոմպրեսի տևողությունը մինչև 12 ժամ է: Այն կարելի է կատարել օրը 2 անգամ: Պրոցեդուրան կարելի է կրկնել 2 ժամ ընդմիջումից հետո:

Կոմպրեսի դրման ճշտությունը ստուգելու համար 1-2 ժամ հետո մատը մտցնում են վիրակապի տակ, եթե առաջին շերտը խոնավ է, կոմպրեսը ճիշտ է դրված:

Տաքացնող կոմպրեսի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պետք է առաջին շերտը թրջել ոչ թե մաքուր ջրով, այլ օդով, սոհայի 2%-ամոց լուծույթով, կամֆորայի յուղով և այլն:

Կոմպրեսը հակացուցված է մաշկի ամբողջականության խախտման, մաշկային հիվանդությունների առկայության դեպքում:

Վերքերի վրա կարելի է դնել դեղորայքով կոմպրեսներ (օրինակ՝ Վիշնևակով քսուքով): Մրանց տևողությունը մի քանի օր է: Խորհուրդ չի տրվում այս կոմպրեսներն ամեն օր փոխել, որովհետև լավացող հյուսվածքը կարող է վնասվել:

Տաց կոմպրես կատարելու համար մի քանի տակ ծալված թանգիքը թրջում են տաք ($50-60^{\circ}\text{C}$) ջրում, ջամում, դնում մաշկին և ծածկում մոմլաթով, վրայից դնում են բրյուջ գործվածք և կապում: Թանգիքը փոխում են 5-10 րոպեն մեկ:

Թաց կոմպրեսը (թրջոց) կիրավում է սալջարդի առաջին օրը, սուր տեղային բորբոքումների ժամանակ (ապենդիցիտ), սրտի խփողի դեպքում (սրտի շրջանում), քթային արյունահոսությունների դեպքում (քթարմատին), տեսնի ժամանակ (օլիսին) և այլն:

Կտորը թրջում են սառը ջրով, դնում մարմնի համապատասխան մասին և փոխում 2-3 րոպեն մեկ (մեկ ժամվա ընթացքում): Ձիրն երբեմն ավելացնում են կապարաջուր, քացախաթրու:

Տեղային ջերմություն է առաջացնում նաև ջեռակը: Դա ռետինե պարկ է, որը հերմետիկ փակվում է պտուտակավոր խցանով:

Տաք ջուրը լցնում են ջեռակի մեջ մինչև նրա տարրողության կեսը, ապա օդն այնտեղից հանում են և հերմետիկորեն փակում: Ջեռակը լիքը չեն լցնում ջրով, որպեսզի այն տափակ ծև ստանա և լավ հապկի մարմնին, նաև այն պատճառով, որ ծանր չլինի և ցավ չպատճառի: Ջեռակը չի կարելի դնել մերկ մարմնի վրա: Այն պետք է փաթթել սրբիչով և դնել սպիտակեղենի վրայից, իսկ եթե շատ տաք է, պետք է դնել վերմակի վրայից: Նախապես պետք է ստուգել ջեռակի ամբողջականությունն ու հերմետիկ փակվածությունը, որպեսզի ջուրը չհոսի և չթրջի վիրակապն ու անկողինը: Ստուգելու համար, ջեռակը փակված անցքով պետք է շրջել ցած: Ժամանակ առ ժամանակ պետք է ստուգել մարմնին դրված ջեռակի ջերմությունն ու ճիշտ դիրքը:

Այսուցներ ունեցող, մաշկի ցածր զգայունությամբ հիվանդների ու երեխաների համար ջեռակի ջերմությունը պետք է լինի ցածր: Տեղային պիզմենտացիայի առաջացումից խուսափելու համար նոյն տեղում երկրորդ անգամ ջեռակ դնելուց առաջ պետք է մաշկին քսել վագելին:

Օգտագործման համար ավելի հարմար են էլեկտրական ջեռակները: Դրանք ապահովում են հավասարաչափ, կայուն, կարգավորող ջերմություն:

Ձեռակի կիրառման հակացուցումներն են՝ արյունահոսությունները, տուբերկուլյոզը, չարորակ ուռուցքները: Բժշկության, հատկապես վիրաբուժության պրակտիկայում հաճախ են օգտագործվում տեղային սառը պրոցեդորներ: Այդ նպատակով օգտագործվում է սառույցով լցված պարկը: Դա կենտրոնում հերմետիկ փակվող լայն բերան ունեցող ռետին պարկ է, որով հեշտությամբ կարելի է նոցնել սառույցի փոքր կտորներ կամ ծոյն: Սառը ջրի օգտագործումը պարկի մեջ նպատակահարմար չէ, քանի որ այն շատ շուտ տաքանում է: Սառցեպարկը փաթաթում են սրբիչով և դնում մարմնին՝ պահելով 20-30 րոպե:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐ ԵՎ ՍԱԼՈՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Ընդհանուր ազդեցության տաք և սառը միջոցները օգտագործվում են չոր և թաց փաթաթումների, ընդհանուր լոգանքների, շիտումների, ցնցույնների ծևով: Ընդհանուր չոր փաթաթումները կատարում են ընդհանուր մրսածության, դոլի, սարսութի դեպքում: Հիվանդին փաթաթում են չոր, տաք սավաններով, վրայից ծածկում բրոյա վերմակով: Տակիս են խմելու ազնվանորով թեյ կամ ասպիրին. 2-3 ժամ անց փոխում են հիվանդի ներքնաշղոթը և ամսկողնային սպիտակեղենը:

Նույն նպատակով օգտագործում են չոր օդային լոգանքները: Այդ լոգանքը ներկայացնում է փայտե կիսագլան 75-100 ամ երկարությամբ: Նրա ներքին մակերեսին կան էլեկտրական լամպեր, որոնք ծառայում են որպես ջերմության աղբյուր: Հիվանդը պառկում է թախտին, վրան դրվում է կիսագլանը և միացվում էլեկտրական հոսանքին: Հիվանդի գլուխը կիսագլանից դուրս է, պարանոցը փաթաթվում է չոր սրբիչով, իսկ գլխին դրվում է սառը թրջոց: Ջերմության կորուստը կանխելու համար կիսագլանը ծածկում են սավանով: Լոգանքի ջերմությունը հասնում է 50-60°C: Պրոցեդորայի տևողությունը 15-30 րոպե է: Կերցում չորացնում են հիվանդի քրտինքը և փոխում սպիտակեղենը: Լոգանքից հետո հիվանդը 30 րոպեից մինչև մեկ ժամ հանգստանում է ամսկողնում:

Ըստ ջերմաստիճանի լոգանքները լինում են հինդիֆերենտ (\pm եղոք, $34\text{-}36^{\circ}\text{C}$), սառը ($33\text{-}20^{\circ}\text{C}$), գոլ ($37\text{-}39^{\circ}\text{C}$), տաք ($40\text{-}42^{\circ}\text{C}$): Ըստ տևողության լոգանքները լինում են կարճատև (1-5 րոպե), միջին տևողության (15-30 րոպե), տևական (մի քանի ժամ): Ընդհանուր լոգանք ընդունելիս հիվանդն ընկղմվում է ջրի մեջ (ջրի մակարդակը առջևից մինչև կրծուկի թրածն ելուստը, մեջքի կրղմից՝ թիակի միջին երրորդականը): Հի-

վանդի գլխին դրվում է սառը թրջոց: Բուժման կուրսի տևողությունը 4-5 շաբաթ է: Պրոցեդուրան ընդունում են օրումք:

Տեղային լոգանքները ընդունում են նստած՝ մինչև գոտկատեղը կամ ծեռքերի ու ոտքերի համար: Նստած լոգանքները նշանակում են փոքր կոնքի, որովայնի օրգանների հիվանդությունների ժամանակ:

Սառը տեղային լոգանքը լավ արդյունք է տալիս թութքի, աղի-ների տոնուսի անկան ժամանակ: Ոտքերի ու ծեռքերի տաք լո-գանքները նշանակում են հողերի, մկանների, նյարդերի բորբոքում-ների ժամանակ, ինչպես նաև սրտի, թոքերի հիվանդությունների ժա-մանակ իբրև շեղող միջոց:

Լոգանքներ նշանակելու համար ընդհանուր հակացուցումներ են սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները դեկոմպենսա-ցիայի փուլում, թոքերի տուբերկուլյոզը, ուռուցքները, արյունահո-սությունը, ընդհանուր հյուծվածությունը:

Պրոցեդուրայի տևողությունը որոշվում է ավագի կամ էլեկտրա-կան ժամացույցներով: Պրոցեդուրայից հետո հիվանդը կես ժամ պետք է հանգստանա:

Զրային պրոցեդուրայի նորմալ ռեակցիան արտահայտվում է շերմության, թարմության զգացումներով, մաշկի վարդագոյն երան-գավորումով:

Ոչ ճիշտ կատարված պրոցեդուրայի ժամանակ հիվանդը դո-դացնում է, ունենում է ջարդվածության զգացում, գրգռվածություն, մաշկը գունատվում է կամ կապտում:

Եթե զրային պրոցեդուրաներից հետո հիվանդի մոտ առաջա-նում է ոչ նորմալ ռեակցիա, դրանք պետք է դադարեցնել:

Զ. 4. Մելքոնյանքաժկ. գիտ. թեկն., Հ. 4. Հարությունյան

ԸՆՉԱՐԱԿԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՎԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ,
ԽԱՄԳԱՐՈՒՄՆԵՐԸ

Ծնչառությունը հիմնական կենսական պրոցես է, որը ապահո-վում է թթվածնի անընդհատ մուտքը օրգանիզմ և ածխաթթվի ու ջրային գոլորշիների արտազատումը: Գազափոխանակությունն օր-գանիզմում տեղի է ունենում շնորհիկ արտաքին և ներքին շնչառութ-յունների: Արտաքին կամ թոքային շնչառությունը տեղի է ունենում թոքերում՝ թոքերի և շրջապատի օդի միջև: Ներքին կամ հյուսված-

բային շնչառությունը տեղի է ունենում հյուսվածքներում՝ վերջիններիս և զարկերակային արյան միջև:

Արտաքին շնչառությունը բաղկացած է 2՝ ներշնչման և արտաշնչման փուլերից: Ներշնչումը բարդ նյարդամկանային ակտ է. շնչառական կենտրոնի գրգռումը առաջ է բերում շնչառական մկանների կծկում, որի հետևանքով կրծքավանդակի ծավալը մեծանում է, թոքերն իրենց առաձգականության շնորհիվ լայնանում են, ներթռքային ճնշումն ընկնում է: Առաջանում է զգալի տարբերություն մթնոլորտային ու ներթռքային օդի ճնշումների միջև և բարձր ճնշումներից՝ մթնոլորտից օդն անցնում է ցածր ճնշման վայրը՝ թոքերի մեջ: Տեղի է ունենում ներշնչում: Ներշնչման վերջում շնչառական մկանների կծկումը թուլանում է, կրծքավանդակի ծավալը փոքրանում է, թոքերը սեղմվում են, ներթռքային ճնշումը բարձրանում է, գերազանցելով մթնոլորտային օդի ճնշումը և օդը թոքերից դուրս է զալիս, տեղի է ունենում արտաշնչում: Ներշնչումն ու արտաշնչումը միասին համարվում են մեկ շնչառական շարժում: Նորմայում մարդը մեկ րոպեում կատարում է 16-20 շնչառական շարժում: Առօդ մարդկանց մոտ այն փոփոխվում է կախված տարբեր պատճառներից՝ տարիքից (նորածինները 1 րոպեում կատարում են 40-55 շնչառական շարժում, 1-2 տարեկան երեխաները՝ 30-40), սերից՝ կանանց շնչառությունը մեկ րոպեում 2-4-ով ավելի է, քան տղանարդկանցը, մարմնի դիրքից՝ պառկած վիճակում շնչառական շարժումների թիվն ավելի պակաս է, քան նստած և կանգնած դիրքերում:

Ընչառության հաճախացունը կոչվում է տախիանոե, դանդաղումը՝ բրադիապնոե: Ընչառությունն հաճախանում է ֆիզիկական լարումից, ուտելուց, տենդի, նյարդային գրգռականության վիճակում: Մարդկաների մոտ զարգանում է բրադիապնոե (մեկ րոպեում 6-8 շնչառական շարժում):

Ընչառության տիպերն են՝ կրծքային, որովայնային և խառը: Կրծքային տիպը բնորոշ է կանանց, որովայնայինը՝ տղանարդկանց, խառը՝ երեխաներին:

Հիվանդի շնչառական շարժումները պետք է հաշվել նրա համար աննկատելի կերպով: Եթե հիվանդն զգում է, որ իր շնչառությունը հաշվում են, նա կարող է ականայից փոխել շնչառական շարժումների քանակը, ոիթմնը և բնույթը: Ընչառությունը հաշվում են կրծքավանդակի կամ որովայնի պատի տատանումներով:

Ընչառական հաճախականության, ոիթմի և խորության խանգարումը կոչվում է հետո:

Ըստ առաջացման պատճառի հետոց լինում է ֆիզիոլոգիական և պաթոլոգիական:

Ֆիզիոլոգիական հևոցն առաջանում է լարված ֆիզիկական աշխատանքի ժամանակ, շրջապատի թերմության բարձրացման ժամանակ: Մրա պատճառը թթվածնի նկատմամբ օրգանիզմի պահանջի բարձրացումն է:

Պաթոլոգիկ հևոցն առաջանում է թոքային հիվանդությունների ժամանակ (թոքերի շնչառական մակերեսի փոփոքրացման պատճառով), սրտային հիվանդությունների ժամանակ (արյան փոքր շրջանառության մեջ կանգի առաջացման և արյան ծննդման բարձրացման հետևանքով), ժանր սակավարյունությունների ժամանակ (էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակի պակասի հետևանքով):

Հուտ զարգացող և ուժեղ արտահայտված հևոցը կոչվում է շնչահեղծություն: Հանկարծակի նոպայի ծևով ընթացող շնչահեղծությունը կոչվում է ասթմա: Տարբերում ենք բրոնխային և սրտային ասթմաններ: Բրոնխայի ասթմայի պատճառը մանր բրոնխների սպազմի հետևանքով նրանց լուսանցքի նեղացումն է: Այն արտահայտվում է աղմկալի, դժվարացած արտաշնչմամբ: Սրտային ասթմայի նոպայի պատճառը սրտի ծախ փորոքի անբավարար աշխատանքն է: Շնչառության լրիվ կանգը կոչվում է ասֆիքսիա: Այն խնում է շնչառական կենտրոնի կաթվածի, շնչառական ուղիների խցանման և այլ դեպքերում:

ՍՏԱՄՈՔՍԻ ԼՎԱՑՈՒՄ, ՀՈԳՆԱ

ՍՏԱՄՈՔՍԻ ԼՎԱՑՈՒՄ

Ստամոքսի լվացումը կատարվում է հետևյալ դեպքերում.

1. թույներով կամ ոչ բարորակ ուտելիքով թունավորվելիս,
2. ստամոքսի հիվանդությունների (քրոնիկական գաստրիտ, ստամոքսաելքի սեղմում),
3. աղիքների անանցանելիության դեպքերում:

Ստամոքսի լվացումը հակացուցված է կերակրափողի և ստամոքսի արյունահոսության (խոց, քաղցկեղ), արտահայտված սրտանթային հիվանդությունների ժամանակ:

Մաքուր զոնդը նախօրոց եռացնում են և դնում եռացրած սառը ջրում սառչելու համար:

Լվացումը կատարում են ջրով կամ դեղորայքային լուծույթով:

Հիվանդը նստում է աթոռին, հենվելով թիկնակին և գլուխը թեթևակի առաջ թեքած; Նրան հազընում են երկար մոմլաթ գոզնոց, ուտերի առջև դնում են լագան: Ալտամի պրոտեզները պետք է հանել: Հիվանդը պետք է կու տալու շարժումներ անի և չպահի շնչա-

ռուբյունը, քանի որ խոր ներշնչումները օգնում են փսխման ռեֆլեքտում: Աջ ճնշմանը: Լվացում կատարողը կանգնում է հիվանդի աջ կողմում: Աջ ծերքով նա բռնում է խոնավ գոնդը՝ կլորացրած ծայրից 10-15սմ հեռավորության վրա: Չախ ծերքով նա բռնում է հիվանդի վիզը և պահում գոնդը բերանի մոտ: Հիվանդը բացում է բերանը, գոնդի ծայրը դնում են նրա լեզվի հիմքին, խնդրում են կուլ տալու շարժումներ անել և այդ ժամանակ արագ առաջ են տանում գոնդը: Եթե գոնդն արդեն գտնվում է կերակրափողում, պետք է հիվանդին առաջարկել մի քանի խոր ներշնչում կատարել (միաժամանակ շարունակել ներս մտցնելը մինչև տարբերանիշը): Պրոցեդուրայի ժամանակ առաջացող հազը վկայում է այն մասին, որ գոնդը ընկել է կոկորդի տանձած խոռոչները (բայց դեռևս ոչ շնչառական ուղիները): Այդ դեպքում գոնդը դուրս են հանում և ներս մտցնում կրկնակի անգամ: Եղբ գոնդումը չի հաջողվում կանի մուտքի չափազանց բարձր գգայնության պատճառով, գոնդելուց 2-3 րոպե առաջ բուկը և կոկորդը պատում են նովոկանի 10%-անոց լուծույթով:

Ձուրը լցնում են ծագարի մեջ: Երբ ջրով լցված ծագարը բռնեն ստամոքսից բարձր, ջրուը նրա միջից կմտնի ստամոքս, եթե այն ստամոքսից ցածր բռնեն, նրա պարունակությունը կլցվի ծագարի մեջ: Չազարը բռնելով հիվանդի ծնկներին հավասար, լցնում են այն ջրով, և դանդաղ բարձրացնում հիվանդի բերամից 25սմ բարձր: Չազարը բռնում են մի փոքր թեք, որպեսզի ջրի հետ օդ չմտնի ստամոքսի մեջ: Հենց որ ջրի մակարդակը հասնի խողովակին, պետք է ծագարը հետեւ ցածր, պահելով նախկին դրությամբ: Ջրով նորացված ստամոքսի պարունակությունը սկսում է լցվել ծագարի մեջ, և երբ դուրս եկող հեղուկի քանակը մոտավորապես հավասար կլինի ներս մտցվածին, կարելի է ծագարը շուրջ տալ և պարունակությունը դատարկել տաշտակի մեջ: Այդ պրոցեդուրան կրկնում են մինչև այն ժամանակ, երբ ստամոքսի ամբողջ պարունակությունը ջրի հետ դուրս գա, մինչև գա “մաքուր ջուր”:

Լվացումից հետո սարքը անջատում են և արագ շարժումով դուրս հանում գոնդը:

Եթե հնարավոր չէ ստամոքսը լվանալ գոնդով, կարելի է առաջարկել հիվանդին 10-15 րոպեի ընթացքում 5-6 բաժակ գոլ ջուր խմել և անմիջապես փսխում առաջացնել, մատով գրգռելով կոկորդը:

ՀՈԳԱՆԱԿԵՐ

Հոգնա է կոչվում աղիքի ստորին հատվածի մեջ զանազան հեղուկներ մտցնելը:

Բուժիչ հոգնաներ լինում են 2 տիպի:

1. Մաքրող, թուլացնող և լվացող հոգնաներ – սրանց օգնությամբ հեղուկը մտցնում են ուղիղ աղիք, որպեսզի հեռացնեն աղիքի պարունակությունը:
2. Դեղորայքային, կաթիլային, սնուցող - այս հոգնաների նպատակն է հեղուկի հետ միասին աղիքների մեջ մտցնել դեղորայք, հաշվի առնելով նրա տեղական կամ ընդհանուր աղեցությունը:

Մաքրող հոգնաները ցուցված են հետևյալ դեպքերում՝

- ա) տարբեր ծագում ունեցող փորկապությունների և կղկղանքի դժվարությամբ դուրս գալու դեպքում,
- բ) արտաքին և ներքին ծագում ունեցող թունավորումների դեպքում (սննդային և այլ թունավորումներ),
- գ) որոշ վիրահատություններից և որովայնի խոռոչի ու փոքր կոնքի օրգանների ռենտգենոլոգիական հետազոտություններից առաջ,
- դ) դեղորայքային, կաթիլային և սնուցող հոգնաներից առաջ:

Մաքրող հոգնաները հակացնությամբ են՝

- ա) սուր բորբոքային՝ թարախային, խոցային պրոցեսներ՝ հետանցքի և հաստ աղիքի հատվածներում (սուր ապենդիցիտ),
- բ) որովայնամզի բորբոքման (պերիստոնիտ),
- գ) ստամոքսի և աղիքային արյունահոսության (հեմորոյ (թութք), հաստ աղու քայլայվող քաղցկեղ),
- դ) ուղիղ աղիքի դրւուս ընկնելու (արտասնկում) դեպքում:

Որքան շատ է հեղուկի քանակը և մեծ է ճնշումը, այնքան մեծ է հոգնայի մեխանիկական ազդեցությունը:

Անկողնային ռեժիմի մեջ գտնվող հիվանդներին հոգնան անում են հիվանդասենյակում, քայլողներին՝ գուգարանում: Հիվանդը պառկում է մահճակալի ծայրին, ծախ կողքին, ծնկները ծալած մոտեցնում է փորին, որովայնի լարված վիճակը թուլացնելու համար: Նրա տակ դնում են մոմլաթ: Օգնողը կանգնում է հիվանդի կողքին, եթևս ով դեպի նրա գլուխը: Նախքան ծայրակալի մտցնելը պետք է ռետինե խողովակից օդը լրիկ հանված լինի և այն ջրով լցված լինի: Դրա համար մի քանի կարի ջուր բաց են թողնում ծայրակալից, որից հետո խողովակը սեղնում են պտտեցնելով փակող ծորակը:

Հոգնա կարելի է անել նաև մեծքի վրա պառկած վիճակում, եթե հիվանդին հակացնությամբ է շարժվելը, այս դեպքում հիվանդի տակ դնում են գիշերանոթ: Որովայնի մկանների զգալի լարվածության դեպքում հիվանդին տալիս են ծնկա-արմնկային դիրք, որը փոքրացնում է ներորովայնային ճնշումը:

Ծայրապանակին քսում են վագելին, ծախ ծեռքով բացում են հետանքը, իսկ աջով թերևակի պտտվող շարժումներով ծայրապանակը մտցնում են 10-12սմ խորությամբ: Ակզրում ծայրապանակը 3-4սմ մտցնում են պորտի, իսկ հետո զուգահեռաբար պոչակի ուղղությամբ: Ծայրապանակը մտցնելուց հետո բացում են ծորակը, բաժակը բարձրացնում են 40-50սմ, բաց են թողնում հեղուկը, ապա բաժակը աստիճանաբար բարձրացնում են մինչև 1մ բարձրության վրա: Եթե ջուրը չի գնում, պետք է փոխել ծայրապանակի դիրքը, այն առաջ շարժելով 1-2սմ, կամ մեծացնել ճնշումը, բաժակն ավելի բարձրացնելով: Զրին ավելացնել օճառի էնուլսիա (1 ճաշի գոյացությունը 1-2/ ջրում), նախապես մատով (ռետինե ծերոնոցով) կղկղանքի պինդ զանգվածը հեռացնել ուղիղ աղիքի ներքնի մասից: Եթե այդ չի օգնում, պետք է ծայրապանակը հանել, զրի շիթով որոշել անցանելիությունը և նորից մտցնել: Ծայրապանակը հանելուց հետո հիվանդը պետք է զայի արտաքրուելու ցանկությունը 3-5 րոպե: Երեխաներին հեղուկը պետք է տալ դանդաղ, առանց մեծ ճնշման, իսկ ծայրապանակը հանելուց հետո մի քանի րոպե սեղմել նստատեղը ծեռքերով, դրանով երեխային օգնելով զավելու արտաքրուելու ցանկությունը: Տնային պայմաններում եսմարիս զավաքի փոխառուն կարելի է օգտագործել մեծ ապակե ծագար կամ սովորական էնալապատ թթվիկ, որի ծորակին հազցնում են ռետինե խողովակ:

Թուլացնող հոգնաները (յուղային և հիպերտոնիկ) կիրառվում են այն դեպքերում, եթե մեծ քանակությամբ հեղուկ մտցնելը անցանկալի է և անարդյունք:

ա) Յուղային հոգնաները անում են փորկապություն կամ հաստ աղիքի բորբոքային հիվանդությունների դեպքում, յուղը թափանցում է աղիքի պատի և կղկղանքի միջև և այն պարուրելով, հեշտացնում է դուրս գալը: Բացի այդ, աղիքային ֆլորայի ազդեցության տակ յուղը մասնակիորեն քայրայվում է և այդ ժամանակ առաջացած ճարպաթթուները աղիքի պատի վրա թողնում են թոյլ գրգռող ներգործություն, որը նպաստում է նորմալ պերիստալտիկայի վերականգնմանը:

Սովորաբար օգտագործում են բուսական յուղեր (արևածաղկի, կտավատի, կանեփի, ծիթապտղի, վագելինի յուղ) 37° - 38°C տաքացրած վիճակում 100-200մլ, երեխաների համար՝ 30-50մլ:

Աղիքների մեջ յուղը տանելու համար օգտագործում են տանձածն բալոն: Յուղը մտցնում են դանդաղ, որպեսզի այն չի ռուսի, ներարկումից հետո հիվանդը պետք է հանգիստ պառկի: Սովորաբար յուղային հոգնան անում են երեկոյան: Աղիքների գործելը սկսում է 10-12 ժամ հետո:

բ) Հիպերտոնիկ հոգնա (նատրիումի քլորիդի 10%-անոց լուծույթ):

Այն կիրառվում է ատոնիկ փորկապության, ինչպես նաև այտուցների դեպքում (երբ սովորական մաքրող հոգնան անցանկալի է կատարել, որովհետև այդ դեպքում օգտագործվող մեծ քանակով ջուրը կարող է մասնակիորեն ներծծվել և ավելացնել այտուցները):

Հիպերտոնիկ հոգնաները հակացուցված են հաստ աղիքի ստորին հատվածում եղած ամեն տեսակի բորբոքային և խոցային պրոցեսների, հետանցքի հատվածում ճեղքաձերների առկայության դեպքերում:

Հիպերտոնիկ լուծույթները ներարկվում են տաքացրած վիճակում 50-100մ՛ քանակությամբ, այն սարքերով, ինչ որ յուղերը: Հիպանդը արտաքրոբելու ցանկությունը պետք է զսպի 20-30 րոպե:

Սիֆոնային հոգնան լվացող հոգնաներից ամենատարածվածն է:

Ցուցնունքները՝

ա) աղիքները կողկանքից ու ցավերից ազատելու անհրաժեշտությունը, երբ մյուս մաքրող հոգնաներն ու լուծողական ընդունելն արդյունք չեն տալիս,

բ) թունավորումների դեպքում,

գ) աղիքային անանցանելիության կասկածի դեպքում ախտորոշման նպատակով (լվացող ջրերի մեջ գազի պղպջակներ չառաջնալը հաստատում է կասկածը):

Սիֆոնային հոգնայի կատարման համար անհրաժեշտ են 1-2լ - տարրողության ծագար, 1.5մ երկարության և 1սմ լուսանցքի տրամագծով ռետինե խողովակ, 10-12լ մաքուր ջուր, լազան, մոմլաթ, աղիքային խողովակ:

Աղիքային խողովակի ծայրին վագելին քսելով 20-30սմ խորությամբ մտցնում են հետանցքը: Զագարը բռնելով թեք դրությամբ, հիվանդի մարմնից քիչ բարձր լցնում են ջրով և բարձրացնում: Երբ հջոնող ջրի մակարդակը հասնում է ծագարի կոնի գագաթին, վերջինս իջեցնում են տաշտակի վրա, առանց շուրջ տալու սպասում են մինչև ջուրը աղիքային պարունակության լցված մասնիկներով վերղառնանախմիկին մակարդակին: Զագարի այդ դիրքում լավ երևում են ջրի հետ դուրս եկած գազի պղպջակները: Ապա ծագարի պարունակությունը լցնում են լազանի մեջ, նորից լցնում ջրով և կրկնում լվացումը մինչև “մաքուր ջուր”:

Դեղորայքային, կաթիլային և սնուցող հոգնաները կատարում են մաքրող հոգնայի ներգործությունից 20-30 րոպե հետո:

Դեղորայքային հոգնաների ժամանակ արիքներն են մտցնում ինչպես տեղային, այնպես էլ ընդհանուր ներգործություն ունեցող դեղերը (հակաբորբոքային, հակասպազմատիկ, հակապարագիտային և այլն):

Տեղային ներգործություն ունեցող նյութերը մտցնում են ներս 50-100-200մլ քանակով – տաք վիճակում՝ բալոնով։ Հոգնայից հետո հիվանդը պետք է հանգիստ պառկի կես ժամից ոչ քիչ, որպեսզի դեղը պահի։

Ա.Ա. Մանուկյան

ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՍՈՒՄ

Ախտահարվածներին և հիվանդներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու գործում մեծ նշանակություն ունի դեղամիջոցների կիրառումը։ Բուժքույրը կամ բուժեղբայրը պետք է ապահովեն դեղանյութերի ներմուծման մեթոդները, նրանց ձիշտ դոզավորումը, պահպանումը, և այլն։

Դեղամիջոցների ազդեցության ընդհանուր օրինաչափությունները կենդանի օրգանիզմի վրա (նրանց ներմուծումը օրգանիզմ, տեղաբաշխումը, մետաբոլիզմը, օրգանիզմից դուրս բերումը, ազդման մեխանիզմները, դեղանյութերի կողմնակի և բունավոր ազդեցույթունները, նոր դեղամիջոցների հայտնաբերումը և այլն) ուսումնասիրում է ֆարմակոլոգիան։

Դեղամիջոց կամ դեղ (նաև բժշկական պրեպարատ) կոչվում է ֆարմակոլոգիական միջոց, որը բույսատրված է տվյալ երկրում համապատասխան մարմինների կողմից սահմանված կարգով կիրառել հիվանդության կանխարգելման, ախտորոշման և բուժման նպատակով։ Դեղամիջոցները ստանում են դեղահումքից (կենդանական և բուսական ծագում ունեցող), ապարներից, միկրոօրգանիզմների և սնկերի կողմից արտադրվող կենսագործունեության արգասիքներից, քիմիական սինթեզի ճանապարհով։

Դեղամիջոցներին տրված այնպիսի ծեղ և ռացիոնալ վիճակը, որում դեղը ցուցաբերում է մաքսիմալ անհրաժեշտ թերապևտիկ ազդեցություն և հարմար է կիրառման ու պահպանման համար կոչվում է դեղածել։ Դեղածերն ըստ ագրեգատային վիճակի լինում են.

1. Պինդ՝ փոշիներ, հաբեր, կապսուլներ, դրաժեներ, դեղաբուսահավաքներ։
2. Հեղուկ՝ ջրային, սպիրտային, յոդային, լուծույթներ՝ ջրաթուրմեր, եփուկներ, ոգեթուրմեր, մզվածքներ, լորձեր, էնուկ-սիաներ, սուսպենզիաներ, միքստուրաներ, ստերիլ լուծույթ

ներ՝ սրսկումների համար, կաթիլներ՝ արտաքին և ներքին ընդունման համար:

3. Փափուկ՝ քսուքներ, մածուկներ, օձանելիքներ, մոմիկներ:
4. Գազանման՝ ազոտի էնթոքսիդ, թթվածին:

ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԵՐԾԾԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Դեղամիջոցների ներծծման ուղիներից է կախված ազդեցության գարզացման արագությունը, արտահայտվածությունը և երկարատևությունը: Որոշ դեպքերում ներմուծման ուղին որոշում է դեղանյութի ազդեցության բնույթը (օրինակ՝ MgSO₄ լուծույթի սրսկումները ցուցաբերում են արյան ճնշումը իջեցնող ազդեցություն, իսկ աղեստամոքսային ուղով ներմուծելիս ի հայտ է զալիս լուծողական ազդեցություն):

- Դեղամիջոցների ներմուծման ուղիները օրգանիզմ երկուսն են.
1. Էնթերալ՝ մարսողական ուղով (բերանով, լեզվի տակ, 12-մատնյա աղիք, ուղիղ աղիք):
 2. Պարէնթերալ՝ շրջանցելով աղեստամոքսային ուղին՝ կատարելով ներզարկերակային, ներերակային, ենթամաշկային, միջմկանային ներարկումներ պիկրալ խոռոչի մեջ, ոսկրածուծի մեջ, ողնութեղի մեջ, հոդ և այլն: Նաև ինհալացիոն ճանապարհով, մաշկի մակերեսից և լորձաբաղանքներից:

Էնթերալ ուղին՝ ներմուծումը բերանով (per os), ներմուծման ամենապարզ, ամենահարմար տարածված ձևն է: Մի շաբաթ նյութերի աբսորբցիան (ներծծումը) կատարվում է մասամբ ստամոքսից (օր՝ բարբիտուրատների, ացետիլ սալիցիլաթթվի և այլ թթվային բնույթի նյութերի): Բայց նյութերի մեծամասնությունը ներծծվում է բարակ աղիքներից, ինչին նպաստում է աղիքների լորձաբաղանքի ներծծող մեծ մակերեսը և արյունով ինտենսիվ մատակարարումը:

Ներմուծման մեխանիզմները նշանակություն ունեն օրգանիզմում դեղանյութերի տեղաբաշխմանը և դրւս բերմանը օրգանիզմից: Դեղանյութերի ներծծումը կախված է դեղանյութի ֆիզիկաքիմիական հատկություններից՝ լուծելիությունից, դեղածների մանրեցման աստիճանից, աղեստամոքսային համակարգի հիվանդություններից, միջավայրի PH-ից, աղիքների պարունակությունից:

Պետք է նկատի ունենալ, որ աղիքներից դեղանյութերը դանդաղ են ներծծվում՝ սկզբում մտնելով յարո, որտեղ մի մասը ինակտիվանում է, ապա նոր անցնում արյան ընդհանուր հոսք: Որոշ նյութեր քայլավում են մարսողական ֆերմենտներից և նրանց նշանակումը էնթերալ ճանապարհով արդյունավետ չէ:

Եթե դեղամիջոցը քայլայվում է ստամոքսահյութից, կամ էլ թողնում է գրգռող ազդեցություն ստամոքսի լորձաթաղանթի վրա, ապա այն տախիս են այնպիսի դեղածերով (միկրոկապսուլներով), որոնք կլուծվեն միայն աղիքներում՝ անփոփոխ անցնելով ստամոքսով, իսկ նյութի դանդաղ և անընդհատ անջատումը այդպիսի դեղածեկից կապահովի դեղամիջոցի երկարատև ազդեցությունը:

Բերանով ներմուծվում են փոշիները, հաբերը, կապսուլները, լուժույթները և այլն:

Ուղիղ աղիք (per rectum) ներմուծվող դեղածերը և դեղորայքային հոգնաները (50մ՛ ծավալով) ավելի արագ են ներծծվում՝ 5-15 րոպե, և նյութի զգայի մասը՝ 50%-ը մտնում է ընդհանուր արյան հոսք՝ շրջանցելով յարդը: Եթե այս նյութերը գրգռում են աղիքի լորձաթաղանթը, ապա նրանց համակցում են լորձային նյութերի հետ: Ուղիղ աղիք ներմուծվող նյութերը նշանակվում են նաև տեղային ազդեցություն ցուցաբերելու համար՝ ցավազրկող, հակարորդօքային և այլն:

Սուլբինգվալ՝ լեզվի տակ, դեղորայքի ներմուծումը կատարվում է՝ լեզվի տակ դրվող դեղածերով՝ հաբերով, կապսուլներով, կամ շաքարի վրա կարեցված կաթիներով: Այս պրեպարատները արագ ներծծվում են բերանի լորձաթաղանթով՝ շրջանցելով յարդային պատնեշը, մտնում ընդհանուր արյան հոսք վերին սիներակով և չեն նեթարկվում աղեստանոքսային ֆերմենտների և աղաթթվի ազդեցությանը: Սուլբինգվալ նշանակվում են բարձր ակտիվությամբ որոշ նյութեր՝ հորմոնալ պրեպարատներ, որոշ արագ ազդող անոթալայնից միջոցներ՝ նիտրոգիտերին, և որոշ նյութեր, որոնք ռեֆլեկտոր ճանապարհով են իրագործում իրենց ազդեցությունը (օր՝՝ գրգռելով լեզվի տակ սառնազգաց ռեցեպտորներ՝ վալիդոլը կամ մենթոլը առաջանում են սրտի անոթների լայնացում):

Դեղամիջոցների ներմուծումը օրգանիզմ պարենթերալ ճանապարհով հիմնականում կատարվում է սրսկումների միջոցով, ինհալացիոն ճանապարհով և մաշկով ու լորձաթաղանթներով: Ներարկվող դեղածերը պահանջում են պատրաստման հասուկ տեխնոլոգիա՝ ստերիլականություն, նրանց կիրառման ժամանակ խախտվում է մաշկային ծածկույթների ամբողջականությունը: Այս ճանապարհով ներարկվող նյութերը ապահովում են շատ արագ ազդեցություն (հատկապես ներերակային սրսկումները), ճշգրիտ դոզավորում: Ամենատարածվածը ենթանաշկային, միջմկանային և ներերակային սրսկումներն են: Ներերակային ներարկում են իսկական լուժույթներ, հնարավոր է միանվագ, կաթիլային, կոտորակային և ինֆուզիա: Խստիվ արգելվում է ներերակային ներարկել անլուծելի միացություններ, յուղային լուժույթներ (էմուլսիաներ և սուսպենզիաներ): Կա

Էմբոլիայի վտանգ: Միջմկանային և ենթամաշկային սրսկումները համեմատաբար դանդաղ են ազդում, սակայն ազդման երկարատևությունը ապահովելու նպատակով կիրառում են այնպիսի դեղաձևեր, որոնց ներծծումը պրսկման տեղից դանդաղ է կատարվում: Հարկ եղած դեպքում ենթամաշկային ճանապարհով ներարկում են զգալի քանակով լուծույթներ: Չի կարելի ենթամաշկ և միջմկան ներմուծել գործող տեղային ազդեցություն ունեցող դեղանյութեր (օր.՝ CaCl_2 -ի լուծույթը առաջացնում է հյուսվածքների բորբոքում և նեկող՝ մեռուկացում):

Ինհալացիոն ճանապարհով ներմուծվում են գոլորշիներ, աերոգոլներ, գազանման և արագ ցնողող միացություններ վերին շնչառական ուղիներով: Ինհալացիոն ուղիով ներծծումը արյան մեջ թօքային մակերեսից (100m^2) կատարվում է շատ արագ: Եֆեկտի արտահայտվածությունը կարելի է կառավարել փոփոխելով նյութի կոնցենտրացիան ներշնչվող օդի մեջ: Ինհալացիաների համար գործածում են Զինզելի պարզագույն ինհալացիատորը: Որոշ նյութեր օգտագործվում են հատուկ ինքնաներշնչման ցողացիրներով:

Քսուցները, մածուկները, օժանելիքները լավ են ներծծվում մաշկի վրայից մերսելով: Ակզրում այս դեղաձևերը ցուցաբերում են տեղային, ապա արյուն ներծծվելուց հետո ընդհանուր՝ ռեզորբտիվ ազդեցություն: Երբեմն առողջ մաշկով կամ լորձաթաղանթներով ներմուծվում են լուծույթներ ինոնֆորետիկ ճանապարհով թույլ էլեկտրական հոսանքի օգնությամբ: Լորձաթաղանթներով տրվում են նաև կաթլային դեղաձևերը՝ աչքի, քթի, ականջի կաթիները, փափուկ՝ քսուցներ:

ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԱՎԱՆԻՉԱՆ ՎՐՄ

Դեղանյութի ազդեցությունը կիրառման տեղում, մինչև նրա ներծծվելը արյան մեջ, կոչվում է տեղային: Օր.՝ տեղային անզգայացմող նյութերի ազդեցությունը լորձաթաղանթների վրա մակերեսային անեսթետիկայի ժամանակ: Բայց բուն տեղային ազդեցությունը պայմանական է, քանի որ դեղանյութերը կարող են մասամբ ներծծվել կամ էլ ցուցաբերել ռեֆլեկտոր ազդեցություն: Դեղանյութերի ազդեցությունը, որը դրսնորոշում է ընդհանուր արյան հոսք ներծծվելուց հետո և հյուսվածքներին հասնելուն պես, կոչվում է ռեզորբտիվ կամ ընդհանուր: Օր.՝ եթերը շնչուղիների լորձաթաղանթներին հպվելիս առաջացնում է սառեցման, գոգոնան երևույթներ, ապա արյան մեջ ներծծվելուց հետո ընկճում է ԿՆՀ-ն և առաջացնում ընդհանուր անզգայացում:

Դեղի ուղղակի ազդեցությունն ի հայտ է գալիս հյուսվածքներում, որտեղ այն անմիջապես ներգործում է, փոխազդում է ռեցեպտորների հետ և կոչվում է նաև առաջնային ֆարմակոլոգիական ռեակցիա: Դեղորայքի կիրառման շնորհիվ առաջացած առաջնային փոփոխություններին օրգանիզմի պատասխան ռեակցիաներն են անուղղակի կամ միջնորդավորված ռեակցիաները (օր.՝ սրտային գիշերակի նույնառությունը և այլ օրգանների ֆունկցիան, նպաստում են օրգանիզմից հեղուկների արտազատմանը՝ ցուցաբերելով անուղղակի միջամուղ ռեակցիա):

Դեղանյութերը, փոխազդելով սպեցիֆիկ ռեցեպտորների հետ, առաջացնելով կոմպլեքսներ, ի հայտ բերելով մաքսիմալ ազդեցություն, կոչվում են ագոնիստներ: Այն նյութերը, որոնք ռեցեպտորների հետ էֆեկտ չեն առաջացնում կամ փոխադարձ թուլացնում և լրիվ հանում են ազոնիստի էֆեկտը, կոչվում են անտագոնիստներ:

Բուժական պրակտիկայում հաճախակի կիրառում են մի քանի դեղանյութեր միաժամանակ, որոնց ռացիոնալ փոխադարձ ուժեղացումը բերում է սիներգիզմի: Սիներգիստ պրեպարատների էֆեկտները կամ գումարվում են, կամ էլ պոտենցվում:

Եթե դեղանյութը փոխազդում է որևէ օրգանի կամ հյուսվածքի հետ, ապա այդախոհ ազդեցությունը համարվում է ընտրողական: Օր.՝ ապամորֆինը ազդում է փսխման կենտրոնի վրա:

Դեղամիջոցների ֆարմաէֆեկտները կախված են նյութի հատկություններից, քիմիական կազմից, դոզայից, օրգանիզմի վիճակից, զանգվածից, սերից, տարիքային առանձնահատկություններից, դեղաձեկությունից և պատրաստման տեխնոլոգիայից:

Դեղամիջոցը նշանակում են որոշակի՝ անզգայացնող, հիպոթենզիվ և այլ նպատակներով, հիմնական, գլխավոր ֆարմաթերապևտիկ ազդեցություն դրսութելու համար: Սակայն դեղանյութերի ցանկալի էֆեկտների հետ առաջանում են կողմնակի անբարենպաստ ազդեցություններ:

ԴԵՂԱՄԻՋՈՅՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՆՉԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԿՆԱԿԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԴԵՂՔՈՒՄ

Դեղամիջոցների կրկնակի ներմուծման դեպքում կարող են դիտվել նրանց ուժեղացման կամ թուլացման էֆեկտները: Մի շարք նյութերի էֆեկտի ուժեղացումը կախված է նրանց կուտակման հատկությունից և կոչվում է կումուլացիա (կուտակում): Նյութական

կումուլյացիան՝ դա ֆարմակոլոգիական նյութի կուտակումն է օրգանիզմում և բնորոշ է երկարատև ազդող պրեպարատների համար: Նրանք դանդաղ են դուրս բերվում օրգանիզմից և շատ կայուն են կապված օրգանիզմում: Դեղանյութի կուտակումը նրա կրկնակի ներմուծման հետևանքով կարող է թունավորման պատճառ դառնալ:

Կան նաև ֆունկցիոնալ կուտակումներ, երբ նախորդ ընդունման է ֆեկուլ պահպանվում է և ուժեղանում հետագա կրկնակի ներմուծումներից, որը հնարավորություն է տալիս երկարատև ապահովել բուժիչ ազդեցությունը դեղի ոչ հաճախակի ներմուծումից օրգանիզմ:

Դեղորայքի ազդեցության հետզետե թուլացումը կրկնակի ներմուծումներից կամ երկարատև օգտագործումից կոչվում է ընտելացում (տղերանտուրայուն-համբերություն): Այն կարող է կախված լինել դեղի մետաբոլիզմի պրոցեսների արագացումից, ներծծման նվազումից, ինակտիվացիայի և դուրսքերման ինտենսիվությունից ու արագությունից: Ընտելացումը զարգանում է հիմնականում այն դեղանյութերի հանդեպ, որոնք ազդում են ԿՆՀ-ի վրա: Հնարավոր է ռեցեպտորների զգայունության անկում որոշ դեղանյութերի հանդեպ (լուծողականներ): Ընտելացման դեպքում, սկզբնական է ֆեկտին համելու համար պրեպարատի դոզան բարձրացնում են կամ էլ փոխարինում մեկ այլ պրեպարատով: Երբեմն որոշ նյութերի հանդեպ ընտելացումը զարգանում է շատ արագ, նույնիսկ առաջին 2 ընդունումից:

Որոշ դեղանյութերի հանդեպ կրկնակի ներմուծումից զարգանում է դեղորայքային կախվածություն կամ հակում: Այն արտահայտվում է տվյալ դեղորայքի սիստեմատիկ օգտագործման անհաղթահարելի հակումով: Թանի որ այդ դեղորայքների ընդունումը առաջացնում է էյֆորիա՝ տիհա զգացողությունների և ապրումների ժամանակավոր վերացում, տրամադրության բարձրացում, ապա բերում է դեղաչափի աստիճանաբար մեծացմանը: Տարբերում են հոգեկան և ֆիզիկական կախվածություն: Հոգեկան դեղորայքային կախվածության ժամանակ արեպարատի հանումը բերում է էնցիոնալ դիսկուլֆորտի (օրինակ՝ դեպրեսիա, կացուն մտքեր, ինքնապան լինելու ցանկություն): Որոշ նյութերի հանդեպ (մորֆին, հերոին) զարգանում է ֆիզիկական կախվածություն: Սա կախվածության ավելի վառ արտահայտված աստիճանն է: Դեղորայքի ընդհատումը բերում է ծանր վիճակի, որը, բացի կտրուկ հոգեկան փոփոխություններից, ներքին օրգանների խանգարումների լուրջ պատճառ է դառնում (ցավեր մարմնում, անօթազարկի հաճախացում, ճնշման անկում, փորլուծություն, առատ քրտնարտադրություն, մկանային դող, ջղաձգումներ, շնչառական կենտրոնի կաթված), անգամ բերում է

մահվան: Ընտելացման և կախվածության երևույթներն ընկած են թմրամոլության հիմքում (կախված օգտագործվող կամ ընդունվող նյութից տարբերում են՝ մորֆինիզմ, կոկաինիզմ, ակոգոլիզմ և այլն): Թմրամոլությունը ծանր հիվանդություն է: Թմրամոլին օգտագործվող նյութից գրկելը բերում է ծանր ախտաբանական վիճակի: Այս երևույթը կոչվում է աբստինենցիայի սինդրոմ կամ գրկման երևույթ:

Դեղորայքի կրկնակի ներմուծումից հնարավոր է ալերգիկ ռեակցիաների առաջացում, որին նպաստում են ինունային մեխանիզմները: Ալերգիան՝ օրգանիզմի արտասովոր գերզգայուն ռեակցիան է շրջապատող միջավայրի որոշ գործնների՝ ալերգենների հանդեպ: Դրանք են՝ քիմ.այութերը, կենցաղի փոշին, արդյունաբերական նյութերը, միկրոբները, նրանց կենսագործունեության պրոդուկտները, բույսերի ծաղկեփոշին, դեղորայքը, սնունդը և այլն: Երբ ալերգենն առաջին անգամ ընկնում է օրգանիզմ, զարգանում է գերզգայունություն՝ սենսիբիլիզացիա: Օրգանիզմում մշակվում են հակամարմիններ, որոնք փոխազդում են միայն այդ ալերգենի հետ, և զարգանում է ալերգիկ ռեակցիա: Երբեմն ալերգիկ ռեակցիաները առաջանում են առաջնային կոնտակտից առանց սենսիբիլիզացիայի: Ասպիսի ալերգիկ ռեակցիան կոչվում է իդիոսինկրազիա, որը անհատական բնածին անընդունելիությունն է որոշ դեղանյութերի կամ սմնոյի հանդեպ: Ալերգիկ ռեակցիաները լինում են՝

1. դանդաղ ընթացող,
2. կայծակնային կամ արազընթաց:

Դանդաղ ընթացող ալերգիկ ռեակցիաները զարգանում են մի քանի ժամից կամ օրից, արտահայտվում են ցորով, ցավով, դողով, ինքնազգացողության վատացումով, ջերմության բարձրացումով, ուղեկցվում են պոլինոզով: Արազընթաց ռեակցիաները զարգանում են մի քանի րոպեից մինչև 15 րոպե՝ առաջացնելով բրոնխոսպազմ, Կվինկվելի այտուց, անաֆիլակտիկ շոկ, ճնշման անկում, բրոնխիալ ասթմայի նոպա: Ալերգիկ հիվանդություն կարող է առաջացնել յուրաքանչյուր պրեպարատ:

Առաջին բուժօգնություն. Ընդհատել ալերգենի ներմուծումը օրգանիզմ, նշանակել սիմպոտմատիկ և հակահստամինային պրեպարատներ, կատարել ստամոքսի լվացում և մաքրող հոգնա:

Հղիության ընթացքում նշանակվող դեղամիջոցները պտղի և սաղմի վրա կարող են թողնել բացասական ազդեցություն: Այդպիսի ազդեցությունը համարում են տերատոգեն (teratos - այլանդակ), կարող է նորածինների մոտ ի հայտ բերել տարրեր անոնալիաներ: Դեղանյութերը կարող են չթողնել տերատոգեն ազդեցություն պտղի վրա, այլ ցուցաբերել կողմնակի կամ թունավոր ազդեցություն՝ (օրի-

նակ, ստրեպտոմիցինի կիրառումը հղի կնօջ կողմից պարդի մոտ առաջացնում է խլություն): Որոշ դեղանյութեր կարող են առաջացնել գենետիկական ապարատի և սաղմային բջջի կայուն խախտում և ձևափոխել սերնդի գենոտիպը՝ առաջացնել նուտացիաներ: Դեղանյութերն անցնում են ինչպես ընկերով, այնպես էլ կերակրող մոր կաթով և թողնում անբարենպաստ ազդեցություն (օրինակ՝ պենիցիլինը՝ ալերգիաներ):

ՆԵՐԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ

Դեղորայքի պարէնթերալ ներմուծումը օրգանիզմ հիմնականում կատարվում է սրսկումներով՝ ենթամաշկային, միջմկանային, ներերակային, ներզարկերակային, ներոսկրային, խոռոչներ և այլն:

Ներարկումները հիմնականում անում են տարբեր տարրողության ներարկիչներով: Այժմ միանվագ ներարկիչներն ապահովված են լավ աննեխությամբ, թերև են և ամուր, ասեղները չժանգոտվող պողպատից են:

Մեծ տարածում են գտել շարից-պարկումները, որոնց գլխիկին պտուտակելով հազցված է ծայրակ՝ ներարկման ասեղով, որը պաշտպանված է գլխադիրով: Սրանք հարմար են առաջին օգնություն ցուցաբերելու համար:

Ներարկում կատարողը, պահպանելով աննեխության և հականեխության կանոնները, նախօրոք մաքուր լվացած ծեռքերով միանվագ ներարկիչի մեջ ասեղով քաշում է դեղալուծույթը ամպուլայից կամ սրվակից՝ ետ քաշելով շարիցի միսոցը: Յուղային և թանձր լուծույթները քաշում են առանց ասեղի: Դեղանյութը հավաքելուց հետո պետք է հանել օդը, ապա կատարել ներարկում:

Ենթամաշկային ներարկումները կատարում են հիմնականում բազկի դրսի կողմում, փորի մաշկի, թիակների տակ, ազդրի առաջնային դրսի մակերեսին: Քանի որ ենթամաշկային բջջանքը հարուստ է արյունատար անոթներով, դեղորայքի ավելի արագ ազդեցության համար կիրառում են ենթամաշկային սրսկումներ՝ սկսած թիչ քանակներից մինչև երկու լիտր հեղուկ: Չի թույլատրվում սրսկումներ անել այտուցված և նախորդ սրսկումներից դժվար ներծծման հետևանքով կարծուացած հատվածներում:

Մաշկը մանրակրկիտ մշակել սպիրտով թրջված բարձակով: Զախ ծեռքով մաշկը ենթամաշկի հետ բռնել՝ եռանկյունաձև ծալք առաջացնելով: Աջ ծեռքով բռնած ներարկիչը՝ 2-րդ մատը ասեղի կցորդիչին, 5-րդ մատը՝ միսոցին, (1-ին, 3-րդ, 4-րդ մատները դրված են շպրիցի ներարկիչ գլանին), արագ 30-45° անկյան տակ 1-2սմ խորությամբ ասեղը խրել ենթամաշկ, ապա ծախ ծեռքով սեղմելով միսո-

ցը՝ դանդաղ ներարկել դեղանյութը: Ներարկումից հետո կտրուկ դուրս հանել ասեղ, սրսկնան տեղը մշակել սահրտով:

Միջմկանային ներարկում: Դեղանյութերի միջմկանային ներարկումը ապահովում է ավելի արագ և լիարժեք ներծծում: Քանի որ մկաններն օժտված են մեծաքանակ արյունատար և լիմֆատիկ անորոշերով, ապա ստեղծում են բարենպաստ պայմաններ դեղերի լրիկ ներծծման համար: Միջմկանային սրսկումները կատարում են մարմնի որոշակի տեղերում, որտեղ լավ զարգացած մկանային հյուսվածքի հաստ շերտ կա, և խոչը արյունատար անորոշերն ու նյարդային բները բացակայում են: Միջմկանային սրսկումների համար հարմար տեղեր են հետույթի և ավելի հազվադեպ՝ ագդրի դրսի կողմն ու որովայնի մկանները: Սովորաբար միջմկանային սրսկումները կատարում են հետույթի մկանի վերևի դրսի քառորդում ավելի երկար 8-10 ամ ասեղով: Ծպիցը վերցնում են աջ ձեռքով՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մատներով (5-րդ մատը պահում է ասեղի կցորդիչը): Չախ ձեռքով սպիրոտի բամբակով մշակում են մաշկը, 2-րդ և 1-ին մատներով ծգում մաշկը և աջ ձեռքով շպիցը ուղղահայաց խրում մկան 5-6 ամ խորությամբ: Չախ ձեռքով մխոցը առաջ շարժում, ներարկելով հեղուկը: Սրսկելուց հետո ասեղը արագ շարժումով հանում են, մաշկը սպիրոտի բամբակով սեղմում ու մերսում:

Միջմկանային հաճախակի ներարկում են հակաբիոտիկներ: Վերցներս սրվակի մեջ բյութեղային փոշու տեսքով են: Կիրառելուց առաջ հակաբիոտիկները լուծում են համապատասխան լուժիչով, կամ նովոկայինի լուծույթով հետևյալ հաշվարկով՝ 100 000 ԱՍ հակաբիոտիկին տրվում է 1 մկ լուժիչ: Հակաբիոտիկները հաճախակի առաջացնում են ալերգիկ ռեակցիա, ինչը կանխելու համար պետք է նախօրոք հիվանդի մոտ որոշել ալերգիկ ռեակցիայի առկայությունը:

Հ. Վ. Հարությունյան,

Կ. Ռ. Նիկոլյան,

Ս. Ս. Շահինյան

**ՓՈԽԱՐԱՍԻՁՈՑՆԵՐ, ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԺԱՄԱՍԱԿԱԿՈՐ ԱՆՑԱՐԺԱՑՈՒՄԸ
ՉԵՌՔ ՏԱԿ ԵՂԱԾ ՍԻՁՈՑՆԵՐԸ**

**ԱՏԱՆԴՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՆՐԱՆՑ ԿԱԼՈՒԹՎԱԾՔԸ,
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ**

Պատգարակները հարմարանքներ են տուժածներին պառկած, նստած, կիսանստած դիրքերով փոխադրելու համար: Պատգարակները լայնորեն կիրառվում են հատկապես տրանսպորտով տեղափոխելիս:

Պատգարակներն ունեն պարզ կառուցվածք և հարմար են իդ-վանդներին տեղափոխելու համար:

Ստանդարտ սանհիտարական պատգարակը կազմված է երկու մետաղ կամ փայտ ծողերից, երկու պողպատե ծալովի ոտավոր հենարաններից, և հանովի պաստառից: Պատգարակի հենարանները նույնպես հանովի են: Նրանք ամրանում են ծողերին պնդողակներով ու իեղուսներով: Հենարանների հողակապերն ունեն զապանակային փականքներ (սողակներ), որոնք կանխում են պատգարակների ինքնուրույն փակվելը: Պաստառի երկու կողմերը կարգված են գրապանների ծևով, որոնց մեջ մտնում են պատգարակի ծողերը: Չողերի ծայրերին հազցնում են ռետինե ծայրապանակներ: Վերջիններս կանխում են մետաղ ծողերի սահելը ուսափոկերի վրայից և մեկուսացնում են մետաղի ջերմությունը: Պաստառի ոտքային և զիսային ծայրերին երկու կողմերից հեղուսներով ամրացած են բրեցնտե գոտիներ: Վերջիններին ծայրին կան ճարմանդներ, որոնց օգնությամբ կապում են փակ պատգարակները: Փակ պատգարակները կապելիս պատառը մնում է հենարանների հակառակ երեսին, այն ժալք են հավաքում, որպեսզի չկախվի: Պաստառի զիսային նասին կա գրապան, որը խոտով լցնելու դեպքում դառնում է բարձ:

Պատգարակը բացում են այսպես. երկու պատգարակակիրները քանդում են գոտիները, որոնցով կապված են պատգարակները, ապա բռնելով ծողերը կորերից, բացում են պատգարակը և ծնկով հրում հենարանները դեպի ներս, մինչև սողնակի չխկողը լսվի:

Պատգարակը փակում են այսպես. երկու պատգարակակիրները միաժամանակ բացում են սողնակները, հենարանները ծգում են դեպի իրենց և ծողերը մոտեցնում են իրար: Տուժածներին պատգառակներով տեղափոխելը հեշտացնելու համար օգտագործում են պատգարակային ուսափոկերը:

Պատգարակային ուսափոկը բրեգենտե գոտի է 360ամ երկառությամբ, 6.5ամ լայնությամբ, որի ծայրերին կա մետաղական ճարմանդ՝ ամրացնելու համար:

Տուժածներին տեղափոխելու համար պատգարակակիրները ուսափոկը հազցնում են այնպես, որ խաչվածքն ընկնի թիակի տակ, իսկ օղակները՝ կողըերից: Օղակների մեջ հազցնում են պատգառակների ծողիկների բռնակները: Այդ դեպքում պատգարակի ծանությունն ընկնում է տանողի ուսին: Զերքերով նա բռնում է պատգարակի ռետինե բռնակները:

Հիվանդանոցում ավելի հաճախ օգտագործում են անվավոր պատգարակներ կամ անվավոր բազկաթոռներ:

ՊԱՏԳԱՐԱԿԱՅԻՆ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅ ԳԵՏՍԻՑ ՊԱՏԳԱՐԱԿԻ ՎՐԱ

Պատգարակային տուժածների տեղափոխումը կատարվում է երկու կամ երեք պատգարակակիրներով: Գետնից պատգարակի վրա հիվանդին փոխադրելիս երկու պատգարակակիրները մոտենում են հիվանդին առողջ կողմից, իսկ պատգարակը դրվում է հակառակ կողմը: Երկուսով կանգնում են կողք-կողքի և չօքում մեկ ծնկի վրա: Վիրավորի գլխի մոտ գտնվողը մի ծեռքը անցկացնում է հրանի տակ (թիակների մոտ), մյուսը՝ գոտկատեղին: Ոտքերի մոտ գտնվողը մի ծեռքն անցկացնում է նստատեղի տակ, մյուսը՝ սրունքների տակ: Երկուսով զգուշորեն բարձրացնում են հիվանդին և պահելով նրան հորիզոնական վիճակում փոխադրում են պատգարակի վրա: Որպեսզի նրանց գործողությունները հանաձայնեցված լինեն, նրանցից մեկը հրահանգ է տալիս “Վերցրու”, “բարձրացրու”, “իշեցրու”:

Տուժածին գետնից պատգարակի վրա երեք հոգով տեղափոխումը կատարվում է հետևյալ եղանակով: Երեքով կողք-կողքի ծնկում են մեկ ծնկի վրա՝ հիվանդը առողջ կողմում: Պատգարակը դրվում է հակառակ կողմում հիվանդին զուգահեռ: Գլխի մոտ գտնվողը մի ծեռք դնում է պարանոցի վերին մասին և ծոծրակին, մյուսը՝ թիակների տակ: Երկրորդը՝ մեջտեղի գտնվողը մի ծեռքն անց է կացնում գոտկատեղի տակ, մյուսը՝ նստատեղին: Ոտքերի մոտ գտնվողը մի ծեռքն անց է կացնում ազդրերի տակ, մյուսը՝ սրունքների տակ, երեքով միաժամանակ բարձրացնում են մարմինը հորիզոնական վիճակում և դնում պատգարակի վրա:

ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅ ՊԱՏԳԱՐԱԿՆԵՐՈՎ

Հարթ տեղերում պատգարակը տանում են երկու սանիտարներ: Ախտահարվածին պատգարակի վրա դնելուց հետո տրվում է հրահանգ “տեղերում”: Սանիտարներից մեկը կանգնում է պատգարակի գլխային մասում, դեմքով դեպի ախտահարվածը, մյուսը՝ ոստքային մասում՝ մեջքով դեպի վիրավորը: Ապա նրանք կրանում են, ծալելով ծնկները, հազցնում են պատգարակի բռնակները ուսափուկերի օղերի մեջ և ծեռքերով բռնելով ծողերի բռնակները, ուղղվում են, բարձրացնելով պատգարակը և քայլում ոչ համաքայլ:

Ախտահարվածին պատգարակով տեղափոխում են ոտքերը առաջ դիրքով: Եթե տեղանքը անհարթ է, ցանկալի է, որ տեղափոխեն երեք-չորս հոգով: Բարձունք կամ աստիճաններով բարձրանալիս առա-

քաղիր է համարվում գլխային մասը (բացի այն հիվանդներից, որոնք ունեն ստորին ծայրանդամների վերքեր և սակավարյունություն):

Վայրէջք, վերելք կամ խորդութորդ ճանապարհներով գնալիս՝ միշտ պետք է պատզարակը պահել հորիզոնական վիճակում, դրա համար վերելքի ժամանակ վեր են բարձրացնում պատզարակի հետին մասը, իսկ հջնելիս՝ առաջնային մասը:

Քայլքի ժամանակ առջից գնացող պատզարակակիրը տեղեկացնում է հետևից եկողին ճանապարհների անսարքությունների, խոչընդոտների մասին: Եթե պատզարակակիրները կանայք են, պատզարակը պետք է տեղափոխեն չորսից ոչ պակաս ամճով:

Ախտահարվածին պատզարակով տեղափոխելիս պետք է հետևել նրա վիճակին, կապերի, շինաների սարքին վիճակին: Երկար ճանապարհ գնալիս պետք է փոխել հիվանդի դիրքը, ուղղել բարձը, ջուր խմեցնել (որովայնի վնասվածքների դեպքում արգելվում է), տաքացնել նրան՝ ծածկելով լրացուցիչ հագուստով:

Շարժման միջին արագությունը հարթ տարածքում 2.0-2.5 կմ/ժամ է, դատարկ պատզարակներով գնալիս՝ 4.5 կմ/ժամ: Անհարթ տարածքում և մութ ժամանակ արագությունը պակասում է:

Որոշ դեպքերում հնարավոր չէ հիվանդին տեղափոխելիս օգտագործել պատզարակ: Կիսաքանդված շենքերում, ներ, խորդութորդ անցումներում հարկ է լինում ախտահարվածին տանել քար տալով՝ կոնքի վրա պառկած դիրքում: Դրա համար սանիտարը պառկում է աջ կողքի վրա, աջ ոտքը ծալում է ծնկան հոդում ուղիղ անկյան տակ և աջ կողքի վրա դնում է ախտահարվածին՝ մեջքով դեպի իրեն: Իր ծախս ծեռքը անց է կացնում ախտահարվածի ծախսի տակով և բռնում է նրա աջ ծեռքի նախաբազուկը: Նա առաջ է հրվում ծախս ոտքով՝ հենվելով աջի վրա:

ՏՈՒԺԱԾՆԾՐԻՆ ՍԻՆՉԲԺԾԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ԿԱՍՎԱԾԹԱԾՈՒ ՂԵՊԹՈՒՄ

Ողնաշարի կոտրվածքներով տուժածին պատզարակի վրա են դնում որովայնի վրա պառկած վիճակում: Դա կատարվում է այսպես. գետնի վրա պառկած տուժածին երկու-երեք հոգով շրջում են որովայնի վրա և այս դիրքով զգուշորեն բարձրացնում ու դնում են պատզարակի վրա: Չի կարելի այսպիսի տուժածին մեջքի վրա պառկած դիրքով բարձրացնել ծեռքերից ու ուտքերից բռնած, քանի որ ողնաշարի կոտրվածքի տեղում կարող է առաջանալ ողերի տեղաշարժ, որը պատճառ կդառնա ողնուղեղի վնասման:

Եթե ողնաշարի կոտրվածքով տուժածին պառկեցնում են մեջքի վրա, ապա անհրաժեշտ է ողնաշարի համար անշարժ պայման ստեղծելու նպատակով պատզարակի վրա դնել հարթ տախտակ:

Ողնաշարի պարանոցային հալովածների կոտրվածքների դեպում տուժածին հարկավոր է տեղափոխել պատզարակի վրա և տեղափոխել մեջքի վրա պառկած դիրքով՝ պարանոցի տակ դնելով գլանածն բարձ (այն կարելի է փոխարինել հագուստով, սրբիչով): Այդ դեպում գլուխ փոքր-ինչ հետ է թեքվում, և դեմքը դեպի վեր է պարզվում:

Պարանոցի առաջնային նակերեսի վնասվածքներով տուժածին պատզարակի վրա են դնում և տեղափոխում կիսանստած դիրքով՝ գլուխը թեքած դեպի կրծքավանդակ: Կրծքավանդակի վերքերով տուժածին տեղափոխում են կիսանստած դիրքով՝ մեջքի տակ դնելով բարձ կամ փաթաթած հագուստ:

Գլխի վիրավորումներով տուժածին պատզարակի վրա են դնում ու տեղափոխում մեջքի վրա պառկած դիրքով՝ նախապես կատարելով գլխի անշարժացում բանբակ-թանգիֆային օղով կամ ոետինե փշված օղով: Կամ ծեղքի տակ ընկած իրերից (սրբիչ, սավան, հագուստ) պատրաստած գլանածն բարձիկով:

Եթե վնասված է ծոծրակային շրջանը, տուժածին պատզարակի վրա են դնում և տեղափոխում կողքի վրա պառկած դիրքով: Այսպիսի տուժածների մոտ հաճախ առաջանում է փսխում: Այս դիրքը կանխում է փսխվածքի անցումը շնչառական ուղիներ և շնչահեղծության առաջացումը:

Ծնոտի կոտրվածքներով վիրավորներին տեղափոխում են նատած դիրքով, գլուխ փոքր-ինչ առաջ թեքած: Եթե տուժածի մոտ կա գիտակցության կորուստ, ապա նրան աեւոք է տեղափոխել որովայնի վրա պառկած դիրքում, ճակատի ու կողքի տակ դնելով բարձիկներ կամ արմնեկային հողում ծալած ծեղքերը: Այս դիրքը կանխում է լեզվի ետ անկումը և փսխման նասսաներով խեղղվելու բարդությունը:

Տեղափոխումից առաջ անհրաժեշտ է կատարել ծնոտի անշարժացում: Այդ նպատակով վերին ծնոտի կոտրվածքի դեպքում ծնոտների արանքում դրվում է տախտակի մի կտոր և ամրացվում է գլխին: Ստորին ծնոտի կոտրվածքի դեպքում դրվում է պարսատիկածն վիրակած:

Կողերի և անրակի կոտրվածքների դեպքում տուժածին տեղափոխում են նստած, ծանր դեպքերում կիսանստած դիրքերով:

Որովայնի վնասվածքներով և կոնքի ոսկրերի կոտրվածքներով վիրավորներին պատզարակներով տեղափոխում են մեջքի վրա պառկած և ոտքերի ծնկային ու կոնք-ազդրային հողերում ծալած վիճակով, ծնկերի տակ դրվում է 20-30 սմ բարձրությամբ՝ ամուր

բարձ, ազդրերը փոքր-ինչ զատած վիճակում: Այս դիրքի շնորհիվ որովայնի, կոնքի, ազդրերի մկանները առավելագույն չափով թուլանում են և կոտրված ուսկրերի տեղաշարժն ու ներքին օրգանների վնասվելու հնարավորությունը: Ստորին վերջույթների կոտրվածքներով վիրավորներին տեղափոխում են մեջքի վրա պարկած, իսկ վերին վերջույթների կոտրվածքներով վիրավորներին՝ նստած:

Եւեկտոահարվածներին տեղափոխում են մեջքի վրա պարկած:

Թոքային արյունահոսությամբ հիվանդներին պատզարակներով տեղափոխում են կիսանստած վիճակում, մեծ զգուշությամբ, քանի որ անգամ փոքր ցնցումներից արյունահոսությունն ուժեղանում է:

Ստամոքսային արյունահոսությունների դեպքում հիվանդներին տեղափոխում են պատզարակի ոտքային մասը փոքր-ինչ բարձր դիրքում պահելով, որպեսզի ուղեղի սակավարյունություն չառաջանա:

Թունավորվածներին, աղիների անանցանելիություն, ճճլված ճողվածք, պերիտոնիտ (սուր որովայն) ունեցող հիվանդներին պետք է տեղափոխել պատզարակով մեջքի վրա պարկած դիրքով:

Ախտահարվածներին ու հիվանդներին պատզարակով երկար տարածություն տեղափոխելու համար անհրաժեշտ են չորս հոգի: Փոքր տարածություններ տեղափոխելիս՝ երկու հոգի:

Եթե պատզարակակալիրները չորսն են, ապա երկուսը տանում են պատզարակը, իսկ մյուս երկուսը գնում են պատզարակի կողքերից՝ բռնելով ծողերի միջին մասից: Ժամանակ առ ժամանակ զույգերը փոխվում են տեղերով:

Եթե ախտահարվածների և հիվանդների թիվը անշափ շատ է, ստանդարտ պատզարակները չեն բավարարի նրանց տեղափոխելու համար: Աղախիսի դեպքերում անհրաժեշտ է պատրաստել պատզարակներ ծեռքի տակ ընկած միջոցներով և տեղափոխել ախտահարվածներին ու հիվանդներին: Ասպիսի պատզարակներ սարքելու համար կարելի է երկու ամուր փայտ կամ մետաղե ծողեր հազցնել պաստարի դեր կատարող պարկերի, ներքնակների երեսների մեջ:

Եթե ընդամենը մեկ ամուր ծող կա, կարելի է ծողի ծայրերին կապել մեծ սավանն այնպես, որ առաջանա գամակ, որի մեջ դնում են ախտահարվածին:

Չողի ծայրերը դնում են ուսերին (երկու հոգով) և քայլում ոչ համաքայլ: Այս ձևով հիվանդներին տեղափոխելը հեշտ է հատկապես նեղ կածաններով, խորոշություղ ճանապարհներով գնալիս:

Ախտահարվածին կարելի է տեղափոխել նաև աթոռին նստած դիրքով:

Պատգարակների բացակայության դեպքում ախտահարվածներին տեղափոխելիս կարելի է լայնորեն օգտագործել պատգարակային ուսափոկերը: Եթե այդպիսիք չկան ծեռքի տակ, կարելի է պատրաստել իրար միացնելով 2-5 գրտի:

Ախտահարվածներին տեղափոխելու նպատակով օգտագործվող ուսափոկը ճարմանդով կապում են նրան տալով 8-ի կամ ողի ձև: Այս դեպքում, որպեսզի ուսափոկով ախտահարվածի տեղափոխումը հարմար լինի, անհրաժեշտ է այն ծիշտ չափերով կապել՝ հարմարեցնելով պատգարակակրի (սանհիտար) հասակին:

Ուսափոկը սանհիտարի չափերին հարմարեցնելու համար անհրաժեշտ է:

ա) Ուսափոկը 8-ծևով ծալելու դեպքում երկու ծեռքերը պարզել մինչև հորիզոնական վիճակ, փոկի ծայրերը հազընել ծեռքերի մեջ մատներին այնպես, որ ուսափոկը լինի ծգված վիճակում, չկախվի:

բ) Ուսափոկը ողի ծևով ծալելու դեպքում ծգել երկու ծեռքերի մեջ մատների միջև, ընդ որում ծեռքերից մեկը ուղիղ անկյան տակ ծալված է արմնկային հոդով, մյուսը՝ պարզած՝ հորիզոնական վիճակում:

8-ած ուսափոկը պետք է հազնել այնպես, որ խաչվածքը ընկնի մեջքին թիակների մակարդակով, իսկ հանգույցները՝ կողքերին:

Եթե ախտահարվածին ուսափոկով տեղափոխում են երկու սանհիտարներ, ապա ծալելով պատգարակային ուսափոկը 8-ի ծևով, հազընում են իրենց վրա այնպես, որ ուսափոկի խաչվածքը լինի երկուսի արանքում՝ կոնք-ազդրային հոդերի մակարդակին, իսկ ողն անցնի մեկի աջ, մյուսի՝ ձախ ուսով: Անուհետև երկուսով ծնկում են ախտահարվածի հետևում մեկը աջ, մյուսը՝ ձախ ծեռքով՝ նայելով միմյանց: Բարձրացնելով ախտահարվածին՝ նստեցնում են իրենց ծալված ծնկներին, ապա ուսափոկն անց են կացնում նրա նստատեղի տակ և կամքնում: Ախտահարվածը նստում է ուսափոկի խաչվածքի վրա:

Տուժածներին կարելի է տեղափոխել նաև առանց պատգարակների և առանց ուսափոկների: Այս տեղափոխումը կարելի է կատարել մեկ կամ երկու սանհիտարներով:

Մեկ սանհիտարը ախտահարվածին կարող է տեղափոխել հետևյալ մեթոդներով.

ա) Տուժածին նստեցնել բարձր տեղում, մեջքով շրջվել դեպի տուժածը, կանգնել նրա ութերի միջև և մեկ ծնկի վրա ծնկել: Ախտահարվածը բռնում է սանհիտարի ուսերից: Սանհիտարը գրկում է ախտահարվածի երկու ազդրերից և կամքնում:

բ) Սանհիտարն ախտահարվածի կողքին ծնկում է մեկ ծնկի վրա, իսկ ախտահարվածը գրկում է սանհիտարի ուսերը: Սանհիտարը կամքնում է:

գ) Սանհիտարն ախտահարվածին պառկեցնում է իր ուսին (գլուխը դեպի ցած), մի ծեռքով բռնելով նրա ազդերից, մյուսով՝ նրա ծեռքը: Այս մեթոդը հարմար է երկար ճանապարհ տեղափոխելու համար:

Ախտահարվածներին կարելի է տեղափոխել նաև ծեռքերի վրա նստած դիրքով: Այս մեթոդով մեկ հոգով տեղափոխելը դժվար է, ավելի հարմար է տեղափոխել երկու սանհիտարով: Սանհիտարները միացնում են իրենց ծեռքերն այնպես, որ ստացվի “կողպեք”-նստատեղ, որի վրա նստում է ախտահարվածը: “Կողպեք” կարելի է ստեղծել միացնելով երկու ծեռք (յուրաքանչյուր սանհիտարի մեկ ծեռքը), երեք ծեռք (մի սանհիտարի երկու ծեռքերը, մյուսի՝ մեկ) և չորս ծեռք (երկու սանհիտարի երկու ծեռքերը):

Առաջին դեպքում երկու սանհիտարների մեկական ծեռքերն ազատ են, որոնցով կարող են բռնել ախտահարվածին: Երկրորդ դեպքում ախտահարվածին կարող է բռնել մեկ սանհիտարը իր մի ազատ ծեռքով, իսկ երրորդ դեպքում՝ ախտահարվածը ինքն է գրկում սանհիտարների ուսերից:

Երկու օգնողներով ախտահարվածին կարող են տեղափոխել նաև այլ ձևերով:

1. Օգնողներից մեկը մոտենում է ախտահարվածին ետևից և ծալելով իր ծեռքերը արմնկային հողերում բռնում է ախտահարվածի թևատակերից: Մյուս սանհիտարը կանգնում է ախտահարվածի ոտքերի մեջտեղը, մեջքով դեպի նաև գրկում է նրա սրունքները, միասին բարձրացնում են ախտահարվածին և տանում:
2. Երկու օգնողներ մոտենում են ախտահարվածին նրա առողջ կողմից և ծնկում մեկ ծնկի վրա: Գլխի մոտ գտնվող օգնողը մի ծեռքը տանում է ախտահարվածի մեջքի, մյուս՝ գոտկատեղի տակ: Ոտքերի մոտ օգնողը մի ծեռքը տանում է ախտահարվածի նստատեղի տակ, մյուսը՝ սրունքների տակ: Օգնողները միասին ելնում են ոտքի: Այս մեթոդը կիրառելի է միայն փոքր տարածության վրա տեղափոխելիս:

4.Ա Մայման, բժշկ. գիտ. թեկն., Ա.Ա Հարությունյան

ԲՐՈՒՆԻՍՅԻՆ ԱՍԹԱՍ

Բրոնխային ասթման անընդհատ կրկնվող վարակային կամ ոչ վարակային բնույթի ալերգիկ հիվանդություն է, որը կիහնիկորեն դրսևո-

Վում է բրոնխների կծկանքի, նրանց լորձաթաղանթի այտուցի և մեծ քանակության լորձի պատճառով զարգացող շնչահեղծության նոպայով:

Առաջացման հիմնական պատճառը օրգանիզմի գերզայնությունն է վարակյախն կամ ոչ վարակյախն ալերգենների նկատմամբ: Նպաստող գործոններ են հանդիսանուած շնչական համակարգի վարակյախն ոչ բնորոշ ախտահարումները, ալերգիան, ԿՆՀ-ի խանգարումները և ժառանգական հակվածությունը:

Նշանները բրոնխային ասթմա դրսելորվում է բնորոշ շնչահեղծության նոպայներով: Նոպայի զարգացման ընթացքում տարբերում են երեք շրջան.

1. Նախանշանների շրջան. այս շրջանին բնորոշ է քթից առատ ջրիկ լորձարտադրությունը, փիշտողը, նոպայածն հազը, խորխարտադրության դժվարացումը, հևոցը, գրգռվածությունը, գունատությունը, սառը քրտինքը, մաշկի քորը, կոկորդի քերծման զգացումը:

2. Նոպայի զարգացման շրջան. այն սկսվում է արտաշնչական տիպի շնչահեղծությամբ և ուղեկցվում է կրծոսկրի հետևում ճնշման զգացումով:

Հետո և շնչահեղծությունը սկսվում է հանկարծակի, մեծ մասմբ գիշերը: Ներշնչումը դառնում է կարճ և ուժեղ, իսկ արտաշնչումը դանդաղ է և երկար, տարածության վրա լսվում են խորոններ:

Փորձելով հեշտացնել շնչառությունը, հիվանդը ընրունում է հարկադրական դիրք՝ նստած, իրանը առաջ թեքած, ծեռքերը աթորին կամ ծնկներին հենած: Նոպայի ժամանակ հիվանդի վիճակը ծանր է, դեմքը՝ գունատ, թերևակի այտուցված, կապտավուն, սառը քրտինքով պատաժ, վախի և անհանգստության արտահայտությամբ:

Հաճախ նոպայի ժամանակ հազի հետ արտադրվում է մեծ քանակությամբ խորխի: Անոթազարկը՝ թույլ լեցուն, արագացած, շնչառությունը հաճախ հաճախ հազվական (10-14 մեկ րոպեում) կամ հաճախ:

Երբեմն սուր նոպան վերածվում է ասթմային վիճակի: Շանր ընթացքի դեպքում մանր բրոնխների կծկանքի և խորխով խցանվելու պատճառով զարգացած շնչահեղծուկից հիվանդը կարող է հանկարծանահ լինել (հիպոքսիկ կոմա):

3. Նոպայի ետզարգացման շրջան, որը կարող է լինել հանկարծակի կամ ծգծզվել երկար ժամանակ: Սա պայմանավորված է բրոնխային ասթմայի առաջացման և զարգացման բազմազանությամբ:

Առաջին բուժօգնությունը նոպայի ժամանակ. կրծքի վանդակը ազատել ճնշող կապերից, ապահովել թթվածնով, կրծքի վանդակին դնել տաքացնող միջոցներ, ծեռքերին և ոտքերին տաք լոգանք, ինհալացիա, ցողացրիչներով դեղանյութերի ներմուծում, ներարկումների ձևով՝ բրոնխների կծկանքը վերացնող դեղանյութեր:

Նոպայից դուրս դեղամիջոցներին զուգահեռ հոգեթերապիա, կենսաբանական ակտիվ կետերի խթանում (ասեղնաբուժություն, էլեկտրասեղնաբուժում, աղահանքերում կլիմայաբուժում, առողջարանային բուժում, բուժական ֆիզկոլտուրա, մերսում, ֆիզոթերապևտիկ միջոցառումներ):

Ա.Ա. Հարությունյան

ԹՈԳԵՐԻ ՊԱԼԱՐԱՆՏ, ԹՈԹԱՆՏ (ՏՈՒԹԵՐԿՈՒՅՅՈՒՅ)

Դա խրոնիկական ընթացող հիվանդություն է, հայտնի է հնագոյն ժամանակներից: Հարուցիչը Կոխի ցուպիկն է, որը հայտնաբերվել է 1882թ.: Հիվանդության զարգացման համար մեծ նշանակություն ունեն սոցիալական պայմանները՝ սնունդ, օրգանիզմի վիճակը, միջավայրը: Խնֆեկցիայի աղբյուր է հանդիսանում հիվանդ մարդ կամ կենդանին:

Հարուցիչները օրգանիզմ են թափանցում վերին շնչառական ուղիներով, երբեմն լորձաթաղանթի, մաշկի, հազվադեպ՝ պլացմատայի միջոցով:

Խնֆեկցիայի զարգացման համար տարբերում ենք վարակման արտաքին և ներքին ուղիներ՝

1. արտաքինը՝ դա հիվանդի հետ շփումն է.
2. ներքինը՝ տուբերկուլյոզի ռեակտիվացիան է:

Այն տուբերկուլյոզի առաջնային պրոֆիլակտիկայի հետևանք է, որը կատարում են նորածիններին ԲԹԺ-ի վակցինացիայով:

Նշանները՝ ընդհանուր թուլություն, ախտրժակի անկում, քրտնարտադրություն, սուբֆեբրի ջերմություն, հազ, խորխարտադրություն, հետազոտում արյունային, ծանր դեպքերում՝ թոքային արյունահոսություն, թոքային հյուսվածքի քայլայնան հետևանքով: Անհրաժեշտ է անհետաձգելի օգնություն:

ԹՈԹԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՅՈՒՆԱԽԱՆՈՒՄ

Թոքային արյունահոսությունը և արյունախոսումը ինքնուրույն հիվանդություններ չեն, այլ հանդիպում են թոքերի պալարախստի, քաղցկեղի, թարախակալման, փտախստի ժամանակ, որպես բարդություն:

Արյունախսման ժամանակ վնասվում են մանր անոթները և արյունը լինում է թելիկների ծևով խորխի հետ, իսկ արյունահոսությունը լինում է այսպես կոչված լիքը բերանով, եթե վնասվում են թոքային հյուսվածքի ավելի խոշոր անոթներ:

Թոքերից արյունահոսությունը պետք է տարբերել ստամոքսից եկած արյունից: Թոքային արյունահոսության ժամանակ արյունը լինում է ալ գույնի, փրփրավուն, կիմնային ռեակցիայով: Իսկ ստամոքսից եկած արյունը լինում է մուգ գույնի, պարունակում է սննդի մնացորդներ և ունի թքու ռեակցիա:

Տևական և առատ արյունահոսության ժամանակ, եթե ժամանակին ցույց չտրվի բուժօգնություն, կարող է զարգանալ սուր սակավարյունություն: Առաջին հերթին հիվանդի համար պետք է ստեղծել հոգեկան և ֆիզիկական հանգստի պայմաններ, սահմանել անկողնային ռեժիմ՝ հարկադրական դիրքով, կիսանստած: Չի թույլատրվում խոսել, ծխել, տաք հեղուկներ ընդունել: Պետք է սահմանափակել շարժումները: Հիվանդի կրծքավանդակին դնել սառը՝ սաղցարկ, կարելի է տալ սահմանափակ քանակությամբ սառը ջուր, տալիս են նաև խիտ նատրիում քլորի լուծույթ (մեկ ճաշի գդալ կես քածակ ջրում): Շուտափույթ թերապևտիկ միջոցառումներն են ներերակային 10մ/ 10%-անոց CaCl_2 -ի, 10%-անոց NaCl -ի լուծույթների, վիկասուի միջմկանային, ծիաշիճուկի ներարկումները, հեմոստատիկ դոզայով (100-150մ/յ) արյան փոխներարկումը: Ժելատին, ռուտին, ասկորբինաթթու, սրտային միջոցներ տալիս են անհրաժեշտության դեպքում: Եթե արյունահոսությունը հետևանք է թոքերի պայարախտի, հաճախ կատարում են արհեստական պնևմոթրորաք (պլերալ խոռոչում օդի ներմուծում), որը ճնշում է թոքերին և նպաստում արյունահոսության դադարեցմանը:

Հիվանդները պետք է լինեն խիստ հսկողության տակ:

ԾՆՅՈՒՂԻՄԵՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ ՕՏԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ

Ծնչառության խանգարումների պատճառ կարող են լինել տրավման, այտուցք, լեզվի բորբոքումները, լեզվի ետ անկումը, արյունահոսությունը, ինֆեկցիան և այլն:

Երբ շնչառողում առկա է օտար մարմին, ապա տուժածի մոտ լինում է հազ, չի կարողանում խոսել, առկա է կապտություն, խանգարվում է շնչառությունը:

Անմիջապես բռունքրով մի քանի անգամ պետք է հարվածել մեջքին, եթե շնչառության խանգարման երևույթները շարունակվում են, ապա պետք է կատարել ԹԱԾ, եթե օդը դժվարությամբ է գնում, նշանակում է կա խոչընդոտ: Ծնչուղիներում օտար մարմնի առկայության դեպքում, այն հեռացնելու համար դիմել Հայմլիկի մեթոդին՝ ստոծանու օգնությամբ ակտիվ արտաշնչում առաջացնելով:

I. ԵՐԲ ՏՈՒԺԱԾԻ ՄՈՏ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՍԿԱԾ Է

1. Տուժածը նստած է կամ կանգնած.
2. Կամզմել տուժածի հետևում, ոտնաթաթերը տեղադրել տուժածի ոտնաթաթերի միջև.
3. Գրկել տուժածին գոտկատեղից.
4. Անել բռունքը (մեծ մատը պահելով մյուս մատների տակ), մեծ մատով սեղմել որովայնի միջին գծով պորտի և կրծոսկրի թրածն ելունի արանքուն ավելի մոտ պորտին, կատարել հրոցանման շարժումներ դեպի ներս և վեր.
5. Հրոցները շարունակել մինչև օտար մարմնի հեռացումը կամ տուժածի շնչառության վերականգնումը:

II. ԵՐԲ ՏՈՒԺԱԾԸ ԿՈՐՉՐԵԼ Է ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵԿՅԱԼ ՄԻՋՈՑԱՊՈՒՄՆԵՐԸ

1. Տուժածին պառկեցնել մեջքի վրա:
2. Ուղղահայաց նստել տուժածի ազդրերին, ծնկներով հենվելով հատակին: Մի ձեռքի ափը դնել որովայնի միջին գծին պորտից մի փոքր վեր:
3. Մյուս ձեռքի ափով կատարել հրոցանման շարժումներ, ուղղված դեպի գլուխը հինգ անգամ:

Ուշադրություն՝ որպեսզի ստանոքսի պարունակությունը չանցնի բերանի խոռոչ կամ շնչառական ուղիներ, ամեն հինգ հրոցից հետո պետք է ստուգել բերանի խոռոչը:

**Զ.Ա. Մամյան, բժշկ. գիտ. թեկն.,
Ա.Ա. Հարությունյան**

ՄՐՏԻ ԻՇԵՄԻԿ ՀԻՎԱՆԴԻԹՅՈՒՆԸՐ

Մրտի իշեմիկ հիվանդությունը սրտամկանի սուր կամ քրոնիկ ախտահարում է, որը պայմանավորված է սրտամկանի որևէ հատվածի արյան մատակարարման մասնակի կամ լրիվ անբավարությամբ: Այս հիվանդության առաջացման և զարգացման մեջ կարևոր դեր են խաղում սրտամկանը սնուցող պսակածն անորների ինչպես ֆունկցիոնալ (գործառնական), այնպես էլ օրգանական փոփոխությունները: Այսպես օրինակ, օրգանիզմի նյարդա-հոգեկան լարումները, գերիզմածությունը, առաջ բերելով ԿՆՀ-ի ֆունկցիոնալ

փոփոխություններ, կարող են հանգեցնել ամբողջ օրգանիզմի նյարդա-հորմոնալ համակարգի հավասարակշռված վիճակի խախտման: Սրտի իշեմիկ հիվանդության առաջացման գործում մեծ դեր ունի պսակածն անորների աթերոսկլերոզը, որը ճարպային փոխանակության խանգարման արդյունք է: Աթերոսկլերոզի հետևանքով նեղանում է պսակածն անորների լուսանցքը և խանգարվում արյան շրջանառությունը:

Սրտի իշեմիկ հիվանդության ռիսկի գործուներն են՝

1. արյան մեջ խոլեստերինի բարձրացումը,
2. արյան ճնշման բարձրացումը,
3. ծխելը,
4. ֆիզիկական շարժումներից աղքատ կենսակերպը,
5. ճարպակալումը:

Կրծքային հեղծուկ-ստենոկարոյիա. Կիහնիկական հիմնական արտահայտությունը կրծքային հեղծուկի նոպան է, որին բնորոշ է կրծքավանդակում տեղակայված ցավը, որը առաջանում է ժամանակ առ ժամանակ և կենտրոնանում է կրծոսկրի հետևում, այն տարածվում է դեպի երկու ուսագլուխները, թերը, ծնոտը և ատամները: Սակայն ցավը կարող է տեղակայվել նաև ստամոքսի շրջանում կամ կրծոսկրից ծախ և ճառագյթվել միայն դեպի ծախ ուսը, ծախ թիակը և ծախ արմնկային հողի շրջանը: Ցավերը մեծ մասամբ լինում են սեղմող, ճնշող բնույթի, և ընդգրկում են մեծ մասամբ կրծքավանդակի առաջնային հատվածը, երբեմն հիվանդների մոտ այն տպավորությունը է ստեղծվում, որ ցավերը կապ չունեն սրտի հետ:

Կրծքային հեղծուկի նոպան կարող է կապված լինել նյարդա-հոլոգական լարումների կամ ֆիզիկական բեռնվածության հետ: Ուստի տարբերում ենք «հանգստի» և «լարվածության» կրծքային հեղծուկ:

Լարվածության կրծքային հեղծուկ. այս ծևը շատ է տարածված և կապված ֆիզիկական լարումների՝ քայլելու, որևէ բարձրություն հաղթահարելու հետ: <Եղծուկին նպաստում է լիքը ստամոքսը և ցուրտը: Ցավը ստիպում է հիվանդին կանգ առնել, խորը շնչել և մեծ մասամբ 3-5 րոպեից ցավը անցնում է: Նոպայի ժամանակ նկատվում է սաղը քրտինք, գունատություն, հիվանդն անշարժանում է, ունենում է վախի, սարսափի զգացում:

Լարվածության կրծքային հեղծուկն ըստ ծանրության լինում է I, II, III, IV աստիճանի: Վերջինս համարվում է հանգստի կրծքային հեղծուկ:

Առաջին բուժօգնությունը. լեզվի տակ դնել նիտրոգլիցերինի կամ վալիտոլի հար, կրծքավանդակը ազատել ճնշող կապերից և դնել տաքացնող միջոցներ:

Հանգստի կրծքային հեղծուկ. այս դեպքում կրծքահեղծուկի նոպաներն առաջանում են հանգստի պայմաններում, քնած վիճակում, երբ չկան ֆիզիկական լարումներ: Սա նշանակում է, որ պատկածն անոթներում կան օրգանական փոփոխություններ, որի հետևանքով նույնիսկ առանց լարումների սրտամկանի արյան մատակարարումը վատ է կատարվում: Երբ հանգստի հեղծուկի նոպաները հաճախակի են, ապա դա դիտվում է որպես հնարավոր նախանշան սրտամկանի ինֆարկտի առաջացնան:

Առաջին բուժօգնություն. անմիջապես դնել նիտրոգլիցերինի հար լեզվի տակ, կրծքի վանդակը ազատել ճնշող կապերից, ապա-հովել մաքուր օդով, օգտագործել տեղական տաքացնող միջոցներ սրտի շրջանում:

Եթե մեկ ժամվա ընթացքում ձեռնարկված միջոցները արդյունք չեն տալիս, դա նշանակում է, որ նախահնֆարկտային վիճակ է:

4.Ա. Մամյան, բժկ. գիտ. թեկն.

ՍՐՏԱՄԿԱՆԻ ԻՆՖԱՐԿՏ

Սրտամկանի ինֆարկտը արյան անբավարար մատակարար-նան հետևանքով առաջացած սրտամկանի այս կամ այն հատվածի մեռուկացումն է:

Արյան անբավարար մատակարարման հիմնական պատճառը պսակածն անոթների աթերոսկլերոզն է, որը նեղացնում է զարկերակների լուսանցքը, իսկ երբեմն էլ լրիվ փակում:

Ինֆարկտային օջախում առաջացած փոփոխություններն անվերադր են և ավարտվում են ախտահարված մկանաթելերի մահացմամբ: Լավագույն դեպքում, հետազայում, նրանց տեղը առաջանում է շարակցական հյուսվածք, այսինքն՝ սպի:

Նշանները. սրտամկանի ինֆարկտի հիմնական նշանը ցավն է, որը իր բնույթով և տեղակայումով հիշեցնում է կրծքային հեղծուկին: Ցավը լինում է ճնշող, սեղմող բնույթի, տեղակայվում է կրծոսկրի հետևում և ճառագայթում դեպի ծնուտը, պարանոցը, ուսերը, երկու ծերքերը: Դրանք շատ ուժգին են, չեն ենթարկվում նիտրոգլիցերինի ազդեցությանը: Հիվանդները ունենում են մահվան վախի, սարսափի զգացում, լինում են գրգռված, անհանգիստ, մաշկը լինում է գունատ, պատված սառը քրտինքով, լինում է գլխապտույտ, զարկերակային արյան ճնշումն ընկնում է, անոթազարկը արագացած, առիթմիկ, ու-

նենում են հազ, շնչառության խանգարումներ, հեղոց, օդի պակասություն, գիտակցության մթագնում կամ կորուստ, մարմնի ջերմաստիճանի բարձրացում: Որոշ դեպքերում այս երևույթները ուղեկցվում են սրտխառնոցով, փսխումով: Ցավերի և անոթային սուր անբավարության հետևանքով կարող է առաջանալ սրտային շոկ, որը հաճախ բերում է մահվան:

Տարբերում են կլինիկական ընթացքի մի քանի տարատեսակներ՝ ցավային, ստամոքսային, ասթմատիկ, ուղեղային, առիթմիկ:

Սրտամկանի ինֆարկտի ժամանակ քննության ամենահիմնական միջոցը հանդիսանում է էլեկտրասրտագրությունը, որի օգնությամբ արձանագրվում է ինֆարկտի առկայությունը, տեղակայումը, մեծությունը և խորությունը:

Առաջին բուժօգնությունն սրտամկանի ինֆարկտի ժամանակ պետք է անհապաղ վերացնել ցավային նույան, որքան արագ այնքան արդյունավետ, որովհետև ուժեղ ցավը կարող է բերել ռեֆլեքսային շոկի առաջացման:

Ցավը հանգստացնելու համար պետք է տալ ցավազրկողներ, ինչպես նաև լեզվի տակ դնել նիտրոգլիցերինի հաբ, կարելի է այն կրկնել երեք անգամ 15 րոպե ընդմիջումով: Կարելի է տալ նաև մեկ հաբ ասպիրին, վալերիան:

Զ.Ա. Մամյան, բժշկ. գիտ. թեկն., Ա.Ա. Հարությունյան

ԱՆՌԹԱՅԻՆ ՍՈՒՐ ԱՆԲԱՎԱՐԱՊՈՒԹՅՈՒՆ

Անոթային սուր անբավարարությունը զարկերակների և երակների տոնուսի անկում է, որը բերում է արյան անբավարարության: Այն արտահայտվում է 3 ծևող՝ ուշագնացություն, կոլլապս, շոկ:

Ուշագնացության պատճառ կարող են լինել՝ վախ, անհանգստությունը, գերհոգնածությունը, անքնությունը, ուժեղ ցավը, բարձր ջերմաստիճանը, արևահարությունը, թթվածնի քաղցը, երկարատև ոտքի վրա մնալը:

Նշանները հանկարծակի առաջանում է սրտխառնոց, աղմուկականցներում, գլխապտույտ, կարձատև գիտակցության կորուստ, որն ուղեկցվում է մաշկի և լորձաթաղանթների գունատությամբ, արյան ճնշումն ընկած է, վերջույթները լինում են սառը, շնչառությունը մակերեսային, անոթազարկը դանդաղ և ոչ լեցուն:

Մի քանի րոպե անց հիվանդի ինքնազգացումը բարելավվում է, բայց որոշ ժամանակ պահպանվում է ընդհանուր թուլությունը, գլխապտույտը, մարմնի ջարդվածությունը:

Մինչքական օգնություն. մարմինը ազատել ճնշող, սեղմող հագուստից, ապահովել թթվածին մուտք, գլուխն իջեցնել, ուժերին բարձր դիրք տալ: Թթին մուտեցնել անուշաղրի սպիրոտվ թթված բամբակը, դեմքին դնել սառը թթոցըներ:

Կոլլապի պատճառ կարող է լինել՝ արյունահոսությունը, սրտամկանի ինֆարկտը, ինֆեկցիոն հիվանդությունները, թթաբորբերը, թունավորումները, որոնք առաջացնում են արյան անորբների տոնուսի անկում, որը թթում է գլխուղեղում թթվածնային քաղցի, որից էլ խանգարվում է կենսական կարևոր օրգանների գործունեությունը:

Նշանները՝ դեմքի մաշկը գունատ, կապտավուն, պատաժ սառը քրտինքով, շրթունքները, քթի ծայրը կապույտ, աչքերը փոս ընկած, մարմնի ջերմաստիճանը ցածր, գիտակցությունը պահպանված, շնչառությունը՝ հաճախացած, մակերեսային, անորթազարկը՝ արագացած, դիմագծերը՝ սրված, գարկերակային ճնշումը՝ ընկած: Հիվանդը արգելակված է, հարցերին պատասխանում է դժվարությամբ:

Առաջին բուժօգնություն. պետք է վերացնել կոլլապս առաջանող պատճառը, երբ այն առաջացել է ցավից, անհրաժեշտ է օգտագործել ցավազրկող հաբեր, եթե սննդային թունավորումից է, ապա կատարել ստամոքսի լվացում, տալ աղային լուծողականներ, մեծ քանակությամբ հեղուկներ: Արյունահոսության դեպքում դիմել արյուն կանգնեցնող միջոցների: Հիվանդին տալ հորիզոնական դիրք, գորիսը թթվակի իջեցրած, ազատել սեղմող կապերը, տալ թթվածին, ուժերին դնել զեռակներ, տալ խմելու քաղցր թեյ:

Ենու. տարբերում ենք տարբեր ծևերի շոկ՝ վնասվածքային, սրտային, անաֆիլակտիկ (տես «Վնասվածքային շոկ»):

**Զ.Ա. Մամյան, բժշկ. գիտ. թեկն.,
Ա.Ա. Հարությունյան**

ԳՊԵՐՏՈՒԽԿ ՀԻՎԱՆԴՅԱՆԹՅՈՒՆ

Հիպերտոնիկ հիվանդությունը օրգանիզմի ընդհանուր ախտաբանական վիճակն է, որի ժամանակ ամենահիմնական ախտանիշը արյան զարկերակային ճնշման կայուն բարձրացումն է: Սա արնատապես տարբերվում է այսպես կոչված ախտանշանային (Երկրոր-

դային) հիպերտենզիաներից, որոնց հիմքում ընկած է տարբեր օրգանների ախտահարումը:

Հիպերտոնիկ հիվանդությունը պատկանում է սիրտ-անորային համակարգի ամենատարածված հիվանդությունների շարքին: Ավելի հաճախ հանդիպում է տարիքավոր անձանց մոտ, կանայք և տղամարդիկ հիվանդանում են համարյա հավասարապես:

Հայտնի է, որ արյան զարկերակային ճնշման վրա ազդում են մի շարք գործոններ՝ ֆիզիկական ծանրաբեռնվածության աստիճանը, հոգական վիճակը, շրջապատի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշման մեծությունը: Զարկերակային արյան ճնշումը տատանվում է օրվա տարբեր ժամերին, քնած կամ արթուն ժամանակ, կախված է նաև տարիքից:

Պատճառները. ըստ հիպերտոնիկ հիվանդության նյարդային տեսության գլխավոր պատճառական գործոնը երկարատև հոգական գերլարվածությունն է, որը բերում է բոլոր մանր անոթների կծկանք, և որպես հետևանք բարձրանում է զարկերակային ճնշումը: Հիմնական գործոններից է նաև աթերոսկլերոզը և օրգանիզմի նախատրամադրվածությունը:

Հիվանդության առաջացմանը նպաստող գործոններ են ճարպակալումը, կերակրի աղի չափից ավելի օգտագործումը և այլն:

Հիպերտոնիկ հիվանդության ախտածագման մեջ կարելի է ընդգծել երեք կարևորագույն օղակ.

1. Կենտրոնական (գլխուղեղ),
2. հումորալ (արյան միջոցով),
3. անորաշարժ:

Նշանները. հիպերտոնիկ հիվանդությունը անցնում է շրջաններով. առաջին շրջանում զարկերակային արյան ճնշման բարձրացումը անկայուն է և մեծ մասամբ դեղանիցոցների ընդունման կարիք չի լինում: Երկրորդ շրջանում հիպերտոնիկ հիվանդությամբ տառապողների գանգատներն ունենում են կայուն բնույթ: Սրանք սովորաբար բազմազան են: Ավելի հաճախ հիվանդը զանգատվում է տարբեր տեղակայման և ուժգնության գլխացավերից: Լինում են գլխացավեր ակնակապձի, ծոծրակի շրջաններում: Հիվանդները գանգատվում են նաև գլխապտույտից, ականջներում և գլխում խշշողի ու աղմուկի զգացումից, աչքերի առջև թրթրողից, սրտի շրջանի ցավերից, սրտի խփողից, հևոցից, գոտկային շրջանի բութ ցավերից, ընդհանուր թուլությունից ու անքնությունից:

Այս շրջանը բնորոշվում է նրանով, որ բարձրանում է ինչպես սիստոլային, այնպես էլ դիաստոլային ճնշումը, բարձրացումն ունե-

նում է կայուն բնույթ, որն ուղեկցվում է անոթների օրգանական ախտահարմամբ: Կախված նրանից, թե որ օրգանների ախտահարումն է զերակշռում, տարբերում ենք հիպերտոնիկ հիվանդության սրտային, ուղեղային և երիկամային ձևերը:

Հիպերտոնիկ հիվանդության կլինիկայում հատուկ նշանակություն պետք է տալ հիպերտոնիկ կրիզներին, այսինքն՝ հիվանդության կարճատև սրացումներին, երբ տեղի է ունենում արյան զարկերակային ճնշման կտրուկ բարձրացում:

Առաջին բուժօգնությունը հիպերտոնիկ կրիզների ժամանակ քանի որ հիպերտոնիկ կրիզները հաճախ կյանքին վտանգ են սպառնում, ապա դրանք կարիք ունեն միջամտության: Հիվանդին պետք է տալ ֆիզիկական և հոգեկան հանգիստ, նստած դիրք, ծոծրակին, գոտկատեղին, ոտքերին դնել տաքացնող միջոցներ: Դեղամիջոցներից՝ արյան զարկերակային ճնշումը իջեցնողներ, անոթալայնիչներ, միզամուղներ:

4.Ա. Հարությունյան

ԵՐԻԿԱՄԱՔԱՐԱՅԻՆ ԺՎԱՍԴՈՒԹՅՈՒՆ (ԵՐԻԿԱՄԱԽԻԹ)

Բնորոշվում է քարերի առաջացումով երիկամի ավագանում և միզուլիների վերին հատվածներում: Քարերը կարող են լինել եզակի կամ բազմաթիվ: Քարեր կարող են առաջանալ ինչպես մեկ, այսպես էլ երկու երիկամում միաժամանակ: Ըստ կազմության քարերը լինում են ուրատներ, օքսալատներ, ֆոսֆատներ, կարող են լինել սուլֆամիդային և խոլեստրինային բնույթի, երեմն լինում են խառը կազմության, այսինքն կազմված են լինում վերը նշված 2-3 աղերից: Ըստ մեծության քարերը լինում են ավագի հատիկի մեծությունից մինչև նորածին երեսայի գլխի մեծության:

Ծագումնաբանություն. համաձայն վերջին տարիների տեսության՝ քարերի առաջացնան հիմքում ընկած է երիկամների վիրուսային ախտահարումը: Նշանակություն ունի նաև նյութափոխանակության խանգարումները, նյարդային և էնդոկրին խանգարումները, մեզի ռեակցիայի խանգարումները:

Նշաններ. հիվանդությունը կարող է ընթանալ գաղտնի, առանց որևէ կլինիկական նշանի և պատահական ռենտգեն քննությամբ միայն կարող են հայտնաբերել, որ հիվանդի մոտ կա երիկա-

մաքարային հիվանդություն: Սովորաբար հիվանդությունը ընթանում է երիկամային խիթ նոպաներով: Միջնոպային շրջանում հիվանդները նշում են գոտկային շրջանի բութ բնույթի ցավեր:

Նոպաները լինում են սուր,, գրգռիչ սննդի, ոգելից խնիչքի, ծանր ֆիզիկական աշխատանքի, մրսածության հետ կապված: Ցավերը խիստ ուժեղ են, տեղակայված գոտկային շրջանում և տարօպւում են դեպի աճուկը, սեռական օրգանները, ազդրի ներսային երեսը: Հիվանդը խիստ անհանգիստ է, թափալվում է անկողնում, տեղը չի գտնում, փնտրում է ցավերը մեղմացնող դիրք, ծանր դեպքերում լինում է ռեֆլեկտոր սրտխառնություն և փսխում, քչանիզություն, երբեմն անմիջություն: Հիվանդի դեմքը լինում է կարմրատակած, լեզուն չոր, որովայնը չափավոր արտափքված, ուժեղ նոպաների ժամանակ՝ որովայնի մկանների լարում: Նոպայից հետո մեզի քննությամբ հայտնաբերվում է արյունամիզություն, որը պայմանավորված է քարի շարժման հետևանքով միզուլիների լորձաթաղանթի վնասմամբ:

Առաջին բուժօգնությունը երիկամախիթի նոպայով տառապող հիվանդը պետք է ստանա անհետածգելի օգնություն: Հիվանդը պետք է ընդունի տաք լոգանք կամ գոտկատեղին պետք է դրվի տաք ջեռակ: Պետք է կատարվի ցավազրկող դեղամիջոցների՝ բարագինի, պրոմեդոլի ներարկումներ, սպազմը հանող դեղամիջոցների՝ ատրոպինի, նոշպայի ներարկումներ:

Նոպայից դուրս հիվանդը պետք է պահպանի համապատասխան դիետա: Ուրատային քարերի դեպքում սահմանափակվում են մսեղենի, ծկնեղենի ընդունումը, նշանակվում է կաթնաբանջարեղենային դիետա, հանքային ջրեր՝ եսենտուկի -17, Բորժոմ: Օքսալատային քարերի դեպքում՝ սահմանափակվում են կաթի, հոլմ ծվի, կարտոֆիլի, գազարի, բազուկի կիրառումը: Բացառվում է շոկոլադը: Խորինուրդ է տրվում օգտագործել մեծ քանակությամբ հեղուկներ: Ծանր դեպքերում՝ վիրաբուժական միջամտություն:

**Գ.Ա. Մամյան, բժկ. գիտ. թեկն,
Կ.Ս. Հարությունյան.**

ԽՈԳԱՅԻՆ ՀՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոցային հիվանդությունը քրոնիկ ախտաբանական վիճակ է, մարսողական համակարգի ամենատարածված հիվանդություններից մեկն է: Գերազանցապես համեղապում է մինչև 50 տարեկան տղամարդկանց մոտ: Խոցային հիվանդության դուրսնենալ տեղակայումը 4-5 անգամ հաճախ է հանդիպում, քան ստամոքսային տեղակայումը:

Ախտաժագումբ՝ խոցային հիվանդության առաջացման գործում կարևոր դեր ունեն.

1. հեղիկոբակտերային վարակը,
2. նյարդակնողության հանակարգի վիճակը,
3. ժառանգական նախահակվածությունը:

Ըստ կլինիկական ընթացքի խոցային հիվանդությունը լինում է՝

1. սուր կամ առաջին անգամ հայտնաբերված,
2. քրոնիկական:

Վերջինս կարող է լինել սրացման շրջանում կամ մարման շրջանում:

Խոցը կարող է տեղակայված լինել ստամոքսի անտրոպի, կարողական, պիլորիկ հատվածում, փոքր և մեծ կորությունների վրա, մարմնի վրա, 12-մատնյա աղու կոճղեզի շրջանում, առաջային և հետին պատի վրա:

Խոցի մեծությունը կարող է տատանվել 0,5 սմ 3,0 սմ:

Նշանները՝ խոցային հիվանդության սրացման դեպքում հիվանդի գանգատմանը առաջատար ցավն է: Ցավերի պարբերականությունը հաճախ ունի սեզոնային բնույթ, ընդ որում, առավել գերակշռող գարնան-աշնանային սրացումներն են:

Ցավի մյուս բնորոշ գիծը նրա առաջացման և վերացման որոշակի ռիթմն է՝ կապված սննդի ընդունման և բնույթի հետ: Ցավի առաջացման ժամկետը նույնիսկ կարող է օգնել խոցի տեղակայման որոշման մեջ: Ստամոքսի, մարմնի և մուտքի տեղակայման դեպքում ծագում է վաղ ցավ՝ սննդի ընդունումից 0,5-1 ժամ անց, որն աստիճանաբար ուժեղանում է, ապա վերանում՝ ստամոքսի դատարկմանը գուգընթաց: Ուշացած կամ «գիշերային, քաղցած» ցավերը բնորոշ են ստամոքսի ելքի և 12-մատնյա աղու կոճղեզի խոցերին, ծագում են սննդի ընդունելուց 1,5-2 ժամ անց: «Քաղցած» ցավը սովորաբար վերանում է սննդի ընդունումից անմիջապես հետո:

Ցավի ուժգնությունը և ճառագայթումը կախված է խոցի խորությունից և լորձաթաղանթի բորբոքային պրոցեսից: Եթե խոցը մակերեսային է, այսինքն տեղակայված է միայն լորձաթաղանթում, ապա ցավը ընդերային բնույթ ունի, կապված է միայն սննդի ընդունելու հետ և բացակայում է ճառագայթումը: Եթե խոցը խորն է, ընդգրկում է պատի մյուս՝ մկանային, շճային շերտերը, ապա ցավերը ունենում են ճառագայթող բնույթ, ժամանակ առ ժամանակ խիստ ուժեղանում են, ցավի ռիթմը դառնում է անկանոն, վերանում է կախվածությունը սննդի ընդունումից: Եթե ախտաբանական պրոցեսի մեջ ընդգրկվում են նաև որովայնամիզը, որը լինում է բարդացած խոցերի դեպ-

քում, ապա լինում են խիստ ուժեղ սոմատիկ ցավեր սահմանափակ տարածության վրա:

Խոցային հիվանդության չբարդացած ձևերի ժամանակ լինում են նաև մի շարք դիսպեստիկ բնույթի խանգարումներ՝ այրոց, փսխում, սրտխառնություն և գլուց:

Այրոց ստամոքսի կարդիալ ֆունկցիայի անբավարարության հիմնական նշաններից մեկն է, լինում է նաև մարտողական օրգանների այլ հիվանդությունների ժամանակ, կարող է հանդես գալ ցավերի հետ կամ առանց ցավերի: <Հանդիպում է խոցային հիվանդությամբ տառապողների 30-80%-ի մոտ: Պայմանավորված է ստամոքսի պարունակության հետընթաց տեղաշարժով դեպի կերակրափող: >

Սրտխառնությունը, փսխումը և գլուցոց առավել հանդիպում են բարդացած խոցային հիվանդության դեպքում: Եթե այն առաջացել է սրացման շրջանում, ապա այն վկայում է ստամոքսի պարունակության էվակուացիայի խանգարման մասին՝ պիլորիկ հատվածի կամ 12-մատնյա աղու կոճղեզի երկարատև կծկանքի և արտահայտված բորբոքային այտուցի հետևանքով: Եթե այն ռենիսիայի շրջանում է լինում, ապա դա խոսում է պիլորիկ հատվածի սպիական նեղացման մասին: Փսխումը լինում է ցավի գագաթնակետին՝ սննդի ընդունումից 1-4 ժամ անց, թերևություն է թերում հիվանդին, որի պատճառով հիվանդներն իրենք են հաճախ ցավերի հանգստացման նպատակով, արհեստականորեն փսխում առաջացնում:

Խոցային հիվանդության բարդություններն են՝

□ Արյունահոսություն.

Խոցային հիվանդության համար թաքնված արյունահոսությունները բավականին բնորոշ են և հիվանդության յուրաքանչյուր սրացում գրեթե միշտ ուղեկցվում է նման բարդությամբ: Առավել վտանգավոր բացահայտ արյունահոսություններն են, որոնք դիտվում են հիվանդների 10-15%-ի մոտ: Հաճախ նրանք ծագում են հանկարծակի, սակայն քիչ չեն այն դեպքերը, որ դրանց նախորդում են հիվանդության սրացման նշանները: Արյունահոսությունը ուղեկցվում է արյունային փսխումով, ծյութանման կղանքով և սուր սակավարյունության նշաններով:

Արյունային փսխումը մատնանշում է, որ արյունահոսության աղբյուրը տեղակայված է ստամոքսում, ավելի հազվադեպ՝ 12-մատնյա աղիքում: Փսխած զանգվածը, սովորաբար ունենում է «սուրճի նստվածքի» տեսք, որովհետև հեմոգլոբինը աղաթթվի ներգործությամբ վեր է ածվում և գոյնի՝ հեմատիկի: Առատ արյունահոսության դեպքում փսխման զանգվածը կարող է ունենալ ակ կարմիր գույն, քանի որ աղաթթուն չի հասցնում փոխագողել:

Զյութանման կղանքը (մելենա) ստամոքսի և 12-մատնյա աղու խոցի արյինահոսության բնորոշ նշանն է՝ արյան վրա աղիքային ֆլորայի ներգործության հետևանքով։ Կղանքը շիլայանման է, կպչուն, մազուրի նման սկ։ Մելենան ի հայտ է գալիս 80մլ-ից ավելի արյան կորստի դեպքում մոտավորապես արյունահոսությունից 8 ժամ հետո։

Զանգվածային արյունահոսության դեպքում, երբ մարդը կորցնում է 1500մլ և ավելի արյուն, գարգանում է կոլլապս, իսկ արյան հետագա կորստի դեպքում՝ հիպովլեմիկ շոկ։ Հիվանդը գունատ է, պատաճ սառը կպչուն քրտինքով, անոթազարկը արագացած, թույլ լեցումով, սիստոլիկ ճնշումը ընկած, հնարավոր է երիկամային և սարդային սուր անբավարարություն։

□ Ստամոքսի թափածակում.

Այս բարդության հաճախականությունը կազմում է 5-10%։ Թափածակման առավել բնորոշ նշաններն են՝ խոլ, ուժգին, «դաշույնային» ցավը էպիֆաստրալ շրջանում, որովայնի առաջային պատի մկանների տախտականման լարումը, իսկ հետագայում որովայնամզի բորբոքման՝ պերիտոնիտի նշանները։ Պերֆորացիայի առկայությունը հաստատվում է ռենտգեն քննությամբ՝ հայտնաբերվում է որովայնի խոռոչում ազատ զագ։

□ Թափանցում.

Դա խոցի տարածումն է ստամոքսի կամ 12-մատնյա աղու պատի սահմաններից դուրս շրջապատող հյուսվածքների և օրգանների մեջ։ Կարող է թափանցել ենթաստամոքսային գեղձի, լյարդի, փոքր ճարպոնի, ստոծանու մեջ և այլն։

Թափանցման բնորոշ նշաններն են՝ գիշերային ուժեղ ցավերը, ցավերի ճառագայթումը դեպի մեջքը, առաջանում են նաև ախտահարված օրգանների բնորոշ ախտանիշներ՝ պանկրեատիտի, խոլեցիստիտի հետևանքով։

□ Նեղացում.

Ստամոքսի պիլորիկ մասի նեղացում հանդիպում է 6-15%-ի դեպքերում և առաջանում է այդ հատվածի կամ տասներկումատնյա աղու սկզբնամասի խոցերի սպիացման հետևանքով։ Հիվանդները սկզբնական շրջանում զանգատվում են ախտրժակի կորստից, ուտելուց անմիջապես հետո ստամոքսի լցկածության զգացումից, թթվակություն բերող փսխումից, ավելի ուշ փսխման մասսաներում լինում են նախորդ օրվա կերած սմննի գարշահոտ մնացորդները։ Հիվանդը հյուծվում է, ջրազրկվում։ Ունտգեն քննությամբ պարզվում է մեծացած, լայնացած ստամոքս, ստամոքսաելքի նեղացում։

քում, ապա լինում են խիստ ուժեղ սոմատիկ ցավեր սահմանափակ տարածության վրա:

Խոցային հիվանդության չբարդացած ձևերի ժամանակ լինում են նաև մի շարք դիսպեստիկ բնույթի խանգարումներ՝ այրոց, փսխում, սրտխառնություն և գլուոց:

Այրոցը ստամոքսի կարդիալ ֆունկցիայի անբավարարության հիմնական նշաններից մեկն է, լինում է նաև մարտողական օրգանների այլ հիվանդությունների ժամանակ, կարող է հանդես գալ ցավերի հետ կամ առանց ցավերի: Հանդիպում է խոցային հիվանդությանք տառապողների 30-80%-ի մոտ: Պայմանավորված է ստամոքսի պարունակության հետընթաց տեղաշարժով դեպի կերակրափող:

Սրտխառնությունը, փսխումը և գլուոցը առավել հանդիպում են բարդացած խոցային հիվանդության դեպքում: Եթե այն առաջացել է սրացման շրջանում, ապա այն վկայում է ստամոքսի պարունակության էվակուացիայի խանգարման մասին՝ պիլորիկ հատվածի կամ 12-մատնյա աղու կոճղեզի երկարատև կծկանքի և արտահայտված բորբոքային այլուուցի հետևանքով: Եթե այն ռեմիսիայի շրջանում է լինում, ապա դա խոսում է պիլորիկ հատվածի սպիական նեղացման մասին: Փսխումը լինում է ցավի զագարնակետին՝ սննդի ընդունումից 1-4 ժամ անց, թերևություն է բերում հիվանդին, որի պատճառով հիվանդներն իրենք են հաճախ ցավերի հանգստացման նպատակով, արհեստականորեն փսխում առաջացնում:

Խոցային հիվանդության բարդություններն են՝

□ Արյունահոսություն.

Խոցային հիվանդության համար թաքնված արյունահոսությունները բավականին բնորոշ են և հիվանդության յուրաքանչյուր սրացում գրեթե միշտ ուղեկցվում է նման բարդությամբ: Առավել վտանգավորը բացահայտ արյունահոսություններն են, որոնք դիտվում են հիվանդների 10-15%-ի մոտ: Հաճախ նրանք ծագում են հանկարծակի, սակայն թիզ չեն այն դեպքերը, որ դրանց նախորդում են հիվանդության սրացման նշանները: Արյունահոսությունը ուղեկցվում է արյունային փսխումով, ծյութանման կղանքով և սուր սակավարյունության նշաններով:

Արյունային փսխումը մատնանշում է, որ արյունահոսության աղբյուրը տեղակայված է ստամոքսում, ավելի հազվադեպ՝ 12-մատնյա աղիքում: Փսխած զանգվածը, սովորաբար ունենում է «սուրճի նստվածքի» տեսք, որովհետև հեմոգլոբինը աղաթթվի ներգործությամբ վեր է ածվում և գույնի հեմատիկի: Առատ արյունահոսության դեպքում փսխման զանգվածը կարող է ունենալ ակ կարմիր գույն, քանի որ աղաթթուն չի հասցնում փոխազդել:

Զյութաննան կղանքը (մելենա) ստամոքսի և 12-մատնյա աղու խոցի արյինահոսության բնորոշ նշանն է՝ արյան վրա աղիքային ֆլորայի ներգործության հետևանքը: Կղանքը շիլայաննան է, կպչուն, մազուրի նման սկ: Մելենան ի հայտ է գալիս 80մլ-ից ավելի արյան կորստի դեպքում մոտավորապես արյունահոսությունից 8 ժամ հետո:

Զանգվածային արյունահոսության դեպքում, երբ մարդը կորցնում է 1500մլ և ավելի արյուն, գարգանում է կոլլապս, իսկ արյան հետագա կորստի դեպքում՝ իհպովոլեմիկ շոկ: Հիվանդը գունատ է, պատաճ սառը կպչուն քրտինքով, անորթազարկը արագացած, թուլլիցումով, սիստոլիկ ճնշումը ընկած, հնարավոր է երիկամային և սարդային սուր անբավարարություն:

□ Ստամոքսի թափածակում.

Այս բարդության հաճախականությունը կազմում է 5-10%: Թափածական առավել բնորոշ նշաններն են՝ խուլ, ուժգին, «դաշույնային» ցավը եպիգաստրալ շրջանում, որովայնի առաջային պատի մկանների տախտականնան լարումը, իսկ հետագայում որովայնամզի բորբոքման՝ պերիտոնիտի նշանները: Պերֆորացիայի առկայությունը հաստատվում է ռենտգեն քննությամբ՝ հայտնաբերվում է որովայնի խոռոչում ազատ գազ:

□ Թափանցում.

Դա խոցի տարածումն է ստամոքսի կամ 12-մատնյա աղու պատի սահմաններից դուրս շրջապատող հյուսվածքների և օրգանների մեջ: Կարող է թափանցել ենթաստամոքսային գեղձի, լյարդի, փոքր ճարպոնի, ստոծանու մեջ և այլն:

Թափանցման բնորոշ նշաններն են՝ գիշերային ուժեղ ցավերը, ցավերի ճառագայթումը դեսկի մեջքը, առաջանում են նաև ախտահարված օրգանների բնորոշ ախտանիշներ՝ պանկրեատիտի, խոլեցիստիտի հետևանքը:

□ Նեղացում.

Ստամոքսի պիլորիկ մասի նեղացում հանդիպում է 6-15%-ի դեպքերում և առաջանում է այդ հատվածի կամ տասներկումատնյա աղու սկզբնամասի խոցերի սպիացման հետևանքը: Հիվանդները սկզբնական շրջանում զանգատվում են ախտրժակի կորստից, ուտելուց անմիջապես հետո ստամոքսի լցվածության զգացումից, թթվակություն բերող փսխումից, ավելի ուշ փսխնան մասսաներում լինում են նախորդ օրվա կերած սննդի գարշահուտ մնացորդները: Հիվանդը հյուծվում է, ջրազրկվում: Ունտգեն քննությամբ պարզվում է մեծացած, լայնացած ստամոքս, ստամոքսաելքի նեղացում:

□ Զարորակացում.

Զարորակացված խոցերն առավել հաճախ տեղակայվում են փոքր կորության վրա և անտրայլ մասում: Մեծ խոցերը պահելի շատ են չարորակացման ենթարկվում: Դիազնոզի ճշտման նպատակով պետք է կատարել էնդոսկոպիկ բիոպսիա՝ խոցի 6 հատվածներից և հատակից, բիոպտատների հետագա բջջաբանական հետազոտման համար:

Առաջին բուժօգնությունը արյունահոսությունների ժամանակ. Խոցային արյունահոսությունների ժամանակ հիվանդին մինչև հիվանդանոց տանելը պետք է պահպանել խիստ անկողնային ռեժիմ, պետք է դրվի սառցեպարկ ստամոքսի շրջանում, չտալ ուտելու կամ խմելու որևէ բան, չկատարել ստամոքսի և աղիների լվացում:

Բարդությունների բուժումը բացառապես վիրահատական է:

Կ.Ս. Հարությունյան

ԸՆԹԱՐԱՅԻՆ ԴԻՎԹԵՑ

Հայտնի է եղել դեռևս Հիպոկրատի ժամանակից:

Երիողական դիաբետի առաջացման պատճառները վերջնական ճշտված չեն, սակայն կան մի շարք տեսություններ:

1. Ժառանգական՝ գենետիկ տեսություն է, համաձայն որի դիաբետը բաժանվում է առաջին և երկրորդ տիպի:

Առաջին տիպի դիաբետը հանդիպում է երեխաների ու երիտասարդների մոտ:

Երկրորդ տիպի շաքարախտի ժամանակ, որը հանդիպում է մեծահասակների մոտ:

Այս բոլորը միասին կոչվում է օրգանիզմի նախատրամադրվածություն շաքարախտի նկատմամբ: Սակայն միայն սրանով կարող է և չառաջանալ դիաբետ, քանի որ դիաբետի առաջացման համար անհրաժեշտ են նաև մի շարք պայմաններ:

1. Աղինամիկ վիճակը նպաստում է շաքարախտի առաջացմանը: Ֆիզիկական աշխատանքի ժամանակ մկանային սիստեմում աերոր և անաերոր ճանապարհով քայլքայվում են ածխաջրատները: Հետազոտությունները ցույց են տվել, որ թափառող շների մոտ այն 1% է կազմում: Կամ, հեռացրել են չվոր և ընտանի թոշունների ենթաստամոքսային գեղձը: Դիաբետ առաջացել է միայն ընտանի թոշունների մոտ:

2. Ըուտ յուրացվող ածխաջրերի շատ օգտագործումը: Հետագութել են նյու Յորքի կենտրոնի և ծայրամասերում բնակվող մարդկանց: Արվարձաններում բնակվող բնակչությունը աղքատ է և նրանց սննդի գերակշռող մասը կազմել են ածխաջրատները: Դիաբետը այստեղ ավելի շատ է եղել:

3. Ճարպակալված մարդկանց մոտ դիաբետով հիվանդանալու ռիսկը ավելի մեծ է (մոտ 30%), քան նորմալ քաշ ունեցողների մոտ: Այս դեպքում արյան մեջ շատանում են չեսթերիֆիկացված ազատ ճարպաթթումների քանակը, որը բերում է ինսուլինի նկատմամբ զգյանության իջեցում ռեցեպտորներում, հատկապես և հարաբերական ինսուլինային անբավարարության և քավական է մի որևէ սրբեւ՝ ինֆեկցիոն հիվանդություն, ինֆարկտ, ինսուլտ, որ ի հայտ գա շաբարային դիաբետը:

4. Նյարդային ապրումների, մասմավորապես վախի ժամանակ արտադրվում է մեծ քանակությամբ ադրենալին, նորադրենալին, կորտիզոն, կորտիկոստերոն, որոնք հակահնատվար հորմոններ են, բարձրացնում են գլյուկոզան արյան մեջ:

Ըստ ծանրության տարբերում են՝

1. Թերեւ աստիճանի՝ երբ ածխաջրատային փոխանակությունը կոմպենսացվում է միայն դիետորերապիայով կամ շաքարը իջեցնող per oral պրեպարատների փոքր դոզաներով: Այս դեպքում շաքարախտի բարդություններ չկան:

2. Միջին ծանրության՝ երբ ածխաջրատային փոխանակությունը կոմպենսացվում է դիետորերապիայով, շաքարը իջեցնող per oral պրեպարատների մեջ դոզաներով կամ ինսուլինի փոքր դոզաներով և կան շաքարախտի բարդությունների նախնական ստադիաներ՝ ռետինոպատիա առաջին աստիճանի, պրենեֆրոտիկ նեֆրոպատիա, յարդի լիպոդիստրոֆիա:

3. Ծանր աստիճանի՝ երբ հիվանդները ստանում են մեծ դոզաներով ինսուլին: Սակայն այս ստադիայում բնորոշը բարդություններն են՝ ռետինոպատիա երկրորդ-երրորդ աստիճանի, արտահայտված հեպատոզ, դիաբետիկ կարդիոպատիա, էնցեֆալոպատիա, վիսցերոպատիա, նեյրոպատիա, նեֆրոպատիա նեֆրոտիկ ստադիայում:

Նշանները. հիվանդները գանգատվում են ծարավից, շատ ջուր խմելուց, քաղցից, հաճախամիզությունից, գիշերամիզությունից (դիուրեզը կարող է հասնել մինչև 5-6 լիտրի), քորից սեռական օրգանների շրջանում, հետագայում քաշի անկումից, ընդհանուր թուլությունից:

Բուժումը. դիաբետի բուժումը տարվում է՝

1. դիետոթերապիայով,
2. բուժական ֆիզկուլտուրայով,
3. per oral հակադիաբետիկ դեղամիջոցներով,
4. ինսուլինոթերապիայով:

Դիետոթերապիա նշանակվում է բոլոր տիպի դիաբետների ժամանակ՝ ինսուլինի և հակադիաբետիկ դեղամիջոցների հետ:

Եթե հիվանդությունը նոր է սկսվել (խոսքը վերաբերվում է միայն երկրորդ տիպի շաքարային դիաբետին), չկան կետողացիդոզի երևույթներ, հիվանդի քաշը նորմալ է կամ ունի ծարպակալում, սկզբում նշանակվում է միայն դիետոթերապիա՝ (սեղան 9), եթե 15-20 օրվա ընթացքում ածխաջրատային փոխանակությունը չի կարգավորվում, ապա նշանակվում են դեղահաբեր:

Դիետոթերապիայի հիմնական սկզբունքը դա շուտ յուրացվող ածխաջրատների քանակի պակասեցումն է: Նորմայում անդի 70%-ը կազմում են ածխաջրերը, իսկ 30%-ը՝ ձարպերն ու սպիտակուցները: Դիաբետի ժամանակ ածխաջրատների քանակությունը պակասեցվում է մինչև 50%, սահմանափակելով շուտ յուրացվող ածխաջրատները՝ ռաֆինացված շաքարը և նրանով պատրաստված սննդամթերքները: Ավելի շատ նշանակվում է կոշտ թերիկավոր բուսական ածխաջրատներ, որոնք ոչ միայն դժվար են յուրացվում, այլև նպաստում են ստամոքսադիքային տրակտի նորմալ աշխատանքներ:

Բնության մեջ կան մոտ 250 բույսեր, որոնք նպաստում են շաքարի հցեցնանք: Դրանք այն բուսատեսակներն են, որոնք պարունակում են ինսուլին և գուանիդին քիմիական միացությունները, որոնք իրենց կառուցվածքով նման են ինսուլինին և օրգանիզմում թողնում են ինսուլինանման ազդեցություն, նպաստում զյուկոզայի թափանցմանը քջի ներս: Նման բույսերից են կանաչ լորին, եղինջը, դեղձը, դաղձը և այլն: Այս բույսերը պարունակում են նաև արախիդոնաթթու, որը մտնում է ռեցեպտորների կառուցվածքի մեջ, նպաստում են ռեցեպտորների քանակի ավելացմանը:

Շաքարի փոխարեն խորհուրդ է տրվում օգտագործել սորբիտ, քսիլիտ, ֆրուկտոզա:

Շաքարային դիաբետի բարդություններից եմ՝ հիպերգլիկեմիկ և հիպոգլիկեմիկ կոմաները:

Հիպերգլիկեմիկ կոման առաջանում է՝

1. չշիհագնողված շաքարախտի ժամանակ,
2. առաջին տիպի շաքարախտի ժամանակ, եթե հիվանդը առավարար քանակությամբ է ինսուլին ներարկում,

- Ինֆեկցիոն հիվանդությունների, բարձր ջերմաստիճանի ժամանակ, երբ ներարկված ինսուլինը ինակտիվանում է,
- Երբ հիվանդը դիետայի խախտում է թույլ տալիս:

Հիպերգլիկեմիկ կոմայի նշանները՝ բերանի չորություն, ծարավ, հաճախամիզություն, սրտխառնություն, փսխումներ, մկանային թուլություն, արյան ճնշման անկում, հիվանդն ընկնում է նախ արգելակման մեջ, ապա աստիճանաբար կորցնում է գիտակցությունը, զարգանում է կոմատող վիճակ:

Հիպերգլիկեմիկ կոման պետք է դիֆերենցել շաքարախտի մեկ այլ բարդության՝ հիպոգլիկեմիկ կոմայի հետ: Այս կոման առաջանում է, երբ հիվանդը ընդունում է շաքարը արյան մեջ իջեցնող դեղամիջոցներ, սակայն չի սնվում, որի հետևանքով գյուկոզան արյան մեջ կարող է իջնել մինչև 2-3 մմոլ/լ և քանի որ ԿՆՀ-ի՝ միակ էներգետիկ ռեսուրսը գյուկոզան է, առաջանում է ուղեղի արգելակում և կոմա:

Տարբերակումը.

Հիպերգլիկեմիկ կոմա	Հիպոգլիկեմիկ կոմա
զարգանում է դանդաղ	զարգանում է հանկարծակի
մաշկը լինում է չոր	մաշկը՝ խոնավ
լեզուն չոր, շագանակագույն	լեզուն մաքուր, խոնավ
ակնագնդերի լարվածությունը ընկած	պահպանված կամ լարված
շնչառությունը խորը և դանդաղ	շնչառությունը մակերեսային
արյան ճնշումը ընկած	նորմալ կամ բարձր
մկանային տոնուած ընկած	բարձր, մկանային ցնցումներ
այտերը կարմրած	նորմալ կամ գունատ

Հիպոգլիկեմիկ կոմայի բուժումը. Իիվանդին ներերակային ներարկում են 40%-անոց գյուկոզայի լուծույթ, իիվանդի գիտակցությունը անմիջապես վերականգնվում է: Այնուհետև միացվում է ներարկային գյուկոզայի 5%-անոց լուծույթ մինչև վիճակի լորիվ լավացում: Կարելի է ածխաջրատները տալ նաև խմելու ծևով (շաքարաջուր, մեղրաջուր):

Հիպերգլիկեմիկ կոման բուժում են ինսուլինի ներարկումով, կախված արյան մեջ գյուկոզայի քանակից:

Ա.Ա. Հարությունյան

ՍՈՒՐ ՃԱՌԱՎԱՅԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԻԹՅՈՒՆ

Սուր ճառագայթային հիվանդությունն հանդիպում է խաղաղ և պատերազմական պայմաններում: Խաղաղ պայմաններում այն կարող է առաջանալ վթարներից (աստոմակայան, արտադրության մեջ, որտեղ օգտագործվում են ռադիոակտիվ նյութեր): Սուր ճառագայթային հիվանդությունն առաջ է գալիս իոնիզացիոն ճառագայթներով օրգանիզմը մեծ դոզայով և մեծ մակերեսով միանվագ կամ բազմանվագ ձևով, ընդհանուր կամ տեղային ճառագայթահարուցուց:

Մարդիկ կարող են ստանալ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ախտահարում:

Սուր ճառագայթային հիվանդությունը ընթանում է 4 շրջանով, որոնք մեկը մյուսից սահմանազատված չեն:

- I – առաջնային ռեակցիայի շրջան,
- II – զարտնի շրջան կամ կարծեցալ լավացման ,
- III – կլինիկական նշանների բուռն արտահայտման շրջան,
- IV – վերականգնման շրջան:

I շրջանի բնորոշ նշաններն են՝ թուլություն, ուժեղ գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց, փսխում, ախորժակի վատացում, բերանում չորություն և դառնության զգացում, ծանր դեպքերում լուծ: Արտաքինապես հիվանդը նմանվում է հարբած մարդու՝ դեմքը կարմրավուն, նկատվում է քննկոտություն, քրտնարտադրություն, աչքերը փակելիս հաստատուն չի կանգնում: Ծանր դեպքերում անորագարկը արագանում է, արյան զարկերակային ճնշումը՝ իջնում:

II շրջանում հիվանդի ինքնազգացումը լինում է բավարար, սակայն արյան զարկերակային ճնշումը լինում է անկայուն, անորագարկը առիթմիկ: Բարձր դոզայի դեպքում հիվանդության 10-17-րդ օրը մազերը թափակում են, խանգարվում են շարժումները, շարունակվում է փոփոխություններ արյունաստեղծ օրգաններում և կևՀ-ում:

III շրջանը հիվանդության նշանների բուռն արտահայտման շրջանն է: Հիվանդների ինքնազգացումը խիստ վատանում է, զարգանում է ընդհանուր թուլություն, ջերմության բարձրացում՝ երբեմն 39-40°:

Ծանր հիվանդների մոտ արյունազեղումները կրում են համատարած բնույթ՝ մաշկի վրա, լեզվի, կարծի և փափուկ քիմքի լորձաթաղանթներում, նշիկների վրա նկատվում են մեռուկային օջախներ, խոցեր: Վատանում է ախորժակը, որովայնում լինում են ցավեր, աղիներում արյունազեղումների պատճառով արյունային լուծ: Հի-

վանդները նկատելի նիհարում են: Դժվարանում է կլման ակտը: Անոթազարկը արագանում է, արյան ճնշումը ջնում է: Առաջանում է արյունահօսություն քթից, աղիներից, երիկամներից: Զարգանում է անեմիա, պակասում կամ լրիվ անհետանում են լեյկոցիտները: ԿՆՀ-ի կոռմից առաջանում է ուղեղի թաղանքների բորբոքում, ուղեղի այտուց, որի հետևանքով խանգարվում է գիտակցությունը:

Երրորդ շրջանը տևում է 15-30 օր: Մահը տեղի է ունենում սրտի, ուղեղի կամ մյուս օրգանների արյունազեղումներից, արյունահօսությունից կամ ուղեղի այտուցից, ինֆեկցիոն բարդություններից (արյան վարակում, թթաքրորդ):

IV շրջանը – վերականգնած շրջան:

Ապաքինումը ճառագայթային հիվանդությունից տեղի է ունենում շատ դանդաղ և հաճախ ոչ լրիվ, իսկ երեմն այդ երևույթները ստանում են քրոնիկական ընթացք:

Հիվանդի ջերմաստիճանը նորմալանում է, ախորժակը լավանում, արյունազեղումները, ինցերը անհետանում են, թափված մազերը սկսում են աճել 3-4 ամիս հետո:

Արյան պատկերը նորմալանում է, ավելանում են լեյկոցիտները, թրոմբոցիտները, ավելի ուշ էրիթրոցիտները: Հիվանդների վիճակը դառնում է բավարար:

Սուր ճառագայթային հիվանդությունը կախված ճառագայթման դոզայից, ունի հիվանդության ծանրության 4 աստիճան.

I^o կամ թեթև 100-200 ռադ կամ 1-2 գրեյ,

II^o կամ միջին 200-400 ռադ կամ 2-4 գրեյ,

III^o կամ ծանր 400-600 ռադ կամ 4-6 գրեյ,

IV^o կամ ծայրահեռ ծանր՝ 600-ից ավելի ռադ կամ 6-ից ավելի գրեյ:

Թեթև աստիճանի դեպքում գլխավոր նշաններն են՝ կախված ճառագայթման դոզայից արագ կամ դանդաղ զարգացող փսխումը մեկ անգամ, մարմնի ջերմաստիճանը լինում է նորմալ, գիտակցությունը պարզ:

Միջին աստիճանում լինում է գլխացավ, մարմնի ջերմաստիճանը սուրֆերի, փսխումը կրկնվում է երկու անգամ:

Ծանր աստիճանին բնորոշ է գլխացավը, հաճախակի փսխումները, մաշկային ծածկույթները կարմրավուն են, մարմնի ջերմաստիճանը ենթատենդային:

Ծայրահեռ ծանր աստիճանի դեպքում 10 րոպեն մեկ անգամ լինում է փսխում, ուժեղ գլխացավ, գիտակցության կորուստ, բարձր ջերմություն:

Ստորև բերված է հիվանդության ժամրության աստիճանների աղյուսակը:

Հիվանդության ժամրության աստիճանները	I շրջանի տևողությունը	II շրջանի տևողությունը	I ելուցիւնեղի քանակը 1մ³ 10-17-րդ օրը	Ծրջ
I ⁰ - թեթև ձև	սկսվում է 1-3 րոպեից, տևում է 1 օր	3-4 շաբաթ	3000-1500	լրիվ ապացնում
II ⁰ - միջին ձև	սկսվում է 30 րոպեից, տևում է 2 օր	14-20 օր	1500-200	մահացությունը 20%, ապացնվածների մոտ լրիվ վերականգնվում է աշխատունակությունը
III ⁰ - ծանր ձև	սկսվում է 10-60 րոպեից, տևում է 3 օր	10-16 օր	300-100	մահացությունը 50-75% 10 տարվա ընթացքում, ապացնվողների մոտ պահպանվում է արյունաստեղծման և նյարդային հանակարգի խանգարումներ, աշխատունակության կորստով
IV ⁰ - ծանրագույն ձև	սկսվում է 10-15 րոպեից, տևում է 4 օր	չկա	վերանում են	մահացությունը 100%

Առաջին բուժօգնությունը. ախտահարման օջախում I բուժօգնությունը պետք է ցուց տրվի շատ արագ, կարճ ժամկետում ինքնօգնության, փոխօգնության միջոցով:

Ախտահարվածին շատ արագ պետք է դուրս բերել օջախից կամ թաքցնել մոտակա ապաստարանում, որը կանխում կամ պակասեցնում է հետագա ճառագայթահարումը: Եթե ախտահարվածը դեռ գտնվում է ռադիոակտիվ վարակման օջախում, անմիջապես հագցնել ռեսպիրատոր կամ հակազգագործությունը (ռադիոակտիվ հանուկ շորով սրբել): Եթե հնարավոր է աչքերը, քիթը, բերանը, ականջները լվանալ ջրով կամ 2%-անոց սողայաջրով, իսկ եթե հնարավոր է՝ լվանալ մաշկը և զլյախ մազերը:

Կասկածանքի դեպքում, որ օրգանիզմ է թափանցել ռադիոակտիվ սողություն, կատարել ստամոքսի լվացում հասարակ եղանակով (ջուր խմելով), տալ լուսողական՝ 15-30,0 գ անգլիական աղ մեկ քաշակ ջրով: Կազմակերպել տուժածի տեղափոխումը:

Փոքր դոզաներով ճառագայթման դեպքում I բուժօգնությունը իրականացվում է վերը նշված ձևով, իսկ մեծ դոզաներով (150-200 ռ-ից

բարձր) ճառագայթահարման դեպքում բոլոր տուժածները, որպես կանոն, ունենալու են առաջնային ռեակցիա, որի պատճառով անհրաժեշտ է կատարել այդ երևոյթների դեմ պայքարող միջոցներ՝ դիմերորդ կոֆեհին հետ, 0,1% ատրոպինի լուծույթ (շարից-սոլութիկ), էտապիրազին (անհատական դեղատուփի) և տեղափոխել մոտակա հիվանդանոց:

Տեսակավորման և էվակուացիայի ճիշտ և արագ հրականացումը ապահովում է հիվանդության համեմատաբար բարորակ ելքը և կանխում կամ պակասեցնում է հնարավոր բարդությունները:

Առաջնային միջոցառումներից կարևորն է վահանածն գեղձի պահպանումը ռադիոակտիվ յոդի ազդեցությունից: Այդ նպատակով կատարվում է կանխարգելման միջոցառում՝ յոդի օգնությամբ, որովհետև ռադիոակտիվ յոդը կուտակվելով գեղձում, իջեցնում է նրա ֆունկցիան: Կանխարգելման նպատակով կալի յոդի հաբերի բացակայության դեպքում օգտագործում են 5%-անոց յոդի սպիրտային լուծույթ: Կալի յոդի հաբերը գտնվում են նաև անհատական դեղատուփի 6-րդ բնում, տրվում է հետևյալ դեղաչափերով՝ մինչև երկու տարեկան երեխաներին 0,04գ, երկու տարեկանից բարձր երեխաներին և մեծերին տրվում է 0,125գ օրը 1 անգամ ուտելուց հետո թեյի, ջրի հետ 7 օր տևողությամբ, 5%-անոց յոդի սպիրտային լուծույթը տրվում է՝ 3-5 կաթիլ 1 բաժակ կաթի կամ ջրի օգնությամբ 7 օր տևողությամբ, յոդը կանխում է վահանածն գեղձի կողմից ռադիոակտիվ յոդի կլանումը:

Զանգվածային ախտահարման դեպքում կանխարգելման հիմնական միջոցներից է նաև ռադիոայրոտեկսորների կիրառումը, որոնցից ավելի կիրարելի են ցիստամինը՝ անհատական դեղատուփում, գամմաֆոսը, ցիտրիֆոսը, մեկսամինը:

Մ.Խ. Աղամյան, բժշկ. գիտ. թեկն.

ՍՈՒՐ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՈՒՄ ՍԻՆՉԲԺՇԿԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑԱՊՈՒՄՆԵՐԸ

Սուրբ թունավորումները զարգանում են այն դեպքերում, երբ օրգանիզմ են թափանցում տարբեր կազմությամբ, տարբեր ծագմանը և տարբեր քանակությամբ նյութեր, որոնք բերում են կենսական կարևոր օրգանների աշխատանքի խանգարումների՝ ստեղծելով կյանքին վտանգ սպառնացող վիճակներ: Թունավոր նյութերի թափանցման ճանապարհները բազմազան են՝ աղեստամոքսային հա-

մակարգ, որն ավելի հաճախ է հանդիպում, շնչական ուղիներ, չպաշտպանված մաշկ, տարբեր խոռոչներ (թիթ, ականջ, արզանի): Սուր թունավորումների կիհնիկան զարգանում է շատ արագ, ուստի բուժման արդյունքը կախված է ժամանակին ցույց տրված որակյալ օգնությունից: Բոլոր դեպքերում կիրառվող անհետաձգելի օգնությունն ունի մի շարք պարտադիր միջոցառումներ՝

1. պարզել թունավոր նյութի բնույթը, թունավորման ժամանակը և թունավորման ուղիները,
2. դադարեցնել թունի հետագա թափանցումը և ներծծումը,
3. կիրառել հակառակներ,
4. արագորեն թույնը դուրս բերել օրգանիզմից,
5. պարզել օրգանիզմի կենսական օրգանների աշխատանքի խանգարումների աստիճանը (արյան շրջանառություն և շնչառություն):

Եթե թույնը թափանցել է ստամոքս-աղիքային համակարգով, անհապաղ պետք է կատարել ստամոքսի լվացում և աղիների մաքրում (հոգնա):

Եթե թունավորման ճանապարհը շնչական ուղիներն են, տուժածին անմիջապես պետք է դուրս բերել տվյալ վայրից՝ օգտագործել հակազագ, շնչադիմակ, ապահովել թթվածնով:

Եթե թույնը թափանցել է մաշկից պետք է այն լվանալ ջրով, լվանում են նաև խոռոչները: Ներարկման ճանապարհով թունավորման դեպքում դնում են սառը:

Եթե թույնը արդեն ներծծվել է, ապա միջոցները պետք է ուղղել թույնի դուրսբերմանը մեզի միջոցով՝ այդ նպատակով անհրաժեշտ է խմելու ծևով տալ 1 լիտր ջուր, հանքային ջրեր, ներերակային կատարել կերակրի աղի լուծույթ միջամտուների հետ միասին:

Եթե հայտնի է թույնը, կիրառում են հակառակներ, օր., ածխածին օքսիդը թթվածնով, ՖՕԹՆ՝ ատրոպինով, մեթիլ սպիրոտը՝ էթիլ սպիրով, մորֆինը, արոմետրոլը՝ նալորֆինով և այլն:

Եթե թույնը հայտնի չէ, կիրառում են սինպտոմատիկ բռնժութակ:

Կենսական կարևոր օրգանների աշխատանքների խանգարման դեպքում դիմում են վերակենդանացման բոլոր միջոցներին: Միջոցառումների հաջորդականությունը կախված է տուժածի վիճակից:

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՈՒԺԵՐ ԱԶԴՈՂԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Ծմոլ գագ (ածխածնի օքսիդ)՝ անգույն, օդից թեթև, անհոտ գագ է, առաջանում է ածխածին պարունակող նյութերի ոչ լրիվ այրումից: Թունավորումները կարող են լինել աղետների, հրդեհների ժամա-

նակ, քիմիական, մետալուրգիական արդյունաբերություններում, կենցաղում՝ զագի խափանված աշխատանքից, վառարաններից, ավտոինժիկներում, ավտոտնակներում (երբեմն ինքնասպանության նպատակով): Թունավորումը կանայք ավելի թեթև են տանում, քան տղամարդիկ: Տարեցների համար մահացու դոզան մինչև 1 տարեկան երեխաների համար տանելի է: Թունավորմանը նպաստում են՝ արյան կորուստը, օդի քարձո ջերմաստիճանը, ֆիզիկական աշխատանքը, գերիոգնածությունը:

Ընող գազը, անցնելով շնչուղիներ, թափանցում է թոքաբշտիկներ և արագ անցնում արյան մեջ, որտեղ միանում է հենողլորինին՝ առաջացնելով կայուն միացություն կարրօքի հենողլորին, վերջինս խափանում է թթվածնի փոխադրումը օրգանիզմում և առաջացնում է թթվածնային քաղց, որից առաջնահերթ տուժում է ԿՆՀ-ը: Անոթների թափանցելիության քարձրացման հետևանքով առաջանում են արյունագեղումներ ուղեղում, սրտում, երիկամներում:

Թունավորումը կարող է ընթանալ հետևյալ ձևերով՝

1. կայծակնային (ապոպլեքսիկ),
2. սինկոպիկ (սպիտակ շնչահեղծություն),
3. էֆորիկ,
4. դանդաղ ընթացող:

Կայծակնային ձևը հաճախ դիտվում է աղետների հրդեհների ժամանակ, երբ զագի կոնցետրացիան լինում է քարձոր: Տուժածը անմիջապես կորցնում է գիտակցությունը, դադարում է շնչառությունը:

Սինկոպիկ ձևի դեպքում գերակշռում են սիրտ-անոթային համակարգի խանգարման նշանները՝ գունատ մաշկ, սրտխփոց, զարկերակային արյան ճնշման անկում, գլխացավ, գիտակցության կորուստ, մակերեսային արագացած ընդհատվող շնչառություն:

Էյֆորիկ ձևը բնորոշվում է տուժածի գրգռվածությամբ, աննպատակ շարժումներով և գործողություններով:

Դանդաղ ընթացող թունավորումը հանդիպում է հաճախ և ընթանում է թթեթև, միջին և ժամը ձևերով:

Թթեթև ձևի ժամանակ տուժածը գանգատվում է գլխացավից, գլխում ծանրության և ճնշման զգացումից, ականջներում աղմուկից, տեսողության վատացումից, գլխապտույտից, սրտխառնոցից, փսխումից, անոթազարկի և շնչառության հաճախացումից, քնկութությունից:

Միջին ձև՝ գերակշռում է հետոցը, աճող թուլությունը, սրտխփոցը, առաջանում է գիտակցության կորուստ, աչքերի բբերը լինում են լայնացած, լորձաթաղանթները՝ կարմրած կամ գունատ, հնարավոր են նաև ջղածգություններ:

Ծանր ծև՝ պատրամքներ (հալուցինացիա), զառանցանք, ջղաճգություններ, կաթվածներ, շնչառության խանգարումներ, անորազարկի հաճախացում, լորձաբաղանքները և մաշկը կարնորավուն, երկարատև գիտակցության կորուստ: Մահն առաջանում է շնչառական կենտրոնի կաթվածից:

Առաջին բուժօգնությունը վնասման օջախում՝ հագցնել հակազագ հակածիսային փանիուշտով (քանի որ սովորական հակազագը չի պաշտպանում շնորհագից) և անմիջապես տեղափոխել օջախից:

Օջախից դուրս՝ հանել հակազագը, արձակել ճնշող կապերը, տաքացնել, արագ սկսել թթվածնային բուժում ճնշման տակ մի քանի ժամ տևողությամբ: Տրվում է մաքրու թթվածին կամ օդի հետ գուգորդված: Անհրաժեշտության դեպքում կատարել ԹԱԾ, սրտային միջոցներ և անմիջապես տեղափոխել բուժական հիմնարկ:

Քլոր՝ բնորոշ հոտով, դեղնականաչափուն ծանր գազ է, կիրառվում է նավթային, տեքստիլ, դեղագործական արդյունաբերության մեջ, վարակագերծման նպատակով և այլուր:

Օրգանիզմ թափանցման հիմնական ճանապարհներն են շնչական ուղիները, սակայն տուժում են նաև դեմքի մաշկը, աչքերը: Կախված քլորի կրնցենտրացիայից, թունավորումը ընթանում է թթեր, միջին ծանրության և ծանր ծևերով:

Թթեր ծևի դեպքում աչքերում առաջանում է այրոց, ցավ, արցունքահոսություն, տանջալից չոր հազ, ցավ կրծքավանդակում, մաշկի վրա ընկնելիս մաշկի բորբոքում, էկզեմա:

Միջին ծանրության ծամանակ զարգանում է սուր բրոնխիտ:

Ծանր ծևի ծամանակ՝ բրոնխիտին գումարվում է թոքերի բորբոքումը, թոքերի թունավոր այտուցը:

Քլորի մեծ կրնցենտրացիայով թունավորվելիս տուժածը լինում է շնչահեղձ, արձակում է ուժեղ ծիչ, դեմքը կապտում է, ապա կորցնում է գիտակցությունը և վրա է հասնում մահը՝ ծայնալարերի սպազմի, շնչառական կենտրոնի արցելակման, հետևանքով:

Քլորից թունավորումները կարող են արտահայտվել քրոնիկական ընթացքով, այն արտահայտվում է շնչական ուղիների բորբոքումներով, էկզեմաներով, փշանում են ատամները, խանգարումներ են լինում ԿՆՀ-ի կողմից, դիտվում է սակավարյունություն:

Կանխարգելման միջոցները այն արտադրամասերը, որտեղ կաքլորի կիրառում, սինթեզ, պետք է հաճախակի օդափոխել, պարբերաբար ստուգել օրուն եղած քլորի քանակությունը:

Առաջին բուժօգնություն. քլորով թունավորման օջախում առաջին հերթին պետք է հագցնել հակազագ կամ օգտագործել բամբակ-

թանգիֆային կապ թրզված 2%-անոց սոդայաջրի լուծույթով: Ղեմքի մաշկի և աչքերի գրգռնան դեպքում լվանալ հոսող ջրով և անմիջապես տուժածին տեղափոխել վարակված օջախից:

Օջախից դրւու պետք է հանել հակազազը, կրծքավանդակը ազատել ճնշող կապերից, տաքացնել տուժածին, քիթը, բերանը լվանալ 2%-անոց նատրիումի հիդրոկարբոնատի լուծույթով, տաքացնել պարանցի շղանը, ձայնալարերի սպազմի դեպքում կատարել ինհայացիա 0.5% սոդայաջրի լուծույթով, սրտային երևույթների դեպքում կիրառել սրտային միջոցներ:

Ա.Ա. Հարությունյան

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ ՕՉԻ, ՄԵՌՎԻ ԽԱՅԹԵԼՈՑ

ՀՀ-ում առավել հանդիպող թունավոր օծերն են գյուրզան և երեք տեսակի իծեր՝ տափաստանային, սովորական և լեռնային:

Ոչ թունավոր և թունավոր օծերը միմյանցից տարբերվում են: Ոչ թունավոր օծերի աչքի քիթը կլոր է, թունավորինը՝ էլիպսաձև, գուլսը տափակ է կամ եռանկյունաձև, գուլսը մարմնին միանում է պարանոցով:

Օծերի խայթման տեղում մնում է հետք: Ոչ թունավոր օծերը ժանիք չունեն, կծած տեղում լինում են մանր ատամների հետքեր, թունավոր օծերի դեպքում ժանիքների և ատամների հետքեր:

Օծի խայթման ժամանակ թույնն արտահոսական ծորաններով և ատամնամղանցքով արտանետվում է մարդու օրգանիզմ: Թույնի տարածումը օրգանիզմում գերազանցապես տեղի է ունենում ավշային ուղիներով, սակայն հնարավոր է նաև արյան հոսքի և նյարդաթելերի ուղղությամբ:

Թունավորնան կիխնիկական պատկերը կախված է խայթող օծի տեսակից, չափից, գրգռվածության աստիճանից, արտանետվող թույնի քանակից, խայթման տեղակայումից, հյուսվածքների անորթավորնան աստիճանից, որտեղ խայտնվել է թույնը, ինչպես նաև ժամանակին և ձիշտ կատարվող բուժումից: Շատ ավելի վտանգավոր են օծերի խայթումները պարանոցի, դեմքի, գլխի մազածածկ մասերում: Օծերի թույնն իր մեջ պարունակում է հեմոլիզին, ցիտոլիզին նյութերը, որոնք առաջացնում են արյան հեմոլիզ, խանգարվում է ԿՆՀ-ի աշխատանքը, զարգանում է յարդային և երիկամային անբավարարություն:

Նշանները. խայթման տեղում առաջանում է ուժեղ ցավ, այրոց, կարմրություն, արագորեն զարգանում է այտուցը, որը ուղեկցվում է

ավշային անոթների և ավշային հանգույցների բորբոքմամբ, խայթանան տեղի շուրջ առաջանում են շիճուկային և արյունային բշտեր, արյունագեղումներ: Եթե խայթումը տեղավորված է վերջույթի վրա, ապա այսուցը կարող է ընդգրկել նաև իրանը:

Խայթանան առաջին 20-30 րոպեներին առաջանում են շոկի երևույթներ՝ թուլություն, քնկուտություն, գիշապտույտ, սրտխառնոց, փսխում, ծարավի զգացում, ջերմաստիճանի բարձրացում, անոթազարկի արագացում, գիտակցության մրագնում, զարանցանք, ջղաձգություններ: Շարունակում է զարգանալ արյան հեմոլիզը, առաջանում է արյունագեղումներ, մեզի քանակը քչանում է, լինում է արյունամիզություն: Մահը կարող է առաջանալ սիրտ-անոթային համակարգի, լրարդի և երիկամների, շնչառության անբավարարությունից:

Հազվադեպ, բայց հանդիպում է նաև կորորայի և նյարդաթունական թույներ ունեցող օծերի խայթ, որոնց թույնը առաջացնում է ռեֆլեքսային գործունեության խանգարում, նյարդաթունի հիմնական ազդող գործոնը կուրարենան նյութի ներգործություն է, որի նկատմամբ առանձնահատուկ զգայուն են ուղեղը և ողնուղեղը:

Նշանները. խայթումից գրեթե անմիջապես հետո զարգանում է բուօք թունագորում, խայթանան տեղում առաջանում է այրող ցավ, այնուինտև խանգարվում է շարժումների կոռորդինացիան, զարգանում է ընդիանուր թուլություն, անհանգստություն, շնչառության դժվարացում, սրտխառնոց, փսխում, թքազատություն, կլման ակտի խանգարում, սրտի գործունեության թուլացում, ակամա միզարծակություն և կրում: Մահը տեղի է ունենում շնչառության դադարից:

Առաջին բուօքնությունը. առավելագույն անհրաժեշտություն է խայթանան առաջին րոպեներին այտածել թույնը: Այդ նպատակով անհրաժեշտ է խայթանան տեղն ընդգրկել ծալքի ծևով, սեղմելով վերքից դուրս բերել հեղուկի կաթիլը, որից հետո առաջացած վերքից բերանով արտածել շճային կամ արյունային հեղուկը (եթե բերանի խոռոչում չկան թարմ վերքեր), վերքը մշակել յոդով: Տուժածին անուր է տալ առատ հեղուկներ և անշարժ դիրքով (պատզարակով) տեղափոխել հիվանդանոց, հակաօճային շիճուկ ստանալու և հետագա բուժման նպատակով: Կորրայի խայթան դեպքում կծածից վեր դրվում է լարան, մնացած դեպքերում հակացուցված են լարանադնումը և կտրվածքներ կատարելը:

Վտանգ է ներկայացնում նաև միջատների խայթը: Հայաստանում հանդիպում են դեղին, սպիտակ, վարդագույն կարիճներ, որոնց թույնը վտանգավոր չէ, վտանգավոր են սև կարիճները:

Նշանները. կարիճի կծելու ժամանակ տեղում առաջանում չ ցավ, կարմրություն: Հնարավոր է նաև այլ նշաններ, որոնք վտանգ՝

չեն ներկայացնում: Մահ առաջանում է անաֆիլակտիկ շոկի առաջացման հետևանքով:

Առաջին բուժօգնություն. տեղում դնել սառը թոջոց կամ քացախացրի՝ թրցոց: Վտանգավոր են նաև թունավոր սարղերը, վերջիններս խայթ չունեն:

Սեղվի խայթելու ժամանակ՝ հեռացնել խայթը՝ խայթը մատով հեռացնել չի կարելի, պետք է հեռացնել պինցետի օգնությամբ սեղմելով մաշկի հիմքը, որպեսզի խայթը խործ չգնա:

Նշանները. տեղային ցավ, կարմրություն, այտուցվածություն, կարող է լինել նաև ցավ ստամոքսի շրջանում, վերջինս ունի սրտային ծագում, որը Վտանգավոր չէ: Ծանր դեպքերում հնարավոր է անաֆիլակտիկ շոկ՝ մաշկը կարմրավուն, այտուցված, մաշկի վրա եղջրացան, անոթազարկը և շնչառությունը արագացած, սառը քրտինք, խոնավ մաշկ:

Առաջին բուժօգնություն. արձակել բոլոր սեղմող կապերը և ամբողջ մարմնին դնել սառը, շնչահեղծության դեպքում ներարկել մ/մ 1.0 ադրենալին, կամ լցնել շնչափորի մեջ և անմիջապես տուժածին տեղափոխել բուժիմնարկ:

Կենդանիների և գիշատիչ թռչունների կծելու դեպքում առաջանում է վերք, որը պետք է տարբերակել: Օրինակ՝ պատռված վերքի ժամանակ վերքից լինում է արյունահոսություն:

Առաջին բուժօգնություն. առաջացած վերքը պետք է լվանալ հոսող ջրով, 3%-անոց պերեկիսի լուծույթով, նախընտրելի է վերքեղող լվանալու համար օգտագործել օճառացուրը, վերջինս քայրայում է կենդանու թքի մեջ եղած ֆերմենտները: Պետք է լվանալ 15-20 րոպե, այնուհետև մշակել վերքը յողով և սպիրուտով: Հիվանդին խորհուրդ է տրվում դիմել բժշկի: 10 օր պետք է հետևել կօղ կենդանու վարքին, հետագայում պատվաստում ստանալու համար: Կատաղության դեմ պատվաստումը կատարվում է հետևյալ օրերին՝ 1-ին, 3-րդ, 7-րդ, 14-րդ, 30-րդ, 90-րդ մ/ն եղանակով:

Մ.Խ. Աղամյակ բժշկ. գիտ. թեկն.

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄՆԿԵՐԻՑ

Սնկերից թունավորում հաճախ է հանդիպում գարնան և աշնան ամիսներին: Սնկերի թունավոր հասկությունը կախված է դրանց մեջ գտնվող տարբեր քիմիական կազմություն ունեցող նյութերից, որի հետևանքով սնկերից թունավորման կլինիկան լինում է բազմազան:

ՍԱԿԵՐԾ լինում են թունավոր, պայմանական ուտելի և ուտելի: Պայմանական ուտելի են այն սնկերը, որոնք ջերմային մշակումից հետո դառնում են անվտանգ:

Հաճախ հանդիպող թունավոր սնկերից են՝ դժգույն պազանկան, մորկեղասունկը, ճանճասպանը և այլն:

Դժգույն պազանկա. պարունակում է արագ ազդող ֆալոիդին և դամնադա ազդող բայց ավելի թունավոր ամանիտին նյութերը: Թունավորման ընթացքը ծանր է և տալիս է բարձր մահացություն: Անցնելով օրգանիզմ ազդում է ԿՆՀ-ի վրա, խանգարվում է յարդի և երիկամների աշխատանքը, առաջանում է մազանոթների կաթված:

Նշանները. թունավորման զաղտնի շրջանը տևում է 6-24 ժամ, որից հետո որովայնում առաջանում են նոպայածն ցավեր, որոնք ուղեկցվում են անզուսպ փսխումով, արյունային լուծով, օրգանիզմը զնալով ջրագրկվում է: Թունավորման 2-րդ, 3-րդ օրը զարգանում է յարդի անբավարարություն՝ յարդը մեծանում է, շոշափումը լինում է ցավոտ, զարգանում է դեղնություն, ապա կոմա, որին միանում է երիկամային և արյան շրջանառության անբավարարությունը, որը բերում է մահվան:

Ճանճասպան. արտաքին տեսքի պատճառով թունավորումը լինում է հազվադեպ, պարունակում է մուսկարին թունավոր նյութը:

Նշանները. զաղտնի շրջանը տևում է 1-2 ժամ, որից հետո առաջանում է թքահոսություն, ցավեր որովայնում, սրտխառնց, փսխում, լուծ, բրոնխներից լորձարտադրություն, քրտնարտադրություն, բբերի նեղացում, զարանցանք, ջղաձգություններ:

Մորկեղասունկ. պարունակում է թույն, որը քայքայվում է եփելուց, հակառակ դեպքում առաջանում է հեմոլիզ, յարդի և երիկամների անբավարարություն:

Նշանները. զաղտնի շրջանն է 1-10 ժամ, որից հետո որովայնում առաջանում են ուժեղ ցավեր, միանում է սրտխառնոցը, փսխումը, լուծը, լինում է մուգ գույնի միզարտադրություն, յարդը մեծանում է, շոշափումը ցավոտ, զարգանում է յարդային և երիկամային անբավարարություն:

Առաջին բուժօգնություն. անիրաժեշտ է ստամոքսի լվացում և աղիների մաքրում: Ստամոքսը լվանում են գոլ ջրով, աղային լուծույթներով, աղիները մաքրում են հոգմայով, լուծողականներով, տալիս են ակտիվացրած ածուխ, ջրազրկման դեմ խմելու ծևով տրում է թեթև աղային լուծույթներ, որոնք թեթևացնում են նաև սրտխառնոցը և փսխումը:

Կամիսարգելումը. Չհավաքել անծանոթ, գերածած և որդնած սնկեր: Չհավաքել ճանճասպարի երկայնքով և արտադրությունների տարածքներում աճող սնկերը: Զօգտագործել սնկերի խառնուրդ-

Ներ: Չպահածոյացնել սնկերը տնային պայմաններում, քանի որ դրանք կարող են աղտոտված լինել բռնութիզմի հարուցիչների սպորերով։ Հակացուցվում է ալկոհոլի օգտագործումը սնկերը ու տելիս։

Ա.Ա. Հարությունյան

ԵՊԻԵՊՍԻԿԱՅԻ ԵՎ ՀԻՍՏԵՐԻԿԱՅԻ ՆՈՊԱՆԵՐ

Եակիեպսիա՝ ընկնավորություն, նյարդա-հոգեկան ոլորտի քրո-նկական հիվանդություն է, բնորոշվում է պարբերաբար առաջ եկող ջղաձգության նոպաներով։ Զղաձգությունը կմախքային մկանների հանկարծակի ակամա կծկում է, որը սկսվում է դողով։ Զղաձգությունները լինում են ընդհանուր և տեղային, ինչպես նաև կլոնիկ (կայուն կծկման ձևով) և տոնիկ (մկանների արագ և հաջորդաբար ընթացող թուլացումից ու կծկումից)։

Եակիեպսիայի պատճառները տարաբնույթ են՝ դրանց շարբում նշվում են ժառանգական գործոնները, գլխուղեղի վնասվածքները, բորբքային պրոցեսները։

Հերթական ջղաձգությունների նոպան կարող է սկսվել “աուրայից”, որի դեպքում հիվանդը գգում է տիհած հոտեր, սրտխառնոց, սրտխփոց, տեսողության վաստացում, կատարում է անկանոն շարժումներ, գիտակցությունը նթագնում է, առաջանում են տեսողական ցնորդներ, ապա ուժեղ ծիչ արձակելով՝ կորցնում է գիտակցությունը և ընկնում։ Մարմինը կծկումներից արկվում է, շնչառությունը կարձատու կանգ է առնում։ Մկանային տոնիկ կծկումները փոխսարինվում են կլոնիկ կծկումներով, որոնց հետևանքով կարող են առաջանալ մեխանիկական վնասվածքներ։ Հիվանդի դեմքը գունատ է, բերանից արյունախառը փրփուր է արտադրվում (նոպայի ժամանակ հաճախ ատամներով վնասում է լեզուն, բերանի լորձաբաղանքը), երբեմն առաջանում է ակամա միզարծակում, դեֆեկացիա։ Բբերը լայնացած են, լույսի նկատմամբ ռեակցիան բացակայում է, անորագրակը արագացած է, շնչառությունը՝ հաճախացած։

Աստիճանաբար ջղաձգումները դադարում են, մկանները թուլանում, շնչառությունն ու գիտակցությունը վերականգնվում է։ Հաճախ նոպայից հետո գիտակցությունը առանց վերականգնվելու, հիվանդը ընկնում է խորը քնի մեջ։ Նոպան տևում է 3-4 րոպե։

Մինչքըլական օգնություններ։ նախ հիվանդին ազատել սեղմող, ճնշող հագուստից, գլխի տակ դնել որևէ իր, ուսկրերի կոտրվածքնե-

որից խուսափելու համար վերջությների կողքից հեռացնել տուր առարկաները կամ բռնած պահել վերջությները, ատամների արանքում դնել որևէ փափուկ բան, որ լեզուն չկծի:

Վտանգավոր են ընկնավորության կարճ նոպաները, որից հետո հիվանդները կարող են ունենալ անբացատրելի վարքագիծ: Անհրաժեշտ է նման դեպքերում ապահովել նրա անվտանգությունը՝ ուղեկցել նրան:

Հիսուսերիա՝ բնորոշվում է ընկնավորությամբ՝ նման էպիլեպտիային, բայց խիստ նրանից տարբերվող:

Հիսուսերիկ նոպան սովորաբար սկսվում է հոգեկան ծանր ապրում ներից (տվյալ պահին առկա է հոգեկան վնաս պատճառող գործոնը):

Այս հիվանդությունը դիտվում է այն անհատների մոտ, որոնք մեծացել և դաստիարակվել են եսասիրական մթնոլորտում, կամակոր են, շուտ վիրավորվող, ծգոտում են լինել ուշադրության կենտրոնում:

Հիսուսերիկ նոպան նման է դերասանության, քանի որ այն տեղի է ունենում անպայման մարդկանց ներկայությամբ և հիվանդի վարքը ցուցադրական է: Ի տարբերություն էպիլեպտիկ նոպայի, հիսուսերիայով հիվանդը գիտակցությունը չի կորցնում, մկանային ցնցումները անկանոն են, առանց որևէ հաջորդականության: Թեևուզ աչքերը փակ են, բայց բբերի ռեակցիան լուսի նկատմամբ պահպանված է, ակամա միզարտադրություն և ակամա դեֆեկացիա չի լինում, բերանից արյունախառը փրփուր չի արտադրվում:

Մինչքանի օգնությունը. ստեղծել հանգիստ պայմաններ, հիվանդի մոտից հեռացնել կողմնակի մարդկանց, դադարեցնել աղմուկը, տալ ներշնչելու անուշադրի սպիրտ, շեղել ուշադրությունը, հանկարծակի ջուր լցնել կամ թեթևակի շփել դեմքը:

Մ.Խ. Աղամյան, բժշկ. գիտ. թեկն.

ՈՇԱԿՏԻՎ ՎԻՃԱԿՆԵՐԸ

Ուակտիվ վիճակներն առաջանում են հանկարծակի՝ տարերակին աղետների, արհավիրքների ժամանակ, հիմնականում այն վայրերում, որտեղ միաժամանակ գտնվում են մեծ քանակությամբ մարդիկ (երկրաշարժ, ռմբակոծություն, հրդեհ, ջրհեղեղ և այլն):

Անհանգստությունը, շիփրությունն ու հոլոգնունքն այնքան ազսպատճելի են, որ օրգանիզմը չի հասցնում ընտելանալ վերջիններին: Հոգեծին գրգիչը, արգելակելով կեղևի գործունեությունը, բերում է

ստորադաս ֆունկցիաների ապաարգելակումների: Եվ առաջին հերթին երևան են զալիս արիմիտիվ, ոչ պայմանական ռեակցիաները: Գերակշռող է վախի աֆեկտը, ինչ-որ տեղ փախչելու, թաքնվելու ցանկությունը: Այս ամենը կարող է զուգորդվել կողմնորոշվելու ընդունակության կորստով: Նման վիճակները տևում են մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ, կարող են ավարտվել հիշողության արտահայտված կորստով: Հնարավոր է կարծատև մթագնացություն, շրջապատն ընկալվում է աղոտ, հաճախակի են տեսողական, լսողական պատրանքները:

Ծոկային ռեակտիվ վիճակներն առավել հաճախ են զալիս հոգեծին ընդարձացման տեսքով: Արգելակումը կարող է կրել մասնակի բնույթ, գտնվելով ընդհանուր շարժողական գրգռվածության վիճակում մարդը չի կարողանում արտաքերել և ոչ մի քառ: Հաճախ կարող է արտահայտվել ընդհանուր խորը արգելակումով (քարացում, գիտակցության խնագարումներ):

Այս բոլոր երևույթները զարգանում են հիգելիան ցնցումից անմիջապես հետո, տուժածի դեմքը ընդունում է սալսակի, հժբախտ դիմակի տեսք, և անշարժացումն այնքան խորն է, որ մարդը կարող է նույնիսկ մահանալ պայթյուններից, շենքերի փլուզումներից, անզամ չփորձելով որևէ քայլ ծեռնարկել փրկելու ուղղությամբ:

Հոգեծին ընդարձացումը կարող է հերթափոխվել գիտակցության գրգռվածությամբ կամ մթագնացությամբ:

Ծոկային ռեակցիաները հարուստ են վեգետատիվ - անոթային նշաններով, որոնք ոչ միայն զուգորդում են սուր շրջանը, այլև մնում են խնագարումներն անցնելուց հետո՝ սրտխփոց, գունատություն (կամ կարմրություն), սառը քրտինք, լորձաթանթների կտրուկ չորացում, բբերի լայնացում, լաց: Ծոկային ռեակցիաները կարծատև են: Նման վիճակներում խորհուրդ է տրվում հանգիստը, քունը, հոգեթերապիան, վալերիանայի և բրոմի արեպարատները, քնաբերների, հանգստացնող դեղամիջոցների կիրառումը:

որից խուսափելու համար վերջույթների կողքից հեռացնել սուր առարկաները կամ բռնած պահել վերջույթները, ատամների արանքում դնել որևէ փափուկ բան, որ լեզուն չկծի:

Կտանգավոր են ընկնավորության կարճ նոպաները, որից հետո հիվանդները կարող են ունենալ անբացատրելի վարքագիծ: Անհրաժեշտ է նման դեպքերում ապահովել նրա անվտանգությունը՝ ուղեկցել նրան:

Հիսուսերիա՝ բնորոշվում է ընկնավորությամբ՝ նման էպիլեպսիային, բայց խիստ նրանից տարբերվող:

Հիսուսերիկ նոպան սովորաբար սկսվում է հոգեկան ծանր ապրումներից (տվյալ պահին առկա է հոգեկան վնաս պատճառող գործոնը):

Այս հիվանդությունը դիտվում է այն անհատների մոտ, որոնք մեծացել և դաստիարակվել են եսասիրական մթնոլորտում, կամակոր են, շուտ վիրավորվող, ծգոտում են լինել ուշադրության կենտրոնում:

Հիսուսերիկ նոպան նման է դերասանության, քանի որ այն տեղի է ունենում անպայման մարդկանց ներկայությամբ և հիվանդի վարը ցուցադրական է: Ի տարբերություն էպիլեպտիկ նոպայի, հիսուսերիայով հիվանդը գիտակցությունը չի կորցնում, մկանային ցնցումները անկանոն են, առանց որևէ հաջորդականության: Թեկուզ աչքերը փակ են, բայց բբերի ռեակցիան լուսի նկատմամբ պահպանված է, ակամա միզարտադրություն և ակամա դեֆեկացիա չի լինում, բերանից արյունախառը փրփուր չի արտադրվում:

Մինչքծկական օգնությունը. ստեղծել հանգիստ պայմաններ, հիվանդի մոտից հեռացնել կողմնակի մարդկանց, դադարեցնել աղմուկը, տալ ներշնչելու անուշադրի սպիրտ, շեղել ուշադրությունը, հանկարծակի ջուր լցնել կամ թեթևակի շփել դեմքը:

Մ.Խ. Աղամյան, բժշկ. գիտ. թեկն.

ՈՇԱԿԻՒՎ ՎԻՃԱԿՆԵՐ

Ուակտիկ վիճակներն առաջանում են հանկարծակի՝ տարերային աղետների, արհավիրքների ժամանակ, հիմնականում այն վայրերում, որտեղ միաժամանակ գտնվում են մեծ քանակությամբ մարդիկ (Երկրաշարժ, ռմբակոծություն, հրդեհ, ջրհեղեղ և այլն):

Անհանգստությունը, շիփորությունն ու հոլգմունքն այնքան անսպասելի են, որ օրգանիզմը չի հասցնում ընտելանալ վերջիններիս: Հոգեթիվն գրգիչը, արգելակելով կեղևի գործունեությունը, բերում է

ստորադաս ֆունկցիաների ապաարգելակրումների: Եվ առաջին հերթին երևան են զայիս արդիմիտիվ, ոչ պայմանական ռեակցիաները: Գերակշռող է վախի աֆեկտը, ինչ-որ տեղ փախչելու, թաքնվելու ցանկությունը: Այս ամենը կարող է զուգորդվել կողմնորոշվելու ընդունակության կորստով: Նման վիճակները տևում են մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ, կարող են ավարտվել հիշողության արտահայտված կորստով: <Անարավոր է կարծատև մթագնացություն, շոջապատն ընկալվում է աղոտ, հաճախակի են տեսողական, լսողական պատրանքները:>

Ծոկային ռեակտիվ վիճակներն առավել հաճախ են զայիս հոգեծին ընդարձացման տեսքով: Արգելակումը կարող է կրել մասնակի բնույթ, գտնվելով ընդհանուր շարժողական գրգռվածության վիճակում մարդը չի կարողանում արտաքերել և ոչ մի քառ: Հաճախ կարող է արտահայտվել ընդհանուր խորը արգելակումով (քարացում, գիտակցության խանգարումներ):

Այս բոլոր երևույթները զարգանում են հիգենական ցնցումից անմիջապես հետո, տուժածի դեմքն ընդունում է սարսակի, դժբախտ դիմակի տեսք, և անշարժացումն այնքան խորն է, որ մարդը կարող է նույնիսկ մահանալ պայթյուններից, շենքերի փլուզումներից, անզամ չկործելով որևէ քայլ ծեռնարկել փրկելու ուղղությամբ:

Հոգեծին ընդարձացումը կարող է հերթափոխվել գիտակցության գրգռվածությամբ կամ մթագնացությամբ:

Ծոկային ռեակցիաները հարուստ են վեգետատիվ - անոթային նշամններով, որոնք ոչ միայն զուգորդում են սուր շրջանը, այլև մնում են խանգարումներն անցնելուց հետո՝ սրտխփոց, գունատություն (կամ կարմրություն), սառը քրտինք, լորձաթանթաների կտրուկ չորացում, բբերի լայնացում, լաց: Ծոկային ռեակցիաները կարծատև են: Նման վիճակներում խորհուրդ է տրվում հանգիստը, քունը, հոգեթերապիան, վալերիանայի և բրոմի արեպարատները, քնաբերների, հանգստացնող դեղամիջոցների կիրառումը:

ՀԱԿԱԿԱՍԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԱՆԵՐՈՒՄ

Գ.Ա. Մամյան, քժկ. գիտ. թեկն.

ՀԱՍՏԱՐԱԿԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համաձարակաբանությունը որպես գիտություն լուծում է երկու խնդիր:

1. Ուսումնասիրում է մարդկային հասարակության մեջ վարակիչ հիվանդությունների առաջացման ու տարածման օրինաչփությունները: Համաձարակաբանությունը պարզում է նաև հարցեր կապված հիվանդությունների նկատմամբ մարդկանց ընկալության կամ անընկալության հետ:
2. Միջոցներ է մշակում վարակիչ հիվանդությունները կանխելու և վերացնելու ուղղությամբ:

Համաձարակային պրոցեսը վարակիչ հիվանդությունների այն անընդհատ շղթան է (հիվանդ, փոխանցիչ, առողջ մարդ), որն իր մեջ ընդգրկում է վարակի տարածումը հիվանդից առողջին: Դրա համար պետք են շղթայի 3 օրգաններ՝

- I. Վարակի աղբյուր, որն արտադրում և հարստացնում է արտաքին միջավայրը հարուցիչներով:
- II. Հարուցիչների փոխանցման մեխանիզմ:
- III. Ընկալ օրգանիզմ:

Վարակի աղբյուր համարվում են վարակված հիվանդ մարդը և հիվանդ կենդանին, որոնց օրգանիզմից հարուցիչներն արտադրվում են արտաշնչման, հազի, փսխման, մեզի, կղանքի միջոցով: Արիքային վարակիչ հիվանդությունների դեպքում հարուցիչները կարող են արտադրվել նաև հիվանդի առողջացումից և լրիվ ապարհնվելուց հետո, վարակելով շրջապատին - վարակակրություն հիվանդություններից հետո: Առան նաև առողջ բակտերիակիրներ, որոնք կամ չեն հիվանդացել, կամ հիվանդությունը նրանց մոտ թեթև է ընթացել:

Այն ինֆեկցիաները, որոնք առաջանում են հիվանդ կենդանիներից կոչվում են անտրոպոգոնոզներ (ժանտախտ, բրուցելոզ, սիրիոխտ և այլն): Եթե վարակի աղբյուրը հիվանդ մարդն է - անտրո-

պոնոգ: Ինֆեկցիայի աղբյուրը կարող են լինել նաև թոքունները, օրինակ՝ օրնիբռոզը:

Կարակի փոխանցման մեխանիզմ – ինֆեկցիայի աղբյուրից հարուցիչը դուրս գալով արտաքին միջավայր կարող է ոչնչանալ կամ երկար ժամանակ պահպանվել այնտեղ: Արտաքին միջավայրում արագ ոչնչանում են գրիպի հարուցիչները և երկար են պահպանվում սիբիրախստի, բուռուլիզմի, արկախստի սպորները: Ինֆեկցիայի փոխանցմանը մասնակցում են ջուրը, օդը, հողը, սննդանյութերը: Տարբերվում են ինֆեկցիայի փոխանցման 5 ուղի՝ շիման, սննդային, ջրային, օդային և փոխանցողական (տրանսմիսիոն):

1. Շիման կամ կոնտակտային ուղի. այն լինում է ուղղակի և անուղղակի: Ուղղակի, եթե հիվանդ և առողջ օրգանիզմները անմիջապես շիման մեջ են մտնում: Օրինակ՝ հիվանդ կենդանու կծելուց, համբուրից, սեռական ճանապարհով: Անուղղակի կոնտակտն ավելի հաճախ է հանդիպում և լինում է կենցաղի առարկաների, խաղալիքների, գրքերի և այլնի միջոցով:
2. Սննդային ուղի. սա հաճախ հանդիպող ուղի է: Այս ճանապարհով են փոխանցվում բույր աղիքային ինֆեկցիաները:
3. Ջրային ուղի. այսպես փոխանցվում են գերազանցապես աղիքային ինֆեկցիաները վարակված ջուրը օգտագործելիս (խմելուց, լողանալուց, սննդամթերքը լվանալուց):
4. Օղի միջոցով փոխանցվում են շնչական համակարգի հիվանդությունները՝ գրիպ, բնական ծաղիկ, մանկական ինֆեկցիաները: Կարակը փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով՝ խոսելիս, հազից, փոշտոցից և կոչվում են օդակաթիլային ինֆեկցիաներ:
5. Փոխանցողական (տրանսմիսիոն) ուղի. վարակը փոխանցվում է միջատների խայթոցից: Միջատները լինում են ակտիվ (մլակ, մոծակ, ոջիլ, տիգ, լու) և պասիվ (ճանճեր): Ակտիվ փոխանցիչները ծովում են հիվանդի արյունը և ապա կծելով առողջին, փոխանցում վարակը: Պասիվ փոխանցիչները՝ ճանճերը, իրենց տոտիկներով վարակը տեղափոխում են սմնոյի վրա:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԱՐԴՅՈՒՆՈՒՅ

Համաձարակի զարգացման համար անհրաժեշտ է նաև երրորդ օդակը՝ բնակչության ընկալությունը: Կերցինս տարբեր ինֆեկցիաների դեպքում տարբեր է: Կան հիվանդություններ, որոնց նկատ-

մամբ բոլորն ընկալ՝ են: Օրինակ՝ բնական ծաղիկ, գրիպ, մինչդեռ ո-րովայնային տիֆի նկատմամբ ընկալությունը ցածր է:

Նշանակություն ունի նաև տարիքը, օրինակ՝ երեխաները մինչև 6 ամսական տարիքը գրեթե չեն հիվանդանում մանկական ինֆեկցիաներով: Մեծահասակները հազվադեպ են հիվանդանում կապույտ հազորվ: Մեծ նշանակություն ունի կենցաղային ապրելակերպը: Խրոնիկ թեր սննուցումը, գերլարված աշխատանքը, նյարդային և հոգեկան լարումները խիստ հջեցնում են օրգանիզմի դիմադրողականությունը: Բնակչության կուտակումները, հակասանիտարական վիճակը, կուլտուրայի ցածր մակարդակը նպաստում են ինֆեկցիոն հիվանդությունների զարգացմանը: Ինֆեկցիոն հիվանդությունները ըստ ընթացքի լինում են սուր և խրոնիկ, վերջինիս սրացումը կոչվում է **ռեցիդիվ**:

ԿԱՐԱԿԻՉ ԺՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՄՐԱԾՄԱՆ ԻՆՏԵՆՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայում ինֆեկցիոն հիվանդություններից շատերի համար բնորոշ են տարածվածության եզակի դեպքերը: Աղդամի հիվանդությունը անվանվում է **սպորադիկ** (եզակի): Միևնույն հիվանդության զանգվածային տարածումը կոչվում է **համաճարակ** (Լայտենիա): Որոշ հիվանդություններ՝ օրինակ, գրիպը, կարող են շատ տարածվածություն ունենալ և գրավել մեծ տերիտորիաներ, նույնիսկ աշխարհամասեր: Նման դեպքերում խոսում են պամուճային մասին:

Համաճարակային օջախն կամ վարակի աղբյուր է կոչվում այն տեղը, որտեղ տեղակայվում է վարակի աղբյուրը, իրեն շրջապատող այն տարածքով, որի շրջանակներում տվյալ պայմաններում և տվյալ հիվանդության դեպքում կարող է փոխանցվել վարակը:

ԻՆՖԵԿՑԻՈՆ ՊՐՈՑԵՍ

Ինֆեկցիան օրգանիզմի վարակվածության վիճակն է, որն առաջանում է հիվանդագին մանրէներից մակրո-միկրո օրգանիզմների միջև պայքարի հետևանքով: Ինֆեկցիոն արոցեսի զարգացումը ընթացանում է 4 շրջանով:

1. **Գաղտնի կամ ինկուբացիոն շրջան.** այն սկսվում է հարուցիչի թափանցումից օրգանիզմ և ընդգրկում է հիվանդության առաջնային նշանները: Ինկուբացիոն շրջանի տևողությունը բազմազան է՝ սկսած մի քանի ժամից (խոլերա, գրիպ)

մինչև մի քանի օր (տիֆ), նույնիսկ մի քանի ամիս (Բուռկի-նի հիվանդություն) և տարի (СПИД): Այս շրջանում տեղի է ունենում հարուցիչի բազմացում և օրգանիզմում նրանց թույների կրιտակում:

2. Նախանշանային կամ պրոդրոմալ շրջան. սա ընդգրկում է հիվանդության 1-5 օրերը: Լինում են ընդհանուր ախտանիշներ՝ թույնություն, ջերմության բարձրացում, ախտրժակի վատացում և այլն:
3. Հիվանդության զարգացման շրջան. երբ ի հայտ են գալիս հիվանդության հիմնական կամ գլխավոր նշանները, հիվանդները խիստ վտանգավոր են շրջապատի համար:
4. Առողջացման կամ ռեկոնվալեսցենցիայի շրջան. երբ հիվանդության նշանները աստիճանաբար մարում են և հիվանդներն ապաքինվում են:

Ս.Ս. Անանյան

ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ըստ Գրոմաշևսկու ինֆեկցիոն հիվանդությունները բաժանվում են 4 մեծ խմբի.

1. **Աղիքային ինֆեկցիաներ:** Ինֆեկցիայի աղբյուրը հիվանդ մարդն է կամ վարակակիրը: Հարուցիչն արտազատվում է կրանքի և մեզի միջոցով: Վարակը ներթափանցում է բերանով - որովայնային տիֆ, խոլերա, դիաբետերիա և այլն:
2. **Շնչարական ուղիների կամ օղակաթիլային ինֆեկցիաներ:** Ինֆեկցիայի աղբյուրը հիվանդ մարդն է կամ վարակակիրը: Նրանց հազի, փոշտողի ժամանակ թքի աննշան կաթիլների հետ արտադրվում են մեծ քանակով հարուցիչներ, որոնք շնչուղիներով թափանցում են առողջ օրգանիզմ - գրիպ, կարմրուկ, դիֆտերիա, բութեց, բնական ծաղիկ և այլն:
3. **Արյունային, փոխանցողական (տրամամիսիոն) ինֆեկցիաներ:** Սրանց հարուցիչը փոխանցվում է արյուն ծծող փոխանցողների (մոծակ, տիգ, նաև, ողիլ, լու և այլն) խայթոցի միջոցով - բծավոր և հետադարձ տիֆեր, մալարիա, ժանտախտ, տղային էնցեֆալիտ և այլն:
4. **Արտաքին ծածկույթների ինֆեկցիաներ:** Հարուցիչները թափանցում են արտաքին ծածկույթներով՝ հազուստի, գլխարկի, սրբիչի միջոցով: Այս խմբի մեջ են դասվում նաև վեներական հիվանդությունները – սիֆիլիս, գոնորեա:

Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը և հակահամաժառակային միջոցառումները տարբեր են երեք ուղղությամբ.

- I. Վարակի աղբյուրի վերացում – Վարակազերծում:
- II. Փոխանցման նեխանիզմի ու հարուցիչի տարածման ուղիների ընդհատում:
- III. Ինֆեկցիոն հիվանդությունների դեմ բնակչության անընկալության ստեղծում:

I-ը իրագործելու համար անհրաժեշտ է վաղ շրջանում աղտորոշել հիվանդությունը և հիվանդին հոսպիտալացնել, ապա օջախը ենթարկել վարակազերծման, կատարել վարակզերծում (դեզինֆեկցիա), նախապես կատարելով հակահամաճարակային հետազոտություն:

II-ը իրագործելու համար պետք է բնակատեղում բարելավել կենցաղային պայմանները, ուժեղացնել հսկողությունը սննդի և խմելու ջրի վրա, աղբը ժամանակին հեռացնել, պայքարել ճանճերի դեմ:

III-ը իրագործելու համար պետք է բնակչության մեջ ստեղծել անընկալություն պատվաստումների միջոցով:Պարտադիր են համարվում Tbc-ի, դիֆտերիայի, կապույտ հազի, կարմրուկի դեմ պատվաստումները, իսկ էպիդեմիկ ցուցմունքների դեպքում նաև գրիպի, խոլերայի դեմ տալիս են վակցինա, -օլորուկին, շիճուկներ:

Կարանտինը միջոցառումների համակարգ է, որը նպատակ ունի կանխելու ինֆեկցիայի տարածումը ինֆեկցիայի օջախից և մարելու ինֆեկցիայի օջախը: Օջախում ստեղծվում է զինված պահակություն, որը թույլ չի տալիս մարդկանց, բեռների ելքն ու մուտքը: Կարանտինի շրջանում լինում է մատակարարում քաղպաշտպանության ծառայությունների կողմից: Հիմնարկներում դադարեցնում են աշխատանքները:

ԴԵԶԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՆԸՆՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԾՂԱՆԱԿՆԵՐԸ

Դեզինֆեկցիա (վարակազերծում) բարն առաջացել է des - բացառել և լատիներեն ինֆեկցիո – վարակ բառերից, այսինքն վարակազերծում՝ Վարակիչ հիվանդությունների հարուցիչների ոչնչացում մարդու շրջապատում: Դեզինֆեկցիայի նպատակն է ոչնչացնել վարակի օջախը՝ սկսած հիվանդի արտաթորանքներից, կեղուսոված հրերից: Ախտահաման խնդիրն է՝ ինֆեկցիայի փոխանցման ուղիների ընդհատումը: Տարբերում են ախտահաման մեխանիկական, ֆիզիկական և քիմիական մեթոդներ:

1. Մեխանիկան մեթոդն իր մեջ ընդգրկում է ծեռքերը լվանալը, լվացքը, սենյակի օդափոխումը, խոնավ եղանակով մաքրելը և այլն:

2. Ֆիզիկական մեթոդն ընդգրկում է արևի ուլտրամանուշակագոյն ճառագայթների և կվարցային լամպերի կիրառումը մանկական սենյակներում, վիրահատարաններում, ոչ արժեքավոր իրերի այրումը, սպիտակեղենի, ամանեղենի, գրոծիքների եռացնելը: Ֆիզիկական մեթոդ է նաև չոր տաք օդի միջոցով ախտահանումը չորացնող պահարաններում, ավտոկավուներում բարձր ճնշման տակ գտնվող գլորշիռ ախտահանումը և այլն:

3. Քիմիական մեթոդի մեջ մտնում են որոշ քիմիական նյութերի կիրառումը՝ քլորակիր, քլորամին, լիզոլ, ֆորմալին:

Սանիտարահամաճարակային նշանակության առումով վարակագերծումը լինում է կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) և օջախային: Վերջինս իր հերթին լինում է ընթացիկ և եղրափակիչ:

Պրոֆիլակտիկ դեղինֆեկցիան նպատակ ունի կանխելու հնարավոր վարակը: Օրինակ՝ կաթի պաստերիզացիան 70°-ում 90 րոպե, խմելու ջրի քլորացումը, տրանսպորտի բոլոր ձևերի և բաղնիքների ախտահանումը:

Օջախային դեղինֆեկցիան կիրառվում է ինֆեկցիոն օջախի հայտնաբերման դեպքում: Այն լինում է ընթացիկ, իրագործվում է հիվանդի շրջապատում և եղրափակիչ, որն անց է կացվում ինֆեկցիայի օջախում: Այս դեղինֆեկցիան կատարվում է միանվագ:

ԴԵԶԻՆՍԵԿՑԻԱՅԻ (ՄԻՋԱՏԱԶՐԿՄԱՆ) ՆԵԽԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՄԱԿՆԵՐԸ

Դեղինսեկցիան միջատների ոչնչացումն է, որի համար օգտագործում են ֆիզիկական և քիմիական եղանակներ: Ֆիզիկական եղանակը նույն է, ինչ դեղինֆեկցիայի դեպքում՝ այրում, արդուկում, սպիտակեղենի եռացում:

Քիմիական եղանակը քիմիական նյութերի օգտագործումն է, օրինակ՝ քլորոֆոսը:

ԴԵՌԱՏԻԶԱՑԻԱ, ՆԵԽԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դեռատիզացիան օգտագործվում է կրծողներին ոչնչացնելու համար և ունի մեխանիկական, քիմիական և կենսաբանական եղանակներ:

Մեխանիկական եղանակը ծուլակների, տնային և դաշտային թակարդների օգտագործումն է:

Քիմիական եղանակը անօրգանական նյութերի օգտագործումը՝ Բա-ի և ցինկի միացությունների ձևով: Օրգանական թույնից կիրառվում է կրիսիդը:

Կենսաբանական եղանակի հիմքում ընկած է բնության մեջ եղած կենսանական հակոտնյան:

Գ.Ա. Մամյան,քժկ. գիտ.թեկն.

ԻՄՈՒՆԻՏԵՏԸ

Իմունիտետը (immunitas – լատ. գերծ մնալ) օրգանիզմի անընկալիության պաշտպանական ռեակցիան է մանրէների և նրանց տոքսինների նկատմամբ: Իմունիտետը մարդկությանը հայտնի է շատ վաղ ժամանակներից:

Իմունիտետի ժամանակակից դասակարգումը հետևյալն է.

1. տեսակային (բնածին) կամ ժառանգական իմունիտետ,

2. ծեռքբերովի իմունիտետ:

Տեսակային իմունիտետը հատուկ է տվյալ օրգանիզմի տեսակին և անցնում է ժառանգաբար: Օրինակ՝ մարդիկ անընկալ են եղթերավոր անասուններին հատուկ ժանտախտի, հավերի խոլերայի նկատմամբ, և ընդհակառակը, բացի մարդուց ոչ մի այլ կենդանի չի հիվանդանում որովայնային տիֆով, սիֆիլիսով և այլն:

Չեղքբերովի իմունիտետը լինում է բնական և արհեստական: Բնական իմունիտետը լինում է ակտիվ և պասիվ: Բնական ակտիվ իմունիտետը առաջանում է ինֆեկցիոն հիվանդությունները կրելուց հետո, անկախ նրանից թե ինֆեկցիան աննկատ է ընթացել՝ առանց ախտանիշների:

Բնական պասիվ իմունիտետն այն է, երբ նորածինը մինչև իր կյանքի 6 ամիսը չի հիվանդանում մանկական ինֆեկցիաներով, որովհետև ներարգանդային կյանքում պլացենտայի միջոցով ստանում է հակամարմիններ (իմունիտետ), որը 6 ամսից հետո վերանում է և երեխան դառնում է ընկալ:


Արհեստական իմունիտետը նոյնական լինում է ակտիվ և պասիվ:

Արհեստական ակտիվ իմունիտետը այն է, երբ մարդուն պատվաստում են մանրէներից և նրանց թույններից ստացված պատվաստանյութեր՝ վակցինաներ: Իմունիտետը պահպանվում է 1-2 տարի:

Արհեստական պասիվ իմունիտետն այն է, երբ սրսկում են պատրաստի պաշտպանական նյութեր՝ շիճուկ, -գլոբուլին: Այս դեպքում օրգանիզմը չի մասնակցում պաշտպանական նյութերի ստեղծմանը, այլ ստանում է պատրաստի ծևով: Նման դեպքում իմունիտետը պասիվ է և կարծատն՝ 3-4 շաբաթ:

Այսպիսով, իմունիտետը խիստ կապված է ինֆեկցիոն պրոցեսի հետ և զարգանում է նրա հետ մեկտեղ:

HUNTS



Վակցինաների տեսակները

1. Կենդանի վակցինա (թուլացրած միկրոբ, Եօ, բնական ծաղիկ):
 2. Սպանված վակցինա (խոլերա, որովայնային տիֆ):
 3. Քիմիական վակցինա (որովայնային տիֆ, Աև Բ պարատիֆ, պոլիվակցինա):
 4. Ամբողջական (ոհիետեղիա, ըռուսիամ):

Վակցինաների ներմուծման ռուիները

1. Վերմաշկային (ծաղիկ, ժան-տախտ):
 2. Ներմաշկային (կենդանի վակեց-նայով՝ *Tbc*):
 3. Ենթամաշկային (թիակի տակ):
 4. Միջմկանային (շիճուկ, -գլո-բուլին):
 5. Պերօրալ (հաբ, լուծույթ):
 6. Քրից (գրիպ):
 7. Հասուկ ապարատով՝ անա-սեղ – ռուռկա (Բուտկին):
 8. Ինհաւագին:

Ս.Ս. Անանյան

ԳՐԻՊ

Գրիպը սուր վիրուսային հիվանդություն է:

Հարուցիչը՝ վիրուս է: Հանդիպում են վիրուսի A, B, C, D, E և այլ տեսակները: Վիրուսը շատ անկայուն է, արագ ոչնչանում է արտաքին միջավայրում, արևի ուղիղ ճառագայթների ազդեցության ներքո, տաքացման և դեղինֆեկցիոն միջոցների կիրառման դեպքում, կայուն է ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Ինֆեկցիայի աղբյուրը հիվանդ մարդն է: Բնակչության ընկալությունը բարձր է: Հիվանդությանը հակված են բոլոր տարածքային խմբերը, սկսած 6 ամսական հասակից:

Ինֆեկցիան փոխանցվում է օդակաթիլային և կոնտակտային ձանապարհներով:

Նշանները. զաղտնի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 1-2 օր: Հիվանդությունը սկսվում է սուր՝ դողով, սարսութով, ջերմության բարձրացումով $38\text{--}39^{\circ}\text{C}$ և ավելի: Բնութագրվում է արտահայտված հնտոքսիկացիայով՝ գլխացավ, մկանային և հոդային, ցավեր ակնագնդերում: Կաղ հասակի երեխաների մոտ կարող է ընթանալ ցնցումներով, կեղծ կրուպի երևույթներով: Հիվանդության ընթացքը 3-5 օր է: Ամենահաճախակի հանդիպող բարդություններից են՝ թռքաբորբը, ֆրոնտիտը, հայմորիտը, օսիտը, վիրուսային միուկարդիտը, մենինգիտը:

Առաջին բուժօգնություն. ցուցված է մեկուսացում, անկողնային ռեժիմ, սենյակի հաճախակի օդափոխում, մեծաքանակ հեղուկներ, վիտամին C (ցիտրուսներ, կանաչ թեյ):

Բարդությունների շրջանում նշանակվում է կոմպլեքսային բուժում հակաբիոտիկներ, սոլֆանիլամիդներ, խորխաբեր և այլն:

Կանխարգելման նպատակով կատարվում է պատվաստում ըստ համաճարակային ցուցումների:

Ս.Ս. Անանյան

ԴԻՖԹԵՐԻԱ

Դիֆթերիան սուր ինֆեկցիոն հիվանդություն է:

Հարուցիչը՝ դիֆթերիայի ցուպիկն է, կայուն արտաքին միջավայրում, լավ պահպանվում է չոր և սառը պայմաններում: Նրա թույնը ներծծվելով արյան մեջ առաջացնում է ինտոքսիկացիա, ախտահարելով սիրտ-անոթային և նյարդային համակարգերը:

Վարակի աղբյուրը հիվանդ մարդն է և վարակակիրը:

Փոխանցվում է օղակաթիլային և շփման միջոցով:

Նշանները. զաղտնի շրջանը 2-10 օր է: Տարբերում են հետևյալ կլինիկական ծևերը.

Բկանցքի դիֆերենիա, որն իր հերթին լինում է օջախային (բկանցքաբերանային, բկանցքաքայլային, բկանցք-աչք), տարածուն, տոքսիկ:

Բկանցքային ծևի ժամանակ դիտվում է փառ նշիկների վրա, կլման ակտը ցավոտ է, պարանոցի ավշահանգույցները մեծացած, ջերմությունը $38\text{-}38.5^{\circ}\text{C}$: Տարածուն ծևի ժամանակ փառը տարածվում է նաև աղեղների, փափուկ քիմքի և լեզվակի վրա: Կերը նշված երևույթները լինում են ավելի արտահայտված: Տոքսիկ ծևի ժամանակ հիվանդի ընդհանուր վիճակը ծանր է, ջերմությունը 40°C , ուժեղ գլխացավ և ցավ կրկնորորում, երբեմն էլ որովանում և պարանոցում: Նշիկները խիստ այտուցված, հաստ գորշագույն փառը ամբողջովին պատում է նշիկները, աղեղները, լեզվակը, քիմքը: Լեզուն փառակալված է, բերանից գալիս է յուրահատուկ տիած հոտ: Բնորոշ է պարանոցի ենթամաշկի այտուց (I^0 , II^0 , III^0): Մեծանում են պարանոցի բոլոր ավշահանգույցները: Նշվում են խանգարումներ սիրտ-անոթային համակարգի կողմից:

Դիֆերենիկ կամ իսկական կրուպը ուղեկցվում է կրկնորդի և շնչափողի լորձաբաղանքի կրուպով բորբոքմամբ: Հիվանդությունը սկսվում է ջերմաստիճանի բարձրացումով (մինչև 38°C), կոպիտ հաշոցանման հազոր, ծայնի խոպությամբ: 2-3 օր անց ախտանշանները խորանում են, շնչառությունը դառնում է աղմկոտ, դժվարացած, ծայնը կորչում է: Այս փուլում հիվանդի վիճակը ծայրահեռ ծանր է, դիտվում են թթվածնային քաղցի երևույթներ, ցնցումներ, գիտակցությունը մթագնած կամ բացակայում է, շնչահեղծություն, մահ: Ամենատարածված բարդություններն են՝ միոկարդիտները, պոլիներիտները, փափուկ քիմքի կաթվածները:

Ի տարբերություն իսկական կրուպի, կեղծ կրուպը հանդիպում է վիրուսային հիվանդությունների ֆոնի վրա և չի ուղեկցվում ծայնի կորսոտով (ծայնը պահպանված է):

Առաջին բուժօգնություն. ապահովել տաք խոնավ օդ (ինհալյացիա), տաք լոգանք, տաք ըմպելիք, կանչել շտապօգնություն:

Կանխաղեկում. օրացուցային պատվաստումներ սկսած 3 ամսական հասակից:

Ս.Ս. Անանյան

ԳՐԻՊ

Գրիպը սուր վիրուսային հիվանդություն է:

Հարուցիչը վիրուս է: Հանդիպում են վիրուսի A, B, C, D, E և այլ տեսակները: Վիրուսը շատ անկայուն է, արագ օչնչանում է արտաքին միջավայրում, արևի ուղիղ ճառագայթների ազդեցության ներքո, տաքացման և դեգինֆեկցիոն միջոցների կիրառման դեպքում, կայուն է ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Ինֆեկցիայի աղբյուրը հիվանդ մարդն է: Բնակչության ընկալությունը բարձր է: Հիվանդությանը հակված են բոլոր տարածքային խմբերը, սկսած 6 ամսական հասակից:

Ինֆեկցիան փոխանցվում է օդակարիլային և կոնտակտային ձանապարհներով:

Նշանները. գաղտնի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 1-2 օր: Հիվանդությունը սկսվում է սուր՝ դողով, սարսութով, ջերմության բարձրացումով՝ $38\text{--}39^{\circ}\text{C}$ և ավելի: Բնութագրվում է արտահայտված խնտորքիկացիայով՝ գլխացավ, մկանային և հոդային, ցավեր ակնազններում: Կաղ հասակի երեխաների մոտ կարող է ընթանալ ցնցումներով, կեղծ կրուտի երևույթներով: Հիվանդության ընթացքը 3-5 օր է: Ամենահաճախակի հանդիպող բարդություններից են՝ թոքաբորբը, ֆրոնտիտը, հայմորիտը, օտիտը, վիրուսային միոկարդիտը, մենինգիտը:

Առաջին բուժօգնություն. ցուցված է մեկուսացում, անկողնային ռեժիմ, սենյակի հաճախակի օդափոխում, մեծաքանակ հեղուկներ, վիտամին C (ցիտրուսներ, կանաչ թեյ):

Բարդությունների շրջանում նշանակվում է կոմպլեքսային բուժում՝ հակարիուտիկներ, սուլֆանիլամիդներ, խորխաբեր և այլն:

Կանխարգելման նպատակով կատարվում է պատվաստում ըստ համաճարակային ցուցումների:

Ս.Ս. Անանյան

ԴԻՖԵՐԵՆԻԱ

Դիֆերենիան սուր ինֆեկցիոն հիվանդություն է:

Հարուցիչը՝ դիֆերենիայի ցուպիկն է, կայուն արտաքին միջավայրում, լավ պահպանվում է չոր և սառը պայմաններում: Նրա թույնը ներծծվելով արյան մեջ առաջացնում է խնտորքիկացիա, ախտահարելով սիրտ-անոթային և նյարդային համակարգերը:

Վարակի աղբյուրը հիվանդ մարդն է և վարակակիրը:

Փոխանցվում է օդակաթիլային և շփման միջոցով:

Նշանները. գաղտնի շրջանը 2-10 օր է: Տարբերում են հետևյալ կլինիկական ձևերը.

Բկանցքի դիֆերերիա, որն իր հերթին լինում է օջախային (բկանցքաբերանային, բկանցքաքաղաքային, բկանցք-աչք), տարածուն, տոքսիկ:

Բկանցքային ձևի ժամանակ դիտվում է փառ նշիկների վրա, կլման ակտը ցավոտ է, պարանոցի ավշահանգույցները մեծացած, ջերմությունը $38\text{-}38.5^{\circ}\text{C}$: Տարածուն ձևի ժամանակ փառը տարածվում է նաև աղեղների, փափուկ քիմքի և լեզվակի վրա: Կերը նշված երևույթները լինում են ավելի արտահայտված: Տոքսիկ ձևի ժամանակ հիվանդի ընդհանուր վիճակը ծանր է, ջերմությունը 40°C , ուժեղ գլխացավ և ցավ կրկորորում, երբեմն էլ որովայնում և պարանոցում: Նշիկները խիստ այտուցված, հաստ գորշագույն փառը ամբողջովին պատում է նշիկները, աղեղները, լեզվակը, քիմքը: Լեզուն փառակալված է, բերանից գալիս է յուրահատուկ տիած հոտ: Բնորոշ է պարանոցի ենթամաշկի այտուց (I^0 , II^0 , III^0): Մեծանուցի բոլոր ավշահանգույցները: Նշվում են խանգարումներ սիրտ-անոթային համակարգի կողմից:

Դիֆերերիկ կամ խևական կրուպը ուղեկցվում է կոկորոյի և շնչափողի լորձաբաղանթի կրուպով բորբոքնամբ: Հիվանդությունը սկսվում է ջերմաստիճանի բարձրացումով (մինչև 38°C), կոպիտ հաշոցանման հազորվ, ծայնի խռպութությամբ: 2-3 օր անց ախտանշանները խորանում են, շնչառությունը դառնում է աղմկոտ, դժվարացած, ծայնը կորչում է: Այս փուլում հիվանդի վիճակը ծայրահեռ ծանր է, դիտվում են թթվածնային քաղցի երևույթներ, ցնցումներ, գիտակցությունը մթագնած կամ բացակայում է, շնչահեղծություն, մահ: Ամենատարածված բարդություններն են՝ միոկարդիտները, պոլիսիտները, փափուկ քիմքի կաթվածները:

Ի տարբերություն խևական կրուպի, կեղծ կրուպը հանդիպում է վիրուսային հիվանդությունների ֆոնի վրա և չի ուղեկցվում ծայնի կորսոտով (ծայնը պահպանված է):

Առաջին բուժօգնություն. ապահովել տաք խոնավ օղ (ինհալյացիա), տաք լոգանք, տաք ընպելիք, կանչել շտապօգնություն:

Կանխարգելում. օրացույցային պատվաստումներ սկսած 3 ամսական հասակից:

**Ա.Ս.Անանյան,
Ա.Ա.Հարությունյան**

ՎԻՐՈՒՏԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ

Դրանք սուր կամ քրոնիկ ընթացող վիրուսային հիվանդություններ են: Կախված վիրուսի տեսակից տարրերում են հեպատիտ A (ինֆեկցիոն դեղնախտ կամ Բուտկինի հիվանդություն), հեպատիտ B, հեպատիտ C և այլն:

Հեպատիտ A-ի վիրուսը կայուն է եթերի, թթուների, քլորի հանդեպ, եռացնելիս ոչնչանում է 5 րոպեի ընթացքում: Արտազատվում է կղանքով գաղտնի շրջանի վերջին օրերից սկսած և ամբողջ նախադեղնուկային շրջանում:

Բ վիրուսը (Ղեյնի մասնիկը) տան ջերմաստիճանի պայմաններում պահպանվում է 6 ամսվա ընթացքում, չեղոքանում է եռացման դեպքերում 10-20 րոպեի ընթացքում: Կայուն է քիմիական միացությունների նկատմամբ: Մարդու օրգանիզմում կարող է պահպանվել մի քանի տարի: Սկսած գաղտնի շրջանից վիրուսը հայտնաբերվում է արյան, քրտինքի, սերմնահեղուկի և այլին մեջ:

Վարակի աղբյուրը հիվանդ մարդն է Վիրուսակիրը:

Վիրուսային հեպատիտ A փոխանցվում է աղիքային (կղանքա-բերանային) և կրնտակտային ձանապարհներով: Վիրուսային հեպատիտ B և C վարակելիությունը տեղի է ունենում արյան և սեռական ձանապարհներով: Այսօր նշվում է նաև կենցաղա-կրնտակտային ձանապարհը: Հնարավոր է վարակի փոխանցումը պտղին պերինատալ ձանապարհով՝ ծննդաբերության ընթացքում և կերակրման ժամանակ:

Ոիսկի խումբ են կազմում՝ բնրամոլները, անկանոն սեռական կյանք վարողները, բուժպերսոնալը և դաշվածքին ենթարկվողները:

Նշանմերը. հեպատիտ A-ի գաղտնի շրջանը տևում է 10-50 օր (30 օր), հեպատիտ B-ի՝ 30-200օր (2-4 ամիս), հեպատիտ C-ի՝ 21-140 օր (~3-4 ամիս): Հեպատիտ A-ն սկսվում է նախադեղնուկային շրջանով, որը տևում է մոտավորապես մեկ շաբաթ և ուղեկցվում է սուր, բայց կարճատև ջերմության բարձրացումով, ախտրժակի անկումով, սրտխառնոցով, փսխումով, որովայնացավերով: Նախադեղնուկային շրջանի վերջում նկատվում է մեզի մգացում, կղանքի գունազրկում: Ղեղնուկային շրջանը սկսվում է լորձաթաղանթների և մաշկի դեղնությամբ, որը զնալով դառնում է ավելի ինտենսիվ, մեծանում է լյարդը: Հիվանդը նշում է բութ ցավեր աջ քոլակողի շրջանում: Ղեղնուկային շրջանը տևում է 10-12 օր:

Վիրուսային հեպատիտ B-ն կարող է սկսվել սուր, դեղնուկային շրջանում հիվանդության ընթացքը ավելի ծանր է: Դա արտահայտվում է մաշկի ինտենսիվ դեղնությամբ, ուղեկցվում է մաշկի քորով, նաև փայծախի մեծացմամբ և հաճախ թունավորման (ինտոկսիֆիկացիայի) խորացումով (ջերմության բարձրացում, սրտխառնոց, փսխումներ), երբեմն արյունազեղումներով և արյունահոսություններով (ներերից, քթից): Դեղնուկային շրջանը տևում է 3-4 շաբաթ: Կարող է զարգանալ սուր յարդային անբավարարություն, որն իր հերթին կիանգեցնի յարդի ցիօնզի:

Վիրուսային հեպատիտ C-ն սուր ընթացք չունի: Ընթանում է աննշան և հաճախ հանգեցնում է յարդի ցիօնզի:

Բուժում. Խիստ անկողնային ռեժիմ, դիետա՝ կաթնաբուսական, սահմանափակելով ճարպերը, մեծաքանակ հեղուկներ, վիտամիններ:

Կանխարգելման նպատակով կոնտակտավորներին ներարկվում է իմունոզիրուլին: Վիրուսային հեպատիտ B-ի կանխարգելման նպատակով կարևոր է օգտագործել միանվագ օգտագործման բժշկական գործիքներ, կանոնավոր կատարել մանրէազերծում, խիստ վերաբերվել դոնորների ընտրությանը, կանոնավորել սեռական կյանքը: Ներկայումս կատարվում են պատվաստումներ վիրուսային հեպատիտ A և B տեսակների նկատմամբ:

Ա.Ա. Անանյան,
Ա.Ա. Հարությունյան

ԽՈԼԵՐԱ

Խոլերա. Սուր ինֆեկցիոն հիվանդություն է: Դասվում է խիստ վտանգավոր ինֆեկցիաների շարքին:

Հարուցիչը խոլերային վիբրիոնն է: Ունի երկու տարատեսակ՝ vibrio koch և vibrio el-Tor: Վերջին տարում ամենատարածվածն համարվում է վիբրիոն el-Tor-ը: Այն բավականին կայուն է արտաքին միջավայրում, ջրում պահպանվում է մի քանի ամսվա ընթացքում: Սովորական դեղինֆեկցիոն նյութերի ազդեցության տակ արագ քայլայվում է:

Վարակի աղբյուրը հիվանդ նարդն է և վարակակիրը:

Փոխանցման ուժին աղիքայինն է (վարակված սննդի կամ ջրի օգտագործման հետևանքով), երբեմն էլ կոնտակտայինը:

Նշանները զաղտնի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 5 օր:

Հիվանդությունը սկսվում է սուր, փորուծությամբ, որը ժամ առ ժամ հաճախանում է: Սկզբում լուծք կղանքային է, այնուհետև անգույն, ջրային, միանում է փսխումը: Հետագայում կղանքը դարնում է

անընդհատ և ակամա, ինչը հանգեցնում է օրգանիզմի ջրազրկմանը: Նշվում է ջերմության իջեցում, մաշկը ցիանոտիկ, կնճռոտված (“լվացարարուիկո ծեռքեր”), դիմագծերը սրված, լորձարադանքները չոր, ձայնը նստած, ճնշումն իջած: Ջրազրկման հետևանքով առաջանում է արյան խտացում (հարաբերական լեյկոցիտոզ և հեմոգլոբինի բարձրացում): Հիվանդը կարծ ժամանակում կորցնում է քաշի 8-12%: Կղանքը և միզարծակությունը բացակայում են:

Բուժում՝ մեկուսացում: Հեղուկների վերականգնում ջրազրկման աստիճանից կախված: Հակաբիոտիկների կիրառում:

Կանխարգելում՝ հիվանդների և վարակակիրների վաղաժամ հայտնաբերումը և մեկուսացումը: Օջախում վերջնական դեգինֆեկցիա, կարանտինի սահմանում և կոնտակտավորների լաբորատոր հետազոտություն:

Գ.Ա. Մամյան, բժշկ. գիտ. թեկն.

ԲՈՏՈՒԹԵԶՄ

Բոտուլիզմը սննդային տոկսիկոինֆեկցիոն հիվանդություն է:

Հարուցիչը՝ խիստ անաերոբ ցուակի է, որն անբարենպաստ միջավայրում գոյատևում է սպորների տեսքով: Բնության մեջ հարուցիչը գտնվում է տաքարյուն և սառնարյուն կենդանիների աղիներում, նրանց արտաքրանքներով արտազատվում է հողի մեջ: Հարուցիչը վարակված բանջարեղենի, մրգերի, մսի, ծկան պահածոյացնելու ժամանակ ստեղծված անօդակյած պայմանները նպաստում են հարուցիչի վերափոխմանը սպորներից վեգետատիվ (թույն արտադրող) ձևի: Տարբերում են 7 հակածին ձևեր: Թույնի կուտակումը սննդի մեջ չի փոխում պարունակության ո՞չ համը, ո՞չ հոտը, ո՞չ էլ գույնը: Ալեստամոքսային տրակտում բուսուլությունը ֆերմենտների ազդեցության տակ չի քայլավում: Ոգեկից խմիչքները մասամբ չեզզանում են թույնի և որոշ չափով մեղմացնում հիվանդության ընթացքը: Պահածոյում կուտակված թույնը քայլավում է 80°C ջերմաստիճանի տակ 30 րոպեի ընթացքում, իսկ սպորները ոչնչանում են եռացնելիս 6 ժամվա ընթացքում: Թույնը հակում ունի ախտահարելու Կև:

Նշանները. Ժաղանի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 10 օր: Հիվանդությունը սկսվում է գլխապտույտով, գլխացավերով, սրտխառնոցով, կիսխումով: Այսուհետև նշվում են տեսողության խանգարումներ՝ “մառախուլ”, երկտեսություն, բբի լայնացում, թքահոսություն (փափուկ թիմքի կաթված), խախտվում է կլման ակ-

տը և շնչառությունը (մկանային կաթված), նշվում է ծայնի կորուստ: Մահացությունը բարձր է: Պահանջվում է անհետաձգելի օգնություն:

Առաջին բուժօգնությունը՝ անկախ թունավորման վաղեմությունից լվանալ ստամոքսը 2%-անոց սողայաջրի լուծույթով, կատարել մաքրող հոգնա, տալ լուծողական, կանչել շտապօգնություն:

Բուժում. հակաբոտուլինային շիճուկի կիրառում:

Կամիսարզելումը՝ խուսափել տնային պայմաններում պահածոների պատրաստումից և օգտագործումից առաջ պահածոները եռացնել 30 րոպեի ընթացքում:

Ս.Ս. Անանյան,
ՀՀ. Մանուչյան

ԶԻԱՀ

ԶԻԱՀ-ը ծեռքբերովի իմունոանբավարարության համախտանիշ է: Հիվանդությունն առաջին անգամ նկարագրվել է 1981 թվին, իսկ 1988 թվին այն առաջին անգամ հայտնաբերվել է Հայաստանում Եղվարդ քաղաքում:

Հարուցիչը՝ նարդու վիրուսն է (ՄԻԱՎ): Անկայուն է շրջակա միջավայրում, վնասագերծվում է եռացնելիս կամ սպիրուվ և ացետոնվ մշակելիս:

Վարակի աղբյուրը՝ հիվանդ մարդոն է կամ վիրուսակիրը: ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիներն են՝

- սեռական և ուղիղ աղու լորձաթաղանթները,
- արյան ճանապարհը (Վարակված արյան պրեպարատներ և գործիքներ),
- հիդրոթան, ծննդաբերության ժամանակ կամ կրծքով կերակրելիս:

Նշանները. գաղտնի շրջանը 1 ամսից մինչև 15 տարի: Վիրուսը կուտակվում է ավշային հանգույցներում, արյան մեջ և սերմնահեղուկում: Աստիճանաբար հիվանդությունն անցնում է հաջորդ առաջնային ախտանշանների շրջան, որը բնութագրվում է անբացատրելի երկարատև լուծով, ծագվող տենդով, անբացատրելի քաշի կրուտով ($\approx 10\%$): Հիվանդի մոտ նշվում է արտահայտված քրտնարտադրություն, մաշկային քոր, դերմատիտներ, էկզեմա, գրեթե բոլոր ավշահանգույցների, նաև փայծաղի մեծացում, բերանի և կերակրափողի սնկային բնույթի խոցեր: Միասեռների մոտ առաջանում են ուղիղ աղիքի բորբոքումներ:

Բուռն շրջանը բնութագրվում է ԶԻԱՀ-ով պայմանավորված երկրորդային հիվանդություններով՝ համարյա 50% հիվանդների մոտ ի հայտ են զալիս թոքաբորբեր (90-100%-ի դեպքերում մահացության ելքով), պայարախտ, նորագոյացություններ, ԿՆՀ-ի ախտահարումներ (հիշողության կորուստ, թուլամտություն, հոգեկան խանգարումներ):

Բուժում՝ չկա: Օգտագործում են վիրուսի բազմացումը դանդաղեցնող հակավիրուսային պրեպարատներ՝ ֆուֆագին, ագիդոտիմիդին, վիրազոլ, արմենիկում: Երկրորդային ֆլորայի դեպքում՝ հակաբակտերիալ բուժում:

Կանխարգելումը. խուսափել պատահական սերական կապերից, օգտագործել որակյալ պահպանակներ, միանգամյա ներարկիչներ, օգտվել անձնական մանիկուրային և պեղիկուրային գործիքներից, դաշվածքների ասեղներից:

ՎԱՐԱԿԻՉ ՀԿՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՆԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՊԱՅՉԱՐԻ ՀԻՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱԿՈՒՄՆԵՐԸ

Անհրաժեշտ է նպատակասլաց ազդեցությունը բոլոր երեք օդակների վրա: Գործնականորեն դա հանգեցնում է վարակի աղբյուրի շուտափոյք մեկուսացմանը, տարածման ուղիների ընդհատմանը և ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ անընկալության ստեղծմանը: Սանհտարահամաճարակային կայանների ուժերով անց կացնել ախտահանում, իսկ անհրաժեշտության դեպքում որոշել կանխարգելիչ պատվաստման հարցը:

Աղիքային ինֆեկցիաների դեպքում մեծ նշանակություն ունի անհատական հիգիենայի կանոնների պահպանումը, նաև բնակավայրի բարեկարգումը (կենցաղային պայմաններ, ջրամատակարարման կոյուղի և այլն), դիսպանսեր հսկողություն բացիկակիրների վերաբերյալ:

Օդակարիլային վարակի դեպքում, հաշվի առնելով հիվանդության անկառավարելիությունը, խորհուրդ է տրվում մեկուսացմել հիվանդին, հաճախակի օդափոխել տարածքը, դիմել ռեսպիրատորի կամ դիմակի օգնությանը, հատկապես խնամողներին: Մանկական ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում մանկական կոլեկտիվներում և այլ բուժիմնարկներում սահմանել կարանտին և որոշել կոնտակտավորների իմունիգացիայի հարցը: Հաշվի առնելով վիրուսային հեպատիտ “B”-ի նոր ընտանիքակենցաղային մեխանիզմը, առավելապես մեծ ուշադրություն դարձնել անհատական հիգիենայի խնդիրներին ընտանիքի ներսում:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԶԸՆՔ

Դրանք հատուկ գինամթերքներ են, որոնք լցված են հիվանդաբեր միկրոբներով (բակտերիաներով, վիրուսներով, ռիկտոսիաներով, սմիկներով) և բակտերիաների արտադրած թույներով՝ տոքսիններով:

Կենսաբանական զենքը նախատեսված է մարդկանց, կենդանիներին, բուսականությունը, ջուրը վարակելու համար:

- Այդ զենքի մարտական հատկությանը վերաբերվում են՝
- մարդկանց ու կենդանիների մասսայական վարակիչ հիվանդություններ առաջացնելու ունակությունը,
 - ներգործության երկար տևողությունը,
 - տարբեր ուղիներով վարակելու հնարավորությունը,
 - միկրոբների հայտնաբերման դժվարությունը,
 - ներգործության գաղտնի (ինկուբացիոն) շրջանը,
 - չերմատիկացված շենքեր ու տեխնիկա ներքափանցելու հատկությունը:

Ներկայում հայտնի են հարյուրից ավելի հիվանդություններ, որոնք մարդկանց մոտ առաջացնում են հիվանդաբեր մանրէները, բայց որպես բակտերիալ հարծակման միջոց կարող են կիրառվել միայն այնպիսի հարուցիչներ, որոնք համապատասխանում են վերոհիշյալ պահանջներին:

Մարդկան կարող են վարակվել օդի միջոցով, սննդամթերքի, ջրի օգտագործման, վարակված միջաւների կծելու, մանրէների վնասված մաշկի վրա ընկնելու, հիվանդ մարդկանց ու կենդանիների հետ շփվելու հետևանքով։ Մի շարք հիվանդություններ արագ կերպով փոխանցվում են առողջներին և առաջ բերում համաձարակ։

Մարդկանց և կենդանիներին վնասելու համար կարող են օգտագործել զանազան վարակիչ հիվանդությունների հարուցիչներ՝ ժանտախտի, գրիպի, բրուցելոզի, տույյարեմիայի, սիբիրյան խոցի, խոլերայի, բնական ծաղկի, ատիպիկ թօքաբորբի և այլն։

Այդ բոլոր միջոցները նպատակին կարող են հասնել ավիացիոն ռումբերի, հրթիռների, սրվակների, փաթեթների, պարկերի, տարբեր թափող ավիացիոն սարքերի, օդապարիկների օգնությամբ և դիվերսիոն ծնով։

Վարակիչ հիվանդությունների հետագա տարածումը կանխելու նպատակով իրականացվում են հակահամաձարակային, սանհտարահիգիենիկ համալիր միջոցառումներ։ Օջախում սահմանվում է հատուկ ռեժիմ՝ օբսերվացիա կամ կարանտին։

Օբսերվացիան կենսաբանական օջախում բնակչության նկատմամբ կազմակերպված հասողության բժշկական դիտարկումն է՝ հիվանդներին և նրանց հետ շփված անձանց ժամանակին հայտնաբերելու նպատակով, որոնց ենթարկում են մեկուսացման և բուժման:

Կարանտին կոչվում է ռեժիմային, վարչական, սանհիտարական և հակահամաճարակային կոմպլեքս միջոցառումներ, որոնք ուղղվում են վարակիչ հիվանդությունների տարածման կանխմանը և վարակված օջախի վերացմանը: Կարանտինը նախատեսում է բնակչության մեկուսացում և շփումների սահմանափակում:

Օջախը հսկում են գինված պահակները, դադարեցվում են աշխատանքները, մշակույթի միջոցառումները, մուտքն ու ելքը, ուժեղացվում են հակահամաճարակային միջոցառումները:

Կարանտինը վերացվում է վերջին հիվանդի առողջանալուց և տվյալ հիվանդության գաղտնի շրջանի ավարտվելուց հետո:

Կենսաբանական գենքի օգտագործման նշաններն են՝

- ռազմամթերքի պայթունի տեղերում հողի, բուսականության և առարկաների վրա հեղուկի կաթիլների կամ փոշենման նյութերի առկայությունը,
- ռազմամթերքի պայթունի ժամանակ ծխի կամ մառախուղի թերև ամայի առաջացումը,
- թոշող ինքնաթիռների ետևում մութ շերտերի հայտնվելը, որոնք աստիճանաբար նստում են և ցրվում,
- տեղանքում միջատների և կրծողների մեծ կուտակումը,
- մարդկանց, կենդանիների մասայական հիվանդությունները:

Թվարկված նշաններից թեկուզ մեկը հայտնաբերելիս, անմիջապես պետք է օգտվել պաշտպանության միջոցներից՝ հակագազ, անհատական դեղատուիֆ, բամբակ-թանգիֆային կապ:

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՍՈՒՐ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Զ.Ա. Գևորգյան, կենս. գիտ. թեկն.

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վնասվածքը արտաքին ուժի ազդեցության տակ հյուսվածքների ամբողջականության խախտումն է:

Ըստ օրգանիզմի վրա ազդող գործոնների վնասվածքները լինում են՝ մեխանիկական (առաջանում են հարվածից, ընկնելիս և այլն), ֆիզիկական (առաջանում են բարձր և ցածր ջերմաստիճանից, էլեկտրականությունից, ճառագայթումից), քիմիական (զանագան քիմիական նյութերի ազդեցությունից):

Վնասվածքները բաժնելու են երկու մեծ խմբի՝ փակ վնասվածքներ և բաց վնասվածքներ:

ՓԱԿ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Փակ են կոչվում այն վնասվածքները, որոնց ժամանակ մաշկի և լորձաթաղանթների ամբողջականությունը չի խախտվում:

Փակ վնասվածքների շարքին են պատկանում փափուկ հյուսվածքների սալզարդ, հոդակապանների ծգվածությունը և պատրկածքը, փակ հոդախախտումը, ոսկրերի փակ կոտրվածքը, երկարութեան ճնշման հանախտանիշը՝ վնասվածքային տոքսիկոզը, ինչպես նաև՝ ներքին օրգանների փակ վնասվածքները:

Փափուկ հյուսվածքների սալզարդն առաջանում է ընկնելիս, բութ առարկաներով հարվածելիս և այլն:

Նշաններն են՝ ցավը, ուռածությունը, կապտուկը (որը լավ երևում է 2-3 օր հետո) և այդ մարմնամասի ֆունկցիայի խանգարումը:

Ի բուժօգնությունը ներառում է վնասված մասի վրա սարք թրջոց կամ սառցեպարկ դնելը (առաջին 18-20 ժամում), ծայրանդամին բարձր դիրք տալը, ճնշող կապը և տվյալ մարմնամասի անշարժացումը: 2 օրից կարելի է դնել տաք թրջոց:

Կապանների ծգվածությունը և պատրկածքը հաճախ լինում են ծնկային և սրունք-թաթային հոդերում, ավելի քիչ՝ մյուս հոդերում:

Նշանները. առաջանում են ուժեղ արտահայտված ցավ հոդի շրջանում, այսուցվածություն և հոդում շարժումների սահմանափակում:

Առաջին բուժօգնությունը նույնն է, ինչ սալշարի դեպքում՝ հանգիստ տալ ծայրանդամին, դնել սեղմող կապ և սառը՝ առաջին օրվա ընթացքում, իսկ այնուհետև՝ տաքացնող թրջոց:

Հոդախսախտում. հոդախսախտում է կոչվում հոդի կառուցվածքի մեջ մտնող ուսկրածայրերի ոչ բնականոն և կայուն տեղաշարժը: **Հոդախսախտման ժամանակ երբեմն առաջանում է հոդաշապկի պատրվածք:**

Ավելի հաճախ հոդախսախտումն առաջանում է ուսային, արմնկային, ծնկային և կոնքազդրային հոդերում, հազվադեպ՝ դաստակի մատների և ստորին ծնոտի հոդերում:

Նշաններն են՝ վնասված հոդի շրջանում ցավը, հոդի ծևակիրխությունը (դեֆորմացիան) և վերջույթի հարկադրական դիրքը: **Հոդ շոշափելիս հոդախոռոչը դատարկ է, իսկ հոդապիխկը բացակայում է հոդափոխկից ու տեղակայվում է ոչ սովորական տեղում:**

Առաջին բուժօգնությունը. տալ ցավազրկողներ, վերջույթն անշարժացնել այն դիրքում, որում գտնվում է և չփորձել այն ուղղել (օդինակ՝ վերին վերջույթը սրբիչով կապել կրծքի վանդակին): **Հոդի վրա դնել սառը թրջոց կամ սառցեպարկ և ուղարկել բուժիմնարկ, որպեսզի բժիշկը ուղղի հոդախսախտը:**

Երկարատև ճնշման համախտանիշ՝ կամ վնասվածքային տոքսիկոզ (կրաշ-սինդրոմ): Առաջացման պատճառը փլուզումներն են, տարերային աղետները կամ հարվածային ալիքը (աստոմային ռումբի պայթյունը), որոնց ժամանակ ծանրության տակ են մնում մարդու ծայրանդամները. Վերջիններիս երկարատև ճնշման և ճզմվելու հետևանքով (այսուղից՝ “կրաշ սինդրոմ” անվանումը) նրանցում խանգարվում են արյան շրջանառությունը և հյուսվածքների սնուցումը, և արյան մեջ ներծծվում են հյուսվածքների (մկանների) քայլայման արգասիքները (տոքսինները), առաջացնելով օրգանիզմի ընդհանուր թունավորում, որն անվանում են վնասվածքային տոքսիկոզ: Ծանրության աստիճանը կախված է ճնշման տակ մնալու տևողությունից և ճզմված մակերեսի մեծությունից:

Նշանները. առաջին 48 ժամում ճնշման տակից դուրս բերելուց հետո հիմնականում լինում են վնասվածքային շոկի նշաններ՝ ուժեղ ցավ, հոգեկան ցնցում (ստրես) և ընդհանուր թուլություն: Ապա սկսվում է երկրորդ շրջանը, որն արտահայտվում է ծայրանդամների ուժեղ այտուցով, վնասված մաշկի վրա առաջանում են արյունազե-

դումներ, արյունային բշտեր. մեզը պակասում է, երբեմն՝ լրիվ բացակայում, որոնք երիկամային սուր անբավարարության նշաններ են:

Առաջին բուժօգնությունը սկսում են ցավազրկողներ և հանգստացնող դեղամիջոցներ տալուց, սրսկում են սրտային դեղամիջոցներ՝ կոֆեին կամ կորդիամին: Վնասված ծայրանդամին տալիս են բարձր դիրք, ամուր վիրակապում են կենտրոնից դեպի ծայրամաս (լավ է այն ամել լիաստիկ բինսոով) և անշարժացնում են. վրան դնում են սարցեպարկ կամ սառը թրջոց: Տալիս են մեծ քանակով հեղուկներ՝ խմելու և սրսկման ձևով (օրինակ՝ սողայի լուծույթ, զյուկոզ):

ԲԱՑ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ ԿԱՄ ՎԵՐՁԵՐ

Բաց են կոչվում այն վնասվածքները, որոնց ժամանակ խախտվում է մաշկածաժկոյթյաների ամբողջականությունը և առաջանում է վերք:

Նշաններն են՝ լայնբացումը, ցավը, տարբեր աստիճանի արյունահոսությունը և տվյալ մարմնամասի ֆուլնկցիայի խանգարումը:

Վերքերը լինում են վիրահատական կամ “մաքուր” (ասեպտիկ), և վարակված, որոնք առաջանում են կենցաղում, արտադրության մեջ, պատերազմի ժամանակ:

Վերքերի տեսակները: Վարակված վերքերը՝ կախված նրանց առաջացնող պատճառից բաժանվում են երկու մեծ խմբի՝ հրազենային և ոչ հրազենային վերքեր:

Հրազենային վերքերն իրենց հերթին լինում են միջանցիկ (Վերքը ունի մուտքի և ելքի անցքեր), կոյոյ (ունի միամբ մուտքի անցք) և թափանցող (վերքը թափանցում է մարմնի խոռոչները՝ զանգի, կրծքի, որովայնի, կոնքի):

Ոչ հրազենային վերքերն ըստ դրանց առաջացնող առարկայի լինում են՝

- **ծակած վերք.** առաջանում է սուր ծայր ունեցող առարկաներից (ասեղ, մկրատ, բիզ, սվին): Սրանցով առաջացրած վերքը ունի աննշան կամ փոքր մակերես, բայց այն կարող է թափանցել շատ խորը, վնասելով ներքին օրգանները և արյան անոքները, առաջանելով թափանցող վերք: Բացի այդ, ծակող գործիքների հետ խոր հյուսվածքների մեջ մտնում է վարակը, նպաստելով բարդությունների առաջացնանքը.

- **կտրած վերք.** առաջանում է սուր առարկաներից (դանակ, ածելի, ապակու կտոր և այլն). բնութագրվում է նրանով, որ վերքի եղությունը ուղղի են և հարթ, վերքի շրջակա հյուսվածքները վնասված չեն, այդ պատճառով վերքն արագ է լավանում, սակայն արյունահոսությունը վերքից լինում է ուժեղ, ցավի զգացողությունը նոյնպես ուժեղ է.

- **Կտրատոած կամ սրակուոր վերք.** այս դեպքում հյուսվածքները ոչ ոչ միայն կտրվում են, այլև ենթարկվում են հարվածի ազդեցությանը, քանի որ առաջանում են սրով, կացնով, դաշույնով հարվածելիս: Վերքը խորն է, լայն բացված, վնասված են խոր հյուսվածքները, ուստի վերքի լավացումը դժվար և թերի է կատարվում.

- **սալցարդային վերք.** առաջ է գալիս զանազան բութ առարկաներով հարվածելիս և բնորոշվում է հյուսվածքների ջնջիվածությամբ, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում նրանում վարակի զարգացման համար.

- **կծած վերք.** այն առաջանում է կենդանիների (երբեմն նաև մարդու) կծելուց: Հաճախ մաշկի վրա կարելի է տեսնել ատամների հետքեր կամ՝ երբ հյուսվածքները պոկվում են, ապա առաջանում են մեծ դեֆեկտներ: Հատկապես վտանգավոր են կատաղած կենդանիների (օրինակ՝ շան) կծելուց և թունավոր օձի խայթոցից առաջացած վերքերը, քանի որ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների և հատուկ բուժման բացակայության դեպքում կարող են բերել մահվան.

- **թունավորված վերք.** սրանք այն վերքերն են, որոնք թունավորված են կենդանական (տե՛ս **կծած վերք**), բուսական կամ մարտական թունավոր նյութերով ու ռադիոակտիվ նյութերով:

Առաջին բուժօգնությունը. նախ պետք է բացել վերքի շրջանը (Եթե անհրաժեշտ է՝ կտրել հագուստը), դադարեցնել արյունահոսությունը (տե՛ս **արյունահոսության դադարեցումը**): Վերքի շուրջը բաել յոդի թուրմ (կամ սպիրուտ, օդի), իսկ վերքի մակերեսը մշակել 3%-անոց ջրածնի գերօքսիդի լուծույթով կամ որևէ հականեխիչ լուծույթով: Վարակի թափանցումը դադարեցնելու համար վերքը ծածկել աննեխական վիրակապով կամ Անհատական վիրակապական փարեթով: Եթե վերքի մակերեսին կամ հեշտ հեռացվող օտար մասնիկներ, դրանք հեռացնել մանրէազուրկ (ստերիլ) պինցետով:

Եթե վերքը խորը չէ և չի արյունահոսում, այն լվանալ գոլ ջրով և մանկական օճառով, չորացնել և ծածկել ասեպտիկ վիրակապով:

Ցավը մեղմացնելու համար տալ ցավազրկողներ. մեծ ծավալի վերքերի դեպքում անշարժացնել ծայրանդանը:

Հողով կեղտոտված վերքերի դեպքում սրսկել հակապրկախտային շիճուկ:

Ծան կծելու դեպքում վերքը լվանալ (10-15 րոպե) հոսող ջրով և օճառով, մշակել յոդով ու սպիրուտով, ծածկել աննեխական վիրակապով և ուղարկել բուժիմնարկ՝ հակակատաղության պատվաստումներ անելու համար:

ՈՍԿՐԵՐԻ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐ

Կոտրվածք է կոչվում ոսկրի ամբողջականության լրիվ կամ մասնակի խախտումը. այն մեծ մասամբ տեղի է ունենում արտաքին մեխանիկական ուժի ազդեցության հետևանքով, երբեմն՝ ոսկրի հիվանդությունից:

Տարբերում են ոսկրի մասնակի կոտրվածք կամ ճարվածք և լրիվ կոտրվածք, եթե ոսկրը կոտրվում է իր ամբողջ լայնքով: Իր հերթին լրիվ կոտրվածքը լինում է առանց տեղաշարժի և տեղաշարժունով, եթե կոտրված ոսկրի ծայրերը իրար նկատմամբ տեղաշարժվուն են:

Տարբերում են նաև փակ կոտրվածք, եթե մաշկածածկովըների ամբողջականությունը վնասված չէ, և բաց կոտրվածք, որն ուղեկցվում է վերքով:

Կոտրվածքի նշաններն են՝ ցավը, կոտրված մասի ծևափոխությունը (դեֆորմացիան), ֆունկցիայի խանգարումը՝ շարժումների բացակայությունը կամ սահմանափակումը, ծայրանդամի երկարության փոփոխությունը՝ ավելի հաճախ կարճացումը, կոտրված մասի՝ հոդից դուրս՝ (պարուզիական) շարժունությունը: Կոտրված ոսկրերի ծայրերը շարժելիս լսվում է բնորոշ ծայն՝ ճռճռոց (կրեպիտացիա):

Առաջին բուժօգնությունն ընդգրկում է ցավազդկողներ տալը և կոտրված մասի անշարժացումը: Կոտրված ծայրանդամներն անշարժացնում են նախքան հիվանդին տեղափոխելը՝ փոխադրական ստանդարտ բեկալավաներով. դրանք են՝ Կրամերի մետայա բեկալը և Դիտերիխսի փայտե բեկալավը: Դրանց բացակայության դեպքում կարելի է օգտագործել ձեռքի տակ եղած միջոցները՝ տախտակի կտորներ, ծարի ճյուղ, հովանոց, հրացան և այլն. որևէ առարկա չինելու դեպքում ստորին ծայրանդամները կատել իրար, նրանց արանքում դնելով փափուկ ներդիր: Ընդ որում, եթե կոտրված են բազուկոսկրը կամ ազդրոսկրը, բեկալավաների միջոցով պետք է ֆիքսել երեքական հող (ուսային, արմնկային և ճաճանչուակային հոդերը՝ բազուկոսկրի կոտրվածքի դեպքում, իսկ կոնք-ազդրային, ծնկային և սրունք-թաթային հոդերը՝ ազդրոսկրի կոտրվածքի դեպքում): Նախաբազկի և սրունքի ոսկրերի կոտրվածքների դեպքում՝ անհրաժեշտ է ֆիքսել մոտակա երկուական հոդերը: Բացի այդ, վերին վերջության ֆիքսում են արմնկային հոդի 90°-ում ծալված վիճակում, իսկ ստորին վերջության՝ ծնկան հոդում ուղիղ վիճակում: Սակայն եթե կոտրվածքը արմնկային կամ ծնկային հոդերի շրջանում է և դրանք ծալված վիճակում են, ապա դրանք չուղղել, այլ ֆիքսել այդ դիրքում:

Բաց կոտրվածքի՝ վերքի առկայության դեպքում մինչև անշարժացումը մշակել վերջը, կանգնեցնել արյունահոսությունը, ծածկել ստերիլի փրակապով, հետո անշարժացնել, բաց թողնելով տվյալ մասը:

Բեկակալները դրվում են շոկը կանխելու, բարդություններից խուսափելու, ապարինումն արագացնելու համար:

Երեխաների մոտ բացի սովորական կոտրվածքից հաճախ են հանդիպում ճաքվածքը (“կանաչ ծյուղի” ծևով) և ենթավերնոսկրային կոտրվածքները: Երեխաներին օգնություն ցուցաբերել առաջին հերթին և հաշվի առնել, որ արյունահոսությունը դադարեցնելիս մինչև երեք տարեկան երեխաներին լարան դնել չի կարելի, այլ դնել սեղմող կապ, իսկ ավելի մեծերին դնել հատուկ էլաստիկ լարան, թողնելով այն ամռանը մեկ ժամ, ձմռանը՝ կես ժամ:

ՎԵՐԹԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ

Եթե մանրէները վերքի մեջ են ընկնում մեծ քանակությամբ և այնտեղ իրենց բազմացնան համար գտնում են բարեմասստ պայմաններ (քայլայվող հյուսվածքներ, արյան մակարդուկ և այլն), ապա նրանում զարգանում է վերքային ինֆեկցիա. այն արտահայտվում է տեղային և ընդհանուր երևույթներով:

Վերքի մեջ վարակը (ինֆեկցիան) թափանցում է երկու ճանապարհով՝ արտաքին աշխարհից՝ էկզոպեն ինֆեկցիա, և օրգանիզմի ներսից՝ էնդոպեն ինֆեկցիա:

Էկզոպեն ինֆեկցիան վերքի մեջ թափանցում է երեք ճանապարհով՝ օդային, կաթիլային և շփման միջոցով:

Օդային ինֆեկցիայի թափանցումը կանխելու համար բոլոր վիրահատական, վիրակապական և այլ միջամտությունները կատարում են հատուկ սենյակներում, որտեղ խստորեն մաքրություն են պահպանում, իսկ օդը վարակագերծում են կվարցային լամպերով:

Կաթիլային ինֆեկցիան թքի և լորձի կաթիլների միջոցով վերքի վարակումն է հազարիս, փոշտալիս, խոսելիս. այն կանխելու համար վիրահատարանում և վիրակապարանում դիմակ են հագնում, ինչպես նաև արգելվում է այնտեղ խոսելը:

Շփման ինֆեկցիայի դեմ պայքարն ավելի բարդ է՝ այն ամենը, ինչ շփվում է վերքի հետ, պետք է լինի միկրոբազուրկ, այսինքն վարկագերծվի: Դրանք են՝ վիրաբուժական գործիքները, վիրակապական նյութերը, սպիտակեղենը և այլն, ինչպես նաև պետք է մշակվեն վիրաբույժի, բուժքորոշ ծերքերը և վիրահատական դաշտը (տե՛ս «Ասեպտիկա» բաժնում):

ԷՆԴՈԳԵՆ ՀՆՖԵԿցիայի տարածումը կանխելու համար նախ հարկավոր է բուժել օրգանիզմում առկա հնֆեկցիայի օջախը (վչացած ատամ, անգինա, թարախակոյստ և այլն), ապա վիրահատել:

Ըստ հարուցիչների տարբերում են երկու տեսակի հնֆեկցիա՝ **թարախային հնֆեկցիա**, որի հարուցիչները թարախածին մանրէներն են՝ ստաֆիլակոկը, ստրեպտոսակոկը, պնևմակոկը, երբեմն՝ աղիքային ցուախիկը և այլն: Թափանցելով վերքից ներս, այդ մանրէները կարող են տեղում առաջացնել թարախակալում՝ թարախակոյստ (արսցես) և ֆլեգմոն, կամ այդ հարուցիչները կարող են տարածվել արյան միջոցով օրգանիզմում, առաջացնելով արյան ընդհանուր վարակում՝ սեպիսի:

անաերոր հնֆեկցիա, որի հարուցիչները անաերոր (անօդակյաց) մանրէներն են, օրինակ՝ պրկախստի կամ զազային գանգրենայի ցուպիկները:

ԱՍԵՊԻՏԻԿԱ ԵՎ ԱՆՏԻՍԵՊԻՏԻԿԱ

Ասեպտիկան (աննեխությունը) կանխարգելիչ միջոցառում է, որի նպատակն է թույլ չտալ, որ մանրէները թափանցեն վերքի մեջ: Ուստի ասեպտիկայի հիմնական սկզբունքը է՝ վարակագերծել (ստերիլիզացնել) այն ամենը, ինչ շփվում է վերքի հետ: Այսպես՝ վիրակապական նյութերը (թանգիկը, նրանից պատրաստած անձեռօղիկներն ու փոքրիկ «գնդիկները», ժապավենները՝ տանպինները, բամբակը և այլն) վարակագերծվում են հասուկ սարքերում՝ ավտոկավներում՝ բարձր ջերմության և բարձր ճնշման ազդեցությամբ՝ գոլորշու միջոցով: Դրանք օգտագործվում են վերքերը ծածկելու և վարակից պաշտպանելու, ինչպես նաև նրանց արտադրանքը (արյունը, թարախը) հեռացնելու համար:

Վիրաբուժական գործիքներից սուր գործիքները (դանակ, մկրատ, սղոց) վարակագերծում են, թողնելով դրանք 96° էթիլ սպիրտի մեջ, ինչ բույր գործիքները երացնում են:

Հյուսվածքները կարելու նպատակով գործածվող կարելու թելերը՝ կետպուտը և մետաքստ թելերը տարբեր ծևով ախտահանելուց հետո պահում են սպիրտի մեջ:

Վիրաբույժի և նրա օգնականի ձեռքերն ամենից հաճախ ախտահանում են, լվանալով տաք հոսող ջրով և օճառով 10 րոպե, այնուհետև մշակում են սպիրտով և յոդով, ապա հագնում ախտահանված ռետինն ձեռնոցներ:

Ապակյա շարիցները երացնում են 45 րոպե ստերիլիզատորներում կամ օգտագործում են միանվագ շարիցներ:

Վիրահատական դաշտից հեռացնում են մազերը, հետո այն մշակում են սպիրտով և երկու անգամ ծածկում յոդի լուծութեավ:

Անտիստեպիկան (հականեխությունը) նպատակ ունի ոչնչացնել կամ նվազեցնել վերքի մեջ արդեն գտնվող վարակը՝ մանրէները:

Անտիստեպիկայի տեսակները.

Մեխանիկական անտիստեպիկա. սա վերքի առաջնային վիրաբուժական մշակումն է՝ մահացած հյուսվածքների և օտար մարմինների հեռացումը, հյուսվածքների մի բարակ շերտի հեռացումը վերքի հատակից և եզրերից.

Ֆիզիկական անտիստեպիկայի մեջ մտնում են, օրինակ՝ օդի և լուսի ազդեցությամբ վերքի բուժման բաց եղանակը, վերքից արտադրանքի հեռացումը խողովակների, տամպոնների օգնությամբ և այլն.

Քիմիական անտիստեպիկան ամենից շատ կիրառվող ձևն է, որի դեպքում գործածվում են զանազան անտիստեպիկ (հականեխիչ) նյութեր, ինչպիսիք են՝ կալիումի պերմանգանատի 1:1000 լուծություն, 5-10% -անոց յոդի լուծություն, ջրածնի գերօքսիդի 3%-անոց լուծություն, 70%-անոց էթիլ սպիրտը, օհվանուր, ֆուրացիլինը, քլորամինի 0.5-2%-անոց լուծություն, բրիլիանտ կանաչի լուծություն, Վիշնևսկու քսուկը, սուլֆանիլամիդային պրեպարատները և այլն.

Կենսաբանական անտիստեպիկան հակաբիոտիկների օգտագործումն է (4-5 օր) վերքերի բուժման համար՝ պենիցիլին, ստրեպտոմիցին, ամպիցիլին, գրամիցիլին և այլն: Բացի այդ, բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը (ինունիտետը), ինֆեկցիաների դեմ պայքարելու համար (կիրառում են վակցինաներ, շիճուկներ, համապատասխան սննունդ, օրինակ՝ հարուստ սպիտակուցներով, ֆիտոնիդներով և այլն):

ԿԵՐՁԵՐԻ ԲԱՐՈՂԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Թարախսային օջախսային ինֆեկցիաներ.

Թարախսակույտը (արսցես) առաջանում է, երբ թարախսային բորբքային օջախում մետուկացած հյուսվածքների տեղում կուտակվում է թարախս՝ սահմանազատված շրջակա հյուսվածքներից թաղանթով:

Սակերեսային թարախսակույտի դեպքում մաշկն այդ մասում այտուցվում է, կարմրում, առաջանում է ցավ, տեղային ջերմաստիճանի բարձրացում, տվյալ տեղամասի ֆունկցիայի խանգարում, շոշափելիս՝ հեղուկի ծփանքի զգացում: Երբեմն լինում են մարմնի ջերմաստիճանի բարձրացում, արյան մեջ փոփոխություններ (լեյկոցիտոզ և այլն):

Ցիեզմոնը փուլսը բջջանյութի թարախսային բորբքումն է՝ առանց սահմանազատման: Նշաններն են՝ տվյալ մասի ցավը, տա-

րածվող այտուցը և հյուսվածքների կարծրացումը՝ առանց հստակ սահմանների, մաշկի կարմրությունը, տեղային ջերմաստիճանի բարձրացումը, ֆունկցիայի խանգարումը: Բացի այդ, լինում են նաև ընդհանուր երևույթներ՝ գլխացավ, սարսուր, մարմնի ջերմաստիճանի բարձրացում, արյան մեջ փոփոխություններ:

Առաջին բուժօգնությունը. թե՛ արսեսի, թե՛ ֆլեգմոնի դեպքում դնել այդ մասի վրա չոր վիրակապ, անշարժացնել այն և հիվանդին ուղարկել բուժիմնարկ: Կարելի է տալ խմելու հակաբիոտիկներ:

ՊՐԿԱՍՏ, ԳԱԶԱՅԻՆ ԳԱԽԳՐԵՍԱ

բ)Անաերոր (անօդակյաց) ինֆեկցիաներ.

Պրկախստի և զազային գանգրենայի հարուցիչներն անօդակյաց (անաերոր) մանրէներ են, որոնք ապրում են հիվանդ կենդանիների (և մարդու) աղիներում, որտեղից էլ նրանց արտաթորանքների հետ ընկնում են հողի մեջ, վերածվում սպորների և երկար ժամանակ պահպանվում այնտեղ: Հողի հետ ընկնելով վերքի մեջ, այդ հարուցիչներն ազատվում են պատյանից՝ սպորից, արագորեն բազմանում են, առաջացնելով պրկախստի կամ զազային գանգրենայի երևույթները: Ավելի հաճախ հանդիպում են պատերազմական պայմաններում, քանի որ այստեղ ավելի շատ են ջնջսկած մեծ ծավալի վերքերը՝ հողով կեղտոտված:

Պրկախստ (*tetanus*). Հիվանդության գաղտնի շրջանը տևում է 4-14 օր: Հիմնական նշաններն են՝ դեմքի ծամիչ մկանների կծկումը, հիվանդը բերանը բացել չի կարողանում, ապա կծկվում են դեմքի մյուս մկանները (ճակատի վրա կնծիռներ են առաջանում) և դեմքը ստանում է չարախինդ (սարդոնիկ) ծիծաղի արտահայտություն: Վերքի շուրջն առաջանում են մկանների ջրածցություններ:

Այնուհետև պարանոցի հետին մկանների կծկման հետևանքով գլուխը թեքվում է դեպի ետ և ուղղել չի կարողանում: Աստիճանաբար սկսում են կծկվել նաև մարմնի մյուս մկանները և մարմինը աղեղի ծեռ է ստանում: Ցուրաքանչյուր գրգիռ՝ ծայնը, լուսը, աղմուկը առաջանում են մկանների այդպիսի կծկումները: Հիվանդի գիտակցությունը պահպանված է, ջերմաստիճանը բարձրանում է՝ $40\text{--}42^{\circ}\text{C}$, դժվարացած է շնչառությունը, արագացած պուլսը:

Որպես սպեցիֆիկ կանխարգելիչ միջոց բոլոր հիվանդներին, ովքեր ստացել են պատահական վերք, այրվածք և այլն, պարտադիր կերպով պետք է սրսկել հակապրկախստային շիճուկ և անատոքին:

Առաջին բուժօգնությունը պետք է սկսել որքան հնարավոր է շուտ վերքի վիրաբուժական մշակումից, հակապրկախստային շիճու-

կի մեծ դոզաների սրսկումից. տալիս են նաև թմրադեղեր և նյարդային համակարգը հանգստացնող դեղեր, վերացնում են բոլոր արտաքին գրգիռները (լուսը, ձայնը և այլն):

Գազային գանգրենա. Աշաններն ի հայտ են գալիս վերքը վարակվելուց մի քանի ժամ կամ 3-4 օր հետո: Առաջին նշանները վերքի շրջանում սեղմող, ճնշող ցավերն են, որոնք առաջանում են հյուսվածքներում կուտակվող գազերի պատճառով (սրամք մանրէների կենսագործունեության արդյունք են): Այնուհետև ծայրանդամը սկսում է փրկել, ուռչել, խիստ այտուցվել: Վերքի շրջանում հյուսվածքները մուգ գույնի են, մկանները եփած մսի տեսք ունեն, վերքից գալիս է տհաճ նեխիչ հոտ: Հիվանդի ընդհանուր վիճակը խիստ ծանրանում է, ջերմությունը՝ բարձրանում, սկսվում են թունավորնան՝ ինտոքսիկացիայի երևություններ, որոնք բերում են մահվան:

Առաջին բուժօգնությունը և բուժումը կատարում են բուժիմնարկում, որտեղ վերքը մշակում են, նրանից հեռացնելով մահացած հյուսվածքները, կտրվածքներ են անում կուտակված գազը դուրս բերելու համար և այլն, ինչպես նաև ամենակարևորը՝ մեծ դոզանով սրսկում են հակագանգունային շիճուկ:

ԱՐՅՈՒՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԺԱՄԱԿԱԿԱՎՈՐ ԴԱՐՄԹՑՄԱՆ ԵՂԱՍԱԿՆԵՐԸ

Արյունահոսությունը վնասված արյան անոթից արյան արտադիրություն է: Պատճառը հիմնականում վնասվածքներն են, երբեմն՝ հիվանդությունները (հիպերտոնիկ հիվանդություն, կանաց հիվանդություններ և այլն):

Ըստ վնասված անոթի բնույթի տարբերում են արյունահոսության 4 տեսակ՝ զարկերակային, երակային, մազանոթային և պարենիմային:

Զարկերակային արյունահոսությունը տեղի է ունենում վնասված զարկերակից՝ անընդհատ շիթով՝ շատրվանի նման, ուստի ավելի վտանգավոր է, քան նյունները, քանի որ կարող է արագործն զարգանալ սուր սակավարյունություն. հատկապես՝ երբ վնասված են մեծ զարկերակները՝ քնային, ազդրային, բազկային: Զարկերակից եկող արյունն ունի ալ կարմիր գույն:

Երակային արյունահոսությունը տեղի է ունենում վնասված երակից. արյունը հոսում է անընդհատ և ունի մուգ կարմիր գույն: Խոշոր երակների վնասման դեպքում (հատկապես պարանոցի վրա) հնարավոր է օդի բշտիկի անցումը նրանց մեջ և օդային էմբոլիայի առաջացումը, որը կարող է բերել մահվան: Օդի բշտիկը երակի մեջ անցնելիս լինում է բնորոշ սուլոցանման հնչյուն:

Մազանոթային արյունահոսության դեպքում վերքից դանդաղ, կաթիների ձևով դուրս է գալիս խառը (զարկերակային և երակային) արյուն:

Պարենիմային արյունահոսությունը տեղի է ունենում այնպիսի օրգաններից, ինչպիսիք են՝ յարդը, փայծաղը, երիկամները: Արյունը վնասված մասից արտահոսում է ինչպես սպոնգից, երկարատև է, դժվար է այն կանգնեցնել և հիմնականում բերում է սուր սակավարյունության:

Բացի այդ, տարբերում են արտաքին (տեսանելի) արյունահոսություն և ներքին արյունահոսություն, երբ արյունը կուտակվում է օրգանիզմի ներսում՝ հյուսվածքների մեջ կամ մարմնի խոռոշներում:

Արյունահոսության ժամանակավոր դադարեցման եղանակները.

Վերքի վրա ուղղակի ճնշման գործադրությունը. դրա համար ստեղի վիրակացը կամ շորի կտորը դնում են վերքի վրա և սեղմում արյունահոսող անորթ (անորները): Ավելի լավ արդյունք է տալիս, եթե ծայրանդամը բարձրացնում են և միաժամանակ ճնշող կապ դնում վերքի վրա, ապա վրան դնում են սարցեպարկ կամ սառը թրջոց:

Խոշոր զարկերակների սեղմելը վերքից դուրս՝ տարածության վրա. այս եղանակը կիրառելու համար պետք է իմանալ խոշոր զարկերակների տեղադրությունը և այն կետերը, որտեղ պետք է սեղմել զարկերակը (մատների օգնությամբ) նրա տակ գտնվող ուլուին. այսպես օրինակ՝ քնային զարկերակը պետք է սեղմել (սեղմել կարելի է միայն մեկ կողմի քնային զարկերակը) կրծոսկր-անրակպտկածև մկանի ներսային եզրի մոտ՝ պարանոցային 6-րդ ողին, ենթանրակային զարկերակը՝ ենթանրակային փոսում՝ առաջին կողին, անութային զարկերակը՝ բազկի գլխին՝ անութափոսում, բազկային զարկերակը՝ բազկի երկալիսանի մկանի ներսի կողմից՝ բազկոսկրի միջին մասում՝ բազուկոսկրին, ազդրային զարկերակը՝ ցայլոսկրի հորիզոնական ճյուղին կամ ավելի ցած՝ ազդրոսկրի վերին մեկ երրորդի շրջանում՝ քառագլուխ մկանի ներսի կողմում՝ ազդրոսկրին և այլն: Այս եղանակից օգտվում են միայն կարծ ժամանակով արյունահոսությունը դադարեցնելու համար (նատները հոգնում են և հիվանդի համար ցավուտ է), մինչև որ լարան դնեն կամ վերջնականապես կանգնեցնեն արյունահոսությունը:

Զարկերակային արյունահոսության դադարեցումը ծայրանդամների վրա լարան դնելու միջոցով. ամենից հաճախ օգտագործում են եսմարիսի ռետիննե ժապավենածև լարանը, որը ծգած վիճակում փաթաթում են արյունահոսող մասից վեր՝ նախօրոք կապված մի քանի շերտ կտորի (տակողիրի) վրա. եթե լարան չկա՝ օգտագործում են սրբիչ կամ ամուր կտոր, որը ծայրանդամի շուրջը ամուր փաթաթելուց հետո ծայրերը պտտեցնում են և ամրացնում փայտի

կտորով, որ չբացվի: Լարանը ճիշտ կապելիս արյունահոսությունն անմիջապես դադարում է, ծայրանդանը՝ գունատվում է, պուլսը չի շոշափելում: Լարանը թողնում են 2 ժամ (ձմռանը մեկ ժամ). որից հետո եթե անհրաժեշտ է շարունակել՝ 5-10 րոպեով այն բաց են թողնում, և զարկերակը սեղմում մատներով, ապա նորից դնում լարանը մեկ ժամով: Եթե ուղեկցում են հիվանդին, ապա լարանը բաց են թողնում տասնհինգ րոպեն մեկ, սեղմում մատներով, և նորից կապում այն: Ճառագայթային հիվանդության ժամանակ լարանը թողնում են կեսից մինչև մեկ ժամ

Զարկերակի սեղմումը վերջույթի խիստ ծալված կամ տարածված դիրքում: Օրինակ՝ արյունահոսությունը քևատակում դադարեցնելու համար բազուկն ամուր կապում են կրծքի վանդակին կամ սրունքի արյունահոսության դեպքում ոտքը ծալում են ծնկան հողում և իրար կապում ազդրն ու սրունքը և այլն:

Վերքի տամպոնում՝ ստերիլ երկար տամպոններով լցնում են վերքի խոռոչը, սեղմում և վիրակապում:

ԱՐՅԱՆ ՍՈՒՐ ԿՈՐՈՒՏԾ, ՍՈՒՐ ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄ

Ուժեղ արյունահոսության (հատկապես խոշոր զարկերակներից) ամենամեծ վտանգն այն է, որ զարգանում է արյան սուր կրուստ կամ սուր սակավարյունություն (անեմիա):

Սուր սակավարյունության նշաններն են՝ մաշկը և տեսանելի լորձաթաղանթները խիստ գունատ են, աչքերը փոս ընկած, աչքերի առաջ մքնում է, առաջանում են գլխապտույտ, սրտխառնոց, երբեմն՝ փսխում, արյան ճնշումն ընկնում է, անորթազարկը հաճախացած է և հազիվ է շոշափելում (թելաննան է): Արյան ընդհանուր քանակի (հասուն մարդու մոտ՝ 4,5-5 լիտր) մեկ երրորդի (1,5 լիտր) կորուստն առաջանում է սուր սակավարյունություն, իսկ ընդհանուր քանակի մոտ կեսը կորցնելիս հիվանդը մահանում է:

Առաջին բուժօգնությունը. Նախ՝ դադարեցնել արյունահոսությունը (տե՛ս՝ արյունահոսության դադարեցումը): Ուղեղի արյան մատակարարումն ապահովելու համար հիվանդին անմիջապես պարկեցնել գլուխը ցած, իսկ ծայրանդամները՝ բարձր (20-25 սմ): Սրտի աշխատանքը լավացնելու համար սրսկել կոֆեին, կամֆորա:

Բուժիմնարկում հիմնական միջոցառումներն ուղղված են արյան կորուստը փոխարինելուն. դրա համար անում են արյան փոխներարկում, ենթամաշկային սրսկում են ֆիզիոլոգիական լուծույթ, զյուկոզի լուծույթ և այլն:

Արյան փոխներարկումից առաջ անհրաժեշտ է անպայման որոշել հիվանդի արյան խումբը և ռեզուս-գործոնը, որպեսզի փոխներարկող արյունը համատեղելի լինի հիվանդի արյան հետ:

Պարզվել է, որ մարդկանց արյան կարմիր գնդիկները՝ էրիթրոցիտները պարունակում են 2 տեսակի հակածին (անտիգեն)՝ ազլուտինոգեն A և B, որոնք էլ. ըստ AB0 համակարգի, որոշում են արյան խումբը՝ A, B, AB և O (տե՛ս այդուսակը): Արյան պլազմայում կան դրանց համապատասխանող 2 տեսակի հակամարմիններ՝ ազլուտինիններ ա և b:

Արյան խումբը	Հակածինը	Հակամարմինը
A	A	b
B	B	a
AB	A և B	O
O	O	a և b

Այստեղից երևում է, որ յուրաքանչյուր խմբի արյան մեջ չեն կարող գտնվել իրար համապատասխանող հակածինը և հակամարմինը (այսինքն՝ նույն անհատի մոտ չեն կարող լինել) A հակածինը և ա հակամարմինը, կամ B հակածինը և բ հակամարմինը), քանի որ դրանք հանդիպելիս առաջացնում են ինունային ռեակցիա՝ այսպես կոչված ազլուտինացիայի ռեակցիա, այսինքն՝ արյան կարմիր գնդիկներն իրար են կազում ու առաջացնում փաթիլավորում (որը կոչվում է ազլուտինացիա), ապա քայլավում են (տեղի է ունենում հեմոլիզ):

Այս հանգամանքը նկատի են ունենում մեկ անհատից (դոնորից)՝ մյուսին (ռեցիպիենտին) արյուն փոխներարկելիս: Այստեղ որոշվում է դոնորի հակածինն է, իսկ հակամարմինը նուրանում է ռեցիպիենտի պլազմայում, այսինքն՝ փոխներարկելիս դոնորի արյան A հակածինը չպետք է հանդիպի ռեցիպիենտի արյան ա հակամարմինի հետ, կամ դոնորի արյան B հակածինը՝ ռեցիպիենտի արյան բ հակամարմինի հետ:

Ուստի արյուն փոխներարկելիս յուրաքանչյուր խմբի արյունը լավ է ներարկել նույն խմբի մարդկանց (ավելի անվտանգ է), և միայն դրա բացակայության դեպքում կարելի է ներարկել O խմբի արյուն, քանի որ այն չունի ոչ մի հակածին:

Ավելի ուշ հայտնաբերվեց մեկ ուրիշ հակածին և՝ ռեզուս-կապիկների էրիթրոցիտներում, և այն անվանվեց հակածին D: Մարդկանց 75-85%-ի մոտ (տարբեր երկրներում այդ %-ը տարբեր է) այդ հակածինը էրիթրոցիտներում կա և նրանք Rh(+) են, իսկ մնացածների մոտ չկա, և նրանք Rh(-) են: Ուրեմն, եթե հակածին ունեցող արյունը՝ Rh(+) փոխներարկվի այդ հակածինը չունեցող Rh(-) անհա-

տին, ապա վերջինիս մոտ կարտադրվի ճ հակամարմին, և կարող է առաջանալ ինունային ռեակցիա ու փոխներարկումային շոկ: Կնշանակի մինչև փոխներարկումը պետք է ստուգել նաև ռեզուս-գործոնը և Rhesus(-) անհատներին փոխներարկել միայն Rhesus(-) արյուն:

Արյան խումբը որոշում են՝ արյան կաթիլ փորձարկելով անտի-Ա և անտի-Բ շիճուկներով, իսկ ռեզուս-պատկանելությունը՝ անտի-D շիճուկով:

Բացի այդ, յուրաքանչյուր արյան փոխներարկումից առաջ կատարում են նաև անհատական համատեղելիության փորձը և կենսաբանական փորձը՝ որոշելու համար փոխներարկվող արյան համատեղելիությունը տվյալ հիվանդի արյան հետ:

Անհատական համատեղելիության փորձի համար վերցնում են հիվանդի արյան շիճուկը, վրան ավելացնում դրնորի արյան կաթիլը (10 անգամ պակաս քանակով) և 5 րոպեի ընթացքում հետևում փաթիլավորման առաջացնանք. փաթիլավորման բացակայությունը վկայում է փոխներարկվող արյան համատեղելիությունը:

Կենսաբանական փորձը կատարում են փոխներարկման սկզբում. փոխներարկվող արյան առաջին 75 մլ-ը ներարկում են կոտորակային ձևով՝ 25-ական մլ, յուրաքանչյուր անգամ սպասելով մի քանի րոպե և հետևելով հիվանդի վիճակին. Եթե առաջանում են զիսապտույտ, սրտխառնոց, դող և այլ երևույթներ, տվյալ արյունը չեն ներարկում (կարող է զարգանալ փոխներարկումային շոկ):

Արյան փոխներարկումը կատարում են երկու ճանապարհով՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի փոխներարկման ժամանակ դրնորի երակից արյունն անմիջապես անցնում է հիվանդի երակի մեջ հատուկ ապարատի միջոցով:

Անուղղակի փոխներարկման համար օգտագործում են կոնսերվացրած արյուն (մեծ մասամբ ստացվում է կիտրոնաթթվի օգնությամբ և կոչվում է ցիտրատային արյուն), որը պահպան է հատուկ սրբակներում կամ պլաստիկ տոպրակներում և փոխներարկվում է ըստ անհրաժեշտության:

Փոխներարկման համար կարող են օգտագործվել ոչ միայն ամբողջական արյունը, այլ նաև նրա բաղադրիչները՝ պլազման, էրիթրոցիտները, լեյկոցիտները, թրոմբոցիտները, կամ արյան փոխարինողները՝ ֆիզիոլոգիական լուծույթը զյուկոզի լուծույթը, սոդայի լուծույթը, զանազան կոլոիդային, հակաշոկային լուծույթներ և այլն:

Արյան փոխներարկման ժամանակ ամենածանր բարդությունը (որը կարող է բերել մահվան) փոխներարկումային շոկն է, որն առաջանում է, եթե ներարկվում է անհամատեղելի արյուն (չեն համապատասխանում արյան խմբերը կամ ռեզուսը):

ՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՇՈԿ

Շոկն առաջանում է ծանր վնասվածքների դեպքում, երբ փափուկ հյուսվածքները մեծ ծավալով պատռված են, ջնջնված, ուսկրերը կոտրված՝ փշրված, ծայրանդամը ջնջնված կամ պոկված, այրվածքը մեծ չափերի է հասնում:

Վերը նշված դեպքերում շոկի առաջացման պատճառը ուժեղ ցավն է, որն ուղեկցում է ծանր վնասվածքներին և բերում է ԿՆՀ-ի արգելակման ու օրգանիզմի կարևոր կենսական ֆունկցիաների (սիրտ-անոթային, շնչառական և այլն) անկման: Շոկի առաջացման երկրորդ պատճառը արյան կորուստն է՝ կես լիտրից ավել:

Վնասվածքային շոկի նշաններն են՝ ախտահարվածի լրիվ անտարբերությունը շրջապատի նկատմամբ (սակայն գիտակցությունը պահպանված է), մաշկի գունատությունը, սառը քրտինքը, անորագարկը արագացած, թույլ, արյան ճնշումը՝ զնկված, մարմնի ջերմաստիճանը՝ իջած (երբեմն մինչև $32\text{-}30^{\circ}\text{C}$): Ընդ որում շոկի նշանները կարող են առաջանալ վնասվածք ստանալուց անմիջապես հետո (առաջնային շոկ), կամ դրանից մի քանի ժամ անց (երկրորդային շոկ):

Ըստ ծանրության տարբերում են 4 աստիճանի շոկ. դասակարգումը հիմնված է արյան ճնշման և պուլսի տվյալների ու նրանց փոխհարաբերության վրա, ինչպես նաև՝ կախված է կորցրած արյան քանակից:

Այսպես՝ I աստիճանի շոկ, երբ արյան մաքսիմալ ճնշումը հավասար է 90մմ, պուլսը՝ մեկ րոպեում 90-100 զարկ, II աստիճանի՝ ճնշումը՝ 70-90մմ, պուլսը՝ 120-140 զարկ, III աստիճանի՝ ճնշումը՝ 50-70մմ, պուլսը՝ 160-180 զարկ, IV աստիճանի՝ ճնշումը՝ 50մմից ցածր կամ չի որոշվում, պուլսը չի շոշափվում: Համապատասխանաբար, I աստիճանի շոկը թեթև ծևն է, երբ գիտակցությունը պահպանված է, ընդհանուր վիճակը՝ բավարար, իսկ IV աստիճանի շոկը ամենածանր ծևն է՝ նախահոգեվարքային կամ հոգեվարքային վիճակ է:

Հակաշոկային միջոցառումները պետք է սկսել որքան հնարավոր է շուտ, այն է՝ դադարեցնել արյունահոսությունը, անշարժացնել վնասված մարմնամասը, վերքը ծածկել ստերիլ վիրակապով, սրսկել ցավագրկողներ, սրտային միջոցներ՝ կոֆեին, կամֆորա, տալ կատարյալ հանգիստ, տաքացնել ախտահարվածին՝ լավ ծածկել, փաթաթել, տաք խմիչքներ տալ խմելու և խնամքով փոխադրել:

**Ժ.Ա. Շորանյան,
Ֆ.Մ. Սաղիսյան**

ՑԱՎԱԶՐԿՈՒՄ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

Անեսթեգիան (անզգայացումը) կամ ցավազրկումը ցավային զգացողության վերացումը կամ կանխումն է վիրաբուժական միջամտությունների, վնասվածքների, հիվանդությունների և ախտորոշման գործողությունների ժամանակ: Եթե այն ուղեկցվում է գիտակցության կորսուով, կոչվում է ընդիանուր անզգայացում կամ նարկոզ:

Ցավազրկումը լինում է երկու տեսակի.

1. ընդիանուր ցավազրկում կամ նարկոզ,
2. տեղային ցավազրկում:

Ընդիանուր ցավազրկումը կամ նարկոզը արհեստական քնի վիճակն է, որն ուղեկցվում է ցավերի և շարժումների բացակայությամբ:

Նարկոզն ունի 4 փուլ՝

1. Առաջին փուլը (անալգետիա) համընկնում է օրգանիզմը նարկոտիկ նյութերով հագենալու շրջանի հետ: Այն տևում է մի քանի րոպե, որի ժամանակ հիվանդի գիտակցությունը պահպանված է, միայն տվյալ փուլի վերջում վրա է հասնում արհեստական քնի վիճակը:
2. Երկրորդ փուլը (գրգռման) սկսվում է անմիջապես գիտակցությունը կորցնելուց հետո և բնորոշվում է հիվանդի շարժումների և խոսելու գրգռվածությամբ, վերջույթների ակամա շարժումներով: Հաճախ լինում են փսխում, շնչառության խանգարում, ուժեղ թքարտադրություն: Հիվանդներն անգամ փորձում են դեմքից հանել դիմակը կամ ցած թոշել վիրահատական սեղանից: Այս փուլում պետք է այնպես անել, որ հիվանդը մեխանիկական վնասվածքներ չստանա:
3. Երրորդ փուլը սկսվում է գրգռումը դադարելուց հետո: Այն կոչվում է վիրահատական փուլ, քանի որ այս փուլում է կատարվում վիրահատական միջամտությունը, որի ժամանակ էլ կախված է այս փուլի տևողությունը:
4. Չորրորդ փուլը կոչվում է արթնացման, երբ դադարեցվում է նարկոտիկ նյութի տակը, այն տևում է մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ: Դա կախված է շատ գործուներից՝ նարկոզի տևողությունից, խորությունից, հիվանդի ընդիանուր վիճակից, վիրահատական միջամտության բնույթից և այլն: Նարկոզից արթնանալուց հետո անհրաժեշտ է մի քա-

Նի ժամ հսկել և հետևել հիվանդի օրգանիզմի կենսական կարևոր օրգանների ֆունկցիաների վերականգնմանը:

Հատ կարևոր է հիվանդի նախապատրաստումը նարկոզին՝ խուսափելու համար հետագա բարդություններից: Նախ, հիվանդին հոգեբանորեն պետք է նախապատրաստել առաջիկա վիրահատությանը, ապա բերանի խոռոչից հեռացնել շարժկող ատամները և հանվող պրոտեզները: Աղեստամոքսային տրակտի նախապատրաստումը սկսվում է նախօրյակին՝ երեկոյան հիվանդին հոգնա անել, նարկոզից առաջ դատարկել միզապարկը և այլն: Ծովապ դեպքում պարտադիր կարգով հաստ գրնդի օգնությամբ հեռացվում է ստամոքսի պարունակությունը: Նարկոզի ժամանակ կարող են առաջանալ հետևյալ բարդությունները՝ շնչառության խանգարումներ՝ ընդհուպ մինչև ասֆիքսիա, սրտի կանգ, փսխումներ, գրգռված վիճակ, որի պատճառով հիվանդը կարող է ստանալ տարբեր վնասվածքներ:

Հետնարկոյան շրջանին յուրահատուկ են հետևյալ բարդությունները՝ փսխումներ, սրտային սուր անբավարարություն, յարդի ճարպային դիստրոֆիա, տոքսիկ նեֆրոպատիա (ալբումինուրիա), պերիֆերիկ նյարդերի պարալիզմներ: Նշված բարդությունների դեպքում ցույց է տրվում համապատասխան բուժօգնություն:

Ինհայացիոն (ներշնչական) նարկոզ տալու համար օգտագործում են հետևյալ նարկոզ առաջացնող նյութերը՝ ֆտորուտանը, ցիկլոպրոպանը, եթերը և այլն:

Տեղային ցավագրկումը մարմնի որոշակի մասի ցավի զգացողության վերացնումն է, երբ պահապանված է հիվանդի գիտակցությունը:

Տեղային ցավագրկում առաջացնող նյութերին պատկանում են՝ նովոկայիններ, դիկայիններ, լիդոկայիններ, տրիմեկայիններ, սովկայիններ և այլն:

Տեղային ցավագրկման եղանակներն են՝

1. Մակերեսային անզգայացում՝ լորձաթաղանթներին դեղամիջոցներ քսելու կամ շաղ տալու օգնությամբ (աչքի, ականջի, քիչ, կոկորդի հիվանդությունների բուժման ժամանակ): Կիրառում են դիկայիններ, նովոկայինի ցածր տոկոսներով լուծույթներ:
2. Ինֆիլտրացիոն անզգայացում՝ ներիյուսվածքային ցավագրկում, երբ ենթամաշկային սրսկումներով հյուսվածքների մեջ շերտ առ շերտ սրսկում են մեծ քանակությամբ բայց փոքր կոնցենտրացիաներով՝ նովոկայինի 0,25% լուծույթներ: Կամ մաշկը ներծծում են այդ լուծույթներով կտրվածքի ուղղությամբ, որի ժամանակ նյութի զգակի մասը արտահոսում է և քացանում գերղոզավորման վտանգը:

- Հաղորդչային անզգայացումը՝ արվում է ցավազրկող նյութը նյարդային ցողունի շուրջը ներարկելու միջոցով /ատամը հեռացնելու համար/:
- Ողնուղեղային անզգայացում՝ արվում է ողերի արանքում ստորներք ընկած հատվածը ցավազրկելու նպատակով:
- Բլոկադաներ՝ սովորաբար կատարվում են սուր ցավային նոպաներն ընդհատելու նպատակով: Տարբերում են պարանոցային վագոսիմպատիկ, գրտկատեղային նովոկայինային, հարերիկամամային բլոկադաներ և այլն:

Տեղային ցավազրկման ժամանակ նովյանակ կարող են առաջանալ բարդություններ՝ սրտխառնոց, փսխում, սուր անոթային անբարարություն, ալերգիկ ռեակցիաներ /անաֆիլակտիկ շոկ/ և այլն:

Ժ.Ա. Չորանյան,

Ֆ.Մ. Մաղիսյան

ԳԼԽԻ ԵՎ ԳԼԽՈՒՂԵԴՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՍՎՈՒՄ ԵՆ ԺԱՆՐ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՁԻՆ:

Գլխի և գլխուղեղի վնասվածքները դասվում են ժանր վնասվածքների շարքին: Տարբերում են գլխուղեղի վնասվածքների հետևյալ կիխնիկական ծերը. **ուղեղի ցնցում, ուղեղի սալքարդ, ուղեղի ճնշում.**

Գլխի վնասվածքները լինում են փակ և բաց. փակ են կոչվում գլխի այն վնասվածքները, երբ խախտված չէ գլխի մաշկի ամբողջականությունը, իսկ բաց են կոչվում այն վնասվածքները, երբ խախտվում է գլխի փափուկ հյուսվածքների ամբողջականությունը և առաջանում է վերք, կամ՝ երբ քթից ու ականջներից լինում է առատ արյունահոսություն և նույնիսկ՝ ուղեղային հեղուկի արտահոսք, որը նկատվում է զանգի հիմի կոտրվածքների դեպքում: Եթե բաց վնասվածքի դեպքում ամբողջական է մնում ուղեղի կարծր թաղանթը, ապա վնասվածքը կոչվում է գլխի չքափանցող վերք, իսկ եթե պատռվում է նաև այդ թաղանթը, կոչվում է թափանցող վերք:

Գլխուղեղի ցնցում. առաջանում է գլխին հարվածից, ընկնելիս, որից առաջանում են գլխուղեղի ֆունկցիաների խանգարումներ՝ առանց տեսանելի անատոմիական փոփոխությունների:

Ըստ կիխնիկական նշանների ժանրության տարբերում են ուղեղի ցնցում թերև և արտահայտված ծները:

Թերև ծնը բնորոշվում է գունատությամբ, գիտակցության կորստով մի քանի ակնթարթից մինչև մի քանի դոպե (3-5), իսկ ցնցման արտա-

հայտված ծկի ժամանակ՝ 10-20 րոպե, որի երկարաձգումը 30 րոպե և ավելի բնորոշվում է որպես գանգուղեղի սալքարդ:

Գիտակցության գալուվ տուժածը տվյալ դեպքի հետ կապված ոչինչ չի հիշում (ռետրոգրադ ամնեզիա): Թեթև աստիճանի դեպքում նշվում է գլխապտույտ, գլխացավ, սրտխառնոց, ականջներում աղմուկ, ընդհանուր թուլություն, քրտնարտադրություն, տիհած զգացողություն ուժեղ լուսի և աղմուկի նկատմամբ: Իսկ շնչման արտահայտված աստիճանի դեպքում վերը նշված երևույթներից բացի տուժածի մոտ առաջանում են փսխումներ, անոթազարկը հաճախ է, երբեմն է՝ հազվական (40-50 զարկ մեկ րոպեում): Տուժածը թույլ է, արգելակված, ռեֆլեքսներն ընկճված, բբերը՝ լայնացած, լուսային ռեակցիան երբեմն բացակայում է: Սակայն շնչառությունն ու կրծան ակտը փոփոխված չեն: Նկատվում է սուրբերի 37⁰C-38⁰C ջերմություն:

Գլխուղեղի սալքարդ. դա ուղեղանյութի անատոմիական ամբողջականության տեսանելի խախտումն է որոշակի սահմանափակ հատվածում: Սալքարդի դեպքում նկատվում են ոչ միայն վերը նշված ընդհանուր ուղեղային ախտանիշները, այլև օջախային երևույթներ, որոնք կախված են ուղեղանյութի վնասման տեղից (մարմնի տարբեր մասերի զգացողության ու շարժման խանգարումներ, միմիկայի, խոսքի, լսողության խանգարումներ, ինչպես նաև մասնակի և լրիվ նյարդալուծանքներ):

Գլխուղեղի ճնշումն առաջանում է, երբ պատովում են գլխուղեղի խոշոր անոթները և արյունը կուտակվում է գանգի խոռոչում կամ երբ կուտրվում են գանգի ոսկրերը: Նկատվում է գիտակցության կարճատև կորուստ, որին հաջորդում է «լուսավոր շրջան», երբ տուժածի վիճակը թվայցալ լավանում է, սակայն շուտով գիտակցությունը դանդաղորեն մրագնում է, ուժեղանում է գլխացավը, առաջանում են օջախային ախտանիշներ (մասնակի և լրիվ նյարդալուծանքներ), խանգարվում են շնչառությունը և արյան շրջանառությունը:

Առաջին բուժօգնությունը. տուժածին պետք է պառկեցնել, ապահովել խխտ անկողնային ռեժիմ, գլխին դնել սարք, ժամանակին կերակրել, խմեցնել հեղուկներ, մանավանդ որ կրման գործողությունը սովորաբար պահպանվում է անգամ հիվանդի անգիտակից վիճակում: Հետևում են նաև սրտի աշխատանքներ, շնչառությանը, եթե տեղի է ունեցել կրինիկական մահ, ապա անհրաժեշտ է կատարել վերակենդանացում: Հիվանդի տեղափոխումը հիվանդանոց պետք է կատարվի զգույշ, առանց ցնցումների, փսխման դեպքում հիվանդի գլուխը պետք է մի կողմի վրա թեքվի և բերանի խոռոչը մաքրվի:

Գանգի ոսկրերի կուտրվածքներն առաջանում են երբ գանգը ստանում է մեխանիկական հարված, կամ երբ բարձրությունից ընկնում են

գլխի վրա: Սա ևս լինում է փակ և բաց (Վերքի առկայություն), տարբերում են նաև զանգարադի ու սկրերի և զանգի հիմի կոտրվածքներ:

Ճակատոսկրի, ծոծրոսկրի, գագաթոսկրերի կամ բունքոսկրերի վնասումից առաջանում են տեղային ցավ, արյունազեղումներ տվյալ մասում և ուսկրային հեֆեկտ, շարժելիս կարող է լսվել ուսկրերի ճօճոց: Կոտրվածքը կարող է ուղեկցվել ուղեղի ցնցնան, սպիզարդի և ճնշման ախտամիջներով: Գանգի հիմքի կոտրվածքների համար բնորոշ են աչքերի շուրջը առաջացած արյունազեղումները («ակնոցների» սիմպոն), քթից ու ականջներից արյան կամ ուղեղային հեղուկի արտահոսքը, որը խոսում է կարօն թաղանքի վնասան մասին:

Գլխի բաց վնասվածքների դեպքում բացի վերը նշված ախտանիշներից, առկա են նաև վերքի ախտանիշները: Գլխի բաց վնասվածքները լինում են թափանցող (Եթե վնասված է նաև գլխուղեղի կարող թաղանքը) և չթափանցող: Գլխի թափանցող վնասվածքի դեպքում ինֆեկցիայի ներանձնան պատճառով առաջանում են ուղեղի թաղանքների կամ ուղեղանյութի բորբոքում, կամ էլ՝ թարախակույտ:

Առաջին և միջնաբժիշկական օգնությունը.

- Վերքի վրա հարկավոր է դնել ստերիլ վիրակապ՝ զգուշանալով, որ ուղեղի արտանկման դեպքում այն չճնշի ուղեղը: Ականջների վրա ևս դնել վիրակապ, եթե կա արյուն կամ ուղեղային հեղուկի արտահոսք:
- Որպեսզի փսխման զանգվածները չփակեն շնչուղիները, տուժածին պառկեցնում են կողքի, իսկ եթե պառկած է մեջքն՝ գլուխը թերել կողքի:
- Լեզվի ետանկման դեպքում հարկավոր է լեզուն դուրս բերել բերանից կամ դնել օդատար խողովակ: Նույնիսկ կարելի է լեզուն ծակելով անգիհական քորոցով ամրացնել այն իր հագուստին ժապավենի միջոցով:
- Գլխին դնում են սաղը, առանց գլուխը ճնշելու (ուղեղանյութի արտանկման դեպքում դնել ասեպտիկ չճնշող վիրակապ):
- Հնարավորության դեպքում ներարկում են ցավագրկող միջոցներ, տալիս են հակաբիոտիկներ, շնչառությունը խթանող և սրտի աշխատանքը կարգավորող միջոցներ:

Տուժածին էվակուացնում են առաջին հերթին:

ԴԵՄՔԻ ԵՎ ՊԱՐԱՍՈՑԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Դեմքի և պարանոցի վնասվածքները լինում են բաց և չփակ. Բաց վնասվածքները կամ վերքերը կարող են լինել չթափանցող և թա-

փանցող (Երբ հաղորդակցվում են քի ու բերանի խոռոչների, հարթաշին խոռոչների հետ), կարող են վնասվել լեզուն, թքագեղձերը, խոչոր անոթները: Ավտանիշներն են՝ ցավը, կման խանգարումը, արյունահոտությունը, խոսքի և շնչառության դժվարացումը, թքահոսությունը:

Ղեմքի ուսկրերի կոտրվածքներին են պատկանում քի, այտոսկրերի, վերին ու ստորին ծննդների կոտրվածքները: Կախված հարվածի ուժից և ուղրությունից կոտրվածքները լինում են տեղաշրջերով և առանց տեղաշարժի, ինչպես նաև՝ բաց և փակ: Ղեմքի ուսկրերի կոտրվածքներին բնորոշ է կոտրվածքների բոլոր նշաններ՝ ցավ, դժվարացիա, այտուց, ֆունկցիայի խանգարում և այլն:

Պարանոցով անցնող քնային օարկերակի վնասումից օարգանում է սուր սակավարյունություն և նույնիսկ՝ մահ, իսկ ջային երակի վնասման դեպքում, բացի սակավարյունությունից, կարող է առաջանալ օդային էմբոլիա՝ օդային բշտիկի անցում երակի մեջ, իր բոլոր բարդություններով (սրտի և շնչառության կանգ, շոկ):

Կոկորդի և շնչավիոդի վնասվածքներին բնորոշ է ցավը, շնչառության խանգարումը, հազը՝ արյունախխումով, վերքից հոսում է փրկիրախառն արյուն, ծայնը խռպոտում է, զարգանում է վերքային ինֆեկցիա:

Երակրակիոդի վնասվածքների ախտանիշները նույնն են, ինչոր պարանոցի հյուսվածքների և մյուս օրգանների վնասվածքների դեպքում, միաժամանակ խանգարում է կման ակտը, այն դառնում է ցավոտ, և վերքից նկատվում է սմնդի արտահոսք:

Առաջին և մինչքծշկական օգնություն.

- ստերիլ վիրակապ են դնում դեմքի վնասված մասին, իսկ քիմին, ստորին ծննդի վրա դրվում է պարսատիկակապ,
- կանխում են ասֆիքսիան, եթե կա լեզվի ետանկում, պարկեցնում են կորքի վրա և ֆիքսում լեզուն,
- կատարում են հակաշոկային միջոցառումներ,
- արյունահոսության դադարեցում՝ մատնային սեղմում (գլխի և պարանոցի օարկերակներին մատներով սեղմումը կատարվում է վերքից ներքև, իսկ երակներինը՝ վերքից վեր):

Պարանոցի վրա արյունահոսությունը դադարեցնում են ճնշող վիրակապով՝ հակառակ կողմում դնելով բեկակալ (կամ տուժածի առողջ կողմի թևը), որպեսզի շնչուղիները չփակվեն, և հակառակ կողմի արյան շրջանառությունը չխանգարվի:

Թթային արյունահոսության դադարեցման համար տուժածին նստեցնում են գլուխը առաջ, թքարմատին դնում են սարը: Մատներով քի թևերը սեղմում են միջնապատին, և, եթե արյունահոսությունը շարունակվում է, քիթը մաքրում են կուտակված պարունակությունը:

յունից ու թթի առաջնային բաժնի մեջ ներհրում ստերի թանգիքների կամ բամբակյա գնդիկ՝ թրջված 3%-անոց ջրածնի պերօքսիդով (տամպոնացում): Թթի տամպոնացումից հետո հարկավոր է ստուգել, թե ընպանի հետին պատով արյուն հոսու՞մ է: Գիտակցություն ունեցող տուժածին տեղափոխում են նստած դիրքով, իսկ, եթե գիտակցությունը բացակայում է, տեղափոխում են երեսնիկար պարկած, ճակատի և ուսերի տակ փափուկ բարձիկներ դնելով.

- շնչափողի վնասվածքի դեպքում, եթե կա շնչարգելություն, ապա Վերջի մեջ դնում են ռետինե խողովակ, որ շնչառությունը հետանա: Խողովակը ֆիքսում են պարանոցին,
- ցավազրկում են (ներարկելով շպրից-տյուբիկով նարկոտիկներ),
- սրտային միջոցներ (եթե կարիք կա):

Ականջի վնասվածքները լինում են.

1. բաց և փակ,
2. գանգի խոռոչ թափանցող և չթափանցող,
3. մնակուսի և այլ օրգանների հետ գուգորդված վնասվածքներ:

Արտաքին ականջի վնասվածքի դեպքում լինում է ցավ, արյունագեղում, Վերջից հոսում է արյուն, հնարավոր է ականջի խեցու պոկում: Սիօդին և ներքին ականջները զուգակցվում են մյուս օրգանների աչքի, ուղեղի և ծննդուների վնասվածքի հետ. առաջանում են ուժեղ ցավեր և աղմուկ ականջներում, գիշապտույտ, հարբածի քայլվածք, լսողության վատացում, սրտխառնոց, փսխում, ականջից հոսում է արյուն կամ ուղեղային հեղուկը (եթե վնասված է գամգուղեղը):

Առաջին օգնություն.

- վերքին դրվում է ստերի վիրակապ. /Եթե պոկված է ականջի խեցին, պետք է տուժածի հետ տանել՝ հնարավորության դեպքում սաղցի կտորներով լցված պարկով/,
- արտաքին ականջի վնասվածքի դեպքում դնել սեղմող՝ վիրակապ և սառը:

Աչքերի վնասվածքները լինում են մեխանիկական, քիմիական, ջերմային և ճառագայթային:

Մեխանիկական են կոպերի վնասվածքները (օտար մարմին, սալցարդ, վիրավորումներ), արցունքային ապարատի, ակնազմութերի և ակնակապիճների վնասվածքները (Վերջիններս համարվում են թափանցող վնասվածքներ):

Ախտանիշները. Աչքերի սուր ցավ, արցունքահոսություն, լուսավախություն, այտուցներ, արյունազեղումներ կոպերի շուրջը, եղջրաթաղանթի խավարում, կոպերի ու ակնազմութերի վերքեր: Աչքի այր-

Վածքների դեպքում՝ առաջինից մինչև չորրորդ աստիճանի այրվածքի նշաններ, տեսողության վատացում կամ կորուստ:

Առաջին օգնություն.

- վնասվածքի կամ այրվածքների դեպքում աչքին դնել ասեպտիկ վիրակապ (եթե կա տեսողության խախտում կամ կորուստ՝ վիրակապը դնել երկու աչքի վրա)։
- օտար մարմնի առկայության դեպքում՝ մակերեսային դիրքում գտնվող մարմինը հեռացնել ստերիլ բինսի միջոցով (թրջելով ջրում կամ 2-3%-անոց բորաթթվով)։
- թմրիական այրվածքների դեպքում աչքը երկար ժամանակ լվանալ հոսող ջրով, այնպես որ լվացաջորը չլցվեն առողջ աչքի մեջ։
- տուժածին արագ էվակուացնել։

**ԱԹ. Օգանեզովա,
ԱՀ. Անոնյան**

ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Պատկանում են ծանր վնասվածքների շարքին, առաջանում են ընկնելիս, հարվածային ալիքից, տրանսպորտային վթարներից, բուր և սուր գործիքներով հարվածելիս:

Կրծքավանդակի վնասվածքները լինում են փակ և բաց:

Փակ վնասվածքներին պատկանում են՝ փափուկ հյուսվածքների սալցարող, կրծքավանդակի օրգանների ցնցումը, ճնշումը, կրծքավանդակի ոսկրերի փակ կոտրվածքները:

Սալցարդի հետևանքով՝ առաջանում է կրծքավանդակի փափուկ հյուսվածքների, ինչպես նաև մանր անոթների վնասում (արյունագեղումներ):

Նշանները. ցավ կրծքավանդակի շրջանում, որը ուժեղանում է շնչական շարժումներից, շնչառության խանգարումներ, սահմանափակ կամ տարածված այտուց, արյունագեղումներ կապտուկի ձևով, որոնք առավել նկատելի են դաշնում սալցարդի 2-րդ, 3-րդ օրերին: Կարող է լինել նաև արյան կուտակում: Առաջին բուժօգնությունը՝ տուժվածին վնասված մասի վրա դնել սառը (թրջոց, սաղց-պարկ), սեղմող կապ, 2-3 օր անց տաքացնող միջոցներ:

Ցնցման հետևանքով առաջանում են կրծքավանդակի օրգան-ների աշխատանքի խանգարումներ: Կրծքավանդակի վրա տեսա-նելի փոփոխություններ չեն լինում:

Նշանները. ցավ կրծքավանդակում, արյունախխում, արագա-նում են անորթազարկը, շնչառությունը, արյան զարկերակային ճնշու-մը ընկնում է, երբեմն գիտակցության կորուստ:

Առաջին բուժօգնությունը. կրծքավանդակին դնել սաղը և անմի-ջապես տուժածին տեղափոխել բուժիմնարկ:

Ճնշում. առաջանում է, եթե մարդը ենթարկվում է ճնշման, հար-վածային ալիքից, ծանրության տակ մնալուց, ջրի հզոր շիրի ազդե-ցությունից: Կրծքավանդակի ճնշման հետևանքով խանգարվում է արյան շրջանառությունը, դժվարանում, երբեմն էլ անհնարին են դառնում շնչական շարժումները:

Նշանները. դժվարացած շնչառություն, անորթազարկը արագա-ցած: Կրծքավանդակի վերին հատվածներում մաշկը փեքած, կապ-տավուն, տարածված արյունազեղումներով (դեմքի, գլխի, պարա-նոցի շրջանում): Արյունազեղման հետևանքով վատանում է տեսու-դությունը, լսողությունը, առաջանում է գիտակցության կորուստ: Կրծքավանդակի այս վնասվածքը ընդունված է անվանել նաև վնասվածքային շնչահեղձուկ:

Առաջին բուժօգնությունը. տուժածին հանել ճնշման տակից, շնչուիխները ազատել օտար մարմիններից, շնչառության բացակա-յության դեպքում կատարել ԹԱՅՕ: Վերջինս հակացուցված է շնչա-ռության թուլացման դեպքում: Տայ ցավազրկողներ, սրտային միջոց-ներ և պատզարակով տեղափոխել:

Կրծքավանդակի ուսկրերի փակ կոտրվածքներ հաճախ առա-ջանում են հարվածից, վայր ընկնելուց, կրծքավանդակի ճնշման հետևանքով: Կողերի կոտրվածքի դեպքում կարող են վնասվել նաև թոքանգի առաջարակի թերթիկը, միջկողային անորները, նյարդերը, թոքերը, լյարդը, փայծաղը և այլն:

Նշանները. սուր տեղային ցավ, որը ուժեղանում է շոշափման, ներշնչման, հազի, փոշտալու, կրծքավանդակի շարժումների ժամա-նակ: Ընչառությունը մակերեսային է, լսվում է ոսկրային ճարճատ-յուն: Տուժածն ընդունում է հարկադրական դիրք: Թոքանգի և թոքերի վնասվածքների դեպքում կարող է առաջանալ արյունախխում, են-թամաշկային օդափոխություն: Կողերի բազմակի կոտրվածքների դեպ-քում կարող է առաջանալ վնասվածքային շնչահեղձություն և շոկ:

Առաջին բուժօգնությունը. կրծքավանդակին դնել սաղը, ցավազր-կել: Կրծքավանդակը վիրակապել և անհապաղ հոսպիտալացնել:

ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ԲԱՑ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Կրծքավանդակի բաց վնասվածքները հաճախ առաջանում են հրագենային և սարը գենքերի ազդեցության հետևանքով և ուղեկցվում են փափուկ հյուսվածքների, կրծքավանդակի ոսկրերի, թոքամզի, կրծքավանդակի օրգանների վնասումներով:

Բաց վնասվածքները լինում են հրագենային և ոչ հրագենային, թափանցող և չթափանցող:

Չթափանցող վնասվածքների ժամանակ առկա են փափուկ հյուսվածքների և ոսկրերի վնասումներ, իսկ թափանցող վնասվածքների դեպքում վնասվում է թոքամզիզը:

Նշանները. կրծքավանդակին վերքի առկայություն, արյունահոսություն, այտուց, ցավ շնչառության, ժամանակ, հազ, իսկ թոքի վնասման դեպքում՝ արյունախխում, շնչառությունը մակերեսային, հաճախացած, անոթազարկն արագացած:

Կրծքավանդակի թափանցող վերքի դեպքում վնասվում է առաստային թոքամզիզը, որի հետևանքով օդը թափանցում է թոքամզի խոռոչի մեջ՝ առաջացնելով պնևմոթորաքս (օդի առկայություն թոքամզի խոռոչի մեջ), եթե միաժամանակ վնասվում են միրտը, թոքերը, արյան անոթները, առաջանում է հեմոթորաքս (արյան առկայություն), կամ երկուսը միասին պնևմոհեմոթորաքս:

Տարբերում ենք բաց, փակ և փականային պնևմոթորաքս:

Փակ պնևմոթորաքսի դեպքում օդի ներբափանցումից հետո հյուսվածքով կամ արյան մակարդուկով վերքը փակվում է: Սա համեմատաբար բարեհաջող տեսակն է:

Բաց պնևմոթորաքսի դեպքում ներշնչման ժամանակ օդն անցնում է թոքամզի խոռոչ, արտաշնչելիս այն դուրս է զայիս: Կտանգավոր է, տեղի են ունենում կրծքավանդակի օրգանների ճոճանակածն շարժումներ:

Հատուկ վտանգ է ներկայացնում և իր ծանրությամբ առանձնանում է փականային պնևմոթորաքսը, որի դեպքում գործում է փականային մեխանիզմ՝ ներշնչման ժամանակ օդն անցնում է թոքամզի խոռոչ, իսկ արտաշնչելիս՝ դուրս է զայիս մասամբ կամ մնում է թոքամզի խոռոչում: Օդը կուտակվելով, ճնշում է թոքերին և սրտին, որը բերում է արագ զարգացող կյանքին սպառնացող արյան շրջանառության և շնչառության խանգարումների: Օդը կարող է կուտակվել նաև ենթամաշկում, առաջացնելով փքանք:

Նշանները. վերքի առկայություն, ցավ կրծքավանդակում, շնչառությունը դժվարացած, մակերեսային, թոքի հյուսվածքի վնասվածքի դեպքում արյունախխում, հազ, մաշկը գունատ է կամ կապույտ, անո-

թագարկն արագացած, թույլ լեցումով, արյան զարկերակային ճնշումը ընկած, ներշնչման և արտաշնչման ժամանակ լսվում է օդի բնորոշ ձայն: Ծանր դեպքերում զարգանում են շնչահեղծության և շոկի նշաններ:

Առաջին բուժօգնություն. Վիակ պննամոթորաքսի դեպքում վերքին դնել ասեպտիկ վիրակապ, արյունահոսության դեպքում ճնշող վիրակապ, կրծքավանդակին դնել սառը, տալ ցավազրկողներ:

Բաց և փականային պննամոթորաքսների դեպքում վերքին դնել ասեպտիկ վիրակապ, վերքի եզրերին քսել վագելին, ապա վերքի շրջանը ծածկել մոմաթով կամ անհատական վիրակապական ծրադի ռետինեպատ թաղանթով, որը ծածկել թամբակի հաստ շերտով, լայն վիրակապով պարուրածն վիրակապել կրծքավանդակը (հերմետիկ կամ օկլուրացիոն վիրակապ): Շտապ տեղափոխել բուժիմնարկ կիսանստած դիրքով, իսկ շոկի դեպքում հորիզոնական դիրքով:

Հազվադեպ հանդիպում են նաև սրտի և սրտապարկի վնասվածքներ, որոնք ներկայացնում են մեծ վտանգ:

Նշաններ. Սրտի շրջանում արտաքին արյունահոսություն և արյունահոսություն սրտապարկի խոռոչում, ցավ սրտի շրջանում: Զարգանում են վնասվածքային շոկի նշաններ՝ մաշկը գունատ, լորձաթղանաբերը կապտավուն, արյան զարկերակային ճնշման անկում, անորազարկը թույլ, թելանման, պարանոցային երակները լայնացած, հետո: Տուժածի վիճակը ծայրահեղ ծանր է:

Անհետաձգելի բուժօգնությունը. Խորժանակող հարեր, սրտի շրջանում դնել ճնշող վիրակապ և անմիջապես պառկած դիրքով՝ պատճառակով տեղափոխել վիրաբուժական բաժանմունք:

**Ֆ.Մ. Սադիկյան,
Ժ.Ա. Չորանյան**

**ՈՐՈՎԱՅԻՆ ԵԿ ՈՐՈՎԱՅԻՆԱՆՈՒՐ
ՕՐԳԱՆՆԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ**

**«ԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ՍՈՒՐ ՈՐՈՎԱՅԻՆ» ՄԱՍԻՆ,
ՍՈՒՐ ՊԵՐԻՏՈՒՆԻՑ**

«Սուր որովայնը» հավաքական հասկացությունն ընդգրկում է որովայնի խոռոչի այնպիսի վնասվածքներն ու սուր բորբոքային հիվանդությունները, որոնք հրատապ բժշկական օգնություն են պահանջում: Այդ հիվանդություններից են՝ որդանման ելունի, լեղապարկի և որովայնամզի բորբոքումները, ստամոքսի և տասներկու-

մատնյա աղու խոցի թափածակումը (պերֆորացիա), աղիների սուր անանցելիությունը, ներորովայնային արյունահոսությունը և այլն: Այս հիվանդությունները մեծ մասամբ սկզբում են հանկարծակի և առանց նախանշանների:

Նշանները. որովայնի խորշում առաջացող տեղային կամ տարածուն բնույթի, տարբեր ուժգության ցավ, որն ունի մշտական բնույթ, սրտխառնոց և փսխում, սուր սակավալիունության նշաններ (ներորովայնային արյունահոսության դեպքում), սուր պերիստոնիստի երևույթներ:

Սուր պերիստոնիստը (որովայնանգի բորբոքումը) լինում է տեղային (սահմանափակ) և ընդհանուր (տարածուն): Սա առաջանում է, եթե որովայնի խոռոչ են թափանցում թարախածին մանրէներ՝ սուր ապենդիցիտի, խոցի թափածակնան և այլ դեպքերում, կամ ներքին օրգանների վնասման ժամանակ: Ախտանշաններն են փորի մկանների լարվածություն “տախտականման ռորովայն”, շոշափնան ժամանակ ցավերի ուժեղացում, սրտխառնոց, փսխում, լեզուն չոր, որովայնը փերված, անոթազարկը հաճախ և թույլ, նույնիսկ թելանման: Ծանր դեպքերում զարգանում են օրգանիզմի ընթիանուր թունավորման (ինսուրսիվացիայի) նշաններ՝ դեմքը գունատ է, դիմագծերը սրված, ակնազմները եւս շրջված, աչքերի շորջը մուգ շրջանակներ, մարմնի ջերմությունը բարձրանում է, շնչառությունը դառնում է մակերեսային:

Պերիստոնիստի կանխարգելման համար հարկավոր է ժամանակին բուժել այն հիվանդությունները, որոնք բերում են այսպիսի թարության:

Առաջին բուժօգնությունը. «Սուր որովայնի» ժամանակ տուժածին չի կարելի հեղուկներ տալ խմելու, չնայած որ նա ունի ծարակի զգացում և բերանի չորություն: Որպես օրենք՝ արգելվում են ամեն տեսակի հոգնաներն ու լուծողականները, ստամոքսի լվացումը և ջեռակների օգտագործումը: Արգելվում են նաև ուժեղ ցավազրկող դեղամիջոցները, որովհետև վերջիններս քողարկելով հիվանդության իսկական պատկերը, թույլ չեն տալիս ճիշտ կողմնորոշվելու: Անհրաժեշտ է անմիջապես տուժածին տեղափոխել հիվանդանոց:

ՈՐՈՎԱՅՆԻ ՓԱԿ ԵՎ ԲԱՑ ՎՆՍՍՎԱԾՔՆԵՐ

Որովայնի վնասվածքները լինում են փակ և բաց: Փակ վնասվածքներ առաջանում են բութ հարվածից, հարվածային ալիքից, բարձրությունից վայր ընկնելուց, ճնշման հետևանքով: Ազդող ուժից կախված կարող է վնասվել միայն որովայնի առաջնային պատը կամ միաժամանակ՝ ներքին օրգանները:

- Որովայնի առաջնային պատի վնասվածքները լինում են սալշարդի կամ մկանների պատոման ծևով: Տեղային ախ-

տանիշներն են ցավը, արյունագեղումները, փորի մկանների լարումը, իսկ ընդհանուր երևոյթներից են՝ հաճախ և մակերեսային շնչառությունը, հաճախացած անոթազարկը, մաշկը գունատ է, սառը քրտինքով պատված, կարող է նկատվել շոկի պատկեր:

- Ներքին օրգանների վնասման դեպքում բացի վերը նշված ախտանիշներից կարող է առաջանալ ներքին արյունահոսություն և սուր սակավարյունության պատկեր, եթե վնասվել են հյուսվածքային օրգանները. յարդը, փայծաղը, ենթաստամոքսային գեղձը և այլն, կամ պերիստոնիտի պատկեր, եթե վնասվել են որովայնի խոռոչային օրգանները (ստամոքսը, աղիները և միզապարկը): Որովայնի օրգանների վնասվածքներ ունեցող տուժածն ընդունում է հարկադրական դիրք՝ մեջքի կամ կողքի վրա պարկած, ուժքեղ ծալված:

Որովայնի փակ վնասվածքները հաճախ բերում են շոկի:

Որովայնի բաց վնասվածքները լինում են՝ հրագենային և ոչ հրագենային (սառը գենքից), որոնք կարող են լինել՝ քափանցող, եթե որովայնամիզը չի վնասվել, և քափանցող, եթե վերքը քափանցում է որովայնի խոռոչ: Ինչպես նաև վերքեղջ կարող են ուղեկցվել ներքին օրգանների վնասումով, որի պատճառով որոշ ժամանակ անց վերքի ախտանիշներին միանում են նաև պերիստոնիտի նշանները:

Թափանցող վնասվածքների դեպքում վերքի մեջ կարող են դուրս գալ ներքին օրգանները, օրինակ՝ բարակ կամ հաստ աղիքի գալարը, ճարպոնը, կամ ներքին օրգանների պարունակությունը՝ կիսանարս սնունդը, կղանքը, լեղին, մեզը և այլն:

Առաջին և միջնաշջկական օգնությունը.

1. Բաց վնասվածքների ժամանակ կատարել ցավազրկում: Փակ վնասվածքների ժամանակ ցավազրկումը կատարվում է միայն այն դեպքում, եթե երկար ժամանակ է հարկավոր վիրաբուժական բաժանմունք հասցնելու համար (շոկը կանխելու նպատակով):
2. Որովայնի վրա դնել սառը՝ ինչպես ցավը մեղմելու, այնպես էլ սուր արյունահոսությունը կանխելու համար:
3. Վերքի վրա դնել ստերիլ վիրակապ խոնավ վիճակում (թրչել ֆիզիոլոգիական լուծույթով կամ ջրով):
4. Որովայնի օրգանների վնասվածքի նույնիսկ կասկածի դեպքում արգելվում է ուտելու կամ խմելու որևէ բան տալ, չտալ նույնիսկ դեղորայք, չկատարել հոգնա:
5. Արգելվում է վերքից դուրս եկած օրգանները ներիրել՝ վարակը կանխելու նպատակով:

6. Տեղափոխելուց առաջ անշարժացնել՝ փորի վրա դմելով մեծ ծավալի և ամուր վիրակապ: Եթե նկատվում է ներքին օրգանների արտանկում, ապա վիրակապի տակ այդ օրգանների և վերքի բացվածքի շուրջը դրվում է փափուկ ստերիլ բինտից կամ իր հագուստից օղակ, որպեսզի արտանկված օրգանները չճնշվեն և չներիրվեն:
7. Տեղափոխել պատղարակով, հանգիստ, առանց ցնցումների, մեջքի վրա պառկած: Ծնկան հոդերում ծալված ոտքերի առջև դնել պատնեշ, որպեսզի ոտքերը չտարածվեն:

**Զ.Ա. Գլորգան, կենս. գիտ. թեկն.,
Ժ.Ա. Չորանյան**

ԿՈՆՔԻ ՈՍԿՐԵՐԻ ԵՎ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

ԿՈՆՔԻ ՈՍԿՐԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Կոնքի ոսկրերի կոտրվածքները պատկանում են ծանր վնասվածքների շարքին:

Տարբերում են կոնքի ծայրամասային կոտրվածք և կոնքի օղակի (գոտու) կոտրվածք:

Ծղիանուր նշանները.

- շոկային վիճակ,
- նստոսկրերի կոտրվածքի դեպքում առաջանում է այսպես կոչված “գորստի” դիրք՝ ստորին վերջույթները կոնք-ազդրային և ծնկան հոդերում կիսածալված վիճակում են, ոտքերն իրարից քիչ հեռացած,
- ցայլոսկրի հորիզոնական ճյուղի կոտրվածքի ժամանակ այդ կողմի ոտքը թեքվում է կողքի վրա և ախտահարվածը չի կարողանում այն ուղղել՝ առաջանում է այսպես կոչված “կպած թաթի” ախտանշանը,
- կոնք-ազդրային հոդի հոդախախտի դեպքում ծայրանդամը կարծանում է,
- եթե կոնքի օղակն է կոտրվել, ապա մարմնի և ստորին ծայրանդամների շարժողությունը սահմանափակվում է, հիվանդը կանգնել չի կարողանում. կոտրված մասում առաջանում են արյունալեցում, ցավ, կրեպիտացիա (ճոճող):

Ախտորոշումը հաստատվում է ռենտգենյան հետազոտությամբ:

Բարդություններն են՝ միզապարկի և միզուկի վնասվածքը, երբեմն՝ ուղիղ աղու և հեշտոցի վնասվածքը:

Առաջին բուժօգնությունը.

- բաց վնասվածքի դեպքում դնել աննեխական վիրակապ, ցավազրկել,
- սալօարդի դեպքում դնել ճնշող կապ և սարք,
- կոնքի ոսկրերի կոտրվածքի դեպքում ախտահարվածին պարկեցնել պատզարակին՝ հարթ տախտակի վրա՝ կոնքազդրային և ծնկային հողերը ծալած և առբերված դեպի որովայնը՝ ոներով ծնկային հողերի տակ բարձիկ (հագրւածից, խոտից), ապա երկու ծնկները կապել իրար, որ միմյանցից չիեռանան:

ԿՈՆՔԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Ուղիղ աղիքի վնասվածքները հաճախ ուղեկցում են կոնքի կոտրվածքներին և նշանները կապված են կղանքային պերիտոնիտի առաջացման հետ:

Եթե վնասված են կոնքի խոռոչի օրգանները, ապա նկատվում է ականա կղարտադրություն, կղանքի հետ արյուն, վերքից դուրս են գալիս գագերը կամ կղանքը, կարող են առաջանալ ինֆեկցիոն բարդություններ և կոնքի ոսկրերի փտախտ (օստեոմիելիտ): Մահկան պատճառ կարող է դառնալ արյան վարակումը (սեպսիս), իսկ ավելի հազվադեպ՝ վնասվածքային շոկը:

Ներքին սեռական օրգանների վնասվածքները բնորոշվում են ներքին արյունահոսությամբ և որովայնանգի գրգռվածությամբ (ցավ, մկանային լարվածություն):

Միզուկի վնասման նշաններն են՝ միզակապություն, արյունահոսություն միզուկից կամ վերքից, միզապարկի գերլեցում, հաճախակի միզելու ցանկություն, վերքից մեզի հոսք:

Միզապարկի վնասվածքները լինում են՝

- արտարուվայնամզային, երբ մեզը լցվում է շրջակա բջջանքի մեջ, և կարող է պատճառ դառնալ միզային արտահոսքի,
- ներորովայնամզային վնասվածքի դեպքում մեզը լցվում է որովայնի խոռոչ և պատճառ դառնում պերիտոնիտի:

Ախտանիշներն են՝ ցավը, մեզի մեջ արյուն, միզակապություն, վերքից մեզի արտահոսք, երբեմն շոկ, սեպսիս:

Երիկամների վնասվածքները լինում են սալօարդերի, պատրվածքների և վերքերի ձևով:

Ախտանիշներն են՝ ցավ, արյունային մեզ, գոտկային հատվածի այտուց կամ վերք, վերքից՝ մեզի հոսք, հաճախ՝ շոկ:

Առաջին և մինչքծշկական օգնությունը.

- Վերքի վրա դնել հականեխված վիրակապ, ցավագրկել,
- Կատարել արտաքին արյունահոսության ժամանակավոր դադարեցում ճնշող վիրակապով կամ վերքի տամպոնացումով,
- Մեղափոխել հիվանդանոց (եթե միզապարկն է վնասված փորի վրա), արգելվում է հեղուկների ընդունումը և որևէ միջամտությունը:

Ֆ.Ս. Մաղիկյան,
Ժ.Ա. Չորանյան

ՈՂՆԱՇԱՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Ողնաշարի վնասվածքները պատկանում են ծանր վնասվածքների շարքին և կարող են ուղեկցվել փափուկ հյուսվածքների (կապանեղի, մկանների և այլն), ողերի և ողնուղեղի վնասման երևույթներով:

Տարբերում են ողնաշարի փակ (առանց մաշկի ամբողջականության խախտման) և բաց (մաշկի ամբողջականության խախտումով) վնասվածքներ, ինչպես նաև չքարդացած (առանց ողնուղեղի ֆունկցիայի խանգարման) և բարդացած (ողնուղեղի ֆունկցիայի խանգարումով):

Բաց վնասվածքները իրենց հերթին կարող են լինել չքափանցող (եթե ողնուղեղի կարծր թաղանթը չի վնասվել) և թափանցող (եթե այն վնասվել է): Այս վնասվածքների դեպքում մեծ մասամբ առկա է ինֆեկցիայի ներթափանցման վտանգը:

Ըստ տեղակայման տարբերում են՝ պարանոցային, կրծքային, գոտկային և սրբանային հատվածների վնասվածքներ, ընդ որում որքան վեր է գտնվում վնասվածքը, այնքան նրա ընթացքը ծանր է:

Ողնաշարի փափուկ հյուսվածքների (մկանների, կապանների և այլն) փակ վնասվածքների նշաններն են՝ ցավ, որը ուժեղանում է շարժումների ժամանակ, այտուց, արյունագեղում վնասված տեղում, իսկ բաց վնասվածքների դեպքում նաև վերքի առկայություն իր բոլոր նշաններով:

Ողերի կոտրվածքները կարող են լինել մասնակի կամ լրիկ, առանց տեղաշարժի և տեղաշարժումով: Ողնաշարի չքարդացած կոտրվածքի դեպքում, եթե ողնուղեղը վնասված չէ, բայց կոտրված են ողերը, առկա են կոտրվածքներ բնորոշ նշաններ՝ ցավ, որը ուժեց-

դանում է շոշափելիս, շարժումներից, շարժելիս ոսկրերի ճռճռոց (կրեպիտացիա), շարժումների սահմանափակում, մկանների լարվածություն, ողնասյան դեֆորմացիա, հարկադրական դիրք, իսկ բաց կոտրվածքների դեպքում՝ նաև վերքի նշաններ:

Ողնաշարի բարդացած վնասվածքներն ուղեկցվում են ողնուղեղի ցնցումով, սալջարդով և ճնշումով, իսկ ավելի ծանր դեպքերում նրա մասնակի կամ լրիվ հատումով: Ողնուղեղի վնասման դեպքում վնասված տեղից ցած ընկած հատվածում զարգանում են հետևյալ նշաններ՝ զգայության խանգարումներ, վերջույթներում այրողի կամ թմրածության զգացում, վերջույթների շարժումների մասնակի (սիսակարված – պարեզ) կամ լրիվ (կարգված – պարալիչ) բացակայություն, ռեֆլեքսների և կոնքի օրգանների ֆունկցիայի խանգարումներ: Ողնուղեղի լրիվ հատման դեպքում առաջանում է «նշանների եռյակը» (տրիադա)՝ անշարժություն (ադինամիա), անզգայություն (անեսթեզիա), ռեֆլեքսների բացակայություն (առեֆլեքսիա): Հատկապես վտանգավոր են ողնուղեղի պարանոցային մասի վնասվածքները, քանի որ դրանք ուղեկցվում են շնչառության և սրտի գործունեության ծանր խանգարումներով, որը կարող է արագորեն հանգեցնել մահվան:

Առաջին բուժօգնությունը, ողնաշարի բաց վնասվածքների դեպքում վերքի վրա դնել ստերիլ վիրակապ, կատարել ցավազրկում: Տեղափոխման ժամանակ չի կարելի ողնաշարը կորացնել, քանի որ դա կրերի ողնուղեղի վնասման: Տուժածին տեղափոխում են միմիայն պառկած վիճակում:

Ողնաշարի կոտրվածքների դեպքում միշտ պետք է կանխատեսի ամենածանր վնասվածքը՝ պարանոցի կոտրվածքը, ուստի տուժածին զգուշորեն շրջում են կողքի վրա միաժամանակ անշարժ պահելով գլխի, ուսի և կոնքային հատվածները, որից հետո պարանոցի շուրջը դրվում է հագուստից կամ այլ անուր կտորից պատրաստված պինդ գլան, որը ընդգրկում է ստորին ծնոտը և հենվում է կրծքավանդակի վերին հատվածի վրա: Պարանոցի հետին մասի վրա ողնաշարի երկարությամբ դրվում է կարծ փայտ և երկու պարսատիկակապ՝ մեկը ստորին ծնոտի, մյուսը ձակատի վրա, որոնք ամրակապում են այդ փայտի հետ:

Ողնաշարի պարանոցային հատվածի կոտրվածքների դեպքում հարկավոր է տուժածին պատզարակի վրա տեղափոխել միմիայն մեջքի վրա պառկած դիրքով: Իսկ կրծքային և գոտկային հատվածների, կոտրվածքների դեպքում կարելի է տեղափոխել և՝ մեջքի, և՝ փորի վրա պառկած: Գետնի վրա պառկած տուժածին, երեք հոգով

միաժամանակ բարձրացնելով, դնում են պատզարակի վրա երեսնի վայր, ուսերի և ճակատի տակ դնելով հագուստից պատրաստված գլան: Իսկ մեջքի վրա պարկած դիրքով տեղափոխելու դեպքում, ողնաշարի համար անշարժ պայմաններ ստեղծելու նպատակով, անհրաժեշտ է պատզարակի վրա դնել հարթ տախտակ: Այնուհետև տուժածին պատզարակի հետ կապում են կրծքավանդակի, որովայնի և ոտքերի շրջաններում:

ԶԵՐՄԱՅԻՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐ

Զերմային այրվածքները դա հյուսվածքների այնպիսի ախտահրումներն են, որոնք առաջանում են ջերմային էներգիայի ազդեցության տակ (տաք հեղուկներ, գլորչի, կրակ, շիկացած առարկաներ և այլն): Հատկապես ծանր են ընթանում կրակից առաջացած այրվածքները, քանի որ այս դեպքում ջերմաստիճանը մի քանի անգամ ավելի բարձր է, քան եռացող ջրի ջերմաստիճանը: Կախված ջերմաստիճանից և ազդեցության տևողությունից, ինչպես նաև այրվածքի տեղակայումից, տարբերում են մի քանի աստիճանի այրվածքներ:

Ըստ հյուսվածքների ախտահարման խորության տարբերում են այրվածքների 4 աստիճան.

I աստիճանի դեպքում նկատվում է մաշկի կարմրություն, այսուցվածություն, ցավ, մրմրոց: 3-5 օր հետո այս երևույթներն անցնում են, տեղում թողնելով մաշկի թեփոտում և գունավորում (պիգմենտացիա), որը հետագայում անցնում է:

II աստիճանի դեպքում կարմրած մաշկի վրա առաջանում են բշտեր՝ լցված թափանցիկ հեղուկով (վերնամաշկի անջատում բուն մաշկից): Կարակի բացակայության դեպքում վերքը լավանում է 10-15 օր հետո առանց սպիացման: Իսկ վարակի ներթափանցման դեպքում լավացումը զգագկում է 3-4 շաբաթ և առաջանում է նույր սպի:

III աստիճանն ունի «ա» և «բ» խորություն.

III^ա-ի դեպքում նկատվում է տվյալ տեղի ցավի և շոշափելիքի գացողության հջեցում (մաշկի մասնակի մեռուկացում): Ակսանիշները նույն են, ինչ որ II-րդ աստիճանի դեպքում, միայն այս դեպքում վերքը լավանում է 3-4 շաբաթից:

III^բ-ի դեպքում նկատվում է մաշկի մեռուկացում, բացակայում է ցավի և շոշափելիքի գացողությունը: Այս այրվածքները մեծ մասամբ բարդանում են

թարախակալումով և լավանալուց հետո մնում են կոպիտ սպիներ:

IV աստիճանի ժամանակ մահանում է ոչ միայն մաշկը, այլ նաև խորը հյուսվածքները՝ ենթամաշկային բջջանքը, փակեղները, ջերը, մկանները և ոսկրերը:

I, II և III^ա աստիճանի այրվածքները կոչվում են մակերեսային, քանի որ այստեղ պահպանված են էպիթելային բջիջները, որոնց հաշվին վերականգնվում է մաշկը, իսկ III^ս և IV աստիճանի դեպքում այրվածքը այնքան խորն է, որ մաշկը կարելի է վերականգնել միմիայն վիրահատությամբ՝ շրջակա մաշկի հաշվին:

Եթե այրվում է մարմնի մակերեսի մինչև 10%-ը, այն համարվում է ոչ տարածուն պրոցես (ծերերի և երեխաների մոտ մինչև 5%-ը), իսկ դրանց ավելի այրվածքի դեպքում տարածուն պրոցես, որի դեպքում նկատվում են նաև ընդհանուր երևույթներ (այրվածքային հիվանդություն):

Այրված մակերեսի չափը որոշելու համար օգտագործում են «ավի» մեթոդ (մեկ ափը հավասար է մարմնի մակերեսի 1%-ին) և «ինների» մեթոդ, ըստ որի գլխի ու պարանոցի մակերեսը կազմում է 9%, յուրաքանչյուր վերին վերջույթինը՝ 9%, ամեն մի ստորին վերջույթի մակերեսը՝ $2 \times 9 = 18\%$, կրծքավանդակի մակերեսը՝ 9%, որովայնինը՝ 9%, մեջքինը՝ 9%, հետույթինը՝ 9%, ստացվում է $11 \times 9 = 99\%$, գումարած շեքի շրջանը՝ 1%:

Սուածին և մինչքծնկական օգնություն. առաջին հերթին պետք է դադարեցնել այրվող գործոնի ազդեցությունը՝ հանգընել կրակը ջրի շիթով կամ տուժածին փարաթելով որևէ ծածկոցով, չնորանալով գուլխը բաց թողնելու մասին: Այրվող հագուստը կտրել, տուժածին դուրս բերել այրվող օջախից: Մաշկի արագ սարեցման նպատակով այրված մասը պահել հոսող սառը ջրի տակ (15-20 րոպե): Կարելի է օգտագործել նաև սառը թրցոցներ, սառցեպարկ, օդափոխիչ: Երկրորդային ինֆեկցիան և շոկը կամիսելու համար վերքի վրա դնել հականեխված վիրակապ (վերքին կպած հագուստի կտորները չիենացնել և բշտերը չբացել): Կարելի է այդ նպատակով օգտագործել 30%-անոց սպիրոտով կամ օղիով թրջված ստերիլ անձեռոցիկ և չփաթաթել 20 րոպե: Այրվածքային մեծ մակերեսները ծածկել էմուլսացված չկացող վիրակապերով, կամ մաքուր և արդուկված սավանով, սրբիչով և այլն (չպետք է փաթաթել բինտով, դա ժամանակ է խոլում): Տուժածին տալ ցավազդողներ և աղահիմնային լուծույթներ (1 լ ջրում 1 թ. գոյալ աղ և 1 թ. գոյալ խմորի սողա):

**ԱՅՐՎԱԾՔԱՅԻՆ ՀԻԿԱՍԴՈՒԹՅՈՒՆ, ԱՅՐՎԱԾՔԱՅԻՆ ԾՈԿ,
ԿԱՆԽԱՐՁԵԼՈՒԾ**

Այրվածքային հիվանդությունը ծանր այրվածքի և նրան ուղեկցող ընդհանուր երևույթների ամբողջությունն է, որի դեպքում խախտվում են կենսական կարևոր օրգանների (սիրտ-անոթային, շնչական, լարովի, երիկամների) ֆունկցիաները:

Այրվածքային հիվանդությունն ունի հետևյալ շրջանները.

1. Այրվածքային շոկը համարվում է վնասվածքային շոկի տարատեսակ, բայց ընթանում է ավելի ծանր, առաջանում է այրվածքի II-IV աստիճանների դեպքում, եթե այրվել է մարմնի մակերեսի 10%-ից ավելին (երեխաների ու ծերերի մոտ՝ 5%-ից ավելին): Ծոկի պատճառը ուժեղ ցավն է, արյան պլազմայի մեծ կորուստը: Ծոկը տևում է 1-3 օր և բնորոշվում է էրիթրոցիտների քայլայումով, արյան խտացումով, սակավամիջոկությամբ: Ծոկի ծանրությունը կախված է տուժողի տարիքից, այրվածքի մակերեսի մեծությունից, խորությունից, բնորոշվում է գրգռվածությամբ, անհանգըստությամբ, սարսուրով, դողով, մաշկի գունատությամբ, անոթազարկի հաճախացումով, ծարավի զգացումով: Ծանր դեպքերում գրգռվածությունն անցնում է արգելակման՝ իջնում է զարկերակային ճնշումը՝ 100մմ սնդիկի սունից ցած, անոթազարկը դարձնում է թելանման, առաջանում է հևոց, ցիանոզ, անզուսպ փսխում: Ի տարբերություն վնասվածքային շոկի, այրվածքային շոկի դեպքում պարտադիր չէ զարկերակային ճնշման անկումը: Երեխաների մոտ այրվածքային շոկն ուղեկցվում է բարձր ջերմությամբ, ջղաձըգություններով: Ծայրահեղ ծանր դեպքերում (այրվածքի մակերեսը 50%-ից ավելի է) վրա է հասնում մահը:
 2. Այրվածքային տոքսինիան բնորոշվում է այրվածքային մակերեսի մահացած հյուսվածքների քայլայումից առաջացած թույների ներծծումով: Տևում է մինչև 10-15 օր:
 3. Մեպսիսի կամ ինֆեկցիոն բարդությունների շրջան:
 4. Առողջացման շրջան:
- Այրվածքային շոկի կանխարգելման համար հարկավոր է:
- կատարել ցավագրկում,
 - անշարժացնել այրված վերջույթը,
 - խմելու ծնով տալ մեծ քանակությամբ աղահիմնային հեղուկներ (1թ. գդալ աղ, 1թ. գդալ խմորի սոդա, 1լ ջուր),

- անհրաժեշտության դեպքում կատարել վերակենդանացում,
- տուժածին տաքացնել, ծածկել և տեղափոխել մոտակա բուժկետը:

ԹՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՌԵՑՈՒՄ

Ցածր ջերմաստիճանի ազդեցության տակ օրգանիզմում կարող են առաջանալ ինչպես տեղային (ցրտահարություն), այնպես էլ ընդհանուր (սարեցում) փոփոխություններ: Մեծ մասամբ ցրտահարվում են քիշը, ականջները, ոտնաթաթերը և այլն:

Ցրտահարությանը նպաստում են խոնավությունը, քամու արագությունը (նույնիսկ եթե օդի ջերմությունը $+6^{\circ}\text{C} + +8^{\circ}\text{C}$), սեղմող հագուստը, հարկադրական և անշարժ դիրքը, քրտնելը, վիտամինների պակասը, հոգնածությունը, քաղցր, հարբածությունը և այլն:

Ցրտահարության կիխնիկական ընթացքը ունի երկու շրջան. առաջին՝ գաղտնի (նախառեակտիվ) շրջան և երկրորդ՝ (ռեակտիվ) շրջան: Առաջին շրջանում հնարավոր չէ որոշել ցրտահարության խորությունը, քանի որ նկատվում են միմիայն ցավի զգացողության բացակայություն, և մաշկի գունատություն: Ամբողջ կիխնիկական պատկերը ի հայտ է գալիս տաքանալուց հետո, երբ զարգանում է երկրորդ շրջանը:

Ըստ ծանրության տարբերում են ցրտահարության 4 աստիճան.

- I աստիճանը բնորոշվում է ցավով, քորով, կարմրությամբ կամ կապտությամբ, այտուցով և զգացողության խանգարումով: 3-7 օր հետո այս ամենը անցնում է, երբեմն նկատվում է մաշկի թեփոտում: Սակայն պահպանվում է գերզգայնություն ցածր ջերմաստիճանի նկատմամբ:
- II աստիճանի ժամանակ վերը նշված նշանները ավելի են արտահայտվում, կապտած մաշկի վրա նկատվում են բշտեր՝ լցված բափանցիկ հեղուկով (վնասված վերնամաշկի տակ), ախտահարված տեղը խիստ ցավուտ է: Վերքը լավանում է 14-30 օր հետո առանց սպիացման:
- III աստիճանի դեպքում մաշկն ու ենթամաշկը մեռուկանում են (նեկրոզ): Բշտերը լցվում են արյունային հեղուկով: Հաճախ վերքը բարդանում է վարակի ներթափանցումով, լավացումը տևում է 1-2 ամիս սպիների գոյացումով:
- IV աստիճանի դեպքում մեռուկանում են ցրտահարված տեղամասի բոլոր փափուկ հյուսվածքներն ու ոսկրերը, ահազանում է փտախտ (գանգրենա):

Առաջին և մինչքծշկական օգնության նպատակն է արագորեն վերականգնել ախտահարված մարմնամասի ջերմաստիճանը և արյան շրջանառությունը: Տուժածին տաքացնում են ջերակներով, ծածկում են, տախիս են տաք հեղուկներ, օդի (50-100 մլ): Ցրտահարված մասերը պետք է զգույշ շփել օդիով թրջած բամբակով կամ մերսել մաքուր ծեռցերով (պետք չէ շփել ծյունով): Ցրտահարված մասը պետք չէ տաքացնել 40°C ավելի ջերմություն հաղորդող ջերմային աղբյուրի մոտ: Այսուցի կամ բշտիկների առկայության դեպքում ցրտահարված մասում չի բույլատրվում շփում կատարել կամ բացել բշտերը: Այնուհետև վերքի վրա դնում են ջերմամեկուսացնող հականեխված վիրակապ: Կարելի է ցրտահարված մասը տաքացնել ջրի մեջ՝ ջրի ջերմաստիճանը սկսելով $20^{\circ}-22^{\circ}\text{C}$ -ից և $20-30$ րոպեի ընթացքում այն հասցնել $36^{\circ}-37^{\circ}\text{C}$, ընդ որում մերսելով ծայրից դեպի կենտրոն: Վնասված մասը վիրակապելուց հետո անշարժացնել և տուժածին տեղափոխել բուժիկմնարկ՝ նստած կամ պառկած վիճակում, վերջույթին տալով բարձր դիրք: Ուժեղ ցավերի ժամանակ տուժածին ներարկում են ցավագրկողներ:

Ընդհանուր սառեցում առաջանում է, եթե ցրտի ազդեցությանն է ենթարկվում ամբողջ մարմինը, խանգարվում է ջերմակարգավորման մեխանիզմը, և իջնում է մարմնի ջերմությունը մինչև 35°C և ցածր: Ավելի հաճախ ընդհանուր սառեցումը տեղի է ունենում բարձր խոնակության և ուժեղ քամու դեպքում, եթե օդի ջերմաստիճանը $-4^{\circ}\text{C} + +10^{\circ}\text{C}$: Ընդհանուր սառեցման ենթակա են ծանր ֆիզիկական աշխատանքից հոգնած և ակրոխու ազդեցության տակ գտնվող մարդիկ:

Ընդհանուր սառեցումն ընթանում է 3 շրջանով.

1. **Անշարժացման շրջան.** ախտահարվածը գանգատվում է հոգնածությունից, գլխապտությունից, քննութությունից: Մաշկը գունատվում է, ջերմությունն իջնում $33^{\circ}-32^{\circ}\text{C}$, հիվանդը անտարբեր է դառնում շրջապատի նկատմամբ: Նկատվում է մկանային որո, սակայն պահպանված են ինքնուրույն շարժումները:
2. **Արգելակման շրջանում** նկատվում է խորը քննութություն, անտարբերություն, մաշկը գունատ է, միմիկան բացակայում է, խոսակցությունը խանգարվում է, ջերմությունը ընկնում է մինչև $32^{\circ}-29^{\circ}\text{C}$, անորթազարկ՝ $30-40$ զարկ 1 րոպեում, զարկերակային ճնշումը հաճախ ընկած է, հնարավոր է գիտակցության կորուստ: Ինքնուրույն շարժումները բացակայում են, մարմինը կծկված է:
3. **Ցնցումների շրջան,** եթե կորցնում է գիտակցությունը, առաջանում են ցնցումներ, մարմինը փայտանում է: Բբերի լու-

սային ռեակցիան թուլացած է, անոթազարկը շոշափիվում է միայն քնային և ազդրային զարկերակների վրա՝ 1 րոպեում 30-40 զարկ, զարկերակային ճնշումը չի որոշվում, շնչառությունը դանդաղում է, մարմնի ջերմաստիճանն ընկնում է 27° - 26° C-ի: <Ետազա սառեցման դեպքում տեղի է ունենում սրտի և շնչառության կանգ:

Արաջին բուժօգնությունը. տուժածին օգնելու համար հարկավոր է նրան տեղափոխել տաք միջավայր, տաքացնել, տալ խմելու տաք հեղուկներ, օդի, ծանր դեպքերում տեղափորել գոլ ջրի մեջ 35° - 37° C և աստիճանքար 15-20 րոպեի ընթացքում ջրի ջերմաստիճանը հասցնել 40° C, միաժամանակ մերսելով մարմնը: Ցուցված են գոլ հոգնաները: Հնարավորության դեպքում ներարկել սրտային միջոցները: Գիտակցության կորստի և սրտի գործունեության բացակայության դեպքում կատարվում է արհեստական շնչառություն և սրտի արտաքին մերսում:

Մ.Խ. Աղամյակ, բժշկ. գիտ. թեկն.

ԷԼԵԿՏՐԱՀԱՐՈՒՄ

Էլեկտրահարումը կամ էլեկտրական հոսանքով ախտահարումն առաջանում է օրգանիզմի վրա կայծակի կամ բարձր լարման էլեկտրական հոսանքի ազդեցության հետևանքով: Տարբերում են էլեկտրական հոսանքի ուղղակի ազդեցություն, երբ մարդը միանում է էլեկտրական ցանցին, և անուղղակի՝ կայծակ, ամպրոպի պարագումներ և այլն: Էլեկտրահարման պատճառ են հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, էլեկտրական սարքերի անսարքությունը: Ախտահարման ժամրությունը կախված է հոսանքի հատկանիշներից (փոփոխական է, թե՝ հաստատուն), լարումից, հոսանքի մեծությունից, ներգործության տևողությունից, օրգանիզմի վիճակից, միջավայրի պայմաններից: Առավել վտանգավոր է փոփոխական հոսանքը, վտանգը մեծանում է լարման մեծացմանը գուգահեռ (120 վոլտն արդեն խև վտանգավոր է օրգանիզմի համար): Կարևոր նշանակություն ունի նաև, թե մարմնի որ մասի հետ է տեղի ունեցել հոսանքի շփումը, վերջինս վտանգավոր է հատկապես քունքի, մեջքի, ծոծրակի, սրունքի շրջանում և այլն: Ախտահարմանը նպաստում են մաշկի խոնավությունը, գերզունարտուադրությունը, քաց հագուստն ու կոշիկները, խոնավ թեսողն հատակը, օրգանիզմի հյուծվածությունը, սակավարյունությունը, գերհոգնածությունը և այլն:

Հոսանքի ազդեցությունն օրգանիզմի վրա բերում է մեխանիկական (պատովածքներ, հյուսվածքների շերտավորում), ջերմային (այրվածքներ) վնասվածքների, հյուսվածքների քիմիական փոփոխությունների (հոնացում, էլեկտրոլիզ):

Հոսանքը, անցնելով անորներով ու նյարդերով, ներագդում է բոլոր օրգանների ու հյուսվածքների վրա, բայց առավել մեծ վնասը հասցնում է մուտքից մինչև ելքն ընկած ամենավարձ ճանապարհին: Հոսանքի մուտքից մինչև ելքն ընկած ճանապարհն ընդունված է անվանել «հոսանք օղակ»: Այն լինում է երեք տեսակի. «ստորին օղակ»՝ հոսանքի ճանապարհն անցնում է մի ոտքից դեպի մյուս ոտքը կոնքի միջոցով, այն նկազ վտանգավոր է, «վերին օղակ»՝ ծեռքից ծեռք կրծքավանդակի միջոցով՝ շրջանցելով սիրտը, այն ավելի վտանգավոր ճանապարհ է, և «լրիկ օղակ»՝ վերին ու ստորին վերջույթների և սրտի միջոցով, որն ամենավտանգավոր ճանապարհն է:

Էլեկտրական հոսանքի ներգործությունն առաջացնում է տեղային և ընդհանուր ախտահարումներ, որոնք լինում են թերեկց մինչև ծանր աստիճանը: Տեղային ախտահարումները կարող են արտահայտվել սկսած զգայունականության կորստից և թերև աստիճանի այրվածքներից՝ «հոսանքի նշաններից», որոնք առաջանում են հոսանքի մուտքի և ելքի տեղում գորշադեղնավուն վերքերի տեսքով, ունեն խառնարանանման ծև, կոշտուկանման եզրեր, մինչև III, IV աստիճանի խորը այրվածքներ: Ինչպես նաև կարող են հանդես գալ հյուսվածքների պատովածքների, մկանային զանգվածի լայնածավալ ախտահարումների, վերջույթների հատման, կողերի, զանգի և կոնքի ոսկրուների կոտրվածքների տեսքով: Ընդհանուր ախտանիշներն են՝ վերջույթների, գոտկատեղի, ամբողջ մարմնի այրող, ծակող ցավ, դողերոցք, ջղածգություններ, գլխացավ, գլխապտույտներ, թուլություն, հեղոց, սրտխառնություն, վախի զգացում, հիշողության, լսողության, տեսողության թուլացում (վերջիններս հաճախ զարգանում են ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց), ցավեր սրտի շրջանում, առիթմիա ընդհուած մինչև սրտի կանգ (սինկոպա), շնչառության կանգ ծայնալարերի կծկման պատճառով (գոռալու, օգնության կանչելու անկարողություն), սառը և կպչուն քրտինք, գիտակցության կրորւստ, կլինիկական մահ:

Կայծակն օդում մթնոլորտային էլեկտրական հոսանքի ակնթարթային պարպումն է: Այն շարժվում է կայծակնաբեր ամափից դեպի հողը՝ զարկելով հողի մակերևույթից բարձր գտնվող օբյեկտներին (ծառ, մարդ, հեռախոսային և այլն): Անցնելով մարդու միջով՝ կայծակն առաջացնում է մուտքի և ելքի այրվածքի նշաններ, իսկ մաշկի վրա՝ կարմիր ճուղավոր բժեր: Կայծակը պատճառում է զգա-

Ի վնասները. Վնասում է ներքին օրգանները (հատկապես օդ պարունակողները, որոնցում օդը տաքանում է և դառնում էլեկտրականության վատ հաղորդիչ), մկանները, ուսկրերը, ողնաշարը, երիկամները, թմբկաթաղանքները, առաջացնում շնչառության կանգ: Կայծակահարվածների մեծամասնությունը որոշ ժամանակով կորցնում է գիտակցությունը, գրեթե բոլորի մոտ նկատվում է մթագնացություն, դեպքի հետ կապված հիշողության կորուստ, գիշապատույտներ, կողմնորոշվելու, խոսելու ունակությունների կորուստ, անհանգըստություն, տագնապ, հաճախազարկություն, շնչառության արագացում, ժամանակավոր և մշտական անշարժացում:

Առաջին բուժօգնությունը.

Նախ և առաջ անհրաժեշտ է դադարեցնել հոսանքի ներգործությունը (անջատել ընդհանուր հոսանքը, հանել ապահովիչը), կորել, հեռացնել լարերը տուժածի վրայից չոր փայտի միջոցով կամ հոսանք չհաղորդող այլ առարկաների օգնությամբ, չղիաչել տուժածի մարմնի մերկ մասերին, բռնել նրան միայն հագուստից՝ նախապես հագնելով ռետինե ծեռոցներ կամ փաթթելով ծեռքերը մետաքսյա կամ բրոյա կտորով, կանգնելով մեկուսացնող առարկայի վրա՝ ավտորոդի, չոր տախտակի, ապակու վրա, հագնելով ռետինե կոշիկները: Թերև դեպքերում տուժածին տալ սրտային, ցավագրկող միջոցներ, կյանքի նշանների բացակայության դեպքում անհասաղ անցնել վերակենդանացման միջոցառումների իրականացմանը, իսկ եթե անպրոպը շարունակվում է, տուժածին պետք է տեղափոխել անվտանգ տեղ (գերադասելի է փակ շինություն), պառկեցնել, ոտքերը բարձրացնել 15-30 սմ-ով, ծածկել, այրվածքների տեղերում դնել մանրէազերծ վիրակապ: Զի կարելի թաղել տուժածին, այն անհմաստ է, նույնիսկ Վտանգավոր, քանի որ հետաձգվում է անհապաղ միջոցառումների իրականացումը, որոնցից կախված է նրա կյանքը: Անհրաժեշտ է ինանալ, որ եթե նույնիսկ տուժածի գիտակցությունը տեղն է և նա կարողանում է խոսել, նրա մոտ կարող են լինել ներքին օրգանների ծանր վնասվածքներ: Ավելին, նկատի ունենալով, որ տուժածի ընդհանուր վիճակը կարող է հանկարծակի և կորուկ վատրարանալ վնասվածքը ստանալուց հետո մոտակա ժամերի ընթացքում (սրտի կրկնվող կանգ, սրտամկանի ինֆարկտ, թոքի այտուց, սուր թոքային անբավարարություն, երկրորդային շոկ), այդ հսկ պատճառով անհրաժեշտ է բժշկի անհապաղ օգնությունն ու շարունակական հսկողությունը:

Ելեկտրահարման կանխարգելումն արտահայտվում է անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմամբ էլեկտրական հոսանքի հետ աշխատելիս: Իսկ ինչպես խուսափել կայծակնահա-

բությունից, առավել ևս եթե գտնվում եք բաց տարածությունում: Նախ, եթե ամպրոպը մոտ է, մեծանում է կայծակնահարության հականականությունը: Ուստի անհրաժեշտ է պատսպարզել փակ շինությունում կամ փակ պատուհաններով ավտոմեքենայում: Եթե վերը նշվածները բացակայում են, անհրաժեշտ է թաքնվել ցածր տեղում՝ ծառերից, ցանկապատերից, այլուներից հեռու: Անպրոպի ժամանակ չի կարելի վազել բաց տարածությունով, գտնվել ջրի մեջ: Եթե մազերը ցցվում են, և զգում եք մաշկի ծակծկոց, նշանակում է վտանգը շատ մոտ է: Նման դեպքերում անհրաժեշտ է կուչ գալ, պազել՝ հենվելով միայն ոտքերի մատների վրա, դրանով իսկ փոքրացնելով հողի հետ շփվելու մակերեսը, ծեռքերը դնել ծնկներին և խոնարհել գույխը:

Անպրոպի ժամանակ չի կարելի օգտվել հեռախոսից և էլեկտրական սարքերից, ընդունել լոգանք, ծեղզ տալ մետաղյա առարկամերի: Կայծակնահարումը կանխարգելու նպատակով տների վրա դնել շանթարգելներ:

**Ժ.Ա. Շորանյան,
Ֆ.Մ. Մաղիկյան**

ԶԵՐՄԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԵՎԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Զերմահարությունը պայմանավորված է մարդու օրգանիզմի վրա արտաքին միջավայրի բարձր ջերմաստիճանի երկարատև ազդեցությամբ, որի պատճառով բարձրանում է մարմնի ջերմությունը, և զարգանում են որոշ օրգանների ֆունկցիաների խանգարումներ: Օղի բարձր ջերմաստիճանի և խոնավության պայմաններում, երբ իջնում է ջերմատվությունը, և դժվարանում է քրտնարտադրությունը, մեծանում է ջերմահարության վտանգը: Օրգանիզմի ջերմահարությանը նպաստում են ֆիզիկական ժանրաբեռնվածությունը, խմելու ջրի անբավարար օգտագործումը, շատակերությունը, ալկոհոլի չարաշահումը, ինչպես նաև ջերմափոխանակության խանգարումներ՝ սիրտ-անոթային, վահանաձև գեղձի հիվանդությունների, ճարպակալման, օրգանիզմի ջրագրկման ժամանակ: Զերմահարության հեշտությամբ ենթարկվում են մինչև 1 տարեկան երեխաները՝ ջերմակարգավորման անկատարելիության հետևանքով:

Եղր օղի ջերմաստիճանը բարձրանում է 37°C -ից, խանգարվում է ջերմատվությունը, և զարգանում է մարդու մարմնի գերտաքացում: Այս դեպքում մարմնի ջերմությունը սկզբում դանդաղ է բարձրանում,

իսկ հետո ավելի արագ: Մարդը երկար ժամանակ գերտաքացումը բավարար է տանում՝ զգալով միայն աճող թուլություն, երբեմն՝ գիշապտույտ: Թրտնարտադրության ուժեղացման շնորհիկ օրգանիզմը կորցնում է ջուր և աղեր, պակասում է միզարտադրությունը, խտանում է արյունը, դժվարանում է շնչառությունը, զարգանում է հյուսվածքների թթվածնային քաղ, որի պատճառով էլ առաջանում է կյանքին վտանգ սպառնացող վիճակ:

Տարբերում են ջերմահարության թերեւ, միջին և ծանր ձևեր:

Թերև ջերմահարման դեպքում տուժածի վիճակը բավարար է, մարմնի ջերմությունը չի բարձրանում, նկատվում է թուլություն, գիշացավ, սրտխառնոց, անոթազարկի հաճախացում, մաշկը խոնավ և կարմրած: Միջին ձևի դեպքում վերը նշված ախտանիշները ավելի արտահայտված են, հնարավոր է գիտակցության կարձատն կորուստ, փսխումներ, մարմնի ջերմության բարձրացում ($39\text{--}40^{\circ}\text{C}$), արյան ճնշման բարձրացում: Ծանր ջերմահարումից առաջանում են ջղաձգություններ, շնչառությունը դաշնում է մակերեսային և հաճախակի, մարմնի ջերմաստիճանը բարձրանում է մինչև $40\text{--}42^{\circ}\text{C}$, բբերը լայնացած են, լուսային ռեակցիան թույլ է կան բացակայում է, մաշկը չոր է, արյան ճնշումն ընկած:

Արևահարություն. առաջանում է, երբ անհատը ենթարկվում է արկի ճառագայթների ուղղակի ազդեցությանը: Տուժածը զանգատվում է ընդհանուր թուլությունից, մարմնի ջարդվածությունից, սրտխառնոցից, գիշացավից, գիշապտույտից: Արկի ճառագայթների երկարատև ազդեցությունից մարմնի ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 40°C , կարող են նկատվել ցնցումներ, գիտակցության կորուստ:

Առաջին օգնություն. ջերմահարության և արևահարության դեպքում տուժածին պետք է տեղափոխել զով տեղ, ազատել նեղ հագուստից, մարմինը թրջել ջրով, գլխին և խոշոր անոթների շրջանում (պարանոց, թևատակեր, աճուկային ծալքեր) դնել սառը թրջոց կամ սառցեպարկ, կարելի է մարմինը փաթաթել սառը ջրով թրջած սավանով: Հարկավոր է ապահովել օրի շարժ, խմեցնել սառը հեղուկներ (գիտակցության պահպանման պայմաններում): Անհրաժեշտության դեպքում կատարել սրտի արտաքին մերսում և արիթստական շնչառություն, ապահովել հանգիստ և դիմել բժշկի:

Կանխարգելում. ջերմահարումից և արևահարումից խուսափելու համար, հարկավոր է ճիշտ կազմակերպել աշխատավայրի ջերմային ռեժիմը, կարևոր է նաև խմելու ջրի ապահովումը: Թույլ թեյը պահպանում է ջրա-աղային հավասարակշռությունը:

Օղի բարձր ջերմաստիճանի դեպքում պետք է արգելել ալկոհոլի օգտագործումը, երկարատև արշավների ժամանակ հանգիստը կազմակերպել գով տեղերում: Հազուստը պետք է լինի թերև, որը անցկանող, զլուխը պետք է պաշտպանել արկից: “Պետք է զգուշանալ նաև ծովակին՝ օրվա շոգ ժամին օդային կամ արևի վաննաներ ընդունելիս:

ՁՐԱՀԵՇՈՒԹՅՈՒՆ

Զրահեղծություն առաջանում է, եթե մարդը սուզվում է ջրի (այլ հեղուկների) մեջ, որի պատճառով շնչուղիները լցվում են ջրով (հեղուկով), և առաջանում են կենսական կարևոր համակարգերի գործունեության սուր խանգարումներ (ԿՆՀ-ի, շնչառության, արյան շրջանառության): Զրահեղծության առաջացման պատճառների մեջ ամենակարևոր տեղում է հոգեբանական գործոնը՝ Վախը, որը, հաճախ, առաջանում է ոչ թե իրական, այլ թվայալ վտանգից և անհատի անվտահության հետևանքով: Էական նշանակություն ունի նաև ջրի ջերմաստիճանը. $18\text{--}16^{\circ}\text{C}$ և ավելի ցածր ջերմաստիճանը առաջացնում է մաշկի և թոքերի անոթների սպազմ, շնչական մկանների երկարատև կծկում, ինչը բերում է շնչառության և սիրտ-անոթային գործունեության անկման (արյան ճնշման անկում, սակավագարկություն), ուղեղի արյան մատակարարման խանգարման (իշեմիա), որից առաջանում է գիտակցության մթագնում և կորուստ: Առողջ մարդու մոտ, սազ ջրի մեջ արագորեն մտնելու պատճառով, կարող է առաջանալ շոկի պատկեր, որի հետևանքով նրա մարմինը արագ սուզվում է ջրի տակ, և վրա է հասնում մահը: Նմանատիպ վիճակ է նկատվում, եթե մարդը արևային երկարատև լոգանքից հետո մտնում է նույնիսկ գոյ ջրի մեջ՝ $22\text{--}26^{\circ}\text{C}$:

Զրահեղծությանը նպաստում են նաև լողալ չիմանալը, ֆիզիկական գերիզնածությունը, հարբած վիճակը, ջրացատկի պահին առաջացող վնասվածքները, ինչպես նաև ստորջրյա ($1.5\text{--}2$ մետր խորություն) լողով գրաղվողների մոտ առաջացող սիրտ-անոթային համակարգի խանգարումները, կապված հիդրոստատիկ ճնշման պատճառով որովայնի օրգանների տեղաշարժի հետ:

Զրահեղծությունը կարող է առաջանալ ինչպես քաղցրահամ, այնպես էլ աղի (ծովի) ջրում: Քաղցրահամ ջրում ջրահեղծության դեպքում ջուրը արագ թռաբշտերից ներծծվում է արյան մեջ, առաջանելով երիթրոցիտների հեմոլիզ, հաճախ, եթե տուժածին դուրս են բերում ջրից, կարող է արագ զարգանալ թռերի այտուց և տուժածի թրանից հոսում է արյունախառը փրփուր:

Այդ ջրում ջրահեղծության դեպքում, քանի որ այդ ջուրը արյան պլազմայի համեմատ հիպերտոնիկ է, ապա այն չի ներծծվում թոքերից արյուն, տեղի է ունենում արյան թանձրացում, արագ կարող է զարգանալ թոքերի այտուց, սակայն շնչառական ուղիներից արտադրվում է սախտակ, կայուն փրփուր: Զրի քանակի մահացու (ասպիրացիոն) դոզա է 1-2լ (20 մլ/կգ), սակայն հնարավոր է մահ 0.5լ (10 մլ/կգ) դրից:

Ջրահեղծության ժամանակ մահվան պատճառ կարող է լինել թոքերում գազափոխանակության դադարը, սրտի աշխատանքի ռեֆլեկտոր կանգը, ինչպես նաև հոգեկան գործոնը (վախ և հուսահատության զգացում), քիմիական ախտոտված և սառը ջուրը և այլն:

Տարբերում են ջրահեղծության 3 տեսակ.

1. Ինկական կամ թաց ջրահեղծություն (կապույտ ասֆիքսիա): Սա հանդիպում է 75-95% դեպքերում, երբ ջուրը լցվում է շնչուղիներ և թոքաբշտերից ջրի մի մասն անցնում է արյան մեջ, առաջացնելով էրիթրոցիտների քայլայում, խանգարվում է գազափոխանակությունը, որից դադարում է շնչառությունը: Տուժածը կապտած է, դեմքը այտուցված, պարանոցի երակները լայնացած:
2. Կեղծ կամ չոր ջրահեղծություն (սախտակ ասֆիքսիա): Հանդիպում է 10-15%-ի դեպքերում: Առաջանում է ռեֆլեկտոր ձևով՝ կոկորդի սպազմի հետևանքով: Այս տեսակը հանդիպում է հատկապես քորացված կամ քիմիական նյութերով աղտոտված ջրերում:
3. Միմկոպիկ ջրահեղծություն (5-10%-ի դեպքերում): Հանդիպում է հաճախ կանանց և երեխաների մոտ, հոգեկան գերլարվածության, սրբեսների դեպքում, ինչպես նաև երբ նարոդ մեծ բարձրությունից ընկնում է շատ սառը ջրի մեջ: Տեղի է ունենում սրտի ու շնչառության ռեֆլեկտոր կանգ (սախտակ ասֆիքսիա): Տուժածը շատ գունատ է:

Առաջին բուժօգնությունը. ջրահեղծվածին ցուցաբերվող օգնության բնույթը կախված է նրա վիճակի ծանրությունից. Եթե պահպանված է գիտակցությունը, հարկավոր է հանգստացնել, հանել թաց հագուստը, հազնել չոր հագուստ և տաքացնել: Եթե տուժածի գիտակցությունը բացակայում է, բայց պահպանված են անորագարկն ու շնչառությունը, հարկավոր է քթին մուտեցնել անուշաղրի սախտոտվ թրջած բամբակ, ազատել սեղմող հագուստից: Իսկ եթե բացակայում են սրտի գործունեությունն ու շնչառությունը, հարկավոր է իրականացնել վերակենդանացման միջոցառումներ: Տուժածին պառկեցնելով մեջքի վրա բերանի խոռոչը մաքրում են թանգի-

ֆով կամ թաշկինակով փաթարված մատով: Այնուհետև անցնում են արհեստական շնչառության միջոցառումներին: Իսկ եթե ջրահեղծությունը տեղի է ունեցել քաղցրահամ ջրում, ապա բերանը, քիչը և կոկորդը մաքրելուց հետո, անհրաժեշտության դեպքում կատարում են վերակենդանացում, համոզված լինելով, որ թօքաբշտերից ջուրը արդեն ներթափանցել է արյան մեջ: Իսկ եթե ջրահեղծությունը տեղի է ունեցել արյի ջրում, ապա արագործն շնչուիդները ազատում են հեղուկից՝ տուժածին երեսնիկար պառկեցնելով օգնողի ծալված ծնկան վրա, գլուխը ցած դիրքով, և ծերոցվ համաշակի սեղմելով մեջքին, հետո միայն կատարում վերակենդանացման միջոցառումներ:

Որքան ջրի ջերմաստիճանը ցածը է, այնքան ջրահեղձվածին վերակենդանացնելու և փրկելու հավանականությունը մեծ է, քանի որ ցածը ջերմաստիճանում նյութազագափոխանակության պրոցեսները դանդաղում են, և հյուսվածքներն ու բջիջները ավելի երկար են դիմանում թթվածնային քաղցին:

Կանխարգելումը. Ջրահեղծության կանխարգելման համար հարկավոր է երեխաներին անուշադրության շնաւանձը գետի կամ ծովի ափին, չողանալ անթույլաւորելի վայրերում, հատկապես հարբած վիճակում, ինչպես նաև ճաշելուց հետո 1-2 ժամվա ընթացքում: Խուսափել գերհոգնած և նյարդային գերլարված վիճակում ջրում լողանալուց: Խիստ վտանգավոր է լողալ անծանոթ վայրերի ջրերում, հատկապես գլխիկայր ցատկելով (ողնաշարի վնասվածքի դեպքում անշարժացումը կատարել ջրի մեջ մինչև դուրս բերելը): Խուսափել սառ ջուրը մտնելուց տաք արևային լոգանքներից անմիջապես հետո (հատկապես մեծահասակներն ու սիրտ-անոթային անբավարարություն ունեցողները):

Մ.Խ. Աղամյան, բժշկ. գիտ. թեկն.

ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԾՍՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Եղբեմն անհրաժետ է օգնություն ցուցաբերել ծննդաբերող կնոքը տանը, ճանապարհին, զնացքում և այլն: Եթե կծկումները 2-3 րոպեում մեկ անգամից հաճախակի են, կա աղիքները դատարկվելու ցանկություն, երևում է երեխայի գլուխը, ապա անհրաժեշտ է անհապաղ նախապատրաստվել հրատապ ծննդաբերությանը: Անհրաժեշտ է պատրաստել մաքրու սավաններ կամ մաքրու թերթեր անկողինը կամ գետինը ծածկելու համար, ծածկոցներ երեխայի և մոր հա-

մար, մաքուր ժապավեններ, վիրակապեր պորտալարը կապելու համար, մաքուր անձեռոցիկներ, թաշկինակներ, միջադիրներ մոր համար: Կնոջը անհրաժեշտ է պարկեցնել մաքուր սավաններով ծածկված անկողնու վրա կամ գետնին, կինը կարող է ընդունել նաև կիսապառկած դիրք, ինչպես նաև նստել աթորի ծայրին կամ պազել (Վերջինի դեպքում պետք է պատրաստ լինել պտուղը շուտ ընդունելուն): Նախապես պետք է ծեռքերն օճառով լվանալ հոսող ջրի տակ, վարակագրել մկրատը, դանակը՝ տեղադրելով այն եռացող ջրի մեջ 5 րոպե և ավել կամ 30 վայրկան պահել կրակի վրա:

Ծննդաբերության ժամանակ կնոջը չտեղաշարժել և չմտցնել ծեռքերը կամ այլ առարկանները հեշտոցի մեջ: Եթե պտողի գլուխը դուրս է գալիս, անհրաժեշտ է ստուգել պտղապարկի ամբողջականությունը: Վերջինիս ամբողջականության դեպքում պատռել այն կամ ծակել եղունգով, որպեսզի պտուղը չխեղովի:

Պտողի ծնվելուց հետո պահել այն երկու ծեռքերով և առաջարկել կնոջը մի քանի անգամ արագ և խորը ներշնչել և արտաշնչել լկարժես թե մոմ է հանգընում/ և ճիզ գործադրել: Պտուղը ընդունել՝ մի ծեռքը պահելով գլխի տակ, իսկ մյուս ծեռքով բռնել հետույքը կամ ոտքերը նկատի ունենալով որ պտուղը լարծուն է: Այս շրջել գլխիվայր, որպեսզի լորձը դուրս հոսի երեխայի քթից և բերանից: Հետո շփել երեխայի մեջքը կամ կրունկները. երեխայի ճիշը ցույց կտա, որ նա շնչում է: Իսկ եթե չի շնչում, զգուշորեն, բայց ուժեղ հարվածել ներբաններին, շփել մեջքը. Կուրոքը: Եթե այդ էլ չի օգնում, անհրաժեշտ է անցնել վերակենդանացման միջոցառումներին: Եթե պորտալարը փաթաթված է երեխայի զգին ազատ, զգուշորեն հանել այն գլխի վրայով, իսկ եթե պորտալարը ամուր սեղմում է երեխայի պարանոցը, ապա 2 տեղում պորտալարը կապել և կտրել, դրանց արանքում ազատելով երեխայի պարանոցը պորտալարից:

Երեխային ծածկել և գլխիվայր դնել մոր փորին: Պորտալարը կտրել վերջինիս անորազարկը դադարելուց 2-3 րոպե հետո: Դրա համար պորտից 10սմ և այդ կետից 5սմ հեռավորության վրա կապել, կապերի միջև եղած մասը մշակել յոդի թուրմով և վարակագրեծված մկրատով կտրել:

Երեխան ծնվելուց 5-20 րոպե հետո ծնվում է ընկերքը. հեշտոցից դուրս է հոսում ալ կարմիր արյուն, և կինը զգում է կծկումներ, ճիզ գործադրելուց հետո ծնվում է նաև ընկերքը: Այս կինը դնում է միջադիր, որից հետո նրան կարելի է տալ թեյ, սուրճ, արգանակ: Նախընտրելի է երեխան ծնվելուց անմիջապես հետո նրան տալ կուրօք:

ՎԵՐԱԿԵՆԱԿԱՍԹՄԱՆ ՀԻՄՈՒԹԵՐԸ

Վերակենականացումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված օրգանիզմի կենսական կարևոր օրգանների ֆունկցիաների պահպանանը և վերականգնանը, և իրականացվում է սահմանային վիճակներում: Սահմանային վիճակների զարգացման պատճառները տարբեր են՝ արյան կորուստ, շնչուղիների խցանում, կենսական կարևոր օրգանների մեխանիկական վնասվածքներ և այլն:

Սահմանային վիճակներն ընդգրկում են 3 շրջան.

- նախահոգեվարքային շրջան, երբ գիտակցությունը խանգարված է, զարկերակային ճնշումը չի որոշվում, անորագարկը թույլ է (շոշափվում է միայն խոշոր անորների վրա), մաշկը գունատ է կամ կապտած, բբերը լայնացած են, լուսային ռեակցիան բացակայում է,
- հոգեվարքի /ագոնիայի/ շրջան՝ բնորոշվում է կենսական ցուցանիշների կարծատև փայլատակումով, որը շուտով մարում է վերջին ներշնչումով և սրտի վերջին կծկումով, այնուհետև վրա է հասնում կլինիկական մահը,
- կլինիկական մահվան շրջան՝ բնորոշվում է սրտի աշխատանքի և շնչառության դադարով, գիտակցության բացակայությամբ, աչքի բբերի լայնացմամբ և լուսի նկատմամբ ռեակցիայի բացակայությամբ: Այս շրջանը դարձելի է, եթե առաջին 3-5 րոպեի ընթացքում իրականացվի վերակենդանացումը, քանի որ թթվածնային քաղցի նկատմամբ ամենից զգայունը գիտութեղի քիչներն են, որոնք ենթարկվում են անդարձելի փոփոխությունների 5-7 րոպեի ընթացքում /այս ժամանակը հասնում է մինչև մեկ ժամի և ավելի, եթե մարմինը գտնվում է ցածր ջերմաստիճանի պայմաններում:/

Կենսաբանական մահը օրգանիզմի բոլոր հյուսվածքների մահն է հետևած հերթականությամբ՝ սկզբում գլխուղեղի, հետո սրտի, թոքերի, յարդի, երիկամների, ամենավերջում՝ մաշկի:

Կենսաբանական մահվան նշաններն են՝ մաշկի սարնությունը, գունատությունը, կատվի աչքի նշանը (երբ ակնագունդը սեղնում ենք աչքի անկուններից, ապա բիբը ծնափոխվում է, դառնում իլիկաննան մեղք), աչքի եղջրաթաղանթի պղտորումն ու չորացումը, դիակային բժերը, և այնուհետև դիակային փայտացումը (2-4 ժամ հետո):

**ՎԵՐԱԿԵՆՈՂԱՆԱԳՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԵԾԱԿԱՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ**

Վերակենողանացման համար ամենաարդյունավետ և կիրառելի միջոցը թոքերի արհեստական օդափոխությունն է և սրտի արտադին մերսումը:

Որպեսզի արագորեն անցնենք սիրտ-թոքային վերակենողանացմանը բավական է՝

1. աչքով համոզվել, որ շնչառությունը բացակայում է (պետք չէ ժամանակ կորցնել քիչ կամ բերանի դիմաց հայելի դնելով կամ թել պահելով),
2. ստուգել գիտակցության բացակայությունը (ծայն տակ տուժածին, ուսը հրել կամ ականջի բլթակը սեղմել),
3. մի ծեռցով շոշափել անոթազարկը քնային զարկերակի վրա, իսկ մյուս ծեռցով բարձրացնել աչքի վերին կոպը բիբը ստուգելու համար:

Նախօրոք ստուգում ենք շնչուղիների անցանելիությունը՝ հնարավոր է լինի լեզվի ետանկում, բերանի խոռոչում արյան, լորձի կամ փսխման զանգվածների կուտակում, վերին շնչուղիների սպազմ կամ այտուց:

Կիրակական մահվան մեջ գտնվող տուժածների նկատմամբ կիրառվում են հետևյալ մեթոդները, որոնց միջոցով կանխվում է վերին շնչուղիների փակումը լեզվարմատով, և ապահովվում է ազատ շնչառությունը.

1. գլուխը թեքում ենք դեպի ետ,
2. ստորին ծնոտը տեղաշարժում ենք առաջ և վեր,
3. բերանը բացում ենք:

Եթե ենթադրվում է, որ վնասված է տուժածի ողնաշարի պարանոցային հատվածը, ապա շնչուղիների բացումը կատարվում է առանց տուժածի գլուխը ետ տանելու, բարձրացնում ենք նրա կզակը, ինչը լիովին բավարար է օդի՝ թոքերը անցնելու համար։ Եթե ներփչում կատարելիս, այնուամենայնիվ, օդը թոքերը չի անցնում, գլուխը զգուշորեն մի փոքր հետ ենք տանում։

Բերանի խոռոչը մաքրելու համար տուժածի գլուխը թեքում ենք մի կողմի վրա և թանգիֆով կամ թաշկինակով փաթաթված մատով մաքրում ենք բերանի խոռոչը։

Արհեստական օդափոխության իրականացման համար տուժածին պարկեցնում ենք կոշտ մակերեսի վրա կամ գետնին, գլուխը թեքում հետ, բացում ենք բերանը և «բերանից-բերան» (փակում ենք թիթը) կամ «բերանից-թիթ» (փակելով բերանը) մեթոդներով կատա-

րում ենք օդի արտաշնչում տուժածի շնչուղիների մեջ հետևելով կրծքավանդակին, եթե կրծքավանդակը չի բարձրանում, ապա նշանակում է շնչուղիներում կա օտար մարմին, որն անհրաժեշտ է հեռացնել: 1 րոպեում կատարում ենք 12 շնչական ակտ (5 կայրկանական 1 անգամ): Եթե նկատվում է ստամքոսի շրջանի արտափրում, դա նշանակում է, որ օդը լցվել է ստամքոս, այլ ոչ թե թռերը: Հարկավոր է ծեռքի ափով զգուշորեն սեղմել այդ շրջանը: Եթե ծեռքի տակ ունենք խողովակ (T-ածն կամ S-ածն), ապա այն դուռը ենք բերանի մեջ (ծայրը հասցնելով մինչև կոկորդի մուտքը) և օդը փչում նրա մեջ: Գիտակցությունը կորցրած տուժածների մոտ լեզվի ետամկումը կանխելու համար կիրառվում է S-ածն օդամուղ խողովակը: Շնչուղիների օդափոխությունը ապահովելուց հետո օդամուղ խողովակը բերանի մեջ են մտցնում այնպես, որ ծայրը ուղղված լինի քինքին, իսկ կորությունը՝ լեզվին: Օդամուղ խողովակի կեսը բերանի մեջ մտցնելուց հետո 180°-ով շրջում ենք ցած և առաջ տանելով շրջանաձև թիթեղը սեղմում ենք շրթունքներին: Նորածինների արհեստական շնչառության համար մեր բերանի մեջ ենք վերցնում միաժամանակ նրանց քիքն ու շրթունքները, և օդը մղում մեկ րոպեում 20 անգամ զգուշորեն, որ չափանան նրանց նուրբ թռարշտերի պատրումներ:

Սրտի կանգի մասին գիշավոր ահազանգը անորազարկի բացակայությունն է քնային և ազդրային զարկերակների վրա:

Սրտի արտաքին մերսման նպատակով օգնողը ծնկում է տուժածի կողքին, արմնկային հողերը չծալված վիճակում և ծեռքերի ափերը իրար ուղղահայաց դնում է կրծոսկրի ստորին 1/3 մասի վրա թրածն ելուստից 2 մատ վեր և այնպես է հրում, որ կրծոսկրը ներիրվի 4-5-ամ խորությամբ (սիրտը սեղմվում է կրծոսկրի և ողնաշարի կրծքային ողերի միջև): Հրումները կատարվում են 1 րոպեում 60-80 անգամ չափահաս մարդու մոտ, 1 րոպեում 100-120 անգամ մինչև 8 տառեկանների մոտ (մի ծեռքի ափով), 1 րոպեում 120-150 անգամ նորածինների ու կրծքահասակ երեխաների մոտ (մեկ կամ երկու մատով):

Երբ սրտի մերսումը պետք է գուգակցել արհեստական շնչառության հետ, լավ է վերակենդանացումը կատարել 2 հոգով, այնպես, որ 1 շնչառությանը հաջորդի սրտի 5.արտաքին մերսում (1:5): Իսկ եթե օգնողը մեկն է, պետք է կատարի 2 շնչառություն և սրտի 15 արտաքին մերսում (2:15):

Վերակենդանացման հաջողության մասին դատում ենք բբերի նեղացումով և լուսային ռեակցիայի վերականգնումով, անորազարկի հայտնվելով քնային կամ ազդրային զարկերակների վրա: Մաշկի գույնը սկսում է վերականգնվել:

Երբեմն սրտի կծկումների վերականգնումից հետո դեռևս կարիք է լինում շարունակել արհեստական շնչառությունը, մինչև չափ-

ջանա կայուն ինքնուրույն շնչառություն կամ վրա հասնի մի այլ օգնություն: Եթե տուժածի մոտ նկատվում են կրծքավանդակի ինքնուրույն շարժումներ, աստիճանաբար սկսում է վերանալ մաշկի կապտությունը, լուսաց բբերը նեղանում են, անոթազարկը հայտնվում է, շնչառությունը դառնում է ինքնուրույն, ուրեմն արիեստական օդափոխությունը հաջողվել է:

Վերակենդանացումը դադարեցնում ենք, եթե բոլոր հնարավոր մեթոդները կիրառելիս արդյունք չի երևում 30-40 րոպեների ընթացքում (բբերը մնում են լայնացած, սրտի աշխատանքը և շնչառությունը չի վերականգնվում):

ՎԻՐԱԿԱՊՈՒԹՅՈՒՆ (ՂԵՍՄՈՒՐԳԻԱ)

Վիրակապարանությունը համարվում է վիրաբուժության գլխավոր բաժիններից մեկը, որն ունի գործնական մեծ նշանակություն: Վիրակապը կազմված է երկու մասից՝ չոր կամ դեղերով օծված վիրակապանյութից, որը դրվում է անմիջապես վերքի վրա, և կապից՝ վիրակապի արտաքին թաղանթից, որի միջոցով վիրակապը պահպում է վնասված մասի վրա: Ըստ գործածնան նպատակի վիրակապերը լինում են՝ սովորական, ամրացնող, ճնշող, ծգող և անշարժացնող:

Կախված գործածվող նյութից տարրերում ենք.

1. Փափուկ վիրակապեր՝ բինտային, գլխաշղորային, սոսնձային (կենոլային, կազուն սպեհանու) և այլն:
2. Կոշտ կապեր՝ փոխադրական շինաներ և գիպսային կապեր: Վիրակապության ընդհանուր կանոնները:
 1. Վիրակապը դրվում է արագ, տեխնիկապես գրագետ, հիվանդի համար՝ հարմար:
 2. Դրված վիրակապը պետք է լինի ամուր, բայց ոչ սեղմող և լիովին համապատասխանի իր նպատակին:
 3. Վիրակապող մարմնամասը, հատկապես վերջույթները, պետք է գտնվեն ֆիզիոլոգիական դիրքում:

Մեծ վիրառություն ունեն բինտակապերը, որոնք ոչ միայն վերըերը պաշտպանում են շրջապատից հիվանդածին միկրոբների թափանցելուց, այլև ունենալով բարձր հիդրոսկոպիկ (հեղուկ կլանող) հատկություն, նպաստում են վերքից թարախի արտահոսմանը:

ԹԵԿԱԿԱՆԵՐ ՂՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Վնասված վերջույթների (մարմնամասերի) անշարժացումը համարվում է հակաշղուկային միջոցառումներից մեկը: Այդ նպատակով օգտագործվում են տիպային բեկակալներ (Ղիտերիխսի և Կրամերի) և ձեռքի տակ եղած հարմար միջոցներ (տախտակներ):

Որպեսզի անշարժացումը ճիշտ կատարվի, պետք է ղեկավարվել հետևյալ կանոններով.

1. Վերջույթն անշարժացնել երկու հարևան հոդերում, իսկ բազկի և ազդրի կոտրվածքի դեպքում՝ երեք հոդերում, մեկը հոդը կոտրվածքից վերև, երկուսը՝ ցած:
2. Նախօրոք բեկակայի սուր ծայրերը բամբակի, բինտի օգնությամբ հարթեցվում են, ծևավորում այն՝ տալով վերջույթի համապատասխան ծեզ:
3. Բաց կոտրվածքների ժամանակ, կոտրված ոսկորների ծայրերը ուղղել չեն թույլատրվում:
4. Ստորին վերջույթի անշարժացման համար հիմնականում օգտագործվում է Դիտերիխսի բեկակալը, Վերին վերջույթի համար՝ Կրամերի:
5. Վերջույթը անշարժացվում է իր նորմալ ֆիզիոլոգիական դիրքում, այսինքն՝ ոտքը ուղղված, սրունք-թաթային հոլուս ծալված, իսկ ծեռքը՝ արմնկային հոլուս ծալված վիճակում:
6. Բեկակալն ամրացնելու համար, բինտային կապը դրվում է հավասարաշափ ճնշումով, առանց խորհութորությունների, որպեսզի չխանգարվի վերջույթի արյան շրջանառությունը:

I. Ներսիսյան

ՎԻՐԱԿԱՊԵՐ*

N1. «Կապագիխարկ» կամ «քասական»

Կտրել 1մ երկարությամբ բինտի կտոր և կախել գլխի վրայով՝ ականջներից առաջ: Գլխի վրա դնելով առաջին պնդողակը և հանելով կախանին հազցնում եք նրան մեկ կողմից, ապա նյուև կողմից, և այսպես պտտելով վարաթում ամբողջ գլուխը: Վերջում 1մ բինտի ծայրերը ամրացնում եք կզակի տակ:

N2. Վիրակապ մեկ աչքի վրա

Ազ աչքը կապելիս բինտը վարաթել աջից ծախ, ծախ աչքը՝ ձախից ազ (այս դեպքում բինտի գլխիկը բռնելի ծախ ծեղողվ): Օրինակ՝ ազ աչքը կապելիս գլխի շուրջը տալ պնդողակ, անցնել ծոծրակի հետևով, բարձրանալ ազ ականջի տակով, ապա փակել ազ աչքը. այս ծեզով 3-4 անգամ վարաթելուց հետո բինտը ամրացնել գլխի վրա:

N3. Ականջի կապ «նեապոլիտանական» գլխարկ

Ճակատի մակարդակին գլխի շուրջը դնել 1-2 պնդողակ, ապա աստիճանաբար իջեցնել և ծածկել ականջը, որի վրա նախօրոք դրված է վիրակապանյութը (վիաստորեն այսպիսով ֆիքսում ենք այն):

* Վիրակապերի նկարները տե՛ս այս բաժնի վերջում, էջ 218:

N4.5. Պարսստիկածն կապ

Դնում ենք քրի և ստորին ծնուտի վրա: Բինտից կտրում ենք մի կտոր՝ 60-70սմ երկարությամբ, որի երկու ծայրերը մկրատով երկատում ենք, մեջտեղում թողնելով 10-12սմ, որը ծալում ենք և մեջը դնում բամբակ:

N4. Քրի վիրակապման ժամանակ բինտի վերին քուղերը կապում ենք վզին, ստորինը՝ ծոծրակին:

N5. Ստորին ծնուտի վիրակապման ժամանակ բինտի ստորին քուղերը տանում ենք ականջների առջևով և կապում գագաթին, վերինը՝ անցկացնում ծոծրակով (ականջի տակով) և ապա կապում ձակատի վրա:

N6. Գլխի թաճն կամ կամ ծոծրակի խաչածն կապ

1-2 պտույտով գլխի վրա դնել պնդողակ, հետո ծախ ականջի հետևով իջնել ծոծրակի վրա, վիզը շրջանցել առջևից և ապա բարձրանալ աջ ականջի հետևով, և 3-4 անգամ փաթաթելուց հետո գլխի վրա ամրացնել պնդողակ տալուց հետո:

N7. Վիրակապ ուսային հողի վրա կամ հասկածն կապ

1-2 անգամ բինտը փաթաթել բազկի շուրջը՝ միջին մասում, ապա մեջքի հետևով անցկացնել հակառակ կողմի անութափու և կրծքավանդակի ու բազկի առաջնային մասով նորից անցկացնել բազկի շուրջը, և այսպես 6-8 անգամ փաթաթելուց հետո բինտի ծայրը ամրացնել կրծքավանդակի վրա:

N 8. Պարուրածն կապ նախաբազկի և սրունքի վրա

Բինտը բօնել աջ ծեռքով և նախաբազկի ստորին 1/3-ի վրա անել 1-2 շրջանածն կապ, ապա 3,4,5,6,7-րդ կապերն անել նախաբազկի վրա պարուրածն՝ մինչև արմնկային հողը, ընդ որում յուրաքանչյուր անգամ տալ բինտի ետշրջում՝ այն լավ ֆիքսելու համար:

N 9. Վիրակապ «Ճեռնոց»

Բինտի առաջին, երկրորդ պտույտը տալ նախաբազկի ստորին 1/3-րդ մասի վրա, ապա ծեռքի թիկնային մասով հասնել վիրավոր մատի ծայրը, որտեղից և սկսել մատի պարուրածն փաթաթումը: Ֆիքսելու համար նորից ծեռքի թիկնային մասով վերադառնում եք նախաբազկի ստորին 1/3-րդ մասը:

Այսպես փաթաթում – վիրակապում եք բոլոր 4 մատները: Միայն բուր մատը կապում եք երկու պտույտով՝ առաջին պտույտը մատի ծայրին, իսկ երկրորդը՝ մատի հիմքին:

N10. Արմնկային հողի (կրիայի) վիրակապ

Արմնկային հողը ֆիքսում եք ուղիղ անկյան տակ (նորմալ ֆիգուրափական դիրքում): Հակամետ վիրակապումը սկսում եք արմունկի վրա՝ 2 շրջանաձև պնդողակ դրւելով, որից հետո հետագա կապերը հերթականությամբ դնում եք նախորդից վեր և վար: Բինտի գալարները խաչաձևում եք արմնկային փոսի առջևում, վերջում բինտը հանգուցում նախարազկի վրա: Համամետ վիրակապումը սկսում եք նախարազկի վերին 1/3-ից 2 շրջանաձև կապով, հետո վեր ու վար տանելով աստիճանաբար ծածկում եք արմնկային հողը:

N11. «Թաթման» վիրակապ

1-2 շրջանաձև կապ դնել նախարազկի ստորին 1/3-ի շրջանում, հետո անցնել մատների վրա թիկունքով, ապա ափային մասով, նորից վերադառնալ թիկնային մասը, և այն ամրացնել պարուրաձև կապով՝ (սկսած մատների ծայրից) բոլոր մատները միասին, վերջում բութ մատը վիրակապել առանձին: Ամենավերջում անցնել նախարազկի ստորին 1/3 և ֆիքսել:

N12. Պարուրաձև կապ կրծքավանդակի վրա


Լայն բինտից կտրել մի կտոր – 1մ երկարությամբ և զցել ձախ ուսով: Ապա վարից վեր կրծքի վանդակի վրա դնել պարուրաձև վիրակապ մինչև անուրափոսերը և վերջում ուսով զցած փոկի ծայրերն աջ ուսի հետևում իրար կապել:

N13. 8-աձև կամ կրիայաձև վիրակապ ծնկային հողի վրա

Շունկը կիսածալված վիճակում կամ բինտի 1-2-րդ պտույտը շրջանաձև դնել ծնկոսկրի վրայով, ապա մյուս պտույտներն անել ցածր և բարձր, հատվելով ծնկափոսում, վերջում ֆիքսել ազդրի ստորին 1/3-ի վրա:

N14. Խաչաձև կապ կրծքավանդակի վրա

Կրծքավանդակի ստորին 1/3-ի մակարդակի վրա տալ 2-3 պնդողակ, ապա աջից բինտը անցկացնել ձախ ուսի վրայով, նորից կրծքավանդակի վրա տալ պնդողակ և ապա ձախից բարձրանալ աջ ուսի վրայով խաչաձևով առջևից ու հետևից, և այսպես ամեն անգամ փաթաթել այնպես, որ խաչվածքը բարձրանա վեր և ծածկի կրծոսկրը և միջթիակային տարածությունը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բաղդայան Ա.Գ.**, Ներքին հիվանդություններ, Եր., «Լուս» հրատ., 1988թ.:
- Բաղդայան Գ.Հ.**, Ներքին հիվանդություններ, Եր., «Լուս» հրատ., 1988թ.:
- Մամիկոնյան Ռ.Ս.**, Ներքին հիվանդություններ, Եր., «Լուս» հրատ., 1987թ.:
- Մանասյան Կ.Ա.**, Բուժութեալկավորումը արտակարգ իրավիճակներում // Հայկական բանակ, 2007, № 1:
- Ծուշանյան Լ.Կ.**, Սրտի իշեմիկ հիվանդություններ, Եր., «Լուս» հրատ., 1988թ.:
- Սուտամբոցյան Ռ.Պ.**, Ներքին հիվանդություններ, Եր., «Լուս» հրատ., 1988թ.:
- Տառապինով Վ.Գ.**, «Ուսումնական ծերոնարկ բուժքույրերի համար», Ա.Գ.Սաֆոնովի խմբագրությամբ, «Լուս» հրատ., Երևան, 1983 թ.:
- Այլամազյան Է.Կ.** «Акушерство», «Специальная литература», Санкт-Петербург, 1998 г.
- Анатомический атлас человеческого тела**, под редакцией **Клиши Ф., Сентаготаи Я.**, «Медицина», Будапешт, 1965 г.
- Большой толковый медицинский словарь**, OXFORD, Веге-Арт, Москва, 1998 г.
- Булагай П.И.**, «Первая помощь при травмах, несчастных случаях и некоторых заболеваниях», «Беларусь», Минск, 1989 г.
- Военно-медицинская подготовка / Под ред. Ф.И. Комарова.-М.: Медицина, 1984.**
- Гаевский М.Д.** «Фармакология», «Медицина», Москва, 1983 г.
- Гапанович И.Я., Поминов А.М.** «Хирургия», «Высшая школа», Минск ,1987 г.
- Гостищев В.К.** «Общая хирургия», ФЭОТАР-МЕД, Москва, 2001 г.
- Емельяннов В.М., Коханов В.И., Некрасов П.А.** «Защита населения и территорий в чрезвычайных ситуациях», «Академический проспект», Москва, 2005 г.
- Заликина Л.С.** «Общий уход за больными», «Медицина», Москва, 1979 г.
- Джозеф Э. Зеккарди** «Энциклопедия экстренной медицинской помощи», Кронпресс, Москва, 1998 г.
- Иващук В.** Территориальный центр медицины катастроф, Владивосток, 2005 г., www.ems.vlad.ru
- «Лечение острых отравлений»**, под редакцией **Тарховского М.Л.**, «Здоровье», Киев, 1982 г.

- Малая медицинская энциклопедия**, под редакцией академика **Покровского В.Н.**, «Советская энциклопедия», Москва, 1991 г.
- «Медицинские аспекты последствий землетрясения в Армении», Сборник материалов международного симпозиума, Ереван, 1998 г.
- Мусалатов Х.А.** «Хирургия катастроф», «Медицина», 1998 г.
- «Неотложные состояния», справочник для врачей, «Беларусь», Минск, 1995 г.
- Нечеев Э. А.** Проблемы медицинского обеспечения в экстремальных ситуациях //Военно-медицинский журнал. 1990. №6.
- Новиков А.А., Ганжара П.С.** «Учебное пособие по клинической токсикологии», «Медицина», Москва, 1979 г.
- Организация экстренной медицинской помощи населению при стихийных бедствиях и других чрезвычайных ситуациях / Под ред. **Машкова В.В.**, М.: Медицина, 1991.
- Петров С.В.** «Общая хирургия», Питер, Санкт-Петербург, Москва-Харьков-Минск, 2002 г.
- Покровский В.А.** «Гигиена», «Медицина», Москва, 1979 г.
- «Популярная медицинская энциклопедия», под редакцией академика **Петровского Б.В.**, «Советская энциклопедия», Москва, 1987 г.
- Руководство для врачей скорой помощи, под редакцией профессора **Михайлова В.А.**, «Медицина», Ленинград, 1990 г.
- «Скорая доврачебная помощь», Справочник фельдшера под редакцией **Полюхова С.М.**, 1984 г.
- Соков Л.П., Соков С.Л.** «Курс медицины катастроф», 1999 г.
- Харкевич Д.А.** «Фармакология», «Медицина», Москва, 1986 г.
- Юнас Ян,** Атлас первой медицинской помощи, «Освета Мартин», 1978 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻՒ ԱՊԱՔԻՆ. ԸՆԴԻԱՆՈՒՐ ՄԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻՑՄԻ	
Կառուցվածքի և ներքին օրգանների ֆունկցիաների մասին.....	3
Անատոմիայի և ֆիզիոլոգիայի առարկան	3
Շարժողական ապարատ.....	6
Մարսողական համակարգ և մարսողություն.....	14
Արյուն, արյունատար և ավշային համակարգեր	21
Ընչառական համակարգ և շնչառություն.....	32
Միգասեռական համակարգ.....	36
Ներգատիչ գեղձեր.....	43
Նյարդային համակարգ.....	45
Զգայարաններ.....	49
<< Մարածքում հանդիպող աղետների բժշկատակտիկական	
բնութագրումը	51
ԳՐԻՒ ԵՐԿՐՈՐԴ. Առաջին բուժօգնությունն և մինչբժշկական	
օգնությունն արտակարգ իրավիճակներում.....	55
Բժշկական օգնության տեսակները	55
Առաջին բուժօգնության հիմնական սկզբունքները	56
Տուժածի վիճակի գնահատման հիմնական	
չափանիշները (առաջնային և երկրորդային զննում)	59
ԳՐԻՒ ԵՐՐՈՐԴ. Ավտահարվածների ու հիվանդների բժշկական	
տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում....	63
Բժշկական տեսակավորում	63
Բժշկական տեսակավորման անցկացման ընդհանուր	
պահանջները	64
Տեսակավորող բրիգադներ	66
Տեսակավորման մեթոդները, տեսակավորող խմբերը	67
Տեսակավորման բարոյագիտական խնդիրներ	71
Ինֆեկցիոն հիվանդների բժշկական տեսակավորումը	71
ԳՐԻՒ ԵՐՐՈՐԴ. Սուր հիվանդություններ և քրոնավորումներ.....	77
Ըդհանուր հասկացողության հիվանդության մասին	77
Հետազոտության լաբորատոր և հաստուկ մեթոդներ	81
Զերմաշափում	81
Անոթազարկի հաճախականության, ռիթմի,	
լեցունության որոշումը	84
Զարկերակային արյան ճնշման որոշումը	86
Արյան շրջանառության վրա ներգործիչները, դրանց կիրառման	
ցուցումներն ու հակացուցումները	87
Ընչառական հաճախականության որոշումը, խանգարումները....	93
Ստամոքսի լվացում, հոգնա	95
Ղեղամիջոցների կիրառում	100

Փոխադրամիջոցները, տեսակները, սկզբունքները	108
Բրոնզային ասրմա	115
Թոքերի պալարախտ, թոքախտ (տուբերուլյոզ)	117
Ընչուղիների ազատումը օտար մարմիններից	118
Սրտի իշեմիկ հիվանդություններ	119
Անոթային սուր անբավարություն	122
Հիպերտոնիկ հիվանդություն	123
Երիկամաքարային հիվանդություն	125
Խոցային հիվանդություն	126
Շաքարային դիաբետ	130
Սուր ճառագայթային հիվանդություն	134
Սուր թունավորումների դեպքում մինչբժշկական օգնության ընդհանուր միջոցառումները	137
Թունավորումներ ուժեղ ազդող նյութերից	138
Թունավորում օծի, մեղվի խայթելուց	141
Թունավորումներ սնկերից	143
Եպիլեպսիայի և հիստերիայի նոպաներ	145
Ուսկուկ վիճակներ	146
Գլուխ ժամանակաշրջան. Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում	148
Համաճարակաբանության հիմունքները	148
Ինֆեկցիոն հիվանդությունների դասակարգում	151
Ինունիտետ	154
Գոյապ	156
Դիֆերիա	156
Վիրուսային հեպատիտ	158
Խոլերա	159
Բուտուլիզմ	160
Զիահ	161
Կենսաքանական գենք	163
Գլուխ կեցուրուր. Վնասվածքներ և սուր վիրարուժական հիվանդություններ	165
Վնասվածքների տեսակները	165
Փակ վնասվածքներ	165
Բաց վնասվածքներ կամ վերքեր	167
Ուսկրերի կոտրվածքներ	169
Վերքային ինֆեկցիաներ	170
Ասեպտիկա և անտիսեպտիկա	171
Վերքերի բարդությունները	172
Պրկախտ, գազային գանգրենա	173
Արյունահոսություն, տեսակներ, ժամանակավոր դադարեցման եղանակները	174

Արյան սուր կորուստ, սուր սակավարյունություն,	
արյան փոխներարկում.....	176
Վնասվածքային շոկ	179
Ցավազրկում, տեսակմերը.....	180
Գլխի և գլխուղեղի վնասվածքներ	182
Դեմքի և պարանոցի վնասվածքներ.....	184
Կրծքավանդակի վնասվածքներ	187
Որովայնի և որովայնախոռոչի օրգանների վնասվածքներ	190
Կոնքի ոսկրերի և օրգանների վնասվածքներ	193
Ողնաշարի վնասվածքներ	195
Զերմային այրվածքներ	197
Ցրտահարություն, ընդհանուր սարեցում.....	200
Էլեկտրահարություն.....	202
Զերմահարություն և արևահարություն.....	205
Զրահեղծություն.....	207
Անհետաձգելի օգնությունը ծննդաբերության ժամանակ	209
Վերակենդանացման հիմունքները	211
Վիրակապություն (Ղեսմուղգիա)	214
Վիրակապեր	215
Գրականություն	219

**ՄԻՆՉՔԾԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ**

ՌԱՍՈՒՄԱԿԱՆ ՁԵՂՆԱՐԿ

Հրատ. Խմբագիր՝ **Մ. Գ. Յավոյան**
Տեխ. Խմբագիր՝ **Վ.Զ. Բղոյան**
Համակարգչային ծեավորումը՝ **Ն. Դ. Միհթարյանի**

Մտորագրված է տպագրության 01.02.07 թ.:

**Չափսը՝ 60×841/16 : Թուղթ՝ օֆսեթ: Հրատ. 11.7 մամուլ,
տպագր. 14.0 մամուլ= 13.0 պայմ. մամուլ:
Տպագանակ՝ 150: Պատվեր՝ 36:**

**Երևանի համալսարանի հրատարակչություն
Երևան, Ալ. Մանուկյան 1:**

**Երևանի համալսարանի օպերատիվ պոլիգրաֆիական արտադրամաս
Երևան, Ալ. Մանուկյան 1**